3	Մանկավարժություն և սոցիոլոգիա		2	34	2			97.2
4	Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն			19				
5	Սոցիալական աշխատանք		2	24	2			91.39
2. Սկզբնական կրթության ֆակուլտետ								
1	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)	3	2	71	2			98,2
2	Մանկավարժություն մեթոդիկա (տարրական կրթություն) ռուսաց լեզու			8				
3	Մանկավարժութություն և հոգեբանություն ն/դ			26				
4	Մանկավարժություն և մեթոդիկա ն/դ		2	21	2			97.0
3. Հատուկ կրթության ֆակուլտետ								
1	Օլիգոֆրենոմանկավարժություն			21				
2	Սուրդոմանկավարժություն			28				
3	Լոգոպեդիա		2	45	2			95.0

4	Տիֆլոմանկավարժություն			18				
5	Հատուկ հոգեբանություն	1	2	30	1	1		96.6
6	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն /էրգոթերապիա/		1	13	1			90.4
7	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն /նախադպրոցական/		1	10	1			95.7
	4. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ							
1	Մաթեմատիկա		4	52		4		87.1
2	Ինֆորմատիկա	1	3	18	3			83.3
3	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն		3	22	2	1		84.6
4	Ֆիզիկա	2	2	11	2			84.1
5	Բնագիտություն		1		1			87.6
	5. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ							
1	Կենսաբանություն		3	35	3			91.5
2	Քիմիա		1	10	1			97.8
3	Էկոլոգիական քիմիա			6				
4	Աշխարհագրություն		3	37	3			96.4
	6. Պատմության և իրավագիտության ֆակուլտետ							
1.	Պատմություն	1	5	55	4	1		96.7
2.	Իրավագիտություն /մանկավարժություն/		2	53	2			95.6
	7. Բանասիրական ֆակուլտետ							
1.	Հայոց լեզու և գրականություն		3	54	2	1		93.6
	8. Գեղարվեստական կրթության ֆակուլտետ							
1	Կերպարվեստ և գծագրություն		3	49	3			89.9
2	Կերպարվեստի պատմություն և		2	13	1	1		95.9

	տեսություն							
3	Մշակութաբանություն	1	2	22	1	1		94.2
4	Կիրառական արվեստ		1	35	1			90.0
5	Հագուստի մոդելավորում	1		28				
6	Երաժշտական կրթություն		2	36	2			86.8
9. Օտար լեզուների ֆակուլտետ								
1	Անգլերեն լեզու և գրականություն	1	2	46	1	1		95.5
2	Գերմաներեն լեզու և գրականություն		1	1		1		86.7
3	Ֆրանսերեն լեզու և գրականություն		1	4	1			89,0
4	Իսպաներեն լեզու և գրականություն		1	2	1			96.5
5	Ռուսաց լեզու և գրականություն	1	3	18	3			85.1
10. Կուլտուրայի ֆակուլտետ								
1	Հեռուստալրագրություն		1	25	1			94.2
2	Ռադիոլրագրություն		1	9	1			95.3
3	Օպերատորություն		2	10	2			96.0
4	Գեղարվեստական լուսանկարչություն		2	12	1	1		91.9
5	Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն		2	16	1	1		90.1
6	ՍՄԳ կառավարում		3	26	3			96.1
7	Փողային-էստրադային		2	11	2			95.5
8	Ժողովրդական գործիքներ		2	13	2			96.9
9	Պարարվեստ		2	41	1	1		81.1
10	Մասսայական հանդիսությունների ռեժիսուրա	1	1	18		1		90.4
11	Հեռուստածրագրերի և հեռուստաֆիլմերի ռեժիսուրա		3	24	2	1		91.5

2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ 4-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

Աղյուսակ 4

Հ/Հ	ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՇՐՋԱ-ՓՈԽՄԱՆ	ԵՆԹԱԿԱ ԵՆ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ Պ/Պ	ԵՆԹԱԿԱ ԵՆ ՇՐՋԱ ՓՈԽՄԱՆ ՎՃ/ԱՏ	ՇՐՋԱՓՈԽ ՎԵԼ ԵՆ		ԹՎԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ	ՄԻՋԻՆ ԴՆԱՀԱՏԱԿԱՆ
					Պ/Պ պահպ.	ՎՃ շրջ.		
1	2	3	4	5	6	7	8	9
1. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ								
1	Մանկավարժություն և հոգեբանություն	5	2	64	1	1		97.8
2	Սոցիալական մանկավարժություն		2	29	2			99,2
3	Մանկավարժություն և սոցիոլոգիա	1	2	41	1	1		98.8
4	Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն			18				
5	Սոցիալական աշխատանք		2	30	2			99.1
2. Սկզբնական կրթության ֆակուլտետ								
1	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)	5	2	94	2			98.5
2	Մանկավարժություն մեթոդիկա (տարրական կրթություն) ռուսաց լեզու			6				
3	Մանկավարժություն հոգեբանություն ն/դ			25				
4	Մանկավարժութժություն և մեթոդիկա ն/դ	2	2	12	2			97.8
3. Հատուկ կրթության ֆակուլտետ								
1	Օլիգոֆրենոմանկավարժություն			22				
2	Սուրդոմանկավարժություն		1	16	1			96.1

3	Լոգոպեդիա		3	44	3			93.1
4	Տիֆլոմանկավարժություն			19				
5	Հատուկ հոգեբանություն		2	30	2			96.7
6	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն /էրգոթերապիա/			9				
7	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն /նախադպրոցական/	2	1	14	1			99.5
4. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ								
1	Մաթեմատիկա	3	3	36	3			94.0
2	Ինֆորմատիկա		3	21	2	1		87.8
3	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն			5				
4	Ֆիզիկա		2	13	2			93.4
5	Բնագիտություն		2		2			83.9
5. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ								
1	Կենսաբանություն	3	3	30	3			97.8
2	Քիմիա	1	2	5	2			97.1
3	Էկոլոգիական քիմիա		1	18	1			97.0
4	Աշխարհագրություն		3	30	3			97.6
6. Պատմության և իրավագիտության ֆակուլտետ								
1.	Պատմություն	3	4	67	4			97.8
2.	Իրավագիտություն		2	47	2			99.3
7. Բանասիրական ֆակուլտետ								
1.	Հայոց լեզու և գրականություն	7	2	68	2			97.5
8. Գեղարվեստական կրթության ֆակուլտետ								
1	Կերպարվեստ և գծագրություն	3	2	50	2			96.8
2	Կերպարվեստի պատմություն և		2	5	2			99.0

	տեսություն							
3	Մշակութաբանություն	1	2	21	2			98.3
4	Կիրառական արվեստ		1	35	1			99.3
5	Հագուստի մոդելավորում	2		20				
6	Երաժշտական կրթություն		2	15	2			87.7
9. Օտար լեզուների ֆակուլտետ								
1	Անգլերեն լեզու և գրականություն		3	34	2	1		97.7
2	Գերմաներեն լեզու և գրականություն		1	1	1			93.6
3	Ֆրանսերեն լեզու և գրականություն		1	2	1			92.5
4	Իսպաներեն լեզու և գրականություն		1	2	1			96.7
5	Ռուսաց լեզու և գրականություն	1	2	46	1	1		95.5
10. Կուլտուրայի ֆակուլտետ								
1	Հեռուստալրագրություն	3	2	15	2			95,5
2	Օպերատորություն		2	11	2			94.1
3	Գեղարվեստական լուսանկարչություն		2	8	2			96.9
4	Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն		1	15	1			98.1
5	Գրադարանագիտություն և մատենագիտություն		1	14	1			98.8
6	ՍՄԳ կառավարում		3	29	3			92.4
7	Փողային-էստրադային		6	3	5	1		93.3
8	Ժողովրդական գործիքներ		2	7	2			97.3
9	Պարարվեստ	2	2	35	2			81.4
10	Մասսայական հանդիսությունների ռեժիսուրա		1	14	1			99.1
11	Հեռուստածրագրերի և հեռուստաֆիլմերի ռեժիսուրա		2	12	2	1		99.0

2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՓՈԽՄԱՆԵՆԹԱՐԿՎԱԾ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

Աղյուսակ 5

Հ/Հ	ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՇՐՋԱ-ՓՈԽՄԱՆ	ԵՆԹԱԿԱ ԵՆ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ Պ/Պ	ԵՆԹԱԿԱ ԵՆ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ ՎՃ/ԱՏ	ՇՐՋԱՓՈԽՎԵԼ ԵՆ		ՏԵՂԵՓՈՓՈԽՎԵԼ	ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
					Պ/Պ պահպ.	ՎՃ շրջափ.		
1	2	3	4	5	6	7	8	9
1. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ								
1	Մանկավարժություն և հոգեբանություն	1	4	41		4		92.5
2	Սոցիալական մանկավարժություն		3	4	3			88.3
3	Մանկավարժություն և սոցիոլոգիա	2	2	3	1	1		94.6
4	Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն	3	2	2	2			94.5
5	Սոցիալական աշխատանք		2	10	2			92.7
2. Սկզբնական կրթության ֆակուլտետ								
1	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)	1	6	20	5	1		92.4
2	Մանկավարժություն հոգեբանություն ն/դ			16				
3	Մանկավարժություն և մեթոդիկա ն/դ		7	14	5	2		90.4
3. Հատուկ կրթության ֆակուլտետ								
1	Օլիգոֆրենոմանկավարժություն		2	2	2			91.4
2	Սուրդոմանկավարժություն		1	1		1		94.4
3	Լոգոպեդիա		3	17	3			96.2

4	Տիֆլոմանկավարժություն			1				
5	Հատուկ հոգեբանություն	1	3	11	2	1		90.8
6	Հատուկ մանկավարժություն			13				
7	Ն/Դ հատուկ մանկավարժ. և հոգեբանություն		1	3	1			89.6
8	Արթերապիա			6				
4. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ								
1	Մաթեմատիկա	1	3	27		3		89.1
2	Ինֆորմատիկա	1	3	11	1	2		97.9
3	Կերպարվեստ և գծագրություն		3		3			86.7
4	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	2	2	8	1	1		94.2
5	Ֆիզիկա		2	10		2		94.9
6	Բնագիտություն			1				
5. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ								
1	Կենսաբանություն		3	8	3			86.1
2	Քիմիա		2	5	1	1		88.5
3	Բնապահպանություն և բնօգտագործում			5				
4	Աշխարհագրություն		3	7	2	1		91.9
6. Պատմության և իրավագիտության ֆակուլտետ								
1	Պատմություն	3	8	30	5	3		97.1
2	Իրավագիտություն	1	5	6	4	1		82.6
7. Բանասիրական ֆակուլտետ								
1	Հայոց լեզու և գրականություն		7	10	6	1		80.7
8. Գեղարվեստական կրթության ֆակուլտետ								
1	Կերպարվեստ և գծագրություն	2	5	9	4	1		85.5
2	Կերպարվեստի պատմություն և		3	1	3			87.3

	տեսություն							
3	Մշակութաբանություն		2	5	2			93.4
4	Կիրառական արվեստ			4				
5	Երաժշտական կրթություն		4	9	4			89.7
9. Օտար լեզուների ֆակուլտետ								
1	Անգլերեն լեզու և գրականություն	3	7	10	4	3		89.7
2	Գերմաներեն լեզու և գրականություն		1	3	1			95.6
3	Ֆրանսերեն լեզու և գրականություն		1	1	1			94.0
4	Իսպաներեն լեզու			1				
5	Ռուսաց լեզու և գրականություն	1	3	31	2	1		89.4
10. Կուլտուրայի ֆակուլտետ								
1	Հեռուստալրագրություն		2	2	1	1		87.3
2	Օպերատորություն		3		3			71.9
3	Գեղարվեստական լուսանկարչություն		1	1	1			84.3
4	Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն		3	3	1	2		85.8
5	Գրադարանագիտություն և մատենագիտություն		2	6	2			95.4
6	ՍՄԳ կառավարում		3	3	2	1		86.8
7	Պարարվեստ		3	12	3			91.8
8	Մասսայական հանդիսությունների ռեժիսուրա		3	1	3			95.6
9	Հեռուստաձրագրերի և հեռուստաֆիլմերի ռեժիսուրա		2	1	2			94.9

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ՁԵՂՉ)

2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակում փոխհատուցվել է՝

1. Բակալավրի առկա ուսուցման համակարգի 1014 ուսանողներին - 60 648 500 դր.
2. Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 219 ուսանողներին - 6 842 500 դր.
3. Բակալավրի հեռակա ուսուցման համակարգի 686 ուսանողներին - 41 264 333 դր.
4. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի 29 ուսանողներին- 2 413 150 դր.

2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակում փոխհատուցվել է՝

1. Բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 11321 ուսանողներին - 79 442 000 դր.
2. Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 189 ուսանողներին - 10 690 000 դր.
3. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի 667 ուսանողներին - 43 629 312 դր.
4. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի 44 ուսանողներին- 3 859 775 դր.

2015-2016 ուսումնական տարում /1-ին կուրս ընդունված/ համալսարանի միջոցների հաշվին անվճար համակարգ փոխատեղված 9 ուսանողների ուսման վարձի գումարը կազմել է 2 545 000 դրամ:

2016-2017ուստարում բակալավրի անընդհատ ինտեգրված կրթական ծրագրի բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով համալսարանի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման ենթակա մասնագիտությունների համաձայն ենթարկվել են փոխատեղման:

2016-2017 ուստարում /1-ին կուրս ընդունված/ համալսարանի միջոցների հաշվին անվճար համակարգ փոխատեղված 9 ուսանողների ուսման վարձի գումարը կազմել է 2 995 000 դրամ:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ՁԵՂՉ)

Աղյուսակ 6

Կիսամյակ	Ուսանող	Գումարը /դրամ/
2015 -2016 ուստարի, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգ		
1	686	41 264 333
2	667	43 629 312
Ընդամենը՝	1353	84 893 645
2015-2016 ուստարի, մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգ		
1	29	2 413 150
2	35, բակալավրիատի	3 859 775
Ընդամենը՝	64	6 272 925
2015-2016 ուստարի, բակալավրիատի առկա ուսուցման համակարգ		
1	1014	60648500
2	1321	79442000
Ընդամենը՝	2335	140090500
2015 -2016 ուստարի, մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգ		
1	219	6842500
2	189	10690000
Ընդամենը՝.	408	17532500
Ընդամենը՝	***4160***	***248 789 570***

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՈՐՈՇԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ (2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)

Աղյուսակ 7

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ					ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ				
	Առկա	Հեռակա	Ընդամենը	Մասնակի փոխհատուցման տոկոսային մեծությունը	Մասնակի փոխհատուցման գումարային մեծությունը	Առկա	Հեռակա	Ընդամենը	Մասնակի փոխհատուցման տոկոսային մեծությունը	Մասնակի փոխհատուցման գումարային մեծությունը
18 տարին լրանալուց հետո մինչև 23 տարին լրանալը առանց ծնող.խնամքի մնացած ուսանողների թվաքանակը	4	0	4	50%	640000	0	0	0	50%	0
23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանող. թվաքանակը	411	197	608	50%	54280000	32	1	33	50%	4455000
3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողների թվաքանակը	86	65	151	30%	12496000	34	12	46	30%	2484000
Վճարովի ուսուցման համակարգում 2 ուսանող ունեցող ընտանիքների ուսանողների թվաքանակը	1062	425	1487	25%	33172800	108	15	123	25%	5535000
Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողների թվաքանակը	81	50	131	30%	12576000	7	0	7	30%	336000

1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողների թվաքանակը	175	112	287	40%	29736000	30	4	34	40%	2448000
Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներ	126	100	226	30%	11096000	2	2	4	30%	216000
Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր մինչև 30 միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներ	35	10	45	20%	2880000	1	3	4	20%	120000
Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներ	113	47	160	40%	17480000	13	5	18	40%	947000
Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներ	52	184	236	50%	27760000	46	14	60	50%	4730000
Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմությամբ ուսանողներ	10	0	10	50%	1550000	0	0	0	50%	0
Այլ կարգավիճակ ունեցող ուսանողներ՝ բուհի հայեցողությամբ	180	163	343	30%	21317345	135	8	143	30%	2534425

2015/2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

/ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ /

Աղյուսակ 8

	Ֆակուլտետ	Ընդամենը		Նախորդ տարիների շրջանավարտ այդ թվում՝			2015/2016 ուսումնական տարվա շրջանավարտ այդ թվում՝										
		Մասնակցել են = 5+8	Ավարտել են = 6+9	Ընդա մենը	դրական	անբավ.	Ընդա-մենը	Դրական	% Դ	Գեր	Լավ	Բավ	Անբավ	Չներկ.	% Ա+Չ	Բողոք արկում	ԲՓԳ
1.	Բանասիրական	73	44	11	2	8	62	42	67.7	7	14	21	20	1	58	10	0
2.	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի	111	102	5	3	2	106	99	93.4	30	33	36	7	0	1	7	0
3.	Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության	91	87	5	5	0	86	82	95.3	39	29	14	4	0	4.7	0	0
4.	Պատմության և իրավագիտության	139	118	17	13	4	122	105	86	48	23	34	14	3	14	1	1
5.	Գեղարվեստական կրթության	170	168	0	0	0	170	168	98.8	82	52	34	2	0	1.2	1	0
6.	Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի	198	174	15	12	3	183	162	88.5	35	58	69	20	1	11.5	5	0
7.	Կուլտուրայի	209	209	0	0	0	209	209	100	110	54	45	0	0	0	0	0
8.	Սկզբնական կրթության	143	123	15	12	3	128	111	86.7	31	42	38	17	0	13.3	5	0
9.	Հատուկ կրթության	145	137	4	3	1	141	134	95	48	37	49	7	0	5	8	1
10.	Օտար լեզուների	148	147	4	4	0	144	143	99	64	49	30	1	0	1	0	0
	Ընդամենը՝	***1427***	***1309***	***76***	***54***	***21***	***1351***	***1255***	***92.9***	***494***	***391***	***370***	***92***	***5***	***7.1***	***37***	***2***

2015/2016ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ / ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ /

Աղյուսակ 9

	Ֆակուլտետ	Ընդամենը		Նախորդ տարիների շրջանավարտ այդ թվում՝			2015/2016 ուսումնական տարվա շրջանավարտ այդ թվում՝										
		Մասնակցել են = 5+8	Ավարտել են = 6+9	Ընդա մենը	Դրա կան	անբավ.	Ընդա-մենը	Դրական	% Դ	Գեր	Լավ	Բավ	Անբավ	Չներկ.	% Ա+Չ	Բողոք արկում	ԲՓԳ
1.	Բանասիրական	34	34	0	0	0	34	34	100	11	11	12	0	0	0	0	0
2.	Մաթեմ. ֆիզիկայի և ինֆորմ.	85	84	0	0	0	85	84	98.8	60	21	3	0	1	1.2	0	0
3.	Կենսաբ.,քիմիայի և աշխարհ.	51	51	0	0	0	51	51	100	33	13	5	0	0	0	0	0
4.	Պատմ. և իրավագիտության	57	56	0	0	0	57	56	98.2	40	8	8	0	1	1.8	0	0
5.	Գեղարվեստական կրթության	51	51	0	0	0	51	51	100	39	10	2	0	0	0	0	0
6.	Կրթ. հոգեբ. և սոցիոլոգիայի	77	76	0	0	0	77	76	98.7	30	40	6	1	0	1.3	0	0
7.	Կուլտուրայի	63	62	0	0	0	63	62	98.4	41	19	2	0	1	1.6	0	0
8.	Սկզբնական կրթության	57	57	0	0	0	57	57	100	16	13	28	0	0	0	0	0
9.	Հատուկ կրթության	91	90	3	3	0	88	87	98.8	28	33	26	1	0	1.2	1	1
10.	Օտար լեզուների	69	68	0	0	0	69	68	98.5	28	22	18	0	1	1.5	0	0
	Ընդամենը՝	***635***	***629***	***3***	***3***	***0***	***632***	***626***	***99***	***326***	***190***	***110***	***2***	***4***	***1***	***1***	***1***

2015/2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

/ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/

Աղյուսակ 10

	Ֆակուլտետ	Ընդամենը		Նախորդ տարիների շրջանավարտ այդ թվում՝			2015/2016 ուսումնական տարվա շրջանավարտ այդ թվում՝										
		Մասնակցել են = 5+8	Ավարտել են = 6+9	Ընդա մենը	դրական	անբավ.	Ընդա-մենը	Դրական	% Դ	Գեր	Լավ	Բավ	Անբավ	Չներկ.	% Ա+Չ	Բողոք արկում	ԲՓԳ
1.	Բանասիրական	73	23	26	3	23	47	20	42.5	2	5	13	26	1	57.5	10	0
2.	Մաթեմ., ֆիզիկայի և ինֆորմատիկայի	82	62	12	9	3	70	53	75.7	6	22	24	17	0	24.3	15	1
3.	Կենսաբ., քիմիայի և աշխարհագրության	64	53	10	9	1	54	44	81.4	6	10	28	9	1	18.6	8	2
4.	Պատմության և իրավագիտության	137	98	23	17	6	114	81	71	4	22	55	30	3	29	4	2
5.	Գեղարվեստական կրթության	79	77	3	3	0	76	74	97.3	16	34	24	2	0	2.7	4	0
6.	Կրթ. հոգեբ. և սոցիոլ.	106	83	24	19	5	81	64	79	10	16	38	17	0	21	1	0
7.	Կուլտուրայի	62	62	0	0	0	62	62	100	16	26	20	0	0	0	0	0
8.	Սկզբնական կրթության	163	131	27	20	7	136	111	81.6	15	33	63	23	2	18.4	4	0
9.	Հատուկ կրթության	96	80	12	9	3	84	71	84.5	4	19	48	13	0	15.5	0	0
10.	Օտար լեզուների	90	79	18	15	3	72	64	88.8	12	20	32	8	0	11.2	1	1
	Ընդամենը՝	**952**	**748**	**155**	**104**	**51**	**796**	**644**	**80.9**	**91**	**207**	**345**	**145**	**7**	**19.1**	**47**	**6**

5. Ուսումնական բաժին

Ուսումնական բաժինը նախապատրաստել և հրամանագրման է ներկայացրել ուսանողների կուրսից կուրս տեղափոխության, շարունակական կրթության, ակադեմիական շարժունության /հեռացման, ազատման, վերականգնման, ակադեմիական արձակուրդի/ հետ կապված և այլ աշխատանքներ:

2016թ. հունվարի 1-ից մինչ սույն թվականի դեկտեմբերի 1-ի տվյալները հետևյալն են՝

1. *Ընդհանուր դիմումների թիվը - 1770*
2. *Այլ բուհերից փեղափոխվել են – 12 ուսանող*
3. *Համալսարանից ազատվել, հեռացվել են – 459 ուսանող*
4. *Ազատվել են ՀՀ ազգային բանակ մեկնելու պատճառով – 111 ուսանող*
5. *Հեռակա ուսուցման համակարգից փեղափոխվել են առկա -19 ուսանող*
6. *Առկա ուսուցման համակարգից փեղափոխվել են հեռակա- 56 ուսանող*
7. *Հեռակա ուսուցման համակարգից մի մասնագիտությունից մյուս մասնագիտություն են փեղափոխվել- 2 ուսանող*
8. *Առկա ուսուցման համակարգից մի մասնագիտությունից մյուս մասնագիտություն են փեղափոխվել – 5 ուսանող*
9. *Վերականգնել են ուսանողական իրավունքները – 94 ուսանող*
10. *Շարունակել են կրթությունը առկա ուսուցման համակարգում /փարկեփում, բանակ/- 80 ուսանող*
11. *Շարունակել են կրթությունը հեռակա ուսուցման համակարգում /փարկեփում, բանակ/- 21 ուսանող*
12. *Շարունակական կրթությամբ ընդունվել են առկա ուսուցման համակարգ /միջին մասնագիտական կրթությամբ/ - 43 ուսանող*
13. *Շարունակական կրթությամբ ընդունվել են հեռակա ուսուցման համակարգ /միջին մասնագիտական կրթությամբ/ - 88 ուսանող /կցագրված/*
14. *Շարունակական կրթությամբ ընդունվել են հեռակա ուսուցման համակարգ /միջին մասնագիտական կրթությամբ հանրակրթական դպրոցի ուսուցիչներ/ - 21 ուսանող / կցագրված/:*

Համալսարանը 2016 թվականի ընթացքում «Ոսկան Երևանցի» տպարանից ստացել է 3822 դիպլոմ, այդ թվում՝

1. Մագիստրոսի 636 սովորական, գերազանցության՝ 120 դիպլոմ,

2. Բակալավրի 2070 սովորական, գերազանցության՝ 120 դիպլոմ,

Ընդամենը լրացվել և բաշխվել է 2805 դիպլոմ: Ստացված ավարտական փաստաթղթերը (դիպլոմները)՝ բաշխվել են հետևյալ կերպ.

1. *Մագիստրոսի 734 դիպլոմ, որից՝ գերազանցության -94 դիպլոմ:*
2. *Բակալավրի 2071 դիպլոմ,որից՝ գերազանցության - 206 դիպլոմ:*

Առ 1-ը դեկտեմբերի 2016թ. առկա է՝ 454 դիպլոմ.

1. *Մագիստրոսի 199 դիպլոմ, որից՝ գերազանցության - 26 դիպլոմ:*
2. *Բակալավրի 255 դիպլոմ, որից՝ գերազանցության - 0 դիպլոմ:*

Պահանջվող փաստաթղթերի և արխիվային հիմքերի առկայության դեպքում՝ ըստ գործող կարգի, բուհի նախկին շրջանավարտներին տրվել է թվով 20 դիպլոմի կրկնօրինակ:

Հաշվետու ժամանակահատվածում արմատականորեն վերանայվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցմնա համակարգերի գործող ուսումնական պլանները՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը, ուսանողի ամբողջ ուսումնական բեռնվածության արտահայտումը կրեդիտային արժեքներով՝ պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկով, դրանց ամրագրված կրեդիտների չափաբաժիններով: Կրեդիտների համադրելիության ապահովման նպատակով նորացվել են ուսումնական ծրագրերն ու դրանց բովանդակությունը մոտեցվել և համապատասխանեցվել է եվրոպական չափանիշներին:

Հաշվի առնելով աշխատաշուկայի և հանրակրթական ծրագրերին համահունչ մասնագետներ պատրաստելու արդի հրամայականը Համալսարանում մի շարք նոր մասնագիտությունների ներդրման անհրաժեշտություն է ծագել:

ՀՀ բուհերի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի նախագծում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի առաջարկով և հիմնավորմամբ 2016թ. ներառվել են «Շախմատ», «Շրջակա միջավայրի գիտություններ», «Լանդշաֆտային պլանավորում» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Աշոտ Գալստյան

Ֆակուլտետի մասնագիտությունները և մասնագիտացումները

Ծածկագիր	Մասնագիտությունը, Կրթական աստիճան	Ուսուցման ձևը	
		Առկա	Հեռակա
	Բակալավրիատ		
	Հայոց լեզու և գրականություն	առկա	հեռակա
	Մանկավարժության բակալավր		
	Մագիստրատուրա		
	Հայոց լեզու և գրականություն	առկա	հեռակա
	Մանկավարժության մագիստրոս		

Մասնագիտացումներ	Հայոց լեզու	Հայ գրականություն

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ

N	Ազգանուն, անուն հայրանուն
1	Սարինյան Սերգեյ Ներսեսի - ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
2	Դոլուխանյան Ալիտա Գուրգենի – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Պատվավոր կոչումներ ունեցողներ

N	Ազգանուն, անուն հայրանուն	Կոչումը
1	Դոլուխանյան Ալիտա Գուրգենի	**ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ**
2	Մուրադյան Լաուրա Գուրգենի	**ՀՀ վաստակավոր մանկավարժ**

Ուսանողների թիվը, 2015-2016

Առկա ուսուցում՝

Ծածկագիր	Կրթական աստիճան, Մասնագիտություն	I կուրս			II կուրս			III կուրս			IV կուրս			Ընդամենը		
		վճ.	ընդ.	պ/պ	վճ.	ընդ.	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ
	Բակալավրիատ՝															
	Հայ. լեզու և գրական.	61	67	6	51	54	3	63	72	9	55	63	8	230	256	26
	Մագիստրատուրա՝															
	Հայ. լեզու և գրական.	8	15	7	27	35	8							35	50	15

Հեռակա ուսուցում՝

Ծածկագիր	Կրթական աստիճան, Մասնագիտություն	I կուրս			II կուրս			III կուրս			IV կուրս			V կուրս			Ընդամենը		
		ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.	ընդ,	պ/պ	վճ.
	Բակալավրիատ՝																		
	Հայ. լեզու և գրական.	14	-	14	29	-	29	46	-	46	45	1	44	59	1	58	193	2	191
	Մագիստրատուրա՝																		
	Հայ. լեզու և գրական.	31	-	31	29	-29	39	1	38								99	1	98

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան /առկա, 2015-2016/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	67	3	34	1	45 %
II կուրս	54	-	20	4	63 %
III կուրս	72	6	45	13	29 %
IV կուրս	63	3	37	16	36 %
Մագիստրատուրա					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	15	-	-	6	100 %
II կուրս	35	-	12	15	66 %

Ամառային քննաշրջան /առկա, 2015-2016/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	66	-	23	9	65 %
II կուրս	52	-	21	3	60 %
III կուրս	68	5	31	12	47 %

IV կուրս	62	3	25	9	55 %
Մագիստրատուրա					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	16	-	7	6	56 %
II կուրս	35	-	4	14	88 %

Ձմեռային քննաշրջան /հեռակա, 2015-2016/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	14	-	7	-	50 %
II կուրս	29	-	17	1	41 %
III կուրս	46	-	38	-	16 %
IV կուրս	45	-	31	-	31 %
V կուրս	59	-	41	-	30 %
Մագիստրատուրա					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	31	-	10	2	68 %
II կուրս	29	-	13	1	55 %

Ամառային քննաշրջան /հեռակա, 2015-2016/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը

		թիվը			
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	14	-	8	-	43 %
II կուրս	29	-	20	1	31 %
III կուրս	44	-	36	-	18 %
IV կուրս	42	-	21	2	50 %
Մագիստրատուրա					
մասնագիտություն	Հայոց լեզու և գրականութ.				
I կուրս	31	-	18	-	42 %
II կուրս	25	-	11	-	56 %

Շրջանավարտներ, 2015-2016

Մասնագիտություն	Բակալավրիատ/գերազանցության դիպլոմով/	Մագիստրատուրա/գերազանցության դիպլոմով/
Հայոց լեզու և գրական.- **առկա ուսուցում**	Ընդ.՝ 44, որից գերազ.՝ 2	Ընդ.՝ 34, որից գերազ.՝ 7
Հայ. լ. և գրակ. – **հեռակա ուսուցում**	Ընդ.՝ 23, որից գերազ.՝ -	Ընդ.՝ 38, որից գերազ.՝ 1

2016թ. ընթացքում հրատարակվել են

Գիտական հոդվածների ժողովածու	Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
3	**3**	**4**	**1**	**6**	**69**	**24**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ __3__

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Աշոտ Գալստյան

Պրոֆեսորադասախոսական կազմը /հիմնական/

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյանթիվը	Դրույքը	Կոչումը
1.	Գալստյան Աշոտ Վոլոդյայի	1967	0,5	բ.գ.թ., դոցենտ
2.	Խաչատրյան Լալիկ Մնացականի	1952	1	բ. գ դ., պրոֆ.
3.	Դավթյան Յուրի Ռուբենի	1956	1	բ. գ. դ., պրոֆ.
4.	Համբարձումյան Վազգեն Գուրգենի	1947	1	բ. գ. դ., պրոֆ.
5.	Մկրտչյան Էդուարդ Սամսոնի	1930	1	բ. գ. դ., պրոֆ.
6.	НазаретянОвсаннес Назаретի	1940	1	բ. գ. թ., դոցենտ
7.	Խալաթյան Գայանե Լիպարիտի	1958	1	մ. գ. թ., դոցենտ
8.	Ամիրջանյան Սուսաննա Հրանտի	1958	1	բ. գ. թ., դոցենտ
9.	Ղարիբյան Սուսաննա Խաչիկի	1975	0,5	բ. գ. թ., դոցենտ
10.	Սողոմոնյան Մանուշակ Ռաֆիկի	1976	1	բ. գ.. թ., դոցենտ
11.	Ջուլֆայան Ռուզան Պողոսի	1964	1	բ. գ. թ., դոցենտ
12.	Յուզբաշյան Աշխեն Լյուդվիգի	1971	1	բ. գ. թ., դոցենտ
13.	Թորգոմյան Սոֆի Ֆելիքսի	1964	1	մ. գ. թ., ասիստենտ
14.	Հարությունյան Ռուբինա Ռոբերտի	1972	1	մ. գ. թ., ասիստենտ
15.	Ավետիսյան Լիլիթ Նվերի	1981	1	բ. գ. թ., դասախոս
16.	Հարությունյան Անահիտ Հարությունի	1981	0,5	բ.գ.թ., դասախոս

Համատեղողներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Պաշտոն
1	Քյուփելյան Հայկուհի Հակոբի	1951	ժամավճար	բ. գ. թ., դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Պաշտոնը
1	Հարությունյան Անահիտ Հարությունի	1981	1	մասնագետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հրատարակություններ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասագիրք	Գիտական հոդվածների ժողովածու	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1.	Աշոտ Վոլոդյայի Գալստյան	1	-	-	-	2	4	-
2.	Լալիկ Մնացականի Խաչատրյան	-	-	1	1	-	5	-
3.	Էդուարդ Սամսոնի Մկրտչյան	-	-	-	1	-	-	-
4.	Վազգեն Գուրգենի Համբարձումյան	-	-	-	-	-	1	-
5.	Գայանե Լիպարիտի Խալաթյան	-	-	-	-	1	1	-
6.	Ռուզան Պողոսի Ջուլֆայան	-	-	-	-	1	-	-
7.	Մանուշակ Ռաֆիկի Սողոմոնյան	-	-	-	-	-	2	-
8.	Սոֆի Ֆելիքսի Թորգոմյան	-	-	-	-	1	-	-
9.	Լիլիթ Նվերի Ավետիսյան	-	-	-	-	-	2	-
10.	Հայկուհի Հակոբի Քյուփելյան	-	-	1	-	-	-	-

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ալիփրադոլուխանյան

Պրոֆեսորադասախոսական կազմը /հիմնական/

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Կոչում
1	Դոլուխանյան Ալիտա Գուրգենի	1942	1	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր
2	Հովսեփյան Լիլիթ Վասիլի	1976	0.75	բան.գիտ.թեկնածու, դոցենտ
3	Դոլուխանյան Ռուզան Վիլիկի	1965	0.75	մանկ.գիտ.թեկնածու,դոցենտ
4	Սահակյան Պարույր Տիգրանի	1978	0.75	բան.գիտ.թեկնածու, դոցենտ
5	Մարդյան Գայանե Ազատի	1968	0.5	մանկ.գիտ.թեկնածու,դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Պաշտոնը
1	Աբրահամյան Արևիկ Աշոտի	1957	1	Մասնագետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հրատարակություններ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասագիրք	Գիտ. հոդվ. ժողովածու	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	Դոլուխանյան Ալիտա Գուրգենի	-	1	1	-	-	23	7
2	Հովսեփյան Լիլիթ Վասիլի	-	1	-	-	-	1	-
3	Դոլուխանյան Ռուզան Վիլիկի	-	1	-	-	-	1	-

4	Սահակյան Պարույր Տիգրանի	-	1	-	-	-	1	-
5	Մարդյան Գայանե Ազատի	-	1	-	-	-	1	

ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Սուրեն Դանիելյան

Պրոֆեսորադասախոսական կազմը /հիմնական/

	Ազգանուն, անուն, հայրանուն	**Ծննդյան թիվ**	**Դրույք**	**Կոչում**
1	Դանիելյան Սուրեն Դավթի	1948	1	բ. գ. դ., պրոֆեսոր
2	Գիլավյան Մարտին Գարեգինի	1947	1	բ. գ. դ., պրոֆեսոր
3	Մուրադյան Արմինե Սուրենի	1956	1	բ. գ. թ., դոցենտ
4	Տողանյան Նաիրա Սուրենի	1964	0,5	մ. գ. թ., դոցենտ
5	Գալստյան Լուսինե Րաֆֆիի	1972	1	բ. գ. թ., դոցենտ
6	Խաչատրյան Նաիրա Արարատի	1966	0,5	բ. գ. թ., դոցենտ
7	Աբրահամյան Քնարիկ Արմենի	1984	1	բ. գ. թ., ասիստենտ

Համատեղողներ

N	**Ազգանուն, անուն, հայրանուն,**	**Ծննդ.թիվ**	**Դրույք**	**Կոչում**
1.	Սարինյան Սերգեյ Ներսեսի	1924	0.25	ակադեմիկոս
2.	Մուրադյան Լաուրա Գուրգենի	1940	0.25	պրոֆեսոր
3.	Մակարյան Ալբերտ Արշավիրի	1958	0.5	պրոֆեսոր

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն,	Ծննդյան թիվ	Դրույք	Պաշտոնը
1.	Ալեքյան Արմենուհի Անուշավանի	1964	1.0	մասնագետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հրատարակություններ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասագիրք	Գիտական հոդվածների ժողովածու	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	Դանիելյան Սուրեն Դավթի	-	1 (խմբ.)	-	-	1	9	5
2	Գիլավյան Մարտին Գարեգինի	-	-	-	-	-	2	1
3	Սարինյան Սերգեյ Ներսեսի	-	1	1	-	-	4	3
4	Մակարյան Ալբերտ Արշավիրի	-	-	-	-	-	2	-
5	Մուրադյան Լաուրա Գուրգենի	-	-	-	-	-	2	-
6	Մուրադյան Արմինե Սուրենի	-	-	-	-	-	1	1
7	Տողանյան Նաիրա Սուրենի	2	-	-	-	1	1	2
8	Գալստյան Լուսինե Րաֆֆիի	-	-	-	-	-	1	1
9	Խաչատրյան Նաիրա Արարատի	-	-	-	-	-	1	1
10	Աբրահամյան Քնարիկ Արմենի	-	1 (խմբ.)	-	-	1	4	3

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

1. Ուսումնական գործընթացի կազմակերպումը

2016թ. հայոց լեզվի ամբիոնը սպասարկել է համալսարանի բանասիրական, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, պատմության և իրավագիտության, գեղարվեստի, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, կուլտուրայի, օտար լեզուների ֆակուլտետներին (առկա և հեռակա բաժիններին):

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինչպես նաև կուրսային աշխատանքների թեմաները ժամանակին քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստերում:

Ամբիոնը կազմակերպել և բոլոր աշխատանքներն անցկացրել է ըստ գործող ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի: 2016թ. ամբիոնը համալսարանի բոլոր ֆակուլտետների համար ըստ մասնագիտացումների կազմել է ԱՈՒՄՓ փաթեթներ:

Կազմվել է ամբիոնի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:

- Ռեկտորատի կազմակերպած համակարգչային դասընթացներին (2016թ. հունվար) մասնակցել են ամբիոնի պրոֆ. Էդ. Մկրտչյանը, դոց. դոց. Հովի. Նազարեթյանը, Ռ. Մանուկյանը, Ս. Ամիրջանյանը, մ.գ.թ., ասիստենտ Ռ. Հարությունյանը, բ.գ.թ., դասախոս Լ. Ավետիսյանը):
- Ամբիոնը ամիսը մեկ հաճախականությամբ գումարել է նիստեր, որտեղ քննարկվել են առարկայական հարցաշարերը, քննական տոմսերը, ավարտական որակավորման քննության հարցաշարերը, ԱՈՒՄՓ փաթեթները, որոնք հաստատվելուց հետո տեղադրվել են համալսարանի կայքէջում: Ըստ սահմանված գրաֆիկի՝ կազմակերպվել են միջանկյալ գրավոր աշխատանքները, կիսամյակային քննությունները:
- Պարբերաբար կատարվել են դասալսումներ թե՛ ամբիոնի վարիչի, թե՛ ամբիոնի անդամների կողմից, գրանցվել համապատասխան մատյանում և քննարկվել ամբիոնի նիստերին:
- Ամբիոնը թե՛ կիսամյակին, թե՛ ավարտական ամփոփիչ քննություններից առաջ կազմակերպել է խորհրդատվություն առկա և հեռակա բաժինների ուսանողների համար:

2. Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը

Ամբիոնը մշտապես հետևել է ուսումնական գործընթացի կազմակերպմանը, դասախոսների հաճախումներին, գրավոր և գործնական աշխատանքների ընթացքին: Գրախոսվել են ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Կազմակերպվել է ավարտական աշխատանքների և մագիստրոստական թեզերի նախապաշտություն, ապա՝ պաշտպանություն:

Ամբիոնը տվել է առաջատար կազմակերպության կարծիք 3 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսության.

1. Սիլվա Պապիկյան, «Հայ կրոնաեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը»
2. Վիկտոր Վիրաբյան, «Բայազետի բարբառը և նրա լեզվական առանձնահատկությունները շրջական բարբառների հետ»:
3. Արմեն Հակոբջանյան, «Կրկնությունը խոսույթում»

4. Սոնա Միքայելյան, «Արաբերենի ազդեցության դրսևորումները Անտիոքի հայերենում խոսվածքներում»
5. Ռիմա Համբարձումյան, «Արևելահայերենի և արևմտահայերենի անկախ դերբայների զուգադրական քննություն»

Ամբիոնը կազմակերպել է թեկնածուական ատենախոսությունների նախապաշտպանություններ.

1. Գայանե Ավետիսյան, «Բազմիմաստ բառերի ուսուցումը հիմնական դպրոցում»
2. Լուսինե Ենգոյան, «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում»:
3. Ռուզան Վիրաբյան, «Նորայր Ադալյանի ստեղծագործության լեզուն»:

3. 2016թ. ամառային քննաշրջանների արդյունքներն ըստ կուրսերի և առարկաների

Առարկա	Ուս.	Կուրս	«գերազ.»	«լավ»	«բավ.»	«անբավ.»
Գրաբար	54	Բակալավր. II	2	10	28	14
Ժամանակակից հայոց լեզու	68	Բակալավր. III	13	32	21	2
Հայոց լեզվի տեսություն	16	Մագիստր. I	3	2	10	1

Առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի հայոց լեզու մասնագիտացմամբ թեզերի պաշտպանության արդյունքները այսպիսին են՝

11 ուսանողից՝ «գերազանց»- 4, «լավ»- 2, «բավարար» - 5:

Առկա ուսուցման 4-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքները հետևյալն են՝

2015-2016 ուստարվա 62 շրջանավարտներից՝ «գերազանց» - 7, «լավ» - 14, «բավարար» - 14, «անբավ.» - 20:

2014-2015 ուստարվա «անբավարար» գնահատական ստացած 10 ուսանողից՝

«բավարար» - 2, «անբավարար» - 8:

Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքները հետևյալն են՝

2015-2016 ուստարվա 47 շրջանավարտներից՝ «գերազանց» - 2, «լավ» - 5, «բավարար» - 13, «անբավարար»- 26:

Նախորդ տարիների «անբավարար» գնահատական ստացած 26 ուսանողից՝ «բավարար» - 3, «անբավարար» - 23:

4. Դասախոսների ուսումնական բեռնվածությունը և նրա կատարումը

Ուսումնական գործընթացն իրականացվել է դեկանատի և ամբիոնի մշտական վերահսկողությամբ: Ամբիոնի դասախոսները կատարել են իրենց ուսումնական բեռնվածությամբ նախատեսված աշխատանքները, ինչպես նաև որպես ընթերակա մասնակցել են գրավոր և բանավոր քննություններին: Գրախոսել են ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, կազմել են ԱՈՒՄՓ փաթեթներ, վարել են էլեկտրոնային դասեր, կազմակերպել են արտասահմանցի ուսանողների հեռավար ուսուցումը:

5. Մանկավարժական և գիտամանկավարժական պրակտիկաների կազմակերպումը

Բանասիրական ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման 3-րդ կուրսի և հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողներն իրենց մանկավարժական պրակտիկան անցկացրել են Երևան քաղաքի դպրոցներում:

Բանասիրական ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսանողներն իրենց գիտամանկավարժական պրակտիկան անցկացրել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում և «Ավետիսյան» կրթահամալիրում:

Ամբիոնի նիստում քննարկվել են պրակտիկայի ինչպես ընթացքը, այնպես էլ արդյունքները:

6. Ամբիոնի դասախոսների քարոզչական աշխատանքը

2016թ. ամբիոնի դասախոսները Երևան քաղաքի և մարզերի մի քանի դպրոցներում բուհի վերաբերյալ իրականացրել են քարոզչական աշխատանք՝ դիմորդներին դեպի մեր բուհ և ֆակուլտետ ուղղորդելու նպատակով: Ամբիոնի դասախոսները եղել են Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի մի շարք դպրոցներում:

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

2016 թվականի հունվարից հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի բոլոր դասախոսները թե՛ բակալավրիատում և թե՛ մագիստրատուրայում արդեն լիովին անցել են դասախոսության էլեկտրոնային ձևին: Classroom-ում տեղադրվել են առարկայական փաթեթները: Դասախոսները առցանց շարունակական կապի մեջ են բակալավրիատի ու մագիստրատուրայի հեռավար սովորող ուսանողների հետ:

Ամբիոնը հրատարակել է ժողովածու՝ նվիրված Վ.Բրյուսովի կազմած “Поэзия Армении” ժողովածուի լույս աշխարհ գալու 100-ամյակին և ՀՀ անկախության 25-ամյակին:

Առկա մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհիներ Լիլյա Հարությունյանը, Տաթևիկ Բաբլոյանը (ղեկավար՝ Ա.Դոլուխանյան) և Վարդիթեր Ալվանջյանը (ղեկավար՝ Լ.Հովսեփյան) զեկուցումներ են կարդացել ԵՊՀ-ի կազմակերպած հանրապետական ուսանողական գիտական նստաշրջանում: Զեկուցումները հրատարակվելու են նստաշրջանի նյութերի ժողովածուում:

«Գրական թերթ» ակումբի անդամները 2016 թվականի ապրիլին հանդիպում ունեցան թերթի գլխավոր խմբագիր Կարինե Խոդիկյանի և թերթի աշխատակազմի հետ: Հանդիպումը խիստ տպավորիչ էր և արտացոլվեց թե՛ «Գրական թերթում» և թե՛ «Մանկավարժական համալսարանում»: ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված ամբիոնի գործնական սեմինարը անցկացվեց Պարույր Սևակի և սպարապետ Վազգեն Սարգսյանի տուն-թանգարաններում: Այցելությունները տեղի ունեցան 2016 թվականի հունիսի 4-ին: Քննությունների բոլոր տոմսերը յուրաքանչյուր կիսամյակում թարմացվում և հաստատվում են ամբիոնի նիստով: Երկրորդ կիսամյակում ամբիոնը կազմել է քննությունների նորացված հարցատոմսեր:

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննությունների արդյունքներն են՝

Առկա բակալավր 1-ին կուրս, «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն», դասախոս՝ Դոլուխանյան Ա.Գ - գերազանց 7, լավ 12, բավարար 17, անբավարար 11, չներկայացած 19:

Առկա բակալավր 4-րդ կուրս, «Հայ գրաքննադատության պատմություն», դասախոս՝ Դոլուխանյան Ա.Գ - գերազանց 18, լավ 26, բավարար 13, անբավարար 1, չներկայացած 2:

Ավարտական աշխատանք, առկա բակալավր 4-րդ կուրս - բավարար 2, հեռակա բակալավր 5-րդ կուրս, գերազանց 1:

Առկա մագիստրատուրա 2-րդ կուրս, «Գեղարվեստական ստեղծագործության վերլուծության սկզբունքները», դասախոս՝ Դոլուխանյան Ա.Գ - գերազանց 14, լավ 2, բավարար 16, անբավարար 2, չներկայացած 1:

Մագիստրոսական թեզերի պաշտպանություն, առկա մագիստրատուրա 2-րդ կուրս - գերազանց 3, լավ 3, բավարար 2:

2016 թվականի մայիս ամսին կազմակերպվել է առկա բակալավրիատի երրորդ կուրսի կուրսային աշխատանքների հրապարակային պաշտպանություն: Արդյունքներն են՝ գերազանց -1, լավ – 1, բավարար – 10:

Ամբիոնի յուրաքանչյուր դասախոս ունի իր թղթապանակը, որում շատ պարզ երևում է նրա տարեկան գործունեության ողջ պատկերը:

2016-2017 ուստարին հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը սկսել է սույն թվականի օգոստոսի 24-ին: Բոլոր դասախոսներին հանձնարարվեց անմիջապես Classroom-ում դնել իրենց դասընթացների փաթեթները բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերում:

Մինչև հիմա ամբիոնն ունեցել է 6 նիստ: Հաստատվել են ամբիոնի աշխատանքային պլանը, դասընթացների փաթեթները, թեմատիկ պլանները: Նիստերի ժամանակ հաստատվել են նաև ամբիոնի դասախոսների՝ 2016-2017 ուստարում կատարվելիք գիտահետազոտական աշխատանքների թեմաները:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները մասնակցել են գիտաժողովների: Ա.Դոլուխանյանը մասնակցել է 5 միջազգային գիտաժողովի՝ կարդալով 5 զեկուցում: Դրանցից մեկի նյութերը՝ նվիրված Կարամզինի

հոբելյանին, արդեն տպագրվել են: Ամբիոնի դոցենտ Պարույր Սահակյանը մասնակցել է մեր բուհի կազմակերպած ամառային դպրոցին: Երիտասարդ գիտաշխատողների գիտաժողովում, որը նվիրված էր մանկավարժական հոգեբանության խնդիրներին, Պարույր Սահակյանը կարդացել է զեկուցում՝ «Ֆրեդերիկ Կոնիբերի մանկավարժական հայացքները» թեմայով: Զեկուցումը անգլերեն լեզվով տպագրվել է գիտաժողովի նյութերի ժողովածուում:

Սեպտեմբերից սկսած ամբիոնի վարիչը տպագրել է 8 հոդվածներ: Ամբիոնի դասախոսները մինչև ուսումնական տարվա վերջը կհրատարակեն 2-ական գիտական հոդվածներ: Ա.Դոլուխանյանի հոդվածը անգլերենով դրվելու է ՀՀ ԳԱԱ միջազգային ինտերնետային ամսագրում, իսկ «Journal of Armenian studies» ամսագրի 3-րդ համարում տպագրված է ֆրանսերենով ծավալուն հոդված՝ նվիրված Ժան-Պիեռ Մահեի «Հայաստանը դարերի աղետից հետո» գրքին:

Մանկավարժական պրակտիկա են վարել Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցում (ղեկավար՝ դոցենտ Ռուզան Դոլուխանյան): Ամեն երկուշաբթի՝ ժամը 9^{30}-ից մինչև 12^{30}-ը, ամբիոնի վարիչը եղել է դպրոցում: Պրակտիկան ընթացել է օրինակելի ձևով:

«Ավետիսյան» կրթահամալիրում պրակտիկա են անցկացրել մեր ամբիոնից ղեկավարվող 2 ուսանողներ մագիստրատուրայից (ղեկավար՝ դոցենտ Գայանե Մարդյան): Ուսանողները բարեխղճորեն վարել են դասերը:

Հեռակա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան ընթացել է ֆակուլտետի 3 ամբիոններում: Ամբիոնի դոցենտ Պարույր Սահակյանը ղեկավարել է 3 ուսանողների պրակտիկան, որն ընթացել է արդյունավետ:

Պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը, դոցենտներ Ռուզան Դոլուխանյանը, Պարույր Սահակյանը քարոզարշավի են մեկնել Արագածոտնի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզեր: Պրոֆ. Դոլուխանյանն Աշտարակում և Գլաձոր գյուղում աշակերտների համար անցկացրել է վարպետության դաս:

Ըստ նախապես հաստատված գրաֆիկի ամբիոնը անցկացրել է դասալսումներ պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանի, դոցենտներ Լիլիթ Հովսեփյանի և Ռուզան Դոլուխանյանի մոտ:

Ամբիոնի դասախոսները ուսանողներին տարել են թանգարաններ: Նոյեմբերի 30-ին՝ մեծ դասամիջոցին, ամբիոնը վարել է flash mob: Թեմա՝ «Կոմիտասի կենսահաստատ երգերը»:

Ամբիոնն ունի նոր հայցորդ՝ Լիլյա Հարությունյանը, որը տիրապետում է ռուսերենին, և հաստատվել է համապատասխան թեմա Մաշտոցի անվան Մատենադարանի նյութերով այն իրականացնելու համար: Ամբիոնի 2 հայցորդները՝ Մարի Մնացականյանը, Օվսաննա Խաչատրյանն աշխատում են իրենց ատենախոսությունների վրա, իսկ Աննա Երկանյանն ավարտել է իր ատենախոսությունը:

Ամբիոնի դասախոսները Classroom-ում շարունակական կապի մեջ են իրենց ուսանողների հետ:

ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

- Արևշատ Ավագյանի հետ համալսարանական գրական հանդիպում (23 մարտ):
- Լիպարիտ Սարգսյանի հետ հանդիպում՝ նվիրված պոեզիայի միջազգային օրվան (ՀՄՊՀ հիմնական դպրոցի հետ, 21 մարտ)
- Հայ-ռուսական սլավոնական համալսարանում ուսանողական տարեկան գիտական նստաշրջանին զեկուցում «Եղիշե Արք. Դուրյան. բանաստեղծը, հոգևորականը, մարդը» թեմայով (ուսանող՝ Անի Օհանյան (ԱԲ-3), ղեկավար՝ Քնարիկ Աբրահամյան, 12 ապրիլ):
- Հայ-ռուսական սլավոնական համալսարանում կազմակերպված արևմտահայ բանաստեղծությանը նվիրված հանդիսություն (ուսանողներ՝ Լիդա Եղիազարյան (ԱԲ-3), Սեդա Ասլանյան (ԱԲ-4) և Մելինա Եղիգյան (ՀԲ-5), ղեկավար՝ Սուրեն Դանիելյան, պատասխանատու՝ Քնարիկ Աբրահամյան), որի համար համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանը շնորհակալագիր է ուղարկել մեր համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի անունով (05 մայիս):
- «Սփյուռք» կենտրոնի, Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնների հետ Համալսարանի եւ Նյու Յորքի Պոլսահայ Օգնության Միության (CARS, ատենապետ՝ Պերճ Արազ) հովանավորությամբ միջազգային գիտաժողով՝ նվիրված Հովհաննես Հինդլյանի 150-ամյակին (26-27 մայիս, Երեւան-Կայան ավան):
- Հոկտեմբերի 7-9-ը Ստամբուլում «Հրանդ Դինք» հիմնարկի, Շվեդական Ակադեմիայի և «Համազգային» Հայ Կրթական և Մշակութային Միության կազմակերպած «Հայկական ինքնության քննական մոտեցումներ ԻԱ. դարուն. խոցելիություն, առածգականություն և փոխակերպություն» միջազգային գիտաժողովին «Ինքնության հիմնախնդիրների խոցելիությունը Հայաստանում» զեկուցում (Սուրեն Դանիելյան, հոկտեմբերի 7-9, Ստամբուլ):
- Սուրեն Մուրադյանի հետ համալսարանական գրական հանդիպում ՀՊՄՀ հիմնական դպրոցի հետ համատեղ (28 հոկտեմբեր):
- Անկախության 25-ամյակ. ուսանողական գիտական նստաշրջան (31 հոկտեմբեր):
- Անկախության 25-ամյակ. ուսանողական հանդիսություն (08 նոյեմբեր):
- Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Հրաչ Չիլինկիրյանի դասախոսություն-սեմինարը (15 նոյեմբեր):
- Զարեհ Խրախունու 90-ամյակի հանդիսություն «Ավետիսյան» դպրոցի հետ համատեղ (21 նոյեմբեր):
- Հոկտեմբերի 10-ին Սուրեն Դանիելյանն այցելել է Պոլսի Կեդրոնական վարժարան, դաս վարել և ավագ դասարանների աշակերտներին հրավիրել սովորելու Մանկավարժական համալսարանում: Այցի մասին նա ուսանողներին հնարավորություն է ունեցել պատմելու Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի անցկացրած «Պոլիսը Հայաստանյան դիտանկյունից» Flash Mobի ընթացքում (16 Նոյեմբեր):
- «Հալեպ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպության երիտասարդաց խորհրդի, Կրթության և գիտության նախարարության և Հայ Բարեգործական Ընդհանուր Միության աջակցությամբ կազմակերպված «Արևմտահայերենը Հայաստանում. մարտահրավերներ, հեռանկարներ» խորագրով համաժողովին «Արևմտահայերենը Հայաստանի կրթական համակարգում» թեմայով զեկուցում (Սուրեն Դանիելյան, 26 նոյեմբեր):
- «Համազգային» Հայ Կրթական և Մշակութային Միությունը և Երևանի պետական համալսարանը կազմակերպում են միջազգային գիտաժողով՝ նվիրված Ավետիս Ահարոնյանի

ծննդյան 150-ամյակին (զեկուցողներ՝ Սուրեն Դանիելյան. «Ահարոնյանը արևելահայ քննադատական մտքի գնահատմամբ», Քնարիկ Աբրահամյան. «Լռություն» վեպի գեղագիտական մի քանի հարցերի մասին», 15 դեկտեմբեր):
Անկախության 25-ամյակ. դասախոսական գիտական նստաշրջան (դեկտեմբեր ամսվա ընթացքում):

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ռուզաննա Սադոյան

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ 29 դասախոս, որոնցից՝ 8 գիտությունների դոկտոր, 20 գիտությունների թեկնածու:

Ֆակուլտետի կազմում գործում է երեք ամբիոն, որոնց կազմում աշխատում են .

1. Կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն - 9 դասախոս
2. Քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն – 9 դասախոս, այդ թվում՝ 3 գիտ. դոկտոր,
3. Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն – 11 դասախոս, այդ թվում՝ 2 գիտ. դոկտոր, 2 գիտ. թեկնածու՝ արտաքին համատեղությամբ

Ֆակուլտետի մասնագիտությունները և մասնագիտացումները

Ծածկագիր	Մասնագիտությունը, Կրթական աստիճան	Ուսուցման ձևը	
		Առկա	Հեռակա
Բակալավրիատ			
62.1	Կենսաբանություն	առկա	հեռակա
62.1	Քիմիա	առկա	հեռակա
62	Աշխարհագրություն	առկա	հեռակա
62.1	Էկոլոգիական քիմիա և բնօգտագործում	առկա	հեռակա
Մագիստրատուրա			
68.1	Կենսաբանություն	առկա	-
68.1	Քիմիա	առկա	-
68	Աշխարհագրություն	առկա	-
68.1	Բնապահպանություն և բնօգտագործում	առկա	-

Ուսանողների թվաքանակը

Առկա ուսուցում՝ բակալավրիատ՝ 333, մագիստրատուրա՝ 84

Հեռակա ուսուցում՝ 340

Առկա ուսուցում

Ծածկագիր	Կրթական աստիճան, Մասնագիտություն	I կուրս			II կուրս			III կուրս			IV կուրս			Ընդամենը		
		ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ
	Բակալավրիատ															
020200-62.1	Կենսաբանություն	33	4	29	35	3	32	34	6	28	31	6	25	131	19	122
020800-62.1	Էկոլոգիական քիմիա	5	--	5	6	--	6	19	1	18	18	1	17	47	2	45
020100-62.1	Քիմիա	4	2	2	7	1	6	7	3	4	7	5	2	23	11	12
020400-62.1	Աշխարհագրություն	35	4	31	34	3	31	32	4	28	31	6	25	132	17	115
	Մագիստրատուրա															
020200-68.1	Կենսաբանություն	10	3	7	19	3	16	--	--	--	--	--	--	29	6	23
020800-68.1	Էկոլոգիական քիմիա	5	--	5	9	4	5	--	--	--	--	--	--	14	4	10
020100-68.1	Քիմիա	7	2	5	12	2	10	--	--	--	--	--	--	19	4	15
020400-68.1	Աշխարհագրություն	10	3	7	12	6	6	--	--	--	--	--	--	22	9	13

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան /առկա/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
Կենսաբանություն					
I կուրս	33	--	--	3	100
II կուրս	35	--	9	3	74
III կուրս	34	--	--	5	100

IV կուրս	31	--	1	4	97
Էկոլոգիական քիմիա					
I կուրս	5	--	--	--	100
II կուրս	6	--	--	2	100
III կուրս	19	--	--	2	100
IV կուրս	18	--	--	5	100
Քիմիա					
I կուրս	4	--	--	--	100
II կուրս	7	--	--	5	100
III կուրս	7	--	--	2	100
IV կուրս	7	--	--	2	100
Աշխարհագրություն					
I կուրս	35	--	--	--	100
II կուրս	34	--	--	4	100
III կուրս	32	--	--	3	100
IV կուրս	31	--	--	3	100
Մագիստրատուրա					
Կենսաբանություն					
I կուրս	10	1	--	--	90
II կուրս	19	--	--	6	100
Էկոլոգիական քիմիա					
I կուրս	5	--	--	3	100
II կուրս	9	--	--	6	100
Քիմիա					
I կուրս	7	--	1	--	86
II կուրս	12	--	--	3	100

Աշխարհագրություն					
I կուրս	10	--	--	3	100
II կուրս	12	--	--	8	100

Ամառային քննաշրջան /առկա/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
Կենսաբանություն					
I կուրս	33	--	4	9	88
II կուրս	31	--	--	3	100
III կուրս	34	--	--	3	100
IV կուրս	30	--	--	--	100
Էկոլոգիական քիմիա					
I կուրս	5	--	1	--	80
II կուրս	6	--	--	2	100
III կուրս	19	--	--	2	100
IV կուրս	18	--	--	2	100
Քիմիա					
I կուրս	4	--	--	--	100
II կուրս	7	--	--	3	100
III կուրս	7	--	--	2	100
IV կուրս	7	--	--	--	100
Աշխարհագրություն					
I կուրս	36	--	5	1	86
II կուրս	33	--	1	4	97

III կուրս	32	--	--	3	100
IV կուրս	31	--	--	3	100
Մագիստրատուրա					
Կենսաբանություն					
I կուրս	10	--	--	2	100
II կուրս	19	--	--	7	100
Էկոլոգիական քիմիա					
I կուրս	5	--	--	3	100
II կուրս	9	--	--	6	100
Քիմիա					
I կուրս	6	--	--	1	100
II կուրս	12	--	--	5	100
Աշխարհագրություն					
I կուրս	9	--	--	4	100
II կուրս	12	--	--	11	100

Շրջանավարտներ (առկա)

Մասնագիտություն	Բակալավրիատ			Մագիստրատուրա /գերազանցության դիպլոմով/
	Դրական /գերազ.դիպլ./	անբավարար	չն	
Կենսաբանություն	30/2	--	--	18/3
Էկոլոգիական քիմիա	17/2	1	--	9/4
Քիմիա	7/2	--	--	12/1
Աշխարհագրություն	28/5	3	--	12/4
Այլ բուհերից (աշխարհ)	3	2	--	--
Այլ բուհերից (կենսաբ)	2	--	--	--

Հեռակա ուսուցում՝ Բակալավրիատ

Ծածկագիր	Կրթական աստիճան, Մասնագիտություն	I կուրս			II կուրս			III կուրս			IV կուրս			V կուրս		
		ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ	ընդ	պ/պ	վճ
020200-62.1	Կենսաբանություն	15	--	15	19	--	19	27	--	27	26	--	26	21	--	21
020800-62.1	Էկոլոգիական քիմիա	2	--	2	8	--	8	7	--	7	10	--	10	11	--	11
020100-62.1	Քիմիա	3	--	3	8	--	8	10	--	10	12	--	12	5	--	5
020400-62.1	Աշխարհագրություն	12	--	12	24	--	24	14	--	14	20	--	20	17	--	17

Քննաշրջանների արդյունքներ
Ձմեռային քննաշրջան /հեռակա/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
Կենսաբանություն					
I կուրս	12	--	--	1	100
II կուրս	19	--	1	--	94.8
III կուրս	28	--	2	--	92.8
IV կուրս	26	--	4	--	84.7
V կուրս	21	--	2	--	90.5
Էկոլոգիական քիմիա					
I կուրս	2	--	1	--	50
II կուրս	8	--	--		100
III կուրս	7	--	--	--	100

IV կուրս	10	--	1	1	90
V կուրս	11	--	--	1	100
Քիմիա					
I կուրս	3	--	--	--	100
II կուրս	8	--	--	--	100
III կուրս	10	--	--	--	100
IV կուրս	12	--	--	--	100
V կուրս	5	--	--	--	100
Աշխարհագրություն					
I կուրս	13	--	2	--	84.7
II կուրս	24	--	4	--	83.4
III կուրս	14	--	1	--	92.9
IV կուրս	20	--	3	--	85
V կուրս	19	--	--	3	100

Ամառային քննաշրջան /հեռակա/

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		Պպ	Վճ		
Բակալավրիատ					
Կենսաբանություն					
I կուրս	13	--	--	--	100
II կուրս	19	--	1	--	94.8
III կուրս	28	--	4	--	74.1
IV կուրս	26	--	2	--	92.4
V կուրս	21	--	2	--	90.5
Էկոլոգիական					

քիմիա					
I կուրս	2	--	--	--	100
II կուրս	8	--	--	--	100
III կուրս	7	--	2	--	71.5
IV կուրս	10	--	1	--	90
V կուրս	11	--	2	--	81.8
Քիմիա					
I կուրս	3	--	--	--	100
II կուրս	8	--	--	--	100
III կուրս	10	--	--	--	100
IV կուրս	12	--	2	--	83.4
V կուրս	5	--	2	--	60
Աշխարհագրություն					
I կուրս	13	--	1	--	92.4
II կուրս	24	--	2	--	91.7
III կուրս	14	--	1	--	92.8
IV կուրս	20	--	5	1	75
V կուրս	17	--	3	4	82.4

Շրջանավարտներ (հեռակա)

Մասնագիտություն	Երկտարեցի			Բակալավրիատ		
	Դրական /գերազ. դիպլ./	անբա-վարար	չն	Դրական /գերազ.դիպլ./	Անբա-վարար	չն
Կենսաբանություն	4	--	--	19	2	--
Բնապահպ. և բնօգտագործ.	1	--	--	11	2	1
Քիմիա	1	--	--	5	2	--

Աշխարհագրություն	4	1	--	17	3	--

ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԹԻՎԸ՝ 3

1. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի՝ Արտաշես Զիրոյան

Պրոֆեսորադասախոսական կազմը /հիմնական/

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Կոչում
1.	Արտաշես Նորիկի Զիրոյան	1950	1.0	կ.գ.դ., դոցենտ
2.	Թանգամյան Տիգրան Վարազդատի	1941	1.0	մ.գ.դ., պրոֆեսոր
3.	Պիպոյան Սամվել Խաչատուրի	1962	0.5	կ.գ.դ., պրոֆ.
4.	Ներկարարյան Ալետա Սարգսի	1947	1.0	մ.գ.թ., պրոֆ.պաշտ.
5.	Մկրտչյան Սվետլանա Սերգեյի	1947	1.0	կ.գ.թ., դոցենտ
6.	Աղաջանյան Մարգարիտա Աշոտի	1950	1.0	կ.գ.թ., դոցենտ
7.	Կիրակոսյան Ալվարդ Գևորգի	1966	0.75	կ.գ.թ., դոցենտ
8.	Սիմոնյան Ռուզաննա Կոմինդոսի	1968	1.0	կ.գ.թ., դոցենտ
9.	Քոչարյան Մարո Ադիլի	1965	1.0	կ.գ.թ., դոցենտ
10.	Ուզունյան Քնարիկ Նելսոնի	1985	0.5	մ.գ.թ., դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Պաշտոնը
1.	Ավագյան Ալվարդ Լիպարիտի	1958	1.0	ավագ լաբորանտ
2.	Աբդոյան Ժենի Շավարշի	1978	1.0	պրեպարատոր
3.	Փիլթակյան Արմենուհի Արմենակի	1989	1.0	մասնագետ

2016 թվականին ամբիոնի բոլոր դասախոսները և ուսումնաօժանդակ անձնակազմը աշխատել է նախապես կազմած և ամբիոնի նիստում հաստատած աշխատանքային պլանների և հանձնարարականների հիման վրա:

Ամբիոնի նպատակը եղել է դասախոսությունները, լաբորատոր -գործնական աշխատանքները, ուսումնական և արտադրական պրակտիկաները բարձր մակարդակով կազմակերպելը, ինչը որոշ դժվարություններով հաջողվել է հաղթահարել:

Ուսումնական գործընթացը կազմակերպվել է նոր ծրագրերի և չափորոշիչների հիման վրա, որոնց ստեղծման գործում ամբիոնի մասնակցությունը շատ մեծ է եղել: Վերանայվել են նաև առարկայական նկարագրերը՝ կապված գնահատման նոր համակարգի ներդրման հետ:

Ֆակուլտետի 6 բաժիններում աշխատում է 90 դասախոս, որոնցից 6 դոկտոր պրոֆեսոր, 13 պրոֆեսոր /4 պաշտոնակատար/, 15 դոցենտ, 10 գ/թ

3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքային ծանրաբեռնվածությունը /համատեղություններ, ժամավճարներ/

ա)Ֆակուլտետի 4 ամբիոներում ունենք - 4 համատեղություն
բ) Ֆակուլտետի ուսումնաօժանդակ կազմը՝ 7 աշխատակից
գ) վարչական կազմը՝ 4 աշխատակից

Ըստ բաժինների և կուրսերի շրջափոխումները/բակալավր

2-րդ կուրս /6 բաժին/

կերպարվեստ և գծագրություն	2 ուսանող
կերպ. պատմ և տեսություն	1 ուսանող
մշակութաբանություն	1 ուսանող
կիրառական արվեստ	1 ուսանող
հագուստի մոդելավորում	շրջափոխում չի եղել
երաժշտական կրթություն	1 ուսանող

3-րդ կուրսում /6 բաժին /

կերպարվեստ և գծագրություն	շրջափոխում չի եղել
կերպ.պատմ և տեսություն	1 ուսանող
մշակութաբանություն	1 ուսանող
կիրառական արվեստ	շրջափոխում չի եղել
հագուստի մոդելավորում	շրջափոխում չի եղել
երաժշտական կրթություն	շրջափոխում չի եղել

4-րդ կուրսում /6 բաժին /

կերպարվեստ և գծագրություն	շրջափոխում չի եղել
կերպ.պատմ և տեսություն	շրջափոխում չի եղել
մշակութաբանություն	շրջափոխում չի եղել
կիրառական արվեստ	շրջափոխում չի եղել
հագուստի մոդելավորում	շրջափոխում չի եղել
երաժշտական կրթություն	շրջափոխում չի եղել

Ըստ բաժինների և կուրսերի շրջափոխումները/մագիստրատուրա

2-րդ կուրս /5 բաժին /

կերպարվեստ և գծագրություն	1 ուսանող
կերպ.պատմ և տեսություն	շրջափոխում չի եղել
մշակութաբանություն	շրջափոխում չի եղել
կիրառական արվեստ	շրջափոխում չի եղել
երաժշտական կրթություն	շրջափոխում չի եղել

5. Գիտամեթոդական և ստեղծագործական աշխատանքները

Ֆակուլտետի 4 ամբիոններում կատարված աշխատանքներն են՝

Գիտամեթոդական աշխատանք՝65 (2 մենագրություն, 1դասագիրք, 1 ուսումնական ձեռնարկ, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 57 հոդված)

Հանրապետական և միջազգային ցուցահանդեսներ՝ 68 մասնակցություն

Գիտաժողով՝ 3 մասնակցություն

Ուսումնական գործընթացներին առնչվող փաստաթղթերի վերանայման վիճակը

ա. Մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կազմակերպում և այլն

բ. Ուսումնական պլաններ, առարկայական նկարագրեր, մասնագիտագրեր

գ. Դասախոսությունների փաթեթներ

Պրակտիկաների կազմակերպում /մանկավարժական և ուսումնական/

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի վեց բաժիններում մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է 2016 թվականի սեպտեմբերի 13-ից 6 շաբաթ տևողությամբ:

- *Կերպարվեստ և գծագրություն- Երևանի թիվ 57-րդ հիմանական դպրոց, Աբովյանի անվան համար 2-րդ հիմանական դպրոց, Փ. Թերլեմեզյանի անվան պետական գեղարվեստի ուսումնարան, Հ. Կոջոյանի անվան հանրակրթական դպրոց*
- *Կերպարվեստի պատմություն և տեսություն- Հ. Կոջոյանի անվան հիմնական դպրոցում, ՀՊՄՀ-ի հենակետային ավագ դպրոց -վարժարան / 3 շաբաթ/*
- *Մշակութաբանություն - ՀՊՄՀ-ի հենակետային ավագ դպրոց- վարժարան*
- *Կիրառական արվեստ- Փ. Թերլեմեզյանի անվան պետական գեղարվեստի ուսումնարան*
- *Հագուստի մոդելավորում- Երևանի պետական թեթևարդյունաբերության քոլեջ*
- *Երաժշտական կրթություն- ՀՊՄՀ-ի հենակետային ավագ դպրոց վարժարան, <Վարդանանց ասպետներ> թիվ 106 հիմնական դպրոցում*

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի 2016 ուս. տարվա վեց բաժինների մանկավարժական պրակտիկան անցկացվել է փետրվարի 8-ից մարտի 18-ը 6 շաբաթ տևողությամբ

- *Կերպարվեստ և գծագրություն -Երևանի Նարեկացու անվան թիվ 137 դպրոց, Երևանի թիվ 104, Երևանի թիվ 18 դպրոց, Հ. Կոջոյանի անվան հիմնական դպրոցում,*
- *Հագուստի մոդելավորում - Վահան Խաչատրյան կուտուրիե նորոճևության փուն, Երևանի պետական թեթև արդյունաբերության քոլեջ*

- *Կիրառական արվեստ - Տերյան մշակութային կենտրոն, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան*
- *Կերպարվեստի պատմություն և տեսություն - Երևանի Նարեկացու անվան թիվ 137 դպրոց*
- *Մշակութաբանություն - Երևանի պետական թեթև արդյունաբերության քոլեջ*
- *Երաժշտական կրթություն- Շահումյանի անվան թիվ 1 դպրոցում, Չարենցի անվան թիվ 67 դպրոց*

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի բակալավրիատի 2-րդ կուրսի 2016 ուս. տարվա մանկավարժական պրակտիկան անցկացվել է փետրվարի 10-ից մինչև մայիսի 18-ը /շաբաթը մեկ օր տևողությամբ/

- *Կերպարվեստ և գծագրություն -Երևանի Նարեկացու անվան թիվ 137 դպրոց, Երևանի Չարենցի անվան թիվ 67 դպրոց, Երևանի թիվ 18 դպրոց, Հ. Կոջոյանի անվան հիմնական դպրոցում, Երևանի պետական թեթև արդյունաբերության քոլեջ*
- *Հագուստի մոդելավորում - Երևանի պետական թեթև արդյունաբերության քոլեջ*
- *Կիրառական արվեստ - Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան*
- *Կերպարվեստի պատմություն և տեսություն - Երևանի Նարեկացու անվան թիվ 137 դպրոց*
- *Մշակութաբանություն - Երևանի պետական թեթև արդյունաբերության քոլեջ*
- *Երաժշտական կրթություն- Շահումյանի անվան թիվ 1 դպրոցում, Երևանի Թոթովենցի անվան թիվ 57 հիմնական դպրոցում,*

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հինգ բաժինների մագիստրատուրայի 1-ին կուրսի 2016 ուս.տարվա մանկավարժահետազոտական պրակտիկան անցկացվել Է ապրիլի 11-ից մինչև ապրիլի 29-ը ՀՊՄՀ-ի նույն ֆակուլտետի համապատասխան բաժիններում, որը կապված է եղել մագիստրական աշխատանքի թեմայի հետ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2016թ մագիստրատուրայի 2-րդ կուրսի հինգ բաժիններում մանկավարժահետազոտական պրակտիկան տևել է նոյեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 25-ը 3 շաբաթ տևեղությամբ ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետում:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները բացի դասընթացներից մասնակցել են նաև դպրոցի հասարակական աշխատանքներին, կատարել են այց թանգարաններ, կազմակերպել են ցուցահանդես ՀՊՄՀ Գեղարվեստական ֆակուլտետի ցուցասրահում, համերգներ և դպրոցի տնօրինության կողմից արժանացել են շնորհակալության:

- *պրակտիկայի կազմակերպում /ուսումնական/*

Կիրառական արվեստ բաժնի 1-ին կուրսի ուսումնական պրակտիկան կազմակերպվել է 2016 թ-ի հունիսի 29-ից մինչև հուլիսի 5-ը <<Տերյան մշակութային>> կենտրոնում:

Հագուստի մոդելավորում բաժնի 1-ին կուրսի ուսումնական պրակտիկան կազմակերպվել է 2016 թ-ի հունիսի 29-ից մինչև հուլիսի 5-ը Վահան Խաչատրյան կուտուրիե նորոճևության տանը:Կիրառական արվեստ բաժնի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկան կազմակերպվել է 2016թ-ի սեպտեմբերի 30-ից երեք շաբաթ տևողությամբ <<Տերյան մշակութային կենտրոն>>-ում և ոսկերչական գործարանում: Հագուստի մոդելավորում բաժնի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկան կազմակերպվել է 2016թ-ի սեպտեմբերի 30-ից երեք շաբաթ տևողությամբ <<Վահան Խաչատրյան կուտուրիե>> արվեստանոցում:Կերպարվեստ և գծագրություն բաժնի 3-րդ կուրսի ուսումնական (թանգարանային) պրակտիկան կազմակերպվել սեպտեմբերի 30-ից երեք շաբաթ տևողությամբ ՀՀ Ազգային Պատկերասրահ և հանրապետության այլ թանգարաններ:

Կերպարվեստ և գծագրություն բաժինների ուսումնական պրակտիկան կազմակերպվել է 2016 թ-ի հունիսի 28-ից մինչև հունիսի 30-ից նուլիսի 4-ը Երևան քաղաքում, Երևանին հարակից վայրերում: Կերպարվեստի պատմություն և տեսություն բաժնի 4-րդ կուրսի ուսումնական (թանգարանային) պրակտիկան կազմակերպվել է 2016թ-ի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 11-ը ՀՀ Ազգային Պատկերասրահ:Մշակութաբանություն բաժնի 2-րդ կուրսի ուսումնական (թանգարանային) պրակտիկան կազմակերպվել է 2016թ-ի հունիսի 29-ից մինչև հուլիսի 6-ը ՀՀ Ազգային Պատկերասրահ:Մշակութաբանություն բաժնի 3-րդ կուրսի ուսումնական (թանգարանային) պրակտիկան կազմակերպվել է 2016թ-ի հունիսի 23-ից մինչև հուլիսի 6-ը ՀՀ Ազգային Պատկերասրահ:

ՀՅՈՒՐԵՐ - 2016թ. մայիսի 1-ից 10-ը կերպարվեստի ամբիոնը արտերկրից հրավիրված ճանաչված գեղանկարիչների մասնակցությամբ կազմակերպել է պլեներային գեղանկարչության սիմպոզիում՝ «Պլեներ ՀԱՅԱՍՏԱՆ-2016»:

Սիմպոզիումը նպատակ ուներ հրավիրյալներին ծանոթացնել Մանկավարժական համալսարանի կրթական համակարգին, ԲՈՒՀ-ի կառուցվածքին ու գործունեությանը, խորացնել ու զարգացնել տարբեր երկրների կրթական ու մշակութային կապերը: Անցկացվել են զրույցներ, բանավեճեր, քննարկվել են տարաբնույթ խնդիրներ, ծանոթացել են համալսարանի նկարիչ մանկավարժների ուսումնական գործընթացին, արվեստանոցների պատրաստվածությանը, ուսանողների ներգրավվածությանը կրթական նոր համակարգին, իրականացվել է փորձի փոխանակում՝վարպետաց դասեր:

Լիարժեք և բազմակողմանի ծանոթանալու Հայաստան աշխարհին, ավելի մոտիկից զգալու հայ գեղանկարչի ներշնչանքի աղբյուրը, կազմակերպվել են այցելություններ պատմական և մշակութային տեսարժան վայրեր, որտեղ նաև նկարել են համալսարանի նկարիչ-մանկավարժների հետ:Սիմպոզիումը ավարտվել է ամփոփիչ ցուցահանդեսով Հայաստանի Ազգային Պատկերասրահում (յուրաքանչյուր հեղինակից մեկական լավագույն աշխատանք նվիրաբերվել է մանկավարժական համալսարանին):

ՀՊՄՀ-Ի ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԼԵՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 5-16-ը Մանկավարժական համալսարանի 4 դասախոս մասնակցել է Լիտվայի Նիդա քաղաքում կայացած միջազգային պլեներին: Հայկական պատվիրակությունը ղեկավարել է բուհի Կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ֆարաոն Միրզոյանը: Միջազգային պլեներին մասնակցել են նկարիչներ Հայաստանից, Հնդկաստանից, Լեհաստանից, Գերմանիայից, Սերբիայից, Բելառուսից և Ռուսաստանից: Օրեր շարունակ հայ

և այլ ազգի նկարիչներն աշխատել են, ստեղծագործել նավահանգիստներով և բազմաթիվ այլ տեսարժան վայրերով հարուստ քաղաքում, այնուհետև Նիդայի «Ագիլա» մշակույթի կենտրոնում ունեցել աշխատանքների համատեղ ցուցադրություն:

Հայաստանյան պլեները մեծ արձագանք էր գտել օտարազգի նկարիչների շրջանում, իսկ Ազգային պատկերասրահում նրանց աշխատանքների ցուցադրության կազմակերպումն ու այդ նկարները պատկերասրահի ֆոնդին նվիրաբերելը իրենց համար մեծագույն հպարտություն է:ՀՊՄՀ-ից միջազգային պլեներին մասնակցել է 4 գեղանկարիչ՝ Ֆարաոն Միրզոյանը, Գայանե Եղիազարյանը, Մարտիրոս Բադալյանն ու Արթուր Մարտիրոսյանը:Նշենք, որ նկարիչների համար անչափ կարևոր միջազգային պլեներները կլինեն շարունակական. առաջիկայում նման նախաձեռնություն նախատեսված է անցկացնել Վիլնյուսում:

ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Աիդա Թոփուզյան

1. 2016 թ. մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության **ամբիոնի աշխատանքները իրականացվել են համալսարանի, ամբիոնի ռազմավարական և տարեկան պլանների և ամբիոնի կանոնադրության համաձայն:** Ըստ այդ էլ 2016 թ.-ին տեղի են ունեցել ամբիոնի 20 նիստեր, որտեղ քննարկվել են կրթության բովանդակությունը և ուսումնական գործընթացը բարելավելուն, ուսուցման որակի մշտադիտարկման և ուսանողների գիտամանկավարժական, հետազոտական պրակտիկայի կազմակերպման և արդյունքների վերլուծմանը, մագիստրոսների թեզերի որակին և դասախոսների մասնագիտական մակարդակը բարձրացնելուն, մանկավարժական կրթության ոլորտի զարգացման հիմնախնդիրները վեր հանելուն, ասպիրանտների և հայցորդների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված և այլ հարցեր: 2016 թ. հունվար և սեպտեմբեր ամիսներին տեղի ունեցած ամբիոնի բոլոր նիստերում քննարկվել են դասավանդվող առարկաների վերանայված 28 փաթեթներ: Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվում են նաև դասախոսների փոխադարձ դասալսումների արդյունքները: Դասալսումների ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում օգտագործվող մեթոդներին, տեսասահիկների ներկայացման բովանդակության և ձևի որակին, ուսանողների ակտիվությանը:
2. Համալսարանի **կրթության բովանդակության բարեփոխումների շրջանակում.** ամբիոնում մշակվել են ԿՀՍ ֆակուլտետի բակալավր ու համալսարանի բոլոր ֆակուլտետներում մագիստրատուրա 1-2-րդ կուրսերում դասավանդվող առարկաների փաթեթները՝ ըստ պահանջված ձևաչափի: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ առարկայի

դասախոսությունների և գործնական աշխատանքների բովանդակության, օգտագործված ինտերակտիվ մեթոդների և աշխատանքի այլ ձևերի համապատասխանությանը առարկայի վերջնարդյունքներին: Ամբիոնում վերանայվել են նաև ԿՀՍ ֆակուլտետի սոց. մանկավարժ մասնագիտության բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական պլանները, մշակվել են առաջարկություններ դրանք բարելավելու ուղղությամբ, ավելացել է կամընտրական առարկաների թիվը:

3. Ամբիոնը մեծ ուշադրություն է դարձնում **ընթացիկ և ամփոփիչ ստուգումների կազմակերպման և անցկացման,** դրանց բովանդակության վերահսկման աշխատանքներին: Վերանայվել են ընթացիկ և ամփոփիչ ստուգումների բաղադրիչները, գրավոր աշխատանքների և բանավոր քննությունների հարցաշարերը, բացառվել են վերարտադրողական հարցերը, ավելացել են ուսանողների տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործելուն ուղղված, նրանց կարողություններն ու հմտությունները բացահայտող գործնական հարցերը: Մշակվել են բոլոր տիպի գործնական աշխատանքների և ստուգման ձևերի գնահատման չափորոշիչները:
4. Վերանայվել են **կուրսային աշխատանքների, ռեֆերատների, մագիստրոսական թեզերի թեմաները**՝ դրանք առավել արդիական, հետազոտությունների հիման վրա եզրակացություններ պարունակող աշխատանքներ դարձնելու նպատակով: Մշակվել են նաև կուրսային աշխատանքներին ներկայացվող պահանջներն ու գնահատման չափորոշիչները:
5. Ամբիոնը լրջորեն զբաղվում է **ուսումնագիտական և հետազոտական պրակտիկաների կազմակերպման, անցկացման և ամփոփման** գործընթացներում տեղ գտած բացերը լրացնելու հարցերով: Ամբիոնի կողմից մշակվել և ներդրվել են մագիստրոսների և սոցիալական մանկավարժ բակալավրի պրակտիկանտի թղթապանակները, որտեղ ամփոփված է ուսանողի ուսումնառության տարիների բոլոր տիպի պրակտիկաների բովանդակությունը, յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման չափանիշները, պրակտիկայի իրականացման ձևերն ու մեթոդները և այդ ամենի համապատասխանությունը պրակտիկայի վերջնարդյունքներին:
6. Ամբիոնի կարևոր գործառույթներից մեկը **ասպիրանտների և հայցորդների** հետ տարվող աշխատանքն է: 2016թ. ամբիոնն ունեցել է 4 հայցորդ, որից 1-ը տարկետում է վերցրել: Մշակվել է ասպիրանտների /հայցորդների տարեկան հաշվետվությունների մատյան: Նրանց գործունեության մասին հաշվետվությունները պարբերաբար լսվում են ամբիոնի նիստերում և սեմինարներում: 2016թ. թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել ամբիոնի հայցորդ Աննա Ստեփանյանը:
7. Ամբիոնում աշխատում են 2 դոկտոր-պրոֆեսորներ, 7 դոցենտներ, 7 մանկավարժական գիտությունների թեկնածուներ, որոնցից 1-ը ասիստենտ է: Ամբիոնի գործունեության կարևոր ուղղություններից մեկը **դասախոսների մասնագիտական աճի ապահովումն է:**
    - Ամբիոնի նիստերում պարբերաբար ներկայացվում է տեղեկատվություն՝ մանկավարժական նոր գրականության վերաբերյալ,
    - անցկացվում են դասախոսների փոխադարձ դասալսումներ, բաց դասեր և դրանց քննարկումներ,
    - ամբիոնում քննարկվել և համապատասխան առաջարկություններ են մշակվել վարկանիշավորման կարգի, «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՊՄՀ և ամբիոնի ռազմավարական ծրագրերի նախագծերի վերաբերյալ,

- կազմակերպված է մշտական գործող սեմինար, որտեղ ամիսը մեկ անգամ քննարկվում են ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրներին վերաբերող հարցեր:

8. Ամբիոնի **դասախոսների գիտական գործունեությունը** տարեց-տարի ավելի լայն թափ է ստանում.
   - 2016թ. բոլոր դասախոսները, առկա կամ հեռակա, մասնակցել են ներհամալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, կլոր սեղանների աշխատանքներին:
   - 2016թ. ամբիոնը կազմակերպել է **3 գիտաժողով՝**
     - «Հ.Հինդլյանի կյանքն ու գործունեությունը» / կազմակերպվել է ՀՊՄՀ Սփյուռքի կենտրոնի հետ/:
     - «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները. կանխման և հաղթահարման ուղիները» թեմայով գիտաժողովը, որտեղ քննարկվեցին ամբիոնին կից գործող «Մանկության հիմնախնդիրները ուսումնասիրող լաբորատորիայի» կողմից մշակված և թիվ 124 դպրոցում ներդրված ընտանիք – դպրոց համագործակցության մոդելը, ընտանիքում ապահով մանկության բնութագրիչները, ընտանեկան դաստիարակության և դպրոց-ընտանիք կապի ամրապնդման ուղղությամբ ուսուցիչներին ներկայացվող մանկավարժական պահանջները, տարրական դպրոցի ծնողական համալսարանի ծրագիրը:
     - Ավանդույթ է դարձել մագիստրոսների գիտաժողովի անցկացումը, որտեղ ամփոփվում են ամբիոնի գծով թեզ գրող մագիստրոսների հետազոտական աշխատանքների արդյունքները:
   - 2016թ. հունիսին ՀՊՄՀ-ում առաջին անգամ ամբիոնի ուժերով կազմակերպվեց երիտասարդ գիտնականների դպրոց, որին մասնակցեցին ՀՊՄՀ-ի և այլ բուհերի 50-ից ավելի դասախոսներ, ասպիրանտներ և հայցորդներ: Նրանք հնարավորություն ունեցան լսելու ՀՊՄՀ-ի պրոֆեսորների վարպետության դասերը, մասնակցելու երիտասարդ դասախոսների բաց դասերին և ներկայացնելու իրենց ծրագրերը, որոնք տպագրվել են «Կրթության ժամանակակից հիմնախնդիրները» ժողովածուում: Սույն ժողովածուում տպագրված են նաև ամբիոնի մանկավարժության գծով թեզ գրող մագիստրոսների հոդվածները:
   - Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ջանքերով 2016թ. հրատարակվել և տպագրության է հանձնվել 71 գիտական հոդված, որից 7-ը Ռուսաստանում :
   - 2016թ. տպագրվել է «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները. Կանխման և հաղթահարման ուղիները» թեմայով ժողովածուն, որում ամփոփվել են «Մանկության հիմնախնդիրները ուսումնասիրող լաբորատորիայի» կողմից կատարված ուսումնասիրությունները:

9. **<u>Այլ կազմակերպությունների հետ համագործակցություն</u>**

Ամբիոնը **համագործակցում** է համալսարանի բոլոր ստորաբաժանումների և կրթության ոլորտի բոլոր օղակների հետ: Ամբիոնում քննարկվել են համալսարանի տարբեր ֆակուլտետներում իրականացված տարբեր ատենախոսություններ և տրվել են դրանց վերաբերյալ համապատասխան փորձագիտական կարծիքներ:

- Ամբիոնի դասախոսներից Ա.Հովհաննիսյանը հրավիրվել է Գավառի և ԵՊԼՀ- ի համալսարաններ որպես պետական ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ:

Ամբիոնի դոկտոր-պրոֆեսոր Ի.Կարապետյանը հրավիրվել է Գյումրիի մանկավարժական համալսարան և Հայ բուսակի համալսարան որպես պետական ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ:

- Ամբիոնի դասախոսները անցկացրել են նաև վերապատրաստումներ տարբեր բուհերում /Ա.Հովհաննիսյան և Լ.Պողոսյան՝ Պոլիտեխնիկական համալսարան, Ի.Կարապետյան՝ ԵՊՀ և Բժշկական համալսարան/:
- Ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանրապետության մանկավարժական գիտությունների դոկտոր-պրոֆեսորների մշտական գործող կլոր սեղան,որի նպատակն է քննարկել ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրները և մշակել գործողություններ Հայաստանում դրանց բարելավման համար: 2016թ. քննարկվել է Մանուկ Մկրտչյանի «Հանրակրթության զարգացման հեռանկարները» հայեցակարգը:
- Ամբիոնի կողմից ուսանողների հետ միասին կազմակերպվել են նաև արտալսարանային հետևյալ միջոցառումները.
  - «Երեխան մարդ է և ընկեր» թեմայով քարոզների մրցույթ՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան:
  - Կլոր սեղան՝ նվիրված «Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան»:
  - Դիդակտիկ ուսումնական նյութերի ցուցահանդես՝ նվիրված ուսանողական պրակտիկայի ավարտին:
  - ԿՀՍ բակալավր սոցիալական մանկավարժների 2-րդ և 3-րդ կուրսերի միջև «Ուրախների և հնարամիտների» մրցույթ:

10. Ամբիոնը ժամանակին, նշված ժամկետներում կատարել է համալսարանի **գիտխորհրդի** որոշումները, **ռեկտորի հրամաններն** ու պրոռեկտորների հանձնարարությունները:
11. Ամբիոնի աշխատանքներում դեռևս կան մի շարք **թերություններ**: Մասնավորապես պետք է նշել, որ անհրաժեշտ է.
    - կատարելագործել ուսանողների ինքնուրույն աշխատանքի նկատմամբ հանձնարարականների բովանդակությունը և վերահսկողությունը,
    - ակտիվացնել ուսանողների հետ տարվող արտալսարանային աշխատանքը,
    - խստացնել բոլոր տիպի մանկավարժական պրակտիկաների անցկացման և գնահատման գործընթացների նկատմամբ վերահսկողությունը:
    - կատարելագործել դասավանդող դասախոսի և տվյալ առարկայի գործնական աշխատանքը անցկացնող դասախոսի համատեղ աշխատանքը,
    - բարձրացնել դասախոսների ինքնավերլուծությունների կատարման որակը:

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Կարինե Դանիելյան

Ուսումնական գործընթացի կազմակերպում: Ամբիոնի դասախոսական անձնակազմի ուսումնական աշխատանքների ծավալը և դասաբաշխումը ժամանակին կազմվել և ներկայացվել է հաստատման, որով էլ իրականացվել է ամբիոնի գործունեությունը: Ընթացիկ ուս.տարում

ամբիոնում աշխատում են 9 դասախոսներ, որոնց ուսումնական ծանրաբեռնվածությունը համապատասխանում է կանոնակարգով հաստատված ժամաքանակին: Ամբիոնի դասախոսները առանց բացթողումների կատարել են դասաբաշխմամբ իրենց հատկացված ժամաքանակը, ոչ մեկի կողմից թերակատարումներ չեն եղել, բոլոր դասախոսներն էլ իրենց պարտականությունները կատարել են բարեխղճորեն: Անցկացվել են ամբիոնի 10 նիստ, որտեղ քննարկվել են տարեկան պլանով նախատեսված աշխատանքային և ընթացիկ հարցերը: Ամբիոնում նախապես քննարկվել և հաստատվել են սեմինարների, ստուգողական, կուրսային, ինքնուրույն և ավարտական աշխատանքների թեմաները: Նշված ժամկետներում իրականացվել են կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի պաշտպանությունները: Արդյունքները գոհացուցիչ են: Ողջ ուսումնական տարվա ընթացքում կատարվել են դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերում:

Ամբիոնի վարիչ Կ.Դանիելյանը 2016թ. մասնակցել է 46 գիտաժողովների/սեմինարների (15-ում հանդես է եկել զեկուցումներով):

Ամբիոնի դասախոսները, մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողները մասնակցել են հետևյալ գիատաժողովների/սեմինարների.

Դրանցից են՝

1. Regional Forum on Sustainable Development., UNECE, Geneva, Swiss, 10.05. 2016.
2. Eights “Environment for Europe” Ministerial Conference. UNECE, Batumi, Georgia, 08.06, 09.06, 10.06. 2016
3. Special Session on the UNECE Committee on Environmental Policy. Batumi, 07. 06.2016.
4. Conference on Ecotourism in Armenia. Yerevan, AUA, 02.04.2016.
5. Armenia. A Gateway to Major Markets. Yerevan, Meridian Expo Center, 20.09.2016.
6. Проблемы безопасности окружающей среды. Международная научная конференция государств-членов ОДКБ. Ереван, 27-29.09.2016.
7. Բնապահպանության կրթությունը Հայաստանում. Ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները: Ազգային համաժողով, Երևան, 17.02.2016.
8. Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն /ՌԱՄԱ/ Ազգային համաժողով: EaP GREEN, Երևան, 28.04.2016.
9. ՌԱՄԱ վեցերորդ եզրափակիչ համաժողով. Օդային ավազան արտանետումների կրճատում և վերահսկողություն: EaP GREEN, Երևան, 30.08.2016.
10. Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման իրավական, քաղաքական, ռազմավարական և ինստիտուցիոնալ շրջանակներ: UNDP, Երևան, 23.10.2016.

Կ.Դանիելյանը ինքը կազմակերպել է հետևյալ համաժողովները/կլոր սեղանները, որտեղ նաև զեկուցումներով հանդես է եկել՝

1. “Աջակցություն կառավարման համակարգի և ՀԿ-սեկտորի միջև երկխոսությանը ՀՀ-ում Հետ Ռիո+20 գործընթացի իրականացման շրջանակներում” EU, GEF,UNDP ծրագրի գործընթացի շրջանակում.
   10 կլոր սեղաններ Երևանում և մարզերում,
2. “Էկոլոգիական աշխարհահայաց և կանաչ տնտեսություն:” Ազային գիտաժողով, EU, GEF,UNDP, ՀՀ Կառավարության նիստերի դահլիճ, 15.06.2016.
3. “Մարտահրավերներ երեխաների համար շրջակա միջավայրի դեգրադացման և կլիմայի փոփոխության հետևանքով:” UNICEF ծրագրի գործընթացի շրջանակում սեմինարների շարք, եզրափակիչը՝ 14.09.2016.

4. Կ. Դանիելյանը մասնակցել է և զեկուցումներով հանդես է եկել UNDP –ի կողմից Երևանի 6 համալսարաններում կազմակերպած “Երիտասարդությունը հանուն կայուն զարգացման” ՄԱԿ-ի 2030թ. զարգացման օրակարգին նվիրված ֆորումներում:
5. Կ.Դանիելյանը մասնակցել է նաև մի շարք խորհրդակցություններին ՀՀ Նախագահի նստավայրում, ՀՀ Կառավարությունում, Բնապահպանության, Քաղաքաշինության, Էկոնոմիկայի, Կրթության և գիտության նախարարություններում, Երևանի քաղաքապետարանում և Երևանի Օրհուս-կենտրոնում:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են նաև մի շարք միջազգային գիտական կոնֆերանսների, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնում կազմակերպված գիտական սեմինարներում:

Ամբիոնի վարիչ պրոֆ. Կ. Դանիելյանը շարունակել է ուսումնասիրությունները էկոլոգիական անվտանգության և կայուն զարգացման ոլորտում:

Ամբիոնի դասախոսները իրենց գիտական հետազոտություններն են կատարել տարբեր բնագավառներում և այդ ընթացքում տպագրվել են 8 հոդվածներ, 1 ձեռնարկ և 2 մենագրություն:

<u>Կիսամյակային ստուգարքներ և քննություններ:</u>

Ստուգարքները և քննությունները կազմակերպվել են ըստ դեկանատների կողմից կազմված գրաֆիկների: Ստուգարքներ ընդունվել են, ինչպես կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի տարբեր բաժիններում դասավանդվող էկոլոգիական ցիկլի առարկաներից, այնպես և համալսարանի բոլոր ֆակուլտետներում դասավանդվող բնապահպանության և էկոլոգիայի հիմունքներ առարկայից: Չներկայացած և անբավարար ստացած ուսանողները վերահանձնել են առարկան լիկվիդացիոն շրջանում և ստացել բավարար գնահատականներ:

<u>Ուսումնական և մանկավարժական պրակտիկան:</u>

Բնապահպանության բաժնի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան անց է կացվել Աղավնաձորի ուսումնական բազայում մեկ շաբաթ տևողությամբ, որտեղ ուսանողները ծանոթացել են Մարմարիկ գետի հովտի էկոլոգիական առանձնահատկություններին: Կազմակերպվել է նաև գիտարշավ դեպի« Սևանի Ազգային պարկ, որտեղ նրանք ծանոթացել են Սևանա լճի ջրային պաշարների որակի, ողջ Սևանի ավազանի կենսաբազմազանության պահպանման հետ, նրանց ներկայացել է նաև հատուկ պահպանվող տարածքների կարևորությունը: Ուսանողները այցելել են նաև Որորների արգելոց, որը միակն է ողջ ավազանի տարածքում: Ուսմնական պրակտիկան շարունակվել է Երևանում, որի ընթացքում ուսանողները այցելել են ԳԱԱ-ի բոլոր այն գիտահետազոտական ինստիտուտները, որոնք առնչվում են էկոլոգիայի հետ: Տարվա ընթացքում համապատասխան առարկաների գծով կազմակերպվել են ճանաչողական էքսկուրսիաներ՝ Հրազդանի կիրճ, ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Բուսաբանական այգի, Հիդրոպոնիկայի գիտահետազոտական ինստիտուտ, Սեյսմիկ պաշտպանության ազգային կենտրոն, Ջրերի մաքրման կայան, Բնության թանգարան և այլն: Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել է այցելություն ՀՀ ԱՆ նարկոլոգիական կլինիկա և ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն, որտեղ նրանք մասնակցել են մարդու առողջության վրա ինքնակամ ռիսկի գործոնների ունեցած ազդեցության հարցերի շուրջ կազմակերպված սեմինար-պարապմունքին:

Բնօգտագործման բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար կազմակերպվել է գիտաճանաչողական այց Գյուլագարակի դենդրոլոգիական այգի: Այցելության ավարտին կազմակերպվել է սեմինար՝ նվիրված անտառային էկոհամակարգերի և հատկապես ասեղնատերև անտառների նշանակության և առանձնահատկությունների հարցերին:

Էկոլոգիական քիմիա մասնագիտության առկա ուսուցման III և IV, հեռակա ուսուցման V կուրսի ուսանողները մանկավարժական պրակտիկա են անցել Երևանի № 33 և № 127, №57 և №106 դպրոցներում (մեթոդիստներ Լ. Ավանեսյան, Ս.Եղիազարյան, Ս.Շողերյան, Ռ. Պողոսյան):

Առաջին շաբաթվա ընթացքում ուսանողները կատարել են դասալսումներ, որից հետո կազմակերպել են քննարկումներ, ուշադրություն դարձնելով դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդների և գնահատման առանձնահատկությունների վրա: Նրանք դասավանդել են 5 շաբաթ: Յուրաքանչյուր օր, դասերից հետո կազմակերպել են քննարկումներ՝ մեթոդիստների և պարապող ուսուցիչների մասնակցությամբ: Դասերը արդյունավետ անցկացնելու համար ուսանողները դպրոց են տարել կենդանիներ, կատարել են հերձումներ, աշակերտների հետ պատրաստել են հերբարիումներ: Համակարգչի և էլեկտրոնային գրատախտակի օգնությամբ անց են կացրել բաց դասեր:

Ուսանողները տարբեր դասարաններում անց են կացրել հոգեբանական դասեր՝ թեստավորման միջոցով պարզելով յուրաքանչյուր աշակերտի հոգեբանական տիպը: VIII դասարանում կազմակերպել է միջոցառում՝

- <<Ծաղկի կրկնակի բեղմնավերում>> ֆիլմի դիտում – քննարկում, 7-րդ
- <<Միաշքիլ և երկշաքիլ բուսեր>> տեսասահիկի ցուցադրում- քննարկում, 7-րդ
- <<Իրերի երկրորդ կյանքը>>, խորհրդով միջոցառում 6-րդ
- << Թռչունները որպես թունաքիմիկատների և պարարտանյութերի ցուցիչներ>> բաց դաս 7-րդ
- << Բնական աղետները ՀՀ-ում>> ճանաչողական բնույթի միջեցառում 8-րդ
- Արտադպրոցական միջոցառում:Առաջին բուժօգնություն:
- Արտադպրոցական միջոցառում Բջջի բաղադրությունը:Միտոզ:
- Արտադպրոցական միջոցառում ՝Երկիր մոլորակը նրա կառուցվածքը,համաստեղություններ:
- Արտադպրոցական միջոցառում՝ Կենդանիների թագավորություն:
- Ֆիլմի դիտում,,Ծաղկավոր բույսերի վեգատատիվ բազմացումը,,
- Տեսաֆիլմի դիտում,, երկիր մոլորակը.ձևը ,չափսերը:Միջօրեականները և զուգահեռականները,,
- Բաց դաս ,,Շրջակա միջավայրի աղտոտումը ,,
- Ստենդի աշխատանքներ
- Մեդուզաների հրաշք աշխարհում ճանաչողական բնույթի միջոցառում

Մանկավարժական պրակտիկան անցել է բարձր մակարդակով և ուսանողները արժանացել են դպրոցի տնօրենի և ուսուցիչների շնորհակալությանը:

Պետական քննություն:Էկոլոգիական քիմիա բաժնի IV կուրսի 17 ուսանողներից ավարտական աշխատանք ներկայացրել են 3 ուսանող, մնացածը հանձնել են մասնագիտական քննություն և ստացել են լավ, գերազանց, բավարար գնահատականներ:

Առաջարկություններ.Կրթական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ է ամբիոնին կից ստեղծել լաբորատորիա, կահավորել համապատասխան գույքով և սարքերով, ինչպես նաև աջակցել ամբիոնին ձեռք բերել դիդակտիկ օժանդակ նյութեր: Ցանկալի է նաև երկարացնել մանկավարժական և ուսումնա-արտադրական պրակտիկաների ժամկետները:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Դավիթ Սարգսյան

Ամբիոնի կազմը. 2015-2016 ուստարվա երկրոդ կիսամյակում ամբիոնի դասախոսական կազմը բաղկացած էր 15 հոգուց: Ս/թ սեպտեմբերից ամբիոնն ուներ 17 աշխատող, իսկ այժմ 21 այդ թվում՝ 1 ԳԱԱ թղթ. անդամ, 2 դոկտոր պրոֆեսոր, 1 թեկնածու պրոֆեսոր, 7 թեկնածու դոցենտ, 3 թեկնածու ասիստենտ, 1 թեկնածու դասախոս, 5 դասախոս, 1 մասնագետ: Համատեղությամբ աշխատում են ամբիոնի դասախոսներից 13-ը: ***Ուսումնական աշխատանքներ.*** Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում ուսումնական գործընթացը կազմակերպվել է՝ ելնելով համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան խնդիրներից ու նպատակներից: Հատուկ ուշադրություն է դարձվել պարապմունքների ընթացքին. 2016-2017 ուսումնական տարվա սկզբին ամբիոնը հաստատել է առաջին կիսամյակում դասավանդվող առարկաների հիմնական մասի ուսումնամեթոդական փաթեթները և կարճ ժամանակում դրանք տեղադրվել են Classroom էլեկտրոնային հարթակ: Ուսումնական պարապմունքները ընթացել են դեկանատների կողմից կազմված ժամանակացույցին համապատասխան և անցկացվել են գիտամեթոդական պատշաճ մակարդակով, ինտերակտիվ մեթոդներով: Համաձայն նախապես կազմված գրաֆիկի ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են դասալսումներ: Ընթացիկ ստուգումները և կիսամյակային քննությունները կազմակերպվել են ըստ ուսումնական պլանների և տարեկան գրաֆիկների՝ սահմանված ժամկետներում: Քննությունների հարցաշարերը տեղադրվել են Classroom էլեկտրոնային հարթակում՝ դրանք հասանելի դարձնելով ուսանողներին: Քննաշրջաններն անցկացվել են ամբիոնի ղեկավարության հսկողությամբ: Հարկ ենք համարում նշել, որ քննաշրջանների ընթացքում ժամանակացույցի խախտումներ և այլ կարգի միջադեպեր չեն եղել:

Ինչպես և բոլոր տարիներին ամբիոնը լրջորեն նախապատրաստվել և հաջողությամբ անցկացրել է պետական քննությունները Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում /մասնագիտություն՝ Տեխնոլոգիա և ձեռնարկչություն/: Նախօրոք կազմակերպվել են կոնսուլտացիաներ: Տրամադրվել են ուսանողներին հարցաշարերը: Ժամանակին են կազմակերպվել նաև Կուլտուրայի ֆակուլտետի ՍՄԳ կառավարում/մենեջմենթ/ մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ որակավորման քննությունները: Այստեղ նույնպես նախապես կազմակերպվել էին խորհրդատվություններ՝ համաձայն սահմանված գրաֆիկի:

Այս տարի ևս ամբիոնը հատուկ ուշադրություն է դարձրել պրակտիկաների կազմակերպմանը: /Ուսումնական պրակտիկաներ են կազմակերպվել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության 4-րդ կուրսում, Կուլտուրայի ֆակուլտետի ՍՄԳ կառավարում /մենեջմենթ/ մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերում: ՍՄԳ կառավարում /մենեջմենթ/ մասնագիտության մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում կազմակերպվել է մանկավարժահետազոտական պրակտիկա/:

Մեթոդական աշխատանքներ. Հաշվետու տարվա ընթացքում և, առհասարակ, վերջին տարիներին խիստ ակտիվացել են այս բնագավառում կատարվող աշխատանքները՝ պայմանավորված համալսարնում ուսուցման նոր ձևերի կիրառմամբ և ուսանողների գիտելիքների գնատատման նոր կարգի պահանջներով: Ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասախոսությունների թեմաների արդիականացման, դասախոսությունների և

լրացուցիչ նյութերի թարմացման, ինչպես նաև դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հետ կապված խնդիրները: Արմատապես վերանայվել են առարկայական նկարագրերը, առարկաների ուսումնամեթոդական փաթեթները:

Գիտահետազոտական աշխատանքներ. Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվել է ընդհանուր առմամբ 10 հոդված, որից երեքը ցիտվող ամսագրերում և ուսումնական երկու ձեռնարկ և մեկ մենագրություն: 2016թ.-ին ամբիոնի ասպիրանտների և հայցորդների թիվը համալրվել է 4-ով:

Կազմակերպչական աշխատանքներ. Այս ոլորտի աշխատանքներն իրականցվել են հիմնականում, ամբիոնի նիստերի, աշխատանքային քննարկումների և ամենօրյա աշխատանքի միջոցով: Հաշվետու տարվա ընթացքում հրավիրվել են ամբիոնի 11 նիստ, որտեղ քննարկվել են համալսարանի և ամբիոնի գործունեությանը վերաբերվող ամենատարբեր հարցեր (դասախոսությունների փաթեթների, ուսումնական ծրագրերի և պլանների, աշխատանքային կարգապահության, հեռակա ուսուցման, ուսանողների գիտելիքների գնահատման նոր կանոնակարգի, պրակտիկայի, քննաշրջանների նախապատրաստման և անցկացման, տարբեր ֆակուլտետներում պարապմունքների ընթացքի, դասալսումների, գիտահետազոտական աշխատանքների, ատենախոսությունների քննարկման և ամբիոնի գործունեության մյուս բոլոր բնագավառների հետ կապված այլ հարցեր): Սույն թվականի նոյեմբերի սկզբից ամբիոնին միավորվել է **Կրթության կառավարման ամբիոնը**՝ որը ստեղծվել էր միջազգային ծրագրի շրջանակներում: Միջազգային ՏԵՄՊՈՒՍ- 530311-TEMPUS-1-2012-1 AM-TEMPUS-JPCRC(2012-4000/001-001) դրամաշնորհային ծրագրի ավարտից հետո այն ինտեգրվել է տնտեսագիտության և կառավարման ամբիոնի կազմում, դրանով իսկ ապահովելով ծրագրի հետագա կայունության և լավագույն փորձի փոխանցման հնարավորությունը: Ամբիոնի կողմից մշակած կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքների արդիականությունը համապատասխանում է եվրոպական առաջատար բուհերի կողմից առաջարկված նմանատիպ կրթական ծրագրերին /բենչմարկինգի իրականացում/ դեռ ավելին այն մշակվել է եվրոպական առաջատար համալսարանների գործընկերների ակտիվ մասնակցությամբ և աշխատաժողովների ընթացքում դրանք քննարկվել են և ուղարկվել փորձագետի դիտարկմանը: Միջազգային փորձագետի կողմից արվել են որոշակի նկատառումներ, որոնք հաշվի են առնվել աշխատանքային թիմի կողմից և վերանայվել են՝ արդիականացման և բարելավման տեսանկյունից: Աշխատանքային խմբի կողմից վերանայվել են առարկայական նկարագրերի կառուցվածքային և բովանդակային մասը՝ պայմանավորված ակնկալվող արդյունքներով, ինչպես նաև գնահատման մեխանիզմները: ՄԿԾ –ի մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացը միտված է կիրավող գնահատման համակարգի, ձեռքբերված ուսումնառության արդյունքների, դասավանդման մեթոդների և դրա արդյունավետության ուսումնասիրությանը և գնահատմանը, անհրաժեշտ ռեսուրսների առկայության, կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերի վեր հանմանը, ինչպես նաև արդյունքների հիման վրա համապատասխան միջոցառումների մշակմանը՝ կրթական ծրագրի հետագա բարելավման նպատակով: Վերոնշյալ նպատակներն և խնդիրներն իրագործելու համար իրականացվել են հետևյալ շրջափուլերը.

Ուսումնական տարվա ավարտին՝ ամբիոնի նիստի ժամանակ քննարկվել է մշտադիտարկման արդյունքները արտաքին և ներքին շահառուների հետ: Քննարկման ընթացքում՝ հետադարձ կապի միջոցով մշակվել է կրթական ծրագրի բարելավմանն ուղղված գործընթացներ:

Այդ գործընթացները իրականացնելիս ամբիոնը ուղղորդվում է ՀՊՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և ուսանողների կողմից գնահատման իրականացման ընթացակարգով: Նշված գործընթացներում կարևորվում է ուսանողների կողմից դասախոսների գործունեությանը տրվող հետադարձ կապի ուսումնասիրությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել դասավանդման որակը պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման գործընթացների կանոնակարգման միջոցով: **Առարկայական-ծրագրային ապահովվածություն:** Ուսումնական պլանների ծանրաբեռնվածությունը ընթանում են եռօրյա դասաժամերի զբաղվածությամբ: Մագիստրոսական կրթության առարկայական նկարագրերը և ծրագրերը առկան են և իրենց բովանդակային կողմով համապատասխանում են միջազգային չափորոշիչներին, որի մասին վկայում է միջազգային փորձագետի կողմից ներկայացված կարծիքը, դրանք տեղադրված են Մահատմա ծրագրի շրջանակներում ստեղծված ընդհանուր կայքում, հասանելի են բոլոր շահակից կողմերի համար: Նախորդ կիսամյակում Համալսարանի ֆակուլտետների ուսումնական պլանի համաձայն ընտրովի առարկաների կրթաբլոկում նախատեսված երեք առարկաներ ուսուցանվել են անգլերեն լեզվով:Ներկայացվել են մագիստրոսական ատենախոսության թեմաները և դրանք հաստատվել են հոկտեմբերին կայացած ամբիոնի նիստում: Իրականացվել են խորհրդատվական դասընթացներ մագիստրոսների հետ թեզերի իրականացման, դրանց գիտական պատշաճ մակարդակի ապահովման, գրականության աբյուրներից ճիշտ օգտվելու և ուսանողի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների զարգացման նպատակով:

Պրոֆեսորադասախոսական կազմ

Կրթական ծրագիրը իրականացնող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները լիովին համապատասխանում են կրթական ծրագրի նպատակներին, այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ բոլոր դասախոսները փորձառու մասնագետներ են ոչ միայն դասավանդման տեսանկյունից, այլև ունեն վարչական աշխատանքի իրականացման բազմամյա փորձ՝ այն հնարավորություն է տալիս գործառնական տեսանկյունից ուսանողներին ներկայացնել ոլորտում առկա հիմնախնդիրները և պրակտիկ տեսանկյունից դրանց լուծման եղանակները: Դասախոսական կազմի գնահատումը իրականացվել է դասալսումների և հաշվետու ժամկետում իրականացված ուսումնական բեռնվածքի կատարման, գիտամանկավարժական գործունեության, ինչպես նաև փոխադարձ դասալսումների և ուսանողների հարցումների արդյունքների հիման վրա:Նշված գործառույթները իրականացվում են համաձայն գնահատման ժամանակացույցի իսկ արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստի ընթացքում խորհրդատվությունների և առաջարկությունների միջոցով՝ամբիոնի ուսումնական պարապմունքների որակը ապահովելու նպատակով: Ուսանողների կողմից դասավանդման որակի գնահատումը կատարվում է անանուն հարցումների միջոցով՝ դասընթացի ավարտից հետո: Ամփոփելով հարցման արդյունքները, կարելի է եզրակացնել, որ ուսանողների մեծամասնության կարծիքով դասախոսությունների ժամանակ ներկայացված նյութն ու մատուցման ձևը, տրամադրված խորհրդատվությունը, գործնական պարապմունքները, և առարկայական համառոտագրերը, դասախոսի հետ հետադարձ կապը նպաստել են ուսումնառության որակի բարձրացմանը:

Ստորև ներկայացված է կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն հաշվի առնելով արտաքին հնարավորությունները և ակնկալվող սպառնալիքները:

Ու ԹՀ Վ /SWOT/ վերլուծություն	Հնարավորություններ	Վտանգներ
	• Կրթական կառույցների կողմից մանկավարժական կադրերին ցուցաբերվող նոր մոտեցումները և գործունեության կարևորումը • Միջազգային կրթական կազմակերպությունների, համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրի մշակում և կիրարկում • Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրի առկայություն • Միջազգային կրթական հաստատություններում ՊԴԱ վերապատրաստման հնարավորությունը • Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ամբիոնի մասնագետների բարձր պահանջարկվածությունը • Կրթական ծրագրի մշակման գործընթացում արտաքին փորձագետների հետ աշխատելու հնարավորությունը	• Ռազմավարական խնդիրների լուծման համար ոչ բավարար ֆինանսական ռեսուրսներ • Ուսանողական համակազմի համալրման ցածր տեմպ • Արտաքինշահակիցների ոչ բավարար աջակցությունը ռազմավարական հիմնախնդիրների լուծման գործընթացին
Ուժեղ կողմեր	Միջոցառումներ ուղղված ուժեղ կողմերի միջոցով արտաքին հնարավորությունների ընդլայնմանը	Միջոցառումներ ուղղված ուժեղ կողմերի միջոցով վտանգների նվազեցմանը
• Համալսարանի զարգացման ռազմավարական պլանին համահունչ կրթական ծրագիր • Դասավանդման առաջատար փորձի տարածում ՀՊՄՀ-ի այլ ֆակուլտետներում • Դասախոսական հիմնական կազմի մոտ վարչական գործունեության բազմամյա փորձը, որը հնարավորություն է տալիս գործնական տեսանկյունից վեր հանել ոլորտում առկա մարտահրավերները և ուսուցանել դրանց լուծման մեթոդները • ՄԿԾ-ում սահմանված են դասվանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք առաջավոր փորձի ուսումնասիրության արդյունք են	• Գործատուների ընդգրկումը մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացներում • Ռազմավարության իրականացման համար ռեսուրսների և պայմանների ապահովում • Ուսանողների ակտիվ ներգրավում իրականացվող գործընթացներին, տեղեկատվությունից օգտվելու մատչելիության ապահովում • Ռազմավարական և օպերատիվ պլանների համաձայնեցվածություն • Սկսնակ դասախոսների ընդգրկման, նրանց հետագա առաջընթացի համար պայմանների ապահովում • Միջազգային կապերի ընդլայնում ուսանողների շարժունության շարունակականության ապահովման տեսանկյունից	• Ամբիոնի հեռանկարային ծրագրերի իրականացմանը շահակիցների ակտիվ մասնակցություն • Շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունների ընդլայնում, աշխատաշուկայի պահանջարկի մոնիտորինգի իրականացում • Դասախոսների գործունեության գնահատման շարունակականության ապահովում և կիրառվող մեխանիզմների ընդլայնում՝ ամբիոնի վարիչի կողմից, փոխադարձ դասալսումներ, ուսանողական հարցումներ • Արդյունքների քննարկում շահակիցների մասնակցությամբ ամբիոնի նիստերում

• Կիրառվող մեթոդները առավելագույնս մոտեցվել են գործնական մասնագիտական աշխատանքների պահանջներին • Սովորողների ուսումնառության մեջ գերակշռում են ինտերակտիվ ուսումնառության մեթոդները և հետազոտական բաղադրիչը: • Առկա են բավարար մեխանիզմներ թեզի շրջանակներում հետազոտական աշխատանքների կատարման համար		
Թույլ կողմեր	Միջոցառումներ՝ ուղղված արտաքին հնարավորությունների միջոցով թույլ կողմերի հաղթահարմանը	Միջոցառումներ՝ ուղղված թույլ կողմերի ազդեցության նվազեցմանը և արտաքին վտանգների դիմակայմանը
• Փոփոխությունների կառավարման հստակ սահմանված կառուցակարգերի բացակայություն • Ոչ բավարար ռեսուրսներ մշտադիտարկման գործընթացների համար • Գնահատման սանդղակի կիրառման դժվարություններ • Սակավ է մասնագիտական պրակտիկաներին հատկացվող ժամաքանակը և կրթության կառավարման ոլորտում շահագրգիռ պրակտիկայի բազաների քանակը	• Միջազգային կապերի ընդլայնում • Կազմակերպական կառուցվածքի և կառավարչական համակարգի համապատասխանության ապահովում • Ղեկավարների և աշխատակիցների մտածելակերպի և վարքագծի փոխակերպում(հանձնարարությունների ձևական կատարումից անցում ռազմավարական նպատակների իրագործմանը) • ՀՊՄՀ-ի վարչական աշխատանքներում ուսանողների ակտիվ ներգրավում, գործնական կարողությունների ձևավորման նպատակով • Լավագույն ուսանողների կրթության շարունակման աջակցում և նրանց ընդգրկում ամբիոնի աշխատանքներրում • Պրակտիկաների բազայի ընդլայնում	• Կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործում • Ուսանողների կարիերայի զարգացմա, դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար ծառայությունների ընդլայնում • Ամբիոնի գործունեության թափանցիկության ապահովում • Ուսանողների և դասախոսական կազմի համատեղ աշխատանքի իրականացում հետազոտական նախագծերում, արդյունքների տպագրում միջազգային վարկանիշ ունեցող պարբերականներում • Մասնագիտական ամսագրերի հրատարակման միջոցով նպաստել հետազոտական ավանդույթների ամրակայմանը կրթության կառավարման ոլորտում

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՔԱՂՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ստեփան Գրիգորյան

1.Ամբիոնի կազմը

2016թ. սեպտեմբեր ամսից ամբիոնում տեղի ունեցան էական կադրային փոփոխություններ: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթով ամբիոնի վարիչ ընտրվեց բժշկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Վաղինակի Գրիգորյանը: 2016թ. սեպտեմբերից ամբիոնում աշխատում էր 5 դասախոս, 1 դոկտոր, 3 դոցենտ, 1 դասախոս, կար 4,5 հաստիք: 2016թ. նոյեմբեր ամսին համալսարանի <<Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության>> և <<Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի>> ամբիոնները վերամիավորվեցին և ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը տեղափոխվեց <<Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության>> ամբիոն: Վերը նշված փոփոխությունների արդյունքում ամբիոնի վերջնական կազմում կա 10 դասախոս, 2 դոկտոր, 7 դոցենտ,1 դասախոս:

2. Ուսումնական աշխատանքներ

Ամբիոնի ուսումնական աշխատանքների հիմքում ընկած են ամբիոնի ռազմավարական ծրագրի ուղենիշները, տարեկան աշխատանքային պլանը, աշխատանքային ծավալ-ծանրաբեռնվածության կազմումը, փոխադարձ և բաց դասալսումների կազմակերպումը, ամբիոնի նիստերի անցկացումը, առարկաների էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթների կազմումը, Google classroom էլեկտրոնային ուսուցման հարթակում դասախոսությունների ներբեռնումը, միջանկյալ գրավոր աշխատանքների թեմաների , հարցաշարերի, քննական տոմսերի վերանայումը, կիսամյակային դասացուցակների կազմումը և այլն:

Տարվա ընթացքում ամբիոնում պարբերաբար անցկացվում են ամբիոնի նիստեր, որտեղ քննարկվում են ուսումնական գործընթացին առնչվող հարցերը, համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից ուղարկված գրությունները, հանձնարարականները:

Ըստ նախապես կազմված ժամանակացույցի անցկացվում են փոխադարձ և բաց դասալսումներ, որոնք քննարկվում են ամբիոնի նիստերում, դասավանդման նոր պահանջներին համապատասխան արվում են առաջարկություններ՝ դասավանդման առավել բարձր որակ ապահովելու նպատակով:

Ըստ սահմանված ժամանակացույցի անց են կացվում միջանկյալ գրավոր ընթացիկ աշխատանքներ, որոնց արդյունքները ամփոփվում են համալսարանի գիտելիքների գնահատման կայքի էլեկտրոնային հարթակում:

Ուսումնական պրոցեսի ընթացքում ցուցադրվում են տեսանյութեր առաջին բուժօգնություն և արտակարգ իրավիճակներ առարկաների վերաբերյալ:

Ամբիոնում կազմակերպվում են միջոցառումներ Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակցի օրվան նվիրված, Առողջության պաշտպանության միջազգային օրվան, ՄԻԱՎ ՁԻԱՀ-ի համաշխարհային օրվան, Քաղպաշտպանության ծառայության միջազգային օրվան նվիրված, որին մասնակցում են ամբիոնի բոլոր աշխատակիցները: Ուսանողների հետ պարբերաբար կազմակերպվում են գործնական պարապմունքները համալսարանից դուրս անցկացնելու միջոցառումներ:

Համալսարանի տարբեր մասնագիտությունների բարձր կուրսեցիները Արտակարգ իրավիճակների գծով բազմիցս այցելել են ֆիզիկայի ինստիտուտի պաշտպանական կառույց, Ջվարթնոց օդանավակայանի հատուկ հրշեջ մաս և հատուկ ծառայության ապաստարան, Դավիթաշենի ,,Սպիտակ փրկարար ջոկատի,, պաշտպանական կառույց, Սևանի հիդրոէլեկտրոկայան: Այս կերպ ուսանողները հնարավորություն են ունեցել իրենց ստացած տեսական գիտելիքները ամրապնդել գործնական պարապմունքների միջոցով:

3.Մեթոդական աշխատանքներ

Տարվա ընթացքում կազմվել և ամբիոնի նիստով հաստատվել են բոլոր կուրսերում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների էլեկտրոնային տարբերակները, առարկայական նկարագրերը, միջանկյալ ստուգման հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքների թեմաները, քննական հարցաշարերը, տոմսերը:

Ամբիոնի վարիչի անմիջական հսկողությամբ բոլոր դասախոսները պարապմունքները անցկացնում են բացառապես էլեկտրոնային ուսուցման սկզբումքով: Մշտադիտարկման արդյունքների տվյալներով ամբիոնը համալսարանի լավագույն տասնյակում ունեցել է զգալի հաջողություններ, ամբիոնի նիստով քննարկվել և համալսարանի ԿԲ և Ո վարչություն է ներկայացվել ամբիոնի վարիչի գնահատականը Classroom-ում դասախոսների բովանդակային ակտիվության վերաբերյալ ամենամսյա ցուցիչները:

4. Գիտական աշխատանքներ

Ամբիոնը հանդիսացել է դոկտորական ատենախոսության առաջատար կազմակերպություն կենս.գիտ.դոկտորի հայցմամբ:Ամբիոնի վարիչ Ս.Գրիգորյանը հանդիսանում է ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտում գործող 023 մասնագիտական խորհրդի անդամ:

1. Մարգարյան Ա.Գ. ,,Health Assessment and Disorders of External Respiration Function among Physicians,, 2016
2. Մարգարյան Ա.Գ. ,,Work-related Fatigue among Armenian Physicians,,2016

5.Որակավորման բարձրացման նպատակով դասախոսների վերապատրաստումները

Ամբիոնի դասախոս, դոցենտ Աննա Գագիկի Մարգարյանը ս/թ մայիսի 18-22 -ը մասնակցել է Հունաստանի Խալկիդիկի քաղաքում կազմակերպված բժիշկների 2-րդ միջազգային կոնֆերանսին ,,Առողջություն և կատարում կլինիկական պրակտիկայում,, թեմայով:

Պերճ Արամի Կարապետյանը մասնակցել է ԱՌՆԱՊ-ի կազմակերպած կոնֆերանսին՝<<Բնակչության պաշտպանության կազմակերպումը պատերազմական գործողությունների ժամանակ>> թեմայով:

Ամբիոնի վարիչ Ստեփան Վաղինակի Գրիգորյանը մասնակցել է ՀՊՄՀ-ում կազմակերպված Eresmus+ ծրագրի աշխատանքներին:

ՇԱԽՄԱՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Սմբատ Լպուտյան

Պատվավոր կոչումներ ունեցողներ

	Ազգանուն, անուն հայրանուն	Կոչումը
1	**Սմբատ Լպուտյան Գարեգինի**	**Միջազգային կարգի գրոսմայստեր**

Պրոֆեսորադասախոսական կազմը /հիմնական/

	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Կոչում
1	**Լպուտյան Սմբատ Գարեգինի**	**1958**	**1դր.**	**Ամբիոնի վարիչ**
2	**Թերզյան Անահիտ Հովակիմի**	**1952**	**1 դր.**	**դոցենտ**
3	**Կարապետյան Իվան Քերոբի**	**1950**	**0.5դր.**	**դոցենտ**
4	**Միսակյան Սամվել Զավենի**	**1960**	**1 դր.**	**դասախոս**
5	**Գրիգորյան Լիլիթ Ռոբերտի**	**1976**	**1 դր**	**դասախոս**
6	**Բարսեղյան Սուրեն Հայկազի**	**1950**	**1 դր.**	**դասախոս**
7	**Պետրոսյան Զվարթ Նորիկի**	**1981**	**1 դր.**	**դասախոս**
8	**Իսրաելյան Գարի Սեմյոնի**	**1955**	**1 դր.**	**դասախոս**
9	**Մանուկյան Աննա Գարուշի**	**1958**	**1 դր.**	**դոցենտ**

Համատեղողներ

	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Կոչում
1	**Խաչատրյան Աշոտ Խաչատուրի**	**1958**	**0.75**	**դասախոս**
2	**Գրիգորյան Յուրի Գրիգորի**	**1953**	**0.25**	**դոցենտ**

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Դրույք	Պաշտոնը
1	**Աղումյան Լենա Արթուրի**	**1993**	**1 դր.**	**Ամբ. մասնագետ**
2	**Հարությունյան Հասմիկ Ասքանազի**	**1962**	**1 դր.**	**Ամբ. պրեպարատոր**
3	**Խաչատրյան Հովհաննես Խաչատուրի**	**1946**	**1 դր.**	**Ամբ. Ուսումնական վարպետ**
4	**Աբրահամյան Աննա Արամայիսի**	**1953**	**1 դր.**	**Ամբ. պրեպարատոր**
5	**Պետրոսյան Համլետ Վարոսի**	**1947**	**1 դր.**	**Հրաձգարանի տեխնիկ**
6	**Լպուտյան Գայանե Ժորայի**	**1967**	**1 դր.**	**Ամբ. մասնագետ**
7	**Ենգոյան Սամվել Երվանդի**	**1968**	**0.75դր**	**Ամբ. հրահանգիչ**

2011թ. ամբիոնը վերանվանվել է շախմատի և սպորտի ամբիոն: Շախմատի և սպորտի ամբիոնի աշխատանքները իրենց հաստատուն տեղն են գրավում համալսարանի ուսումնական գործընթացում: Ամբիոնի պրոֆեսորա -դասախոսական կազմը ամենայն լրջությամբ զբաղվում է ուսանողների ֆիզիկական դաստիարակության և նրանց առողջության ամրապնդման հարցերով: Ֆիզ. դաստիարակության առարկան դասավանդում են 11 դասախոսներ որոնցից 4-ը դոցենտ /Ա. Թերզյան, Ա. Մանուկյան, Ի. Կարապետյան , Յու. Գրիգորյան / : Ամբիոնում աշխատում են 1 հաստիքով 8 դասախոսներ, 0.5 հաստիքով 1 դասախոս, 0.75 հաստիքով 1 դասախոս,0.25 հաս- տիքով մեկ դասախոս :

Ամբիոնում աշխատում են նաև ուսումնա-օժանդակ 7 աշխատակիցներ: Ամբիոնին կից գործում են 5 մարզաձևերից մարզական սեկցիաներ՝ սեղանի թենիս, բասկետբոլ,վոլեյբոլ, շախմատ և ֆուտբոլ /տղաներ և աղջիկներ/:

2016-2017 թթ. Հանրապետական ուսանողական մարզական խաղերում ավարտված մրցաշարերում այդքան էլ փայլուն հանդես չեկան համալսարանի աղջիկների բասկետբոլի հավաքականը, վոլեյբոլի տղաների հավաքականը,ֆուտբոլի տղաների հավաքականը: Համեմատաբար հաջող հանդես եկան սեղանի թենիսի աղջիկների հավաքականը : Մարզական խաղերի ծրագրով անցկացվող գար- նանային գավաթի մրցաշարում փայլուն հանդես եկան համալսարանի վոլեյբոլի աղջիկների հավաքականը դառնալով մրցաշարի գավաթակիր, իսկ առաջնության մրցաշարում դարձավ չեմպիոն: Այդ խաղերի ծրագրով անցկացվող ֆուտբոլի մրցաշարում չեմպիոն և գավաթակիր դարձան համալսարանի ֆուտբոլի աղ - ջիկների հավաքականը: Տեղին է նշել, որ համալսարանի աղջիկների վոլեյբոլի հավաքականը մասնակցելով Մոսկվայի պետական մանկավարժական համալսարա- նի կողմից կազմակերպված վոլեյբոլի մրցաշարում գրավեց 1- ին տեղը:

Պարբերաբար համալսարանի ուսանողական խորհուրդը կազմակերպում է տարբեր մարզաձևերից միջֆակուլտետային մրցումներ, որին ակտիվ օգնում և աջակցում են ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմը:Միաժամանակ ամբիոնը կազմակերպում է ավանդական արագ շախմատի միջֆակուլտետային մրցաշար:

Հատկապես պետք է նշել, որ ամբիոնը սերտ կապի մեջ է ֆակուլտետների դեկանների հետ ֆիզ. դաստիարակության առարկայի դասերը բարձր մակարդակով անցկացնելու համար, ուսանողների շրջանում առարկայի նկատմամբ ակտիվությունը բարձրացնելու:

2016-201 7թթ. ուս. տարում սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին աջաջին և երկրորդ կուրսի ուսանողների համար ամբիոնը համատեղ բուժկետի հետ միասին անցկացրել է բուժ զննում: Արդյունքների մասին ամբիոնի նիստում հաշվետվությամբ հանդես է եկել համալսարանի բժշկուհի Լուսինե Թանդիլյանը: Ըստ ներկայացված բժշկական քննությունների արդյունքների, ուսանողները բաժանվել են
հետևյալ խմբերի. հիմնական, նախապատրաստական, հատուկ, բուժական: Առաջին կուրսում ֆիզկուլտուրայով մարզվում են 1230 ուսանող, որից 1101 -ը մարզվում են հիմնական խմբերում, 117-ը հատուկ խմբերում, 12-ը բուժականում: Երկրորդ կուրսում ֆիզկուլտուրայով մարզվողների թիվը կազմում է 1212 ուսանող, որից 1084-ը մարզվում են հիմնական խմբերում 1111 -ը հատուկ խմբում, 17- բուժականում :

Համալսարանի ղեկավարությունը ուշադրության կենտրոնում է պահում ֆիզ. դաստիարակության հետ կապված բոլոր հարցերը և անում է ամեն ինչ առարկան ծառայեցնելու ուսանողների դաստիարակությանը և առողջության ամրապնդմանը: Համալսարանի ղեկավարության ջանքերով և նախաձեռնությամբ ուսանողներին հատկացվել է միատարր մարզահագուստ՝ ֆիզկուլտուրայի դասերը անցկացնելու համար: Այս բոլորը նպաստում է առարկայի ուսումնամարզական պրոցեսը բարձր հիմքերի վրա դնելու, ինչպես նաև նպաստում է ուսանողների ակտիվությանը առարկայի նկատմամբ: Պետք է նշել, որ արդեն 4-րդ տարին է, որ համալսարանում սկզբնական ֆակուլտետում մտցվել է շախմատի տեսությունը, որպես ֆիզ. դաստիա- րակության առարկա, առաջին կուրսեցիների համար /դասախոս Ս.Միսակյան/:

Ամբիոնին կից գործում է հրաձգարան, որտեղ անցկացվում է առանձին ուսումնական ժամեր, ուսանողների շրջանում դաստիարակելու ռազմական հմտություններ:Ամբիոնի դասախոսական կազմը ակտիվ գործնեություն է ծավալում համալսարանի կողմից կազմակերպվող ամենամյա միջազգային ամառային դրաֆ- րոցի գործնեությանը:

Ամբիոնի դասախոսներ՝ Ի.Կարապետյան, Լ Գրիգորյան, Ս. Բարսեղյան, Զ.Պետրոսյան,Գ.Իսրաելյան, Ա.Մանուկյան անցկացրել են մանկավարժական պրակտիկա սկզբնական կրթության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների հետ տարբեր հանրակրթական դպրոցներում:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Լաուրա Ասատրյան

1. Ամբիոնի կազմը. ամբիոնն ունի 17 դասախոս, այդ թվում՝ մանկավարժական գիտությունների 2 դոկտոր, պրոֆեսոր, 14 թեկնածու, որոնցից 8-ը դոցենտ են , 4-ը ասիստենտ, 3-ը դասախոս և 1 մասնագետ:

2. Ուսումնական աշխատանքներ. Ամբիոնի գործունեությունը հիմնված է համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրի, ամբիոնի ռազմավարական ծրագրի և աշխատանքային պլանի վրա: Որպես ամբիոնի գործունեության հիմնական նպատակ վերանայվել է մանկավարժական առարկաներից ուսումնական աշխատանքի կազմակերպումը բակալավրիատում՝ հաշվի առնելով մանկավարժական գիտության նորագույն նվաճումներն ու միջազգային չափանիշները:

2015-2016 ուստարվա ավարտին արդեն իսկ կազմվել էր նոր ուսումնական տարվա ծավալն ու ծանրաբեռնվածությունը:

Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնն անընդհատ հետևել է ուսումնական պարապմունքների ընթացքին թե՛ որակական, թե՛ աշխատանքային կարգապահության առումով: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են փոխադարձ դասալսումներ ըստ սահմանված գրաֆիկի: Ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասալսումների, ինտերակտիվ դասերի կազմակերպման և դրանց տեխնոլոգիական ապահովման, դասախոսությունների թեմաների արդիականացման, ուսումնագործնական նյութերի թարմացման հետ կապված խնդիրները:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ ելնելով կրթական գործընթացի կազմակերպումը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու բուհի կարևորագույն նպատակից՝ ամբիոնում ուսումնական պլաններին համապատասխան վերամշակվել, քննարկվել ու հաստատվել են՝

- Մանկավարժության տեսություն,
- Գործնական մանկավարժություն,
- «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա,
- Կրթության և մանկավարժական մտքի պատմություն,
- Մեդիակրթություն,
- Մանկավարժական գործունեության հիմունքներ,Տարրական կրթության մանկավարժություն,
- Դաստիարակության տեսություն և մեթոդիկա,
- Մանկավարժական տեխնոլոգիաներ,
- Տեսական և գործնական մանկավարժություն
- Ընտր.դասընթացներ՝ Էթնոմանկավարժություն, էկոլոգիական կրթության համակարգի կառավարման հիմունքներ, մանկավարժական հաղորդակցում,
- История педагогики,
- Методика преподавания интегрированного курса «Я и окружающая среда»
- Теория педагогики,
- Педагогика начального образования,
- Практическая педагогика, առարկաների նկարագրերը, ուսումնական ծրագրերը և համապատասխան ուսումնամեթոդական փաթեթները ԱՈՒՄՓ ձևաչափով: Վերանայվել են միջանկյալ և հանրագումարային քննությունների հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքների և սեմինար պարապմունքների, ռեֆերատների, կուրսային, ստեղծագործական-հետազոտական աշխատանքների թեմատիկան, ինչպես նաև դրանց ներկայացվող չափանիշները, պահանջներն

ու չափորոշիչները, որոնք ներդրվել են համալսարանի կրթական գործընթացում:

Մշակվել և գործունեության մեջ են դրվել բակալավրիատի հեռակա և հեռավար կրթության ծրագրերն ու մանկավարժական առարկաների դասախոսությունների նոր ուսումնամեթոդական փաթեթները:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը առանց բացթողումների կատարել է դասաբաշխմամբ իրենց հատկացված ժամաքանակը: Նախապատրաստվել և բարձր մակարդակով անցկացվել են մանկավարժական առարկաների քննությունները:

Ամբողջ ուսումնական տարում ուսանողների համար կազմակերպվել են լրացուցիչ կոնսուլտացիաներ, ակնարկային դասախոսություններ, ինչպես նաև անհատական աշխատանք:

Նշված ժամկետներում իրականացվել են կուրսային աշխատանքների, ռեֆերատների պաշտպանությունները, արդյունքները գոհացուցիչ են:

Պատշաճ մակարդակով նախապատրաստվել և անցկացվել են ուսումնաճանաչողական և մանկավարժական պրակտիկաները: Դպրոցներում պրակտիկանտ-ուսանողների համար կազմակերպվել են գիտագործնական սեմինարներ:

Ուսանողների ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջանակներում ապահովվել է դպրոց-բուհ-դպրոց փոխադարձ կապը, օգտագործվել է ուսանողների ստեղծագործական ներուժը պրակտիկան իրականացնող դպրոցներում արտաուսումնական դաստիարակչական միջոցառումների կազմակերպման համար:

Մանկավարժական պրակտիկան արդյունավետ կազմակերպելու և արդիկանացնելու համար մշակվել է պրակտիկայի «Մանկավարժական պրակտիկայի ուսումնամեթոդական ուղեցույց»-ը:

3.Մեթոդական աշխատանքներ. Մեթոդական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար ամբիոնում գործում է մեթոդական խորհուրդ, որը աշխատել է ըստ տարեկան աշխատանքային պլանի, ըստ որի՝ իրականացվել են փոխադարձ դասալսումներ և դրանց մեթոդական վերլուծություններ, ամբիոնի դասախոսների կողմից մանկավարժական պրակտիկայի կազմակերպման դիտարկումներ, միջազգային գիտաժողովներին մասնակցած ամբիոնի դասախոսների հաշվետվություններ, մեթոդական հաղորդումներ, գիտական սեմինարներ, ուսումնական ձեռնարկների գրախոսություններ:

Ամբիոնում պարբերաբար քննարկման առարկա են դարձել մանկավարժական առարկաների դասավանդման արդիականացման, մեթոդական և տեխնոլոգիական հարցերը:

4. Գիտահետազոտական աշխատանքներ. Ամբիոնը գիտահետազոտական աշխատանքներ իրականացնում է ըստ ռազմավարությամբ նախատեսված գիտական ուղղությունների: Ելնելով այդ ուղղություններից՝ ընտրվել են արդիական տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն ունեցող մանկավարժական հետազոտական հիմնախնդիրներ և թեմաներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվել է՝ 6 ուսումնաօժանդակ ձեռնարկ, 1 մենագրություն և 38 հոդված, որից

15-ը ցիտվող պարբերականներում:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային համաժողովների՝ Հայաստանում և արտերկրում:

Համապատասխան աբիոնների հետ համատեղ քննարկվել և հրապարակային պաշտպանության են երաշխավորվել 3 թեկնածուական ատենախոսություն:

Ամբիոնը նախապատրաստվում է 2017թ. միջազգային գործնական և ուսանողական գիտաժողովների կազմակերպմանը:

Պատշաճ մակարդակի վրա է դրված նաև ուսանողների ստեղծագործական-հետազոտական գործունեությունը: Տարբեր ֆակուլտետների 30 ուսանող ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ իրականացնում են մանկավարժության ժամանակակից խնդիրներին նվիրված հետազոտական աշխատանքներ: Հետազոտական թեմաները քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստում: Ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ իրականացվող հետազոտական աշխատանքներով սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողները զեկուցումներով մասնակցել են միջազգային համաժողովների և արժանացել պատվոգրերի:

Տպագրվել են ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյանի, և դասախոս, մ.գ.թ. Ն.Զ.Կարապետյանի «Ես և շրջակա աշխարհը ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա», դոցենտ Գ.Հակոբյանի «Մանկավարժական պրակտիկայի ուսումնամեթոդական ուղեցույց», ասիստենտներ՝ Զ.Ասատրյանի «Տարրական կրթության մանկավարժություն», Ա.Ա. Հակոբյանի «Մանկավարժական գործունեության հիմունքներ» ձեռնարկները, Մ.Գևորգյանի «Միջազգային բազմամշակութային երկխոսության մոդելը. հոգեբանամանկավարժական տեսանկյուններ» գիտամեթոդական աշխատությունը, տպագրության ընթացքում է դոցենտ Ա.Մ.Մանուկյանի «Մեդիակրթություն» ուսումնամեթոդական ձեռնարկը, պատրաստվում է տպագրության Լ.Թ.Ասատրյանի և համահեղինակների խմբի «Մանկավարժություն» և «Կրթության և մանկավարժական մտքի պատմություն», «Դպրոցավարություն» ձեռնարկները, և պրակտիկայի գործնական նյութերի փաթեթը:

5. Կազմակերպչական աշխատանքներ. Այս ոլորտի աշխատանքներն իրականցվել են հիմնականում, ամբիոնի նիստերի, աշխատանքային քննարկումների և ամենօրյա աշխատանքի միջոցով:

Գործածության մեջ են դրվել կրթական google classroom էլեկտրոնային հարթակը, մշակվել և ներդրվել են էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ինտերակտիվ դասընթացները, այդ դասընթացներին ներկայացվող պահանջներն ապահովող չափանիշները և չափորոշիչները:

Հաշվետու տարվա ընթացքում հրավիրվել է ամբիոնի 15 նիստ, որտեղ քննարկվել են ռեկտորատի հանձնարարականներին և ամբիոնի գործունեությանը վերաբերվող ամենատարբեր հարցեր (դասախոսությունների փաթեթների, ուսումնական ծրագրերի և պլանների, աշխատանքային կարգապահության, հեռակա ուսուցման, ուսանողների պրակտիկայի, քննաշրջանների նախապատրաստման և անցկացման, տարբեր ֆակուլտետներում պարապմունքների ընթացքի, դասալսումների, դասախոսների գիտահետազոտական և ուսանողների ուսումնահետազոտական աշխատանքների, ատենախոսությունների քննարկման և ամբիոնի գործունեության մյուս բոլոր բնագավառների հետ կապված այլ հարցեր):

Ամբիոնի կողմից մշակվել են Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագիրն ու բաշխիչ նյութերը:

Ամբիոնում գործում են մանկավարժական մեթոդական և որակի կառավարման մասնախմբերը, որոնք զբաղվում են համալսարանի կրթական գործընթացի կազմակերպման, դրա մեթոդական և որակի ապահովման, առարկայական ծրագրերի մշակմանն ու բարեփոխմանն առնչվող փաստաթղթերի վարման, դասախոսական առաջավոր փորձի փոխանակման, դասալսումների որակի հսկման և սկսնակ դասախոսների հետ տարվող կոնկրետ գործնական և մեթոդական աշխատանքներով:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Համմիկ Հովհաննիսյան

ԱՄԲԻՈՆԻ ԿԱԶՄԸ

2016 թ. ամբիոնում են ներառված են 13 աշխատակիցներ, այդ թվում՝ 4 դոկտոր պրոֆեսոր, 1 դոկտոր դոցենտ, 3 թեկնածու դոցենտ, 2 թեկնածու ասիստենտ, 2 դասախոս, 1 մասնագետ, հայցորդ: Համատեղությամբ աշխատում են ամբիոնի դասախոսներից 3-ը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ուսումնական աշխատանքներին, որպես ամբիոնի գործունեության հիմնական ոլորտի, հատկացվել է առավել մեծ ուշադրություն: 2015-2016 ուսումնական տարվա ավարտին կազմվել է նոր ուսումնական տարվա աշխատանքային ծավալն ու ՊԴԱ ծանրաբեռնվածությունը:

Ուսումնական տարվա ընթացքում Ամբիոնը մշտապես հետևել է պարապմունքների որակական և աշխատանքային կարգապահության ընթացքին: Դասավանդման միասնական որակ ապահովելու նպատակով կազմակերպվել են փոխդասալսումներ, որոնց արդյունքները պարբերաբար քննարկվել են Ամբիոնի նիստերում: Ամբիոնում հանգամանորեն քննարկվել են նաև դասախոսությունների թեմաների արդիականացման, դասընթացների առարկայական նկարագրերի և առհասարակ, ԱՈՒՄՓ-ների նյութերի թարմացմանը առնչվող խնդիրները:

Ամբիոնի կողմից դասավանդվող բոլոր առարկաները իրականացնել են հեռավար ուսուցմամբ՝ Google Classroom-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում: Մշտապես պահպանվել են ՀՊՄՀ կրթության բարեփոխումների որակի վարչության էլեկտրոնային կրթության կառավարման բաժնի կողմից առաջադրված պահանջները Google Classroom-ի հարթակում ուսումնական պրոցեսի կազմակերպմանը, մասնավորապես՝ նյութերի տեղադրման ձևաչափի, ժամանակացույցի, դասընթացների էլեկտրոնային հարթակում սեմինարավարների ընդգրկվածության և մասնակցության կազմակերպման և այլ հանձնարարականների կապակցությամբ:

Ամբիոնն առանձնակի ուշադրություն է դարձրել քննաշրջաններին: Դրանցից առնվազն մեկ ամիս առաջ նախապատրաստվել և հաստատվել են հարցաշարերը (դրանք հասանելի դարձնելով ֆակուլտետներին և ուսանողներին) և քննական տոմսերը: Քննաշրջաններն անցկացվել են Ամբիոնի վարիչի հսկողությամբ: Քննաշրջանների ընթացքում ժամանակացույցի խախտումներ և այլ կարգի միջադեպեր չեն եղել: Նախապես կազմակերպվել են խորհրդատվություններ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս ոլորտում ևս բավականաչափ աշխատանքներ են իրականացվել, մասնավորապես պայմանավորված կրթական համակարգի վերափոխումներով, որոնք ամենից առաջ ենթադրում են մեթոդական վերափոխումներ: Արմատապես վերանայվել են առարկայական նկարագրերը, մշակվել է ուսանողների գիտելիքների գնահատման նոր կարգ: Գնահատման համակարգում հատկապես կարևորվել է քննադատական մտածողությանը վերաբերող բաղադրիչը:

Ամբիոնում մշտապես քննարկվել են առարկաների դասավանդման մեթոդական հարցերը, մշակվել են մեխանիզմներ՝ ուղղված ուսանողների տրամաբանական մտածողության զարգացմանը:

Ամբիոնի 1 դասախոս 2016 թ. մասնակցել է որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացների:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվել է ընդհանուր առմամբ 2 մենագրություն, 10 ուսումնամեթոդական ձեռնարկ, 27 գիտական հոդված, այդ թվում՝ 13-ը ցիտվող (Scopus, Ринц և այն) ամսագրերում, էլեկտրոնային տարբերակով հրապարակված 15 հոդվածներ:

Ամբիոնի փիլիսոփայական գիտությունների հինգ դոկտորները և փիլիսոփայական գիտությունների երկու թեկնածու ընդգրկված են ՀՀ ԲՈՀ-ի 062 Փիլիսոփայության մասնագիտական խորհրդի կազմում (այդ թվում՝ խորհրդի նախագահը):

Ամբիոնի վեց դասախոսներ անդամակցում են տարբեր գիտական խորհուրդների:

Ամբիոնում կազմակերպվել է Սուսաննա Դավթյանի Թ.00.01 – «Տեսական փիլիսոփայություն, տրամաբանություն, գիտության փիլիսոփայություն» թվանիշով փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված «*Բիոէթիկայի հիմնախնդիրների փիլիսոփայական վերլուծությունը*» թեմայով դոկտորական ատենախոսության նախապաշտպանությունը:

Ամբիոնի 1 դասախոս ռուսերենից թարգմանել և հրատարակել է 1 էսսե:

Ամբիոնը շարունակում է իր «Իմաստություն» պաշտոնական գիտական հանդեսի տարեկան երկուանգամյա անգլերեն լեզվով հրատարակությունը: Ժողովածուի գլխավոր խմբագիրը և խմբագրական խորհրդի 4 անդամները ներկայացնում են ամբիոնը: Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են հանդեսի 1(6), 2016 և 2(7), 2016 համարները: *Իմաստություն* հանդեսն ընդգրկվել է ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական ժողովածուների ցանկում և գրանցվել է ինը՝ Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), Advanced Scientific Index (ASI), eLIBRARY և EBSCO, CYBERLENINKA, միջազգային գիտաչափական շտեմարաններում:

«Իմաստություն» հանդեսից բացի Ամբիոնի 3 դասախոս նաև տարբեր գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամներ են:

Ամբիոնի 4 դասախոս հաշվետու ժամանակաշրջանում մասնակցում են հանրապետական դրամաշնորհային ծրագրի:

Ամբիոնում կարևորվում է երիտասարդ կադրերի պատրաստման խնդիրը, որի արտահայտությունը հաշվետու ժամանակաշրջանում Թ.00.01 *Փիլիսոփայություն* մասնագիտությամբ Ամբիոնի երկու հայցորդների աշխատանքի կազմակերպումն է:

2016 թ. նոյեմբերի 22-23-ին, Երևանում, ՀՊՄՀ-ում Ամբիոնը Փիլիսոփայության միջազգային Հայոց փիլիսոփայական ակադեմիաների հետ համատեղ կազմակերպել է *Կյանքը և փիլիսոփայությունը* խորագրով միջազգային գիտաժողով նվիրված ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի 90-ամյակին:

2016 թ. նոյեմբերի 21-ին և 24-ին Ամբիոնը կազմակերպել է արտասահմանյան 5 խոշոր փիլիսոփաների (Ավստրիա, ԱՄՆ, Հունաստան, Հունգարիա, Ռումինիա) բաց դասախոսությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է պարբերաբար կազմակերպվող «Գիտական աշխատանքի տեխնոլոգիա» թեմայով տեսական սեմինարների իրականացումը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս ոլորտի աշխատանքներն իրականացվել են հիմնականում, ամբիոնի նիստերի, աշխատանքային քննարկումների, հերթապահությունների, ընթերակայությունների, դասալսումների և ամենօրյա այլ աշխատանքի միջոցով:

Հաշվետու տարվա ընթացքում հրավիրվել են ամբիոնի 13 նիստ, որտեղ քննարկվել են Համալսարանի և Ամբիոնի գործունեությանը վերաբերվող ամենատարբեր հարցեր (դասախոսությունների փաթեթների, ուսումնական ծրագրերի, աշխատանքային կարգապահության, հեռակա ուսուցման, ուսանողների գիտելիքների գնահատման նոր կանոնակարգի, միջանկյալ և ամփոփիչ քննաշրջանների նախապատրաստման և անցկացման, տարբեր ֆակուլտետներում պարապմունքների ընթացքի, գիտահետազոտական աշխատանքների, ատենախոսությունների

քննարկման և Ամբիոնի գործունեության մյուս բոլոր բնագավառների հետ կապված այլ հարցեր):

Պարբերաբար թարմացվել և կատարելագործվել է Ամբիոնի բլոգը (http://chairoflogicphiloscult.Wordpress.com/), որը միտված է ապահովելու ուսումնամեթոդական և գիտակազմակերպչական գործունեության ժամանակակից, հագեցված և թափանցիկ մակարդակ և տեսական և գործնական նշանակություն ուսանողների ունի համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Դպրոցի տնօրեն՝ Նաիրա Տողանյան

Հաշվետու ժամանակահատվածում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցի գործունեությունն ուղղված է եղել կրթական գործընթացի բարելավմանը՝ ապահովելով սովորողակենտրոն մոտեցում ինչպես գիտելիքների ձեռքբերման, այնպես էլ սովորողների կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Նշված ժամանակահատվածում դպրոցի ուսուցչական կազմը համալրվել է ՀՊՄՀ-ի շրջանավարտ երիտասարդ մասնագետներով (11 ուսուցիչ), վաստակած հանգստի են անցել դպրոցի 2 ուսուցիչ :

Դպրոցում գործում են չորս առարկայական մեթոդ միավորումներ, տնօրինությանը կից երիտասարդ մանկավարժների խորհուրդը, ինչպես նաև խորհրդակցական մարմինները՝ աշակերտական, ծնողական խորհուրդները, մանկավարժական խորհուրդը: Գործում է նաև «Ծնողական հանրագիտարան» ակումբը, որը պարբերաբար կազմակերպում է սեմինար-քննարկումներ ծնողների համար: Դպրոցն ունի իր պաշտոնական կայքէջը (http //hpmh57dproc.wix.com//hpmh57dproc), որտեղ պարբերաբար թարմացվում և ներկայացվում են ուսումնական հաստատության գործունեության հետ կապված բոլոր նորությունները :

Դպրոցում իրականացվում է ռուսաց լեզվի խորացված ուսուցում, առաջին և երկյրորդ դասարաններում գործում են անգլերենի և չինարենի խմբակները: Արդեն երրորդ տարին է դպրոցում դասավանդվում է երրորդ օտար լեզու՝ ֆրանսերեն (5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններ): Դպրոցը ֆրանսերենի ուսուցման շրջանակներում համագործակցում է «Ալիանս ֆրանսեզ» կրթամշակութային կենտրոնի հետ: Դպրոցի աշակերտները մասնակցում են կենտրոնի կազմակերպած միջոցառումներին, հնարավորություն ստանում շփվելու ֆրանսիացի դասավանդողների հետ :

2016-2017 ուստարում դպրոցի առաջին դասարանցիների համար համալսարանի պարարվեստի մանկավարժության ամբիոնի օժանդակությամբ կազմակերպվում են պարուսուցման դասեր :

Դպրոցում գործում է անվճար երկարօրյա խմբակ, որտեղ իրականացվում են աշակերտների դասապատրաստումները, կազմակերպվում և անցկացվում են ճանաչողական խաղեր: Խմբակի գործունեության ծրագիրը մշակվել է ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության ֆակուլտետի հետ համատեղ:

Դպրոցում գործում են (անվճար հիմունքներով) 13 խմբակներ (երգեցողություն, երգչախումբ, ակրոբատիկա, ռոբոտաշինություն, ֆրանսերեն, անգլերեն, ֆիզիկա, շախմատ, կերպարվեստ, հմուտ ձեռքեր, մաթեմատիկա, բնագիտություն, չինարեն), որոնցում ընդգրկված են մոտ 175 աշակերտ :

ՀՊՄՀ–ի նախաձեռնությամբ դպրոցի առաջինից չորրորդ դասարանների սովորողները (213 աշակերտ) ստանում են անվճար սնունդ:

Դպրոցի տարրական դասարաններում (1-4-րդ դաս.) շարունակվում է արդյունավետ գործել ուսուցչի օգնականի ինստիտուտը: Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսները ակտիվ ներառված են դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում: Արդեն ավանդաբար արդյունավետ համագործակցությունը շարունակվում է Հատուկ կրթության, Պատմության և իրավագիտության, Օտար լեզուների ֆակուլտետների դասախոսների և ուսանողների հետ: Այս ուսումնական տարվա ընթացքում դպրոցում բնագիտական ուղղվածության առարկաների դասավանդումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով լայն համագործակցություն է իրականացվել Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի հետ: Դպրոցի 7-9-րդ դասարանցիները քիմիա, կենսաբանություն առարկաների գործնական դասաժամերը անցկացնում են ֆակուլտետի նորաբաց լաբորատորիաներում :

Դպրոցում պարբերաբար իրենց մանկավարժական պրակտիկան են անցկացնում համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողները: Հաշվետու ժամանակահատվածում 400 ուսանող իրենց մանկավարժական պրակտիկաներն անց են կացրել դպրոցում :

Դպրոցի աշակերտները ընթացիկ տարում մասնակցել են «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մեղու», «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին: Ընդհանուր թվով երեք մրցույթներին մասնակցել է 92 աշակերտ: «Այբ» կրթական հիմնադրամի կողմից դպրոցը ստացել է 4 շնորհակալագիր՝ բոլոր մրցույթները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար :

Դպրոցի ուսուցիչները պարբերաբար վերապատրաստվում են. ունենք 13 ատեստավորում անցած ուսուցիչ :

2015-2016 ուստարում դպրոցն ունեցել է 13 շրջանավարտ (որոնցից 1-ը ստացել է գերազանցության վկայական): Դպրոցը 2015-2016 ուստարվա ավարտին ունեցել է 219 աշակերտ, որից 110-ը ունեցել են բարձր առաջադիմություն (50,2%):

2016-2017 ուսումնական տարում դպրոցում բացվեց երեք առաջին դասարան (ընդհանուր թվով՝ 94 աշակերտ) :

Ներկայումս դպրոցում սովորում է 329 աշակերտ:

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ (ԱՎԱԳ ԴՊՐՈՑ)

Վարժարանի փոխօրեն՝ Նաիրա Սաֆարյան

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում /ավագ դպրոցում/ հաշվետու ժամանակաշրջանում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են մանկխորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանի, ուսումնական պլանների, ծրագրերի և դասացուցակի հիման վրա: Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով գործել են մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները, առարկայական մեթոդական միավորումները, որոնք մշտապես համագործակցում են համալսարանի համապատասխան ամբիոնների հետ: Շարունակվում են համալսարանի առաջավոր դասախոսների կողմից դասախոսությունների անցկացումը թե սովորողների և թե ուսուցիչների համար: Ինչպես համալսարանի տարբեր ամբիոնների, այնպես էլ վարժարանի ուսուցիչների կողմից կազմակեպվում են անվճար կոնսուլտացիաներ: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ: Վարժարանին մշտապես աջակցում և մեծ ուշադրության է արժանացնում ՀՊՄՀ-ի սպորտի

և շախմատի ամբիոնի վարիչ Սմբատ Լպուտյանը: Ամբիոնի աշխատակիցների կողմից կազմակերպվում են անվճար խմբակներ՝ շախմատի, վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում վարժարանում իրենց մանկավարժական պրակտիկան են անցկացրել մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, բանասիրական, պատմության և իրավագիտության, օտար լեզուների, գեղարվեստական կրթության ֆակուլտետների ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում սովորող ուսանողները: Ասպիրանտների և հայցորդների կողմից կատարվել են տարբեր մասնագիտությունների գծով ատենախոսությունների վերաբերյալ փորձարարական աշխատանքներ:

Վարժարանում պարբերաբար կազմակերպվել են տարբեր բնույթի մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, բաց դասեր, միջոցառումներ: Վարժարանի սովորողները նաև պարբերաբար մասնակցել են համալսարանի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին /կատարված միջոցառումների ցանկը բերված են աղյուսակում/:

Միջոցառման բովանդակությունը	ամիս	կատարողներ
ՀՀ ազգային բանակի 24-րդ տարեդարձին նվիրված միջոցառում	հունվար	Փոխգնդապետ՝ Մ. Բալանյան
Միջոցառում՝ նվիրված <<Հերոսներ ծնող մայրերին>>	մարտ	Հումանիտար /անգլերեն / հոսքի 10-րդ դասարան Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողներ
<< Ապագան քոնն է >> երիտասարդական հասարակական կազմակերպության հետ համատեղ միջոցառումներ	մարտ	ԱԽ, Ա. Արշակյան
<<Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք>> խորագրով միջոցառում	ապրիլ	Հումանիտար / լրագրություն / հոսքի 11-րդ դասարան, դասղեկ՝ Մ. Պետրոսյան
<<Մեր հայրենիքում մեզ սպանեցին, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց>> խորագրով շարադրություն	ապրիլ	Բոլոր դասարանները
Սպորտային մրցաշար ՀՊՄՀ-ում	ապրիլ	սովորողներ, Ա. Սմբատյան
Ջահերով երթ	ապրիլ	ԱԽ
Այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր	ապրիլ	բոլոր ուսուցիչներ, սովորողներ
Ծառատունկ	մայիս	ԱԽ
Միջոցառում՝ <<Մայիսյան եռատոնին ընդառաջ>>	մայիս	ԱԽ, Մ. Վենգրժանովիչ, Իրինա Գրիգորյան
<<Վերջին զանգ >>	մայիս	12-րդ դասարաններ
Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառում	սեպտեմբեր	բոլոր դասարաններ
Այցելություն ՀՊՄՀ-ի թանգարան, Մատենադարան, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի տուն-թանգարաններ	սեպտեմբեր	հայոց լեզվի մ/մ 10-րդ դասարաններ
<<Անկախության 25-ամյակը>> վարժարանում	սեպտեմբեր	ԱԽ, Մերի Վենգրժանովիչ, Իրինա Գրիգորյան
<<Ցուցահանդես>> Կարեն Դեմիրճյանի անվան թանգարանում	հոկտեմբեր	Մշակութային /նկարչություն / հոսքի աշակերտներ, կերպարվեստի և գծագրության ֆակուլտետի ուսանողներ
Այցելություն Մեծամորի հնագիտական թանգարան	հոկտեմբեր	հումանիտար /հոգեբանություն/ հոսքի 11-րդ դասարան, Ա. Եփրիկյան
<<Արևի քաղաք Երևան>>-ը մեր վարժարանում	հոկտեմբեր	ԱԽ
Այցելություն Խաչատուր Աբովյանի անվան տուն թանգարան	հոկտեմբեր	12-րդ դասարաններ, ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ
Մասնակցություն <<Մեղու 2015>> մրցույթին	նոյեմբեր	10,11,12-րդ դասաևրաններ, Իրինա Գրիգորյան
Այցելություն Սերգեյ Փարաջանովի տուն թանգարան	նոյեմբեր	ԱԽ, ուսուցիչներ
<<Ինտելեկտուալ խաղ-մրցույթ>> պատմություն առարկայից	նոյեմբեր	Պատմության մ/մ, 10-րդ դասարաններ
<<Սպորտային մրցաշար>>	նոյեմբեր	Բոլոր դասարաններ
<<Հայ ասպետ>> ինտելեկտուալ խաղ-մրցույթ	դեկտեմբեր	11-րդ դասարաններ

Վարժարանի կոլեկտիվը ակտիվ մասնակցություն է ունեցել մեր համալսարանի և այլ կրթօջախների կողմից կազմակերպված գիտաժողովներին, հրատարակել և հրատարակման ներկայացրել 37 գիտական աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում վարժարանի 5 ուսուցիչ վերապատրաստվել են Կրթության ազգային ինստիտուտում և ներկայացվել ատեստավորման, 2 ուսուցիչ էլ ներկայացվել են առաջին աստիճանի որակավորման տարակարգ ստանալու /Մերի Վենգրժանովիչ, Աննա Խատայան/:

2016-2017թ. ուսումնական տարում մրցույթի արդյունքներով վարժարանի բնագիտամաթեմատիկական /ֆիզմաթ ենթահոսքի/, հումանիտար /հոգեբանություն, լրագրություն և անգլերեն ենթահոսքերի/ և մշակութային /նկարչություն-դիզայն ենթահոսքի/ հոսքերի 10-րդ դասարաններ են ընդունվել 133 աշակերտներ /սովորողների տվյալները ներկայացված են աղյուսակում/:

	հոսքեր	X դասարան	XI դասարան	XII դասարան	Ընդամենը
1	հումանիտար հոսք /անգլերեն ենթահոսք/	26	20	-	46
2	հումանիտար հոսք /հոգեբանություն ենթահոսք/ 1	26	21	25	72
3	հումանիտար հոսք /հոգեբանություն ենթահոսք/ 2	-	-	25	25
4	հումանիտար հոսք /լրագրություն ենթահոսք/	26	20	25	71
5	մշակութային հոսք /նկարչություն ենթահոսք /	25	16	21	62
6	Բնագիտամաթեմատիկական հոսք /ֆիզմաթ. ենթահոսք/	30	25	25	80
	Ընդամենը	133	102	121	356

Հաշվետու ժամանակահատվածում հենակետային վարժարանը 12-ամյա կրթությամբ տվել է 106 շրջանավարտ, որոնցից գերակշիռ մասը մեր համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ են /տվյալները բերված են աղյուսակում/:

1.	հոսքերը	Շրջանա վարտների թիվը	Բուհ ընդունված ների թիվը	ՀՊՄՀ	Արտասահմանյա ն բուհեր	այլ բուհեր
2.	Հումանիտար /հոգեբանություն/	24	21	14	3	4
3.	Հումանիտար /լրագրություն/	24	22	16	2	4
4.	Բնագիտամաթեմատիկական /ֆիզմաթ/	35	33	21	4	8
5.	Մշակութային /նկարչություն-դիզայն/	23	21	16	0	5
6.	Ընդամենը	106	97	67	9	21

Վարժարանի շրջանավարտներից տարբեր մասնագիտությունների գծով գիտությունների 28 թեկնածուների շարքը այս տարի համալրվեց ևս 1-ով / ֆմ գիտ. գծով/:

Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից և ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգի» հենակետային վարժարանում /ավագ դպրոցում/ կատարվել է ներքին գնահատում, այսինքն հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկում, որի նպատակն է՝ բարելավել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեության հետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

Ներքին գնահատման հաշվետվությունը ներկայացվել է մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովվել դրա հրապարակումը /այն ամբողջությամբ տեղադրված է ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքում/:

	Սովորողներ/ուսումնառության ամփոփիչ տվյալներ արդյունքներ	**2015/2016**
1.	Դպրոցի սովորողների ընդհանուր թիվը	329
2.	Դպրոցի 10-12-րդ դասարաններում սովորող աշակերտների ընդհանուր թիվը	329
3.	12-րդ դասարանի շրջանավարտների թիվը	106
4.	Դպրոցի ուսուցիչների թիվը	40

5.	Դպրոցի վարչական և սպասարկող անձնակազմի թիվը	8
6.	Միասնական քննություններին մասնակցած սովորողների թիվը	68
7.	12-րդ դասարանի պետ. ավարտական քննութ.անբավարար ստացած աշակերտների թիվը	0
8.	Նախնական և միջին մասնագիտ. ուս. հաստատություններ ընդունված շրջանավ. ընդ. թիվը	0
9.	Բուհեր ընդունված շրջանավարտների ընդհանուր թիվը	97
10.	Հայոց լեզվից շրջանավարտների տարեկան միջին գնահատականը	8.1
11.	Շրջանավարտների հայոց լեզվի միասնական քննության միջին գնահատականը	13.5
12.	Մաթեմատիկայից շրջանավարտների տարեկան միջին գնահատականը	7.4
13.	Մաթեմատիկայից շրջանավարտների միասնական քննության միջին գնահատականը	10.2
14.	Հայոց պատմությունից շրջանավարտների տարեկան միջին գնահատականը	8
15.	Հայոց պատմությունից շրջանավարտների միասնական քննության միջին գնահատականը	11,6
16.	Բնագիտական առարկաներից շրջանավարտների տարեկան միջին գնահատականը	7.6
17.	Բնագիտական առարկաներից շրջանավարտների միասնական քնն. միջին գնահատականը	10.4
18.	Միասնական քննություններին անբավարար ստացածների թիվը	13
19.	Մարզային առարկայական օլիմպիադաներին մասնակցած 10-12-րդ դասարանցիների ընդհանուր թիվը	32
20.	Մարզային առարկայական օլիմպիադաներում մրցանակ ստացած 10-12-րդ դասարանցիների թիվը	4
21.	Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մասնակցած 10-12-րդ դասարանցիների թիվը	4
22.	Հանրապետական առարկայական օլիմպիադաներում մրցանակ ստացած 10-12-րդ դասարանցիների թիվը	2
23.	Մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներին և այլ սպորտային միջոցառումներին մասնակցած 10-12-րդ դասարանցիների թիվը	16
24.	Մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներում և այլ միջոցառումներում մրցանակ ստացած 10-12-րդ դասարանցիների թիվը	11
25.	Մարզային, հանրապետական և միջազգային երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթների և այլ միջոցառումների մասնակցած 10-12-րդ դասարանցիների թիվը	9
26.	Մարզային, հանրապետական և միջազգային մշակութային, գեղարվեստական, երաժշտական մրցույթներում և այլ միջոցառումներում մրցանակ ստացած/դափնեկիր դարձած 10-12-րդ դասարանցիների թիվը	6
27.	Պետական ավարտական փաստաթուղթ ստացած շրջանավարտների թիվը	106
28.	Տվյալ դպրոցից մեկ այլ դպրոց տեղափոխված 10-12-րդ դասարանցիների թիվը	13
29.	Այլ դպրոցներից տվյալ դպրոց տեղափոխված 10-12-րդ դասարանցիների թիվը	7
30.	Տվյալ ուստարում հանրապետական և միջազգային առարկայական ստուգատեսներին մասնակցած մասնակցած 10-12-րդ դասարանցիների թիվը	-
31.	Տվյալ ուստարում հանրապետական և միջազգային առարկայական ստուգատեսներում մրցանակ ստացած 10-12-րդ դասարանցիների թիվը	-
Ուսուցիչներ		
32.	Տարակարգ ունեցող ուսուցիչների ընդհանուր թիվը	5
33.	Գիտական աստիճան ունեցող ուսուցիչների թիվը	17
34.	Բարձրագույն մասնագիտական կրթություն չունեցող ուսուցիչների թիվը	0
35.	Տարբեր գիտամանկավարժական պարբերականներում/ ամսագրերում հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, մենագրություններ և այլն ունեցող տվյալ դպրոցի ուսուցիչների թիվը	37
36.	ՀՀ-ում և արտերկրում գիտաժողովներին, սեմինարներին, հանրաժողովներին մասնակցած ուսուցիչների թիվը	23
37.	**Ուսուցիչների թիվը, որոնք տեղափոխվել են դասավանդելու կրթական ծրագրի միևնույն աստճան ունեցող այլ դպրոց**	0
38.	**Ուսուցիչների թիվը, որոնք կրթական ծրագրի միևնույն աստճան ունեցող այլ դպրոցներից տեղափոխվել են դասավանդելու տվյալ դպրոց**	1
Ներդպրոցական ակտիվություն		
39.	10-12-րդ դասարանների համար դպրոցի կողմից կազմակերպված միջոցառումների թիվը	45

40.	Դպրոցում գործող կրթական մշակութային, սպորտային անվճար խմբակներում ներառված 10-12-րդ դասարանցիների թիվը	70
Դպրոցի ակտիվություն և համբավ		
41.	Դպրոցում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի թիվը ***Կից ներկայացնել կազմակերպությունների և ծրագրերի ցանկը***	0
42.	Դպրոցի գործընկեր հայկական և արտասահմանյան կազմակերպությունների թիվը ***Կից ներկայացնել կազմակերպությունների ցանկը***	5
43.	Դպրոցի և բուհերի հետ համագործակցության պայմանագրերի թիվը ***Կից ներկայացնել բուհերի ցանկը***	1
44.	Դպրոցի կողմից օգտագործվող ՏՀՏ ռեսուրսները (օր. armedu.am; lib.armedu.am; dasaran.am, imdproc.am և այլն) ***Կից ներկայացնել օգտագործվող ռեսուրսների ցանկը***	6
Ֆինանսատնտեսական կառավարում		
45.	Տվյալ տարում դպրոցի բյուջեի ընդամենը գումարը	72323000
46.	Տվյալ տարում դպրոցի կողմից նախահաշվով սահմանված պահպանման ծախսերի գումարը	5652000
47.	Դպրոցի ուսուցիչների միջին տարեկան աշխատավարձը	1152040
48.	Դպրոցի վարչական աշխատողների միջին տարեկան աշխատավարձը	1989640
49.	Բյուջեում ուսումնական ռեսուրսների և նոր սարքավորումների ձեռքբերման համար նախատեսված ծախսերի գումարը	500000
50.	Դպրոցի բյուջեում արտաբյուջեի գումարը	0
51.	Տվյալ ուստարում տարում շաբաթական ուսպլանով նախատեսված ժամաքանակը	550
52.	Դասավանդվող այլընտրանքային առարկաների թիվը, ներառյալ 3-րդ օտար լեզուն	4

ՀՊՄՀ-ի ռեկտորի անմիջական աջակցությամբ վարժարանում աշխատանքներ են տարվում միջազգային ծրագիր իրականացնելու համար, որն ինչ խոսք նոր կարևոր քայլ է կրթական համակարգում, որակական նոր խնդիրների շարունակական բարելավման գործընթացում:

020 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խորհրդին թուլատրվել է ատենախոսությունների պաշտպանություններ կազմակերպել

- ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ,

	Անուն, ազգանուն	Գիտական աստիճանը, խորհրդում մասնագիտական թվանիշը
1.	Աստվածատրյան Մելանյա Գրիգորի /Նախագահ/	մ.գ.դ. ԺԳ.00.01
2.	Մկրտչյան Մանուկ Աշոտի /նախագահի տեղակալ/	մ.գ.դ. ԺԳ.00.01
3.	Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի /գիտական քարտուղար/	մ.գ.թ. ԺԳ.00.01
4.	Աբրահամյան Արամ Վերդիի	մ.գ.դ. ԺԳ.00.01
5.	Ազարյան Ռոբերտ Նիկոլայի	մ.գ.դ. ԺԳ.00.01
6.	Ասատրյան Լաուրա Թոռնիկի	մ.գ.դ. ԺԳ.00.01

7.	Թոփուզյան Աիդա Օնիկի	մ.գ.դ. ԺԳ.00.01
8.	Մանուկյան Մնացական Միքայելի	մ.գ.դ. ԺԳ.00.01
9.	Ավագյան Արմենուհի Վոլոդյայի	մ.գ.թ. ԺԳ.00.01

- ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու, ռոմանոգերմանական լեզուներ, արվեստ)

	Անուն, ազգանուն	Գիտական աստիճանը, խորհրդում մասնագիտական թվանիշը
1.	Աստվածատրյան Մելանյա Գրիգորի /Նախագահ/	մ.գ.դ. ԺԳ.00.02
2.	Մկրտչյան Մանուկ Աշոտի /նախագահի տեղակալ/	մ.գ.դ. ԺԳ.00.02
3.	Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի /գիտական քարտուղար/	մ.գ.թ. ԺԳ.00.01
4.	Ներսիսյան Լեմս Սուրենի	մ.գ.դ. ԺԳ.00.02
5.	Կարապետյան Իգոր Կարապետի	մ.գ.դ. ԺԳ.00.02
6.	Հովակիմյան Գառնիկ Պատվականի	մ.գ.դ. ԺԳ.00.02
7.	Յուզբաշյան Յուրա Վաղարշակի	մ.գ.դ. ԺԳ.00.02
8.	Գյուլամիրյան Ջուլիետա Հարությունի	մ.գ.դ. ԺԳ.00.02
9.	Ղազարյան Դոնարա Մեխակի	մ.գ.դ. ԺԳ.00.02

- ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (բնական գիտություններ)

	Անուն, ազգանուն	Գիտական աստիճանը, խորհրդում մասնագիտական թվանիշը
1.	Աստվածատրյան Մելանյա Գրիգորի /Նախագահ/	մ.գ.դ. ԺԳ.00.02
2.	Մկրտչյան Մանուկ Աշոտի /նախագահի տեղակալ/	մ.գ.դ. ԺԳ.00.02
3.	Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի /գիտական քարտուղար/	մ.գ.թ. ԺԳ.00.01
4.	Արաբաջյան Լևոն Գորգենի	մ.գ.դ. ԺԳ.00.02
5.	Խոյեցյան Աշոտ Վոլոդյայի	մ.գ.դ. ԺԳ.00.02
6.	Թանգամյան Տիգրան Վարազդատի	մ.գ.դ. ԺԳ.00.02
7.	Կոկանյան Էդվարդ Պիերի	մ.գ.դ. ԺԳ.00.02
8.	Սահակյան Լիդա Արշակի	մ.գ.դ. ԺԳ.00.02
9.	Միքայելյան Համլետ Սուրենի	մ.գ.դ. ԺԳ.00.02

2016 թ-ին «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում կայացել է 14 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսական աշխատանքների պաշտպանություն:

Թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել ներքոնշյալ անձինք

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Թեման	Մասնագիտությունը	Պաշտպ. օրը	Աշխատանքի վայրը	Խորհրդի որոշումը	ԲՈՀ-ի որոշումը
1.	Մարտիրոսյան Անի Վասիլի	Գենդերային մոտեցման մեթոդիկան ֆիզիկական դաստիարակության գործընթացում	ԺԳ.00.02- «Դաստիարակության տեսություն և պատմություն» (ֆիզիկ. կուլտուրա)	17.03.2016	ՖԿՀՊԻ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան
2.	Աղաբաբյան Կարինե Հակոբի	Ուսանողների լեզվազգացողության զարգացման տեխնոլոգիաները մանկավարժական բուհում	ԺԳ.00.02- «Դաստիարակության տեսություն և պատմություն» (հայոց լեզու)	17.03.2016	ՀՊՄՀ	Չի շնորհվել մանկ. գիտութ. թեկնածու գիտ. աստիճան	
3.	Բաղրամյան Անահիտ Իլյայի	Профессионально-ориентированное обучение русскому языку студентов исторических факультетов педвузов в контксте лингвострановедени	ԺԳ.00.02- «Դաստիարակության տեսություն և պատմություն» (ռուսաց լեզու)	31.03.0216	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան	Վերադարձվել է կրկնական պաշտպանության
4.	Գրիգորյան Ալվարդ Ֆիլիպի	Թանգարանային կրթ. ծրագրերի իրականացման հիմնախնդիրը (ՀՀ թանգարանների օրինակով)	ԺԳ.00.02- «Դաստիարակության տեսություն և պատմություն»	28.04.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան
5.	Ստեփանյան Աննա Համլետի	Նորարարական գործընթացների կառավարման համակարգը ժամանակակից դպրոցում	ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»	28.04.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտ. թեկնածուգիտ. աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտ. թեկնածու գիտ. աստիճան
6.	Դերմոյան Լուսինե Աղասու	Լատիներենի ուսուցման բովանդակության արդիականացումը լեզուների ֆակուլտետում	ԺԳ.00.02- «Դաս. և դաստ. մեթոդիկա» (լատ. լեզու)	12.05.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկն. գիտ.աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածու գիտ. աստիճան
7.	Բալայան Աստղիկ ժորայի	Ձևաբանական գիտալիքների ուսուցման մեթոդական համակարգը կրտսեր դպրոցում	ԺԳ.00.02- «Դաստիարակության տեսություն և պատմություն» (հայոց լեզու)	12.05.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան
8.	Մուրադյան Սվետլանա Սերգեյի	Լսողության խանգարումներով նախադպրոցականների արտաբերական կարողությունների զարգացման միջոցներն ու մեթոդները	ԺԳ.00.03- «Հատուկ մակվարժություն»	16.06.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան
9.	Մկրտչյան Տաթևիկ Հովիկի	Սովորողների ազգային ինքնագիտակցության	ԺԳ.00.01- «Մանկավարժ	16.06.2016	-	Շնորհվել է մանկ. գիտ.	Շնորհվել է մանկ. գիտ.

		զարգացման միջոցները ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում	ության տեսություն և պատմություն»			թեկնածուգիտ. աստիճան	թեկնածուգիտ. աստիճան
10	Տոնոյան Ալմաստ Լենդրուշի	Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորումը տարրական դպրոցում	ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմութ.»	07.07.2016	Վ.Բրյուսովի անվան ԼՀՀ	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածու գիտ. աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան
11	Աջամօղլյան Արմեն	Աշխարհագրության ուսուցման արդյունավետ.բարձրացումը հանրակրթ.դպրոցում՝ տեղեկատվ. և հաղորդակց. Տեխնոլոգ.կիրառմամբ	ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (աշխարհագրություն)	07.07.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտ. թեկնած. գիտ. աստիճան	Շնորհվել է մանկ. գիտ. թեկնած. գիտ. աստիճան
12	Բաղդասարյան Սուսաննա Խուրշուդի	Իրադրային քերականության ուսուցումը անգելերենի մասնագիտական դասընթացում	ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն լեզու)	22.09.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտ. թեկնածուգիտ. աստիճան	-
13	Հովհաննիսյան Քնարիկ Ասլանի	Մաթեմատիկականկն մոդելավորումը որպես միջառարկայական կապերի արդիականացման արդյունավետ միջոց	ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (մաթեմատիկա)	22.09.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկավարժական գիտ. թեկնածուգիտ. աստիճան	-
14	Պետրոսյան Անահիտ	Մանկավարժական հասկացությունների նորացման հիմնախնդիրը	ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմ.»	13.10.2016	ՎՊՀ	ՉԻ շնորհվել մանկ. գիտ. թեկնածուգիտ. աստիճան	-

Դոկտորական ատենախոսություն են պաշտպանել ներքոնշյալ անձինք՝

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Թեման	Մասնագիտությունը	Պաշտպ. օրը	Աշխատանքի վայրը	Խորհրդի որոշումը	ԲՈՀ-ի Որոշումը
1	Միքայելյան Համլետ Սուրենի	Հանրահաշվի ուսուցման գիտամեթոդական հիմունքները	ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (մաթեմատիկա)	07.07.2016	ՀՊՄՀ	Շնորհվել է մանկ. գիտութ.դոկտոր գիտ.աստիճան	Շնորհվել է մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, 2016 ուս.տարում պաշտպանված աշխատանքներից ԲՈՀ-ի կողմից հաստատվել է 9-ը և վերադարձվել է 2-ը՝ կրկնական պաշտպանության կազմակերպման համար:

2 թեկնածուական ատենախոսությունների համար 020 գիտական խորհրդի կողմից չի շնորհվել հայցվող գիտական աստիճանը, իսկ 2 պաշտպանություն հետաձգվել է ատենախոսության անպատրաստ լինելու պատճառով:

Խորհրդում առկա է 52 ատենախոսական աշխատանք:

064 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս տարվա 064 մասնագիտական խորհուրդը ստեղծվել է ԲՈՀ-ի 11.01.2016 թ. հ.4Ա. հրամանով:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից թույլատրվել է ատենախոսությունների պաշտպանություններ կազմակերպել փիլիսոփայական գիտությունների բնագավառում՝ Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Թ.00.01 Տեսական փիլիսոփայություն, տրամաբանություն, գիտության փիլիսոփայություն մասնագիտությամբ հետևյալ կազմով.

	Ազգանուն, անուն, հայրանուն	**Գիտական աստիճանը**	**Թվանիշը խորհրդում**
1.	Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի (նախագահ)	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺԹ. 00.01, ԺԹ00.03
2.	Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի (նախագահի տեղակալ)	փիլ. գիտ. դոկտոր	ԺԹ.00.01
3.	Վարդանյան Կամո Երեմի (գիտքարտուղար)	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺԹ.00.01
4.	Ասատրյան Գրիգորի Եգորի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.01
5.	Գրիգորյան Էռնեստ Ռուբենի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.01
6.	Պողոսյան Վիլ Անդրանիկի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.04
7.	Խաչատրյան Միհրան Մովսեսի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.01
8.	Միրումյան Ռիմա Արտավազդի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.01, Թ.00.02
9.	Օհանյան Քաջիկ Մարտիրոսի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.01
10.	Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի	փիլ. գիտ. դոկտոր	Թ.00.01

Խորհրդին թույլատրվել է ատենախոսությունների պաշտպանություններ կազմակերպել հոգեբանական գիտությունների բնագավառում՝ Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի ԺԹ.00.01-Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և

պատմություն, անձի հոգեբանություն մասնագիտությամբ, ԺՌ.00.03 – Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն) և ԺՌ.00.05 - Զարգացման և կրթության հոգեբանություն (մանկավարժական, տարիքային, հատուկ), (հոգեբանական գիտություններ)- մասնագիտություններով՝ հետևյալ կազմով.

	Ազգանուն , անուն, հայրանուն	**Գիտական աստիճան խորհրդում**	**Թվանիշը**
1.	Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի (նախագահ)	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.03, ԺՌ.00.01
2.	Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի (նախագահի տեղակալ)	փիլ. գիտ. դոկտոր	Ռ.00.01
3.	Վարդանյան Կամո Երեմի (գիտքարտուղար)	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.01
4.	Կարապետյան Վլադիմիր Սևանի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.05
5.	Բերբերյան Ասյա Սուրենի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.01, ԺՌ.00.05
6.	Հակոբյան Նաիրա Ռաֆիկի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.03, ԺՌ.00.05
7.	Խուդոյան Սամվել Սուրենի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.01, ԺՌ.00.05
8.	Մկրտումյան Մելս Պարգևի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.01
9.	Ավանեսյան Հրանտ Միքայելի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.03
10.	Մարգարյան Վազգեն Հենրիկի	հոգեբ. գիտ. դոկտոր	ԺՌ.00.03
11.	Աղուզումցյան Ռուբեն Վազգենի	հոգեբ. գիտ. թեկնածու	ԺՌ.00.03
12.	Պողոսյան Վազգեն Վլադիմիրի	հոգեբ. գիտ. թեկնածու	ԺՌ.00.05

2016 թվականի ընթացքում խորհրդում պաշտպանվել են.

Փիլիսոփայությունից

Դոկտորական ատենախոսություն

1. 28.06.2016թ. – Սուսաննա Դավթյան, «Բիոէթիկայի հիմնահարցերի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը», Ռ.00.01, «Տեսական փիլիսոփայություն, տրամաբանություն և գիտության փիլիսոփայություն» մասնագիտությամբ:

Հոգեբանությունից

Դոկտորական ատենախոսություն

1. 29.09.2016թ. Արսեն Լոքյան- «Հանրային ծառայության կառավարչի հոգեբանական պատրաստման համակարգի կառուցարկման հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում», ԺՌ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Թեկնածուական ատենանախոսություններ

1. 04.04.2016թ. Մարյամ Խոդաբախշի- «Անձի հոգեբանական տիպերի և աշխատանքային սթրեսի համահարաբերակցությունը», ԺԹ.00.03, «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. պրոֆ. Գայանե Շահվերդյան

2. 04.04.2016թ. Զորակ Խաչատրյան - «Անձի ինքնուրույնությունը և զարգացման ճգնաժամը պատանեկության տարիքում», ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ., պրոֆ. Սամվել Խուդոյան

3. 26.04.2016թ. Նաիրա Իսահակյան - «Ադդիկտիվ վարքով դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնաատկությունները», ԺԹ.00.05. «Զարգացման և կրթության հոգեբանություն» (մանկավարժական, տարիքային, հատուկ)» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.թեկն. դոց. Անժելա Վարդանյան

4. 26.04.2016թ. Լիլիթ Վարդանյան – «Միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության դինամիկան միջին դպրոցում» ԺԹ.00.03, «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ., պրոֆ. Սրբուհի Գևորգյան

5. 24.05.2016թ. Անի Խուդոյան - «Ներշնչման արդյունավետությանը նպաստող կոգնիտիվ գործոնները» ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ., պրոֆ. Սրբուհի Գևորգյան

6. 24.05.2016թ. Լեյլա Աբիդի Հուրիլար- «Անձի ինքնահաստատման գործընթացում հուզական ինտելեկտի ազդեցության գենդերային առանձնահատկությունները» ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.թեկն. դոց. Վարդուհի Պապոյան

7. 04.07.2016թ. Վարդան Գեղամյան- «Հոգեբանական պատրաստության յուրահատկություններն ըբշամարտում» ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.թեկն. պրոֆ. Հարություն Բաբայան

8. 04.07.2016թ. Նունե Վարդանյան - «Անձի մասնագիտական նույնականության գենդերային առանձնահատկությունները Հայաստանի կրթական համակարգում» ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. պրոֆ. Ասյա Բերբերյան

Կրկնական պաշտպանություն

ԲՈՀ-ը 1 տարի առաջ վերադարձրել էր Հռիփսիմե Պետրոսյանի ատենախոսությունը՝ կոնկրետ դիտողություններով: Նրան տրվել էր ժամանակ՝ թերություններն ուղղելու և հնարավորություն՝ կրկին աշխատանքը խորհրդում քննարկելու համար:

9. 04.07.2016թ. Հռիփսիմե Պետրոսյան - «Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում» ԺԹ. 00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. պրոֆ. Սեդրակ Սեդրակյան

Վերը նշված ատենախոսությունը կրկնական պաշտպանության արդյունքում հաստատվել է ՀՀ ԲՈՀ-ի կողմից:

ՀՀ ԲՈՀ-ի նախագահի 11.10.2016թ. 92Ա հրամանի համաձայն 2016թ. հոկտեմբերի 1-ից խորհուրդները վերակազմվեցին ինը անդամից կազմված երկու հոգեբանության սեկցիաների.

1. **ԺԹ.00.01- Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն**

2. **ԺԹ.00.03- Սոցիալական հոգեբանություն, (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)**

No.	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճանը	Թվանիշը խորհրդում
1.	Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի (նախագահ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
2.	Բերբերյան Ասյա Սուրենի (նախագահի տեղակալ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
3.	Վարդանյան Կամո Երեմի (գիտքարտուղար)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
4.	Խուդոյան Սամվել Սուրենի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
5.	Մկրտումյան Մելս Պարգևի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
6.	Ավանեսյան Հրանտ Միքայելի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
7.	Նաղդյան Ռուբեն Միքայելի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
8.	Պողոսյան Ռուբեն Հակոբի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.01
9.	Բաբայան Հարություն Արտավազդի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.01

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճանը	Թվանիշը խորհրդում
1.	Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի (նախագահ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
2.	Մարգարյան Վազգեն Հենրիկի (նախագահի տեղակալ)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
3.	Վարդանյան Կամո Երեմի (գիտքարտուղար)	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.01
4.	Կարապետյան Վլադիմիր Սևանի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
5.	Հակոբյան Նաիրա Ռաֆիկի	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
6.	Սեդրակյան Սեդրակ Աղասու	հոգ. գիտ. դոկտ.	ԺԹ.00.03
7.	Աղուզումցյան Ռուբեն Վազգենի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.03
8.	Պետրոսյան Ռուզաննա Համբարձումի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.03
9.	Պողոսյան Վազգեն Վլադմիրի	հոգ. գիտ. թեկն.	ԺԹ.00.03

Նոր կազմավորված խորհուրդներում պաշտպանվել են հետևյալ ատենախոսությունները՝

10. 08.11.2016թ. Աննա Քամալյան - «Երիտասարդների սթրես-կայունության ընթացքի դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները (սահմանամերձ գոտու օրինակով)» ԺԹ.

00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. պրոֆ. Մելս Մկրտումյան

11. 08.11.2016թ. Գոռ Եսայան- «Ա.Ի. Միրաքյանի ներդրումը հոգեան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում», ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. Ռուբեն Նաղդյան

12. 20.12.2016թ. Արևիկ Երիցյան- «Արտակարգ իրավիճակներում սոցիալ-հոգեբանական ադապտացիայի և հոգեբանական ռեսուրսների համահարաբերակցությունը», ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ:

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. Նաիրա Հակոբյան

13. 20.12.2016թ. Սուսան Ռամեզամախուր - «Իրանի ձեռներեցների անձնային ու վարքային դրսևորումների յուրահատկությունները գործունեության տարբեր ոլորտներում», ԺԹ.00.01

Ղեկ. հոգ.գիտ.դոկտ. Հրանտ Ավանեսյան

Այժմ խորհրդում թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության նպատակով առկա են 22 անձնական գործեր:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ Մկրտիչ Ավագյան

Հաշվետու տարում Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության բարեփոխումների և որակի ապահովման վարչությունը ՀՊՄՀ այլ ստորաբաժանումների հետ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. **Որակի ապահովում**

ՈԱԿ-ի հիմնական առաքելությունը որակի ապահովման գործընթացներում ներգրավված կառույցների գործունեության համակարգումը և որակի ներքին ապահովման գործընթացների ու մեխանիզմների գործադրումն է: Ըստ այդմ՝ ՈԱԿ-ը ներգրավվել է հետևյալ աշխատանքներում.

- Շարունակվել են աշխատանքները ՀՊՄՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման առցանց էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ:
- Շարունակվել են աշխատանքները ֆակուլտետների հետ նոր կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ, իրականացվել են աշխատանքներ նոր ծրագրերի փաթեթների ստուգման և մասնագիտական եզրակացության տրամադրման առումով:
- Մշակվել է ՀՊՄՀ դասախոսական կազմի վարկանիշավորման՝ տարեկան գործունեության գնահատման հայեցակարգը, որը ներառում է դասախոսի ինքնագնահատման ընթացակարգը և ձևաչափը (դասախոսի ինքնագնահատման տարեկան ձևաթերթի տեսքով), անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) կողմից դասախոսի գնահատման ընթացակարգը և ձևաչափը, ինչպես նաև դասախոսի գնահատման չափանիշները՝ ներկայացված երեք հիմնական ոլորտներում (դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեություն, հասարակական և վարչական գործունեություն) տարբեր տարակարգերի դասախոսների գնահատման անալիտիկ ռուբրիկի տեսքով:
- ՈԱԿ-ի աշխատողները մասնակցել են ոլորտին վերաբերող թեմաներով անցկացված մի շարք գիտաժողովների և սեմինարների, ինչպես նաև հանրապետությունում և արտերկրում կազմակերպված վերապատրաստումների:

2. **Շահակիցների կարիքների և ինստիտուցիոնալ բարեփոխումների հետազոտություն լայնածավալ ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն և հրապարակում:**

ՀՊՄՀ ուսումնական գործընթացի կազմակերպման որակի ապահովման դրույթների մասին պատկերացում կազմելու նպատակով անց կացվեց հետազոտություն և արդյունքների վերլուծություն: Ինքնավերլուծությունն ամփոփում է իրենում 2 բաժիններ: Առաջին բաժնում ամփոփված են մասնագիտական կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության աստիճանն արտացոլող արդյունքները: Ներառված են ՀՊՄՀ-ում ուսումնական գործընթացից ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքները, ամփոփված են ուսումնական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման արդյունքները: Երկրորդ բաժինը ներառում է ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման համակարգի վերանայման արդյունավետության ֆոկուս խմբային ուսումնասիրություն, ուսանողների՝ ՀՊՄՀ ընդունվելու դրդապատճառների ուսումնասիրություն, ինչպես նաև գործատուի և ՀՊՄՀ կադրային պահանջների համապատասխանության ուսումնասիրություն: Սույն հետազոտության նպատակն է գնահատել և ամփոփել ՀՊՄՀ-ում իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումները, եզրափակել պլանավորում- իրականացում- գնահատում - բարելավում շրջափուլը:

3. Ռազմավարական պլանավորում

• Պատրաստվել է ՀՊՄՀ 2011-2015 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման վերաբերյալ զեկույց, որը քննարկվել է ՀՊՄՀ ստորաբաժամումներին:

• Ռեկտորի ղեկավարությամբ և ԿԲ և Ո վարչության անմիջական մասնակցությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվել ՀՊՄՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես՝

– ՀՊՄՀ ռեկտորի հրամաններով կազմված և հաստատված աշխատանքային խմբերը, ըստ ՀՊՄՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների ժամանակացույցի, ուսումնասիրել և բացահայտել են համապատասխան ոլորտներում ՀՊՄՀ 2011-2015թթ. գործունեության ներքին ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: Կազմվել է ՀՊՄՀ SWOT-ը:

– ԿԲ և Ո -ը կոորդինացրել է աշխատանքային յոթը խմբերի հանդիպում-քննարկումները համապատասխան պրոռեկտորների ղեկավարությամբ, ինչպես նաև համակարգող հանձնաժողովի հանդիպումները ՀՊՄՀ ռեկտորի հետ:

– ԿԲ և Ո -ը համակարգել և ի մի է բերել ՌԾ աշխատանքային խմբերի մշակած և համակարգող հանձնաժողովի քննարկած ռազմավարական նպատակների, դրանց իրականացման համար անհրաժեշտ խնդիրների ձևակերպումները, համապատասխան գործողությունների՝ ըստ կատարման ժամկետների մշակումը, ռազմավարական նպատակների առաջընթացի գնահատման քանակական և որակական ցուցիչների սահմանումը և այլն:

– Կազմվել է ՀՊՄՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և նրա իրականացման գործողությունների աշխատանքային պլանի նախագիծը:

4. Ուսումնական գործընթացի բարելավում

• ԿԲ և Ո -ի աջակցությամբ ֆակուլտետներում շարունակվել են աշխատանքները կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մասնագրերի (սպեցիֆիկացիաների) մշակման ուղղությամբ:

• ԿԲ և Ո -ի աջակցությամբ ամբիոններում շարունակվել են ուսումնամեթոդական փաթեթների աշխատանքները

• ԿԲ և Ո -ի կողմից մշակվել են ֆակուլտետների և ամբիոնների ինքնավերլուծության ձևաչափերը

5. Անցում դասավանդման նոր մեթոդաբանության էլեկտրոնային առցանց ուսուցման

ՀՊՄՀ-ում դասավանդման նոր մեթոդների ներդրման ծրագիրը նպատակ է հետապնդում կրթական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ բարելավել կրթական հաղորդակցական միջավայրը, ուսումնական գործընթացը դարձնելով ինտերակտիվ:

Համալիր աշխատանքի հիմքում ստեղծվել է.

- Ծրագրային տեխնիկական ապահովում;
- Կազմակերպչական մեթոդական ապահովում;

- Ուսումնական հաղորդակցման առցանց հարթակի ապահովում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Կրթության Էլեկտրոնային կառավարման բաժին

Էլեկտրոնային կրթության կառավարման բաժինը ստեղծվել է Կրթության բարեփոխումների և որակի վարչության կազմում ս.թ. հոկտեմբերի 10-ին: Բաժնի աշխատակազմում են մեկ մասնագետ և բաժնի պետ: Այս կարճ ժամանակահատվածում բաժինը իրականացրել է հետևյալ գործառույթները.

- նախանշել է բաժնի խնդիրներն ու նպատակները՝ ըստ բուհի զարգացման նոր ռազմավարական ծրագրի;
- առանձնացրել և ամրագրել է բաժնի և բաժնի աշխատակիցների գործառույթները;
- ապահովել է էլ. դասընթացների Classroom հարթակի անխափան աշխատանքը;
- նախանշել է բուհում էլ. հարթակի զարգացման հետագա քայլերը;
- մշակել է էլեկտրոնային դասընթացներում դասախոսների ակտիվությունը չափող ցուցիչներն;
- մշակել և նախապատրաստել է էլ. դասընթացներում դասախոսների ակտիվության մշտադիտադիտարկման իրականացման ձևաչափն ու ծրագիրը՝ Excel ֆորմատով.
- իրականացրել է էլեկտրոնային դասընթացներում դասախոսների ակտիվության մշտադիտարկում՝ 2 անգամ.
- ներկայացրել է հաշվետվություն բաժնի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ռեկտորատում.
- մեկնարկել է "Դու և Classroom-ը" խորագրով ուսանողների հետ հանդիպումների շարքը, որի շրջանակներում իրականացրել է հանդիպումներ բուհի 5 ֆակուլտետների Ուսխորհրդի ներկայացուցիչների և կուրսի ավագների հետ.
- պաշտոնական կայքի ապահովման բաժնի հետ համագործակցության արդյունքում՝ արդենիսկ կայքի համապատասխան ստորաբաժանումներում, այդ թվում՝ դեկանատների և ամբիոնների էջերում տեղադրվել են նոր էլեկտրոնային հասցեները:

6 **Աշխատանք դրամաշնորհային ծրագրերում**

ԿԲ և Ո վարչությունը ՀՀ և եվրոպական մի շարք գործընկեր բուհերի ու կազմակերպությունների հետ շարունակել է նախորդ տարիներին մեկնարկած TEMPUS «MAHATMA» կրթության կառավարում և առաջնորդություն, «ARMENQA» ազգային նշանակության ծրագիրը, որն ուղղված է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՈԱՇ և ՈՈՇ) իրականացմանը ՀՀ-ում:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Կամո Վարդանյան

Արդի դարաշրջանում խիստ կարևորվում է հետազոտական համալսարանների դերը, որտեղ կրթական գործընթացին զուգահեռ նախատեսվում է գիտական ակտիվ գործունեություն, արդյունքների արդյունավետ արտադրական շրջանառություն, ինչպես նաև մասնագետների ժամանակակից պահանջներին համապատասխան պատրաստում և վերապատրաստում: Նման խնդրի իրականացմանը ձեռնամուխ է եղել համալսարանում գործող Գիտահետազոտական կենտրոնը: Կենտրոնի հիմնական առաքելությունը համալասարանում իրականացվող գիտական, գիտահետազոտական, գիտամեթոդական, փորձագիտական և տեխնոլոգիական աշխատանքների համակարգումն է, գիտական ներուժի զարգացումը և միջազգային գիտական ծրագրերում նրա արդյունավետ օգտագործումը:

2016թ-ի համար Գիտահետազոտական կենտրոնի առաջնային նպատակն է եղել.

1. Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:
2. Խթանել համալսարան-դպրոց հետազոտական համագործակցության զարգացումը, հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման նպատակով ձևավորել գիտության ինովացիոն ենթակառուցվածք:
3. Խթանել Համալսարանի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել Համալսարանի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին:
4. Վերակառուցել Համալսարանի ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ որակավորումների համաեվրոպական հենքի պահանջներին համապատասխան:
5. Նպաստել գիտական ներուժի արդյունավետ շարժունակությանը:

Կարևորելով վերոնշյալը համալսարանի ռեկտորի 12.11.2015թ. թիվ 1-666-Ա հրամանի համաձայն կենտրոնին են կցվել են գիտաուսումնական աշխատանքների համակարգման, մասնագիտական վերապատրաստումների բաժինները, համալսարանի բազային ֆինանսավորվող գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների շարքում նորաստեղծ Մաթեմատիկական կրթության և Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման գիտական լաբորատորիաները:

Գիտահետազոտական կենտրոնում առանձնացվել է գիտական քաղաքականության իրավական դաշտի մշակման և նորմատիվային փաստաթղթաստեղծ գործունեության ապահովման խումբը: Այս առումով սա կարևոր քայլ է, որը հնարավորություն կտա գիտնականներին գործելու միասնական իրավական դաշտում: Կենտրոնի կողմից շարունակում է հրատարակվել մի շարք կանոնակարգեր և նորմատիվային ակտեր, որոնք միտված են կանոնակարգելու գիտնականի գործունեությունը և ստեղծելու նպաստավոր պայմաններ մտավոր ներուժի պահպանման և զարգացման համար: Ինչպես նաև ստեղծվել են մշտադիտարկման մեխանիզմների մի շարք մոդելներ: Կարևորագույն ձեռքբերում է խորհրդատվական գործունեությունը: Գիտահետազոտական կենտրոնը այն կառույցն է, որտեղ գիտական արդյունավետ աշխատանքներ կատարելու նպատակով տրամադրվում է մասնագիտական խորհրդատվություն: Հաստատվել են արդյունավետ և սերտ ստեղծագործական կապեր դեկանների, դեկանների գիտության գծով տեղակալների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ: Այս տարի խորհրդատվություն ենք իրականացրել նաև մագիստրոսական ծրագրերում ընդգրկված ուսանողների համար: Կարծում ենք, որ աշխատանքի այս ուղղությունը առավել մասսայականացման կարիք ունի:

Ներկայումս համալսարանի ֆակուլտետային և համահամալսարական ամբիոններում գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներն իրականացվում են 6 ուղղություններով.

- *թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված պետ.բյուջեից ֆինանսավորվող գիտական հայտերին համապատասխան,*
- *բազային ֆինանսավորման շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված պետ.բյուջեից ֆինանսավորվող գիտական հայտերին համապատասխան,*
- *ամբիոնային գիտական հետազոտությունների շրջանակներում, դասախոսների տարեկան անհատական պլաններում նշված թեմաներին համապատասխան,*
- *«Ազգային դպրոցական դասագիրք» ՀՀ ԿԳ նախարարության և Համաշխարհային բանկի կողմից հաստատված մրցույթային ծրագրի շրջանակներում,*
- *այլ գրանտային ծրագրերի շրջանակներում,*
- *նախասիրությունների շրջանակներում:*

Կենտրոնի կողմից իրականացվել են տեղեկատվական-վերլուծական հետազոտություններ համալսարանի գիտական ներուժի վիճակի և զարգացման հեռանկարների պարզաբանման

ուղղությամբ, որոնց արդյունքների հիման վրա կատարվել են նաև նախապատրաստական աշխատանքներ համալսարանում գիտահետազոտական կենտրոնի համակարգում գիտական նոր ենթակառուցվածքների ներդրման ուղղությամբ: Այդպիսի նոր ուղղություն է «Շախմատը դպրոցում» ծրագիրը: Գիտահետազոտական կենտրոնը նախապատրաստում և կազմակերպում է նաև տարբեր գիտական մրցույթներին դասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը: Դրա վառ ապացույցն է Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ և բազային ֆինանսավորման մրցույթին ներկայացված հայտերը: Ներկայացված թեմաներն իրենց որակական առումով բավականին զարգացում ունեն:

Մասնավորապես՝ 2017թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսային ծրագրերում ներառելու նպատակով ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հաստատման են ներկայացվել գիտական ենթակառուցվածքների պահպանման հետևյալ 11 ծրագրերը.

1. Գիտահետազոտական կենտրոնի զարգացում և պահպանում- ղեկավար՝ Կ. Վարդանյան
2. Շախմատի առարկայի ուսուցման գործընթացի հոգեբանական, սոցիոլոգիական և մանկավարժական ուսումնասիրություններ (Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոն և հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա)- վարիչ՝ Վ. Սարգսյան
3. Սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման հմտությունների ձևավորում- ղեկավար՝ Մ. Մկրտումյան
4. Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի գիտամանկավարժական և արժեբանական հիմունքները կրթական նոր հարացույցի պայմաններում- ղեկավար՝ Հ. Միքայելյան
5. Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա- վարիչ ՝ Է. Կոկանյան
6. Հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և բուհական ծրագրերի վերլուծություն՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանության տեսանկյունից- ղեկավար՝ Կ. Հարությունյան
7. Ընդհանուր մեթոդաբանության և մանկավարժական նորարարության լաբորատորիա- վարիչ ՝ Մ.Մկրտչյան
8. Մանկության ժամանակակից հիմնախնդիրների ուսումնասիրման լաբորատորիա- «Երեխաների առողջա գիտական դաստիարակության հիմնախնդիրը, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները» - վարիչ ՝ Ա. Թոփուզյան
9. Փոխակերպական հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ (ՀՊՄՀ առընթեր մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտ)- ղեկավար՝ Հ. Հովհաննիսյան
10. Շարունակական մաթեմատիկական կրթություն լաբորատորիա- վարիչ՝ Բ. Նահապետյան
11. Կենսաբանական ակտիվ միացությունների ուսումնասիրման և կենսաանվտանգության գիտական լաբորատորիա- ղեկավար՝ Ռ. Սադոյան

Կենտրոնը կազմակերպել է նաև թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում հայտերի մասնակցությունը գիտության պետական կոմիտեի հայտարարված մրցույթին: Ներկայացվել են 2 թեմա Հայ-ռուսական հումանիտար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՌՀԳՀ - 2016» մրցույթին, ինչպես նաև 1 թեմա Հայ-բելառուսական գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի մրցույթին:

2017 թվականի ընթացքում ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման միջոցով բուհի գիտահետազոտական համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի վերաբերյալ Գիտահետազոտական կենտրոնը ներկայացրել է ստորև բերված առաջարկությունները.

1. Նպատակահարմար ենք գտնում ՀՀ-ում ինժեներատեխնիկական և բնագիտական կլաստերների հետ զուգահեռ զարգացնել մանկավարժահոգեբանական ուղղվածության կլաստերը:

2. Կարծում ենք, որ ՀՀ-ում մանկավարժահոգեբանական գիտակրթական կլաստերի գործունեության փուլերից առավել պետք է կարևորվի նախնական փուլը, քանի որ անհրաժեշտ է իրականացնել օբյեկտիվ կլաստերավորման հնարավորության սահմանում և մշակել արդյունավետ կլաստերային նախագծերի իրացման ծրագրեր:
3. Գտնում ենք, որ գիտակրթական կլաստերների ստեղծումը նպատակահարմար է, երբ գործընկեր բուհերը, գիտական կառույցները ունեն նման թողարկման մասնագիտական հնարավորություններ:
4. Կարծում ենք, որ բազմամասնագիտական բուհերը գիտակրթական կլաստերների ստեղծման դեպքում առաջնությունը պետք է տան գիտական այն ուղղությանը, որն առավելագույնն է զարգացած, իսկ մյուսները, օգտագործելով նման հնարավորությունները, փորձեն զարգացնել:
5. Մանկավարժահոգեբանական մասնագիտական ուղղությունների զարգացումը առավել արդյունավետ է ցանցային համալսարանների համատեքստում: Նշենք, որ այդ բնագավառում Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը ունի որոշակի փորձ:
6. Գտնում ենք, որ ցանցային համալսարանները բացի գիտական կադրերի պատրաստումից ունեն նաև մի այլ կարևոր գործառույթ, այն է՝ գիտական սուբյեկտների պարբերական վերապատրաստում այդ համալսարանների, ինչպես նաև այլ գիտակրթական կառույցների ճանաչված մասնագետների կողմից:
7. Իրականացված գիտահետազոտական աշխատանքները ցանցային համալսարանների տարածքում պետք է քննարկման ենթարկվեն գործընկեր համալսարանների համապատասխան գիտական կառույցների կողմից և անպայման ներդրվեն կամ երաշխավորվեն ներդրման արտադրական շրջանառության մեջ գիտական արդյունավետության բարձրացման նպատակով:
8. Ստեղծել ցանցային համալսարանների միջգիտահետազոտական համատեղ ժամանակակից լաբորատորիաներ, որտեղ կիրականացվեն համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև կտեղայնացվեն մագիստրոսական մասնագիտական ծրագրեր:
9. Ցանցային համալսարանների համատեքստում զարգացնել արվեստի և հումանիտար ուղղվածությամբ ծրագրերի մշակումն ու իրականացումը:
10. Գործընկեր բուհերի և գիտական կառույցների համար ստացված գիտական արդյունքների քննարկման և արժևորման նպատակով կարելի է ստեղծել գիտական միասնական պարբերականներ կամ միջազգայնացնել առկա պարբերականները:


Համալսարանի ամբիոններում և գիտական ենթակառուցվածքներում գիտաշխատողների կողմից իրականացվել են ծավալուն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ: Ըստ գործող կանոնադրության՝ համալսարանում իրականացվում են հիմնարար, տեսական, կիրառական, փորձարարական գիտական և գիտամեթոդական հետազոտություններ՝ հայագիտության, ընդհանուր, կիրառական և զինվորական հոգեբանության, ընդհանուր, նախադպրոցական, տարրական և հատուկ մանկավարժության, դպրոցական առարկաների դասավանդման մեթոդիկաների, մշակութաբանության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, բնագիտության, ինչպես նաև այլ՝ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերին համապատասխան: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմում առկա են հիմնարար հետազոտություններ իրականացնող բավարար թվով մասնագետներ, ովքեր կատարում են գիտության և տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող տեսական և կիրառական բնույթի հետազոտություններ: Համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման գիտականության վրա. հաշվետու տարվա ընթացքում գիտամանկավարժական կադրերը համալրվել են ՀՀ ԳԱԱ անդամներով և թղթակից անդամներով, առաջատար և ճանաչված գիտնականներով: Բացի այդ արտասահմանյան մի շարք լավագույն մասնագետներ հրավիրվել են կարդալու արդիական դասախոսություններ, որոնք իրենց դերն ու նշանակությունն ունեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման գործում:

Հարկ է ընդգծել, որ որոշ մասնագիտությունների գծով պաշտոնական պայմանագրերի հիման վրա հաստատվել են սերտ և գործնական հարաբերություններ ՀՊՄՀ-ի և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների, այլ գերատեսչական կազմակերպությունների միջև (Մոլեկուլյար կենսաբանության, Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներ, Էրեբունի թանգարան-ինստիտուտ և այլն), որոնց շնորհիվ էլ ներկայումս ՀՊՄՀ-ի մագիստրոսները որոշ մասնագիտությունների գծով անցկացնում են հետազոտական պրակտիկաներ: Նմանատիպ գործընթացների շրջանակը ապագայում նախատեսվում է լայնացնել՝ ընդգրկելով հանրապետության առաջատար գիտական կենտրոնները:

ՀՊՄՀ-ում իրականացվող հետազոտական աշխատանքները, որպես կանոն, հիմնարար բնույթ են կրում, իսկ դրանց արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուների, պարբերականների, գրքերի և ինֆորմացիայի տարածման այլ միջոցներով: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման համար ավելի ու ավելի մեծ չափով օգտագործվում են համացանցի ընձեռած հնարավորությունները: Կատարվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են համապատասխան զեկույցներում և հրապարակումներում:

2016 թվականին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակվել են 620 հոդված, որից 139-ը ցիտվող (SCOPUS, РИНЦ... և այլն) պարբերականներում, 17 մենագրություն, 65 ձեռնարկ, 49 գիրք:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ



Միջազգային գրախոսվող պարբերականներում հրատարակված հոդվածները

	2013-2014թթ.	2015թթ.	2016թթ.
Scopus, Web of science	38- (30%)	20- (23%)	49- (35%)
РИНЦ	92- (70%)	68- (77%)	82- (59%)
			8- այլ (6%)
Ընդամենը	**130**	**88**	**139**

Համալսարանի մի շարք դասախոսներ զեկուցումներ են կարդացել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Նման ինտենսիվ համագործակցությունը առաջատար միջազգային կենտրոնների հետ անհերքելիորեն վկայում է համալսարանի գիտական գործունեության ինտեգրման արդյունավետ գործընթացի մասին:

Համալսարանում 2016թ. շարունակվել է հետևյալ 6 գիտական հանդեսների հրատարակումը.

1. *«Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» /միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/*
2. *«Գիտական տեղեկագիր»*
3. *«Հայագիտական հանդես»*
4. *«Հատուկ կրթության հիմնախնդիրներ» հանդես*
5. *«Իմաստություն» պարբերական*
6. *«Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք*

Մանկավարժական համալսարանի «Իմաստություն» գիտական պարբերականն ընդգրկվել է ԲՈՀ-ի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների (դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար) ցուցակում և գրանցված է Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), և Advanced Scientific Index (ASI), eLIBRARY, EBSCO, CYBERLENINKA միջազգային գիտաչափական շտեմարաններում:

Գիտահետազոտական կենտրոնի կողմից աշխատանքներ են տարվում նոր ժողովածուների ստեղծման ուղղությամբ: Հատկապես կարևորվում է այլ բուհերի և գիտական հաստատությունների /հատկապես արտասահմանյան/ հետ համատեղ գիտական պարբերականների լույս ընծայումը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն մասնակցել է նաև բազում հանրապետական և միջազգային գիտաժողովների աշխատանքներին: Հիշատակման են արժանի համալսարանում կազմակերպված ներքոհիշյալ միջազգային գիտաժողովները՝

- «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երկրորդ միջազգային գիտաժողով (նոյեմբերի 3-4)
- «Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացման հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» միջազգային գիտաժողով (մարտի 3-4)
- «Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխումները ներառականության համատեքստում» միջազգային աշխատաժողով (հոկտեմբերի 13)
- Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի 90-ամյակին նվիրված կյանքը և փիլիսոփայությունը խորագրով միջազգային գիտաժողով: (նոյեմբերի 22-23)

Գիտության պետական կոմիտեի կողմից հաշվետու տարում ֆինանսավորվել է 2 գիտական կոնֆերանսների կազմակերպման ծրագիր:

ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից բազային ֆինանսավորվող թեմաների քանակն ըստ տարիների

2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
2	4	5	7	9	9

ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից թեմատիկ ֆինանսավորվող թեմաների քանակն ըստ տարիների

2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
2	3	3	3	2	2

Համալսարանում ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից գիտական թեմաների ֆինանսավորման չափաքանակներն ըստ տարիների

2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
28 080 000 ՀՀ դրամ	39 260 840 ՀՀ դրամ	39 484 000 ՀՀ դրամ	59 870 000 ՀՀ դրամ	71 588 200 ՀՀ դրամ	69 559 900 ՀՀ դրամ

Գիտահետազոտական կենտրոնը կոորդինացնում է նաև բազային և պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքները: Այս տարի համալսարանում իրականացվել են 9 բազային և 2 թեմատիկ ֆինանսավորվող գիտական ծրագրեր, որտեղ ընդգրկված են եղել մոտ 50 գիտնականներ: Մեր նպատակն է ընդլայնել և առավել որակյալ դարձնել այս գործընթացը:

Հաշվետու տարում համալսարանում իրականացված գիտական ծրագրերն են.

1) «ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ. 21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ, ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ»

Լաբորատորիայի ղեկավար՝ մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Աիդա Թոփուզյան

1. Իրականացվել են ուսումնասիրություններ՝ ժամանակակից հայ ընտանիքում մանկության կազմակերպման խոչընդոտները բացահայտելու համար:
2. Մշակվել են ընտանիքում ապահով մանկության բնութագրիչներ:
3. Մշակվել է երիտասարդ ծնողների մանկավարժա-հոգեբանական և առողջապահական լուսավորության ինտեգրված ծրագիր:
4. Մշակվել են ընտանիք-դպրոց կապի ամրապնդման մոդել և դրան նպաստող մանկավարժական պայմաններ:
5. 2016թ. նոյեմբերի 30-ին կազմակերպվել է գիտաժողով, «Մանկակենտրոն հասարակությունը որպես մանկության մարտահրավերները կանխող և հաղթահարող գործոն» խորագրով:

2) «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ»

Լաբորատորիայի վարիչ՝ հոգ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Մելս Մկրտումյան

1. Մշակվել են սովորողների և երիտասարդների հոգեբանական անվտանգության չափորոշիչներ, խմբավորվել նրանց անվտանգության փոփոխությունների տարիքային, սեռային և անհատական առանձնահատկություններին բնորոշ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը, հոգեվիճակների դրսևորման յուրահատկություններն ու ոչ ստանդարտ պայմաններում դրանց փոփոխությունների հավանական միտումները:
2. Ուսումնասիրվել են հիմնախնդրին վերաբերվող գրական աղբյուրներ, մշակվել է հետազոտությունների կազմակերպման հայեցակարգն ու ռազմավարությունը, համալրվել են հետազոտական խմբերը, մշակվել հետազոտության մեթոդաբանությունն ու իրականացման

ուղիները, մշակվել և պատրաստվել է անձի հոգեֆիզիոլոգիական պարամետրերի համալիր չափման սարք:

3. 2016թ.ի հուլիս-օգոստոս ամիսներին համեմատության նպատակով հետազոտվել են Արցախի N զորամասում ծառայող երիտասարդների հոգեբանական անվտանգության բնութագրերը, չափորոշիչների փորձարկման նպատակով կիրառվել և համեմատվել են Արցախում ծառայող և Երևանում բնակվող երիտասարդների հետազոտության արդյունքները:

4. Հրատարակված է 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 հոդված:

3) «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ»

Լաբորատորիայի վարիչ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Մանուկ Մկրտչյան

1. Կատարվել է աշխատանքի հետազոտական մասը, արդյունքները մշակվել և համակարգվել են:

2. Ստացված գիտական արդյունքները զեկուցվել են միջազգային, և հանրապետական գիտաժողովներում:

3. Հրատարակվել են 15 հոդված, ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված 1 գրքույկ:

4. Ստացված արդյունքները ներդրվել են <<Բյուրական>> կրթահամալիրում, ՀՊՄՀ – ում՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում:

5. ՀՊՄՀ «Ընդհանուր մեթոդաբանության և մանկավարժական նորարարության լաբորատորիայի» և Կարագանդայի մարզի մանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման ինստիտուտի <<Որակավորման բարձրացման ազգային Օռլեու կենտրոն>>-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

4) «ՇԱԽՄԱՏ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ՇԱԽՄԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ)»

Ծրագրի ղեկավար՝ հոգ.գիտ.թեկ.,դոցենտ՝ Վահան Սարգսյան

1.Բացահայտվել են հանրակրթական դպրոցներում շախմատի ուսուցման վրա ազդող կոնտեքստուալ բնույթի ընտանեկան, ներդպրոցական, մոտիվացիոն գործոնները և շախմատ առարկայի ազդեցության մասին ծնողների պատկերացումները:

2.Հաստատվել է, որ շախմատային հանրակրթությունը կարող է ծառայել կրտսեր դպրոցականի տրամաբանական մտածողության զարգացման և ինտելեկտուալ ակտիվության բարձրացման, այլընտրանքային և պատկերավոր մտածողության զարգացման լավագույն միջոց:

3.Մշակվել են զարգացնող խաղեր, առաջադրանքներ, որոնց կիրառման նպատակն է զարգացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների խոսքը և մյուս հոգեկան գործընթացները, ինչպես նաև վարքը:

4.Թեմայի շրջանակներում հրատարակվել է 6 հոդված, 1 կոլեկտիվ մենագրություն, 15 հոդված հանձնվել է տպագրության:

5) «ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ»

Ծրագրի ղեկավար՝ փիլ.գիտ.դոկտ., դոցենտ Հասմիկ Հովհաննիսյան

1. Վերամշակվել են Հայոց ցեղասպանության հանրային ընկալումների ուսումնասիրությանը նվիրված սոցիոլոգիական հետազոտության երկրորդ փուլի մեթոդաբանական-մեթոդական հիմքերը, գործիքակազմը, կազմվել է ծրագիրը:

2. Իրականացվել են նախնական սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման (հարցման) դաշտային աշխատանքները, նախնական սոցիոլոգիական ինֆորմացիայի առաջնային և համակարգչային մշակման աշխատանքներ, գիտական հանրությանն են ներկայացվել հետազոտության արդյունքները:

3. Հետազոտվել է Հայոց ցեղասպանության ընկալման, այդ պատմական փաստի կապակցությամբ հանրային կարծիքում առաջ եկող տրամադրությունների, հուզական արձագանքների ու գիտակցական դրքորոշումների սպեկտրը, արձանագրվել է այդ դիրքորոշումներում ու տրամադրություններում առկա փոխակերպների դինամիկան:

4. Ուսումնասիրվել են ցեղասպանության հետևանքների մեղմման վերաբերյալ քաղաքական և քաղաքագիտական շրջանակներում քննարկվող մի շարք տարբերակների կապակցությամբ հանրային կարծիքի դիրքորոշումները և դրանց փոփոխությունները:

5. Գնահատվել են ցեղասպանության, ինչպես նաև դրա ճանաչման ու դատապարտման գործընթացներում որոշակի դերակատարություն ունցած երկրների ու քաղաքական կառույցների վերաբերյալ հանրային կարծիքում առկա դիրքորոշումները:

6. Հրատարակվել է 1 հոդված և 1հոդված ներկայացվել է հրատարակման:

6) «ՔՎԱՆՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԱՅԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼԱՅԻՆ ՕՊՏԻԿԱՅԻ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄ»

Լաբորատորիայի վարիչ՝ ֆիզմաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝ Էդվարդ Կոկանյան

1. Սինթեզվել և Չոխրալսկու եղանակով աճեցվել են տուլիումի խառնուրդային իոններով լեգիրված համընկնելի բաղադրությամբ լիթիումի նիոբատի (LN) բյուրեղներ: Ստացված բյուրեղների սպեկտրադիտական բնութագրերի մշակման արդյունքում հաշվարկվել են նշված իոնների Ռակայի գենեոլոգիական և Ստիվենսի գործակիցները:

2. Հեղուկ փուլում ռեակցիայի եղանակով սինթեզվել են հոլմիումի իոններով լեգիրված լիթիումի նիոբատի գելեր, որոնցից առաջին անգամ Զոլ-Գել եղանակով աճեցվել են նշված միացության 1, 2 և 5 շերտանի նուրբ թաղանթներ:

3. Թեմայի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա տպագրվել է 1 հոդված և 4 գիտաժողովի նյութ:

4. Ֆրանսիայի Նանսի քաղաքում կայացած «Նյութագիտության և բնապահպանության նոր նվաճումներ» 5-րդ միջազգային գիտաժողովում ներկայացվել է 4 զեկույց:

7) «ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

Ծրագրի ղեկավար՝ ֆիզմաթ.գիտ.թեկնածու՝ Կարինե Հարությունյան

1. Ուսումնասիրվել է բարձրագույն կրթության ոլորտում իրականացված բարեփոխումների ձեռքբերումները, դրանց առաջընթացի տեմպերը և դրանց ազդեցությունը ոլորտի առանձին ուղղությունների վրա:

2. Առանձնացվել են ներկա փուլի մարտահրավերները, մշակվել են առաջարկներ բարեփոխումների հետագա ընթացքի վերաբերյալ:

3. Ստացված արդյունքները ներկայացվել են 2 միջազգային գիտաժողովներում:

8) «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»

Թեմայի ղեկավար ֆիզմաթ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր՝ Համլետ Միքայելյան

1.Իրականացվել են մաթեմատիկական կրթության արժեբանական հիմունքների վերլուծություն, ուսումնասիրել է ճշմարտական, բարոյական, հոգեկան արժեքները:

2.Ստացված արդյունքները հրատարակվել են գրախոսվող ամսագրերում և ժողովածուներում՝ հոդվածների /ընդամենը 23 հոդված/ և ուսումնական ձեռնարկների /երկու ձեռնարկ/ տեսքով:

3.Կազմակերպվել է միջազգային կոնֆերամս:

4.Զեկուցումներով հանդես են եկել մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներում.

9) «ER3+ և YB3+ ԻՈՆՆԵՐՈՎ ԼԵԳԻՐՎԱԾ ԼԻԹԻՈՒՄԻ ՆԻՈԲԱՏԻ ԲՅՈՒՐԵՂՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՕՊՏԻԿԱԿԱՆ ՍԵՆՍՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐ

Լաբորատորիայի վարիչ՝ ֆիզմաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝ Էդվարդ Կոկանյան

1. Երբիումի և իտերբիումի իոններով լեգիրված լիթիումի նիոբատի բյուրեղներում սենյակային ջերմաստիճաններում 980 նմ ալիքի երկարությամբ կարճ իմուլսային լազերային ճառագայթով լուսավորման պայմաններում դիտվել է կանաչ ալիքի տիրույթում ապ-կոնվերսային լյումինսեցենցիա: Հետազոտվել է դիտված լյումինսեցենցիայի անկման կինետիկան: Առաջարկվել է տեսական մոդել նշված ապ-կոնվեսիոն կանաչ լյումինեսցենցիայի անկման կինետիկայի նկարագրման համար:

2. Կատարվել է InSb հենքով եռաշերտ քվանտային փոսում երկչափ էկրանավորված էքսիտոնային վիճակների ուսումնասիրությունը՝ դիէլէկտրիկական հաստատունի մեկկողմանի կտրուկ թռիչքի հաշվառումով:

3. Թեմայի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա տպագրվել է 1 հոդված 2 գիտաժողովի նյութ:

4. Ֆրանսիայի Նանսի քաղաքում կայացած «Նյութագիտության և բնապահպանության նոր նվաճումներ» 5-րդ միջազգային գիտաժողովում ներկայացվել է 1 բանավոր զեկույց:

10) «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՌՀԳՀ – 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ԾԱՆԱՉՎԱԾ «ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐ

Թեմայի ղեկավար մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ի. Սարգսյան

1. ՈՒսումնասիրվել են հիմնախնդրի վերաբերյալ հայ, ռուս և արտերկրյա գիտնականների գիտական և մեթոդական աշխատությունները, հստակեցվել և հիմնավորվել են բարձրագույն կրթական միջավայրում բազմամշակութային ռիսկերի տիպերը, հստակեցման և մշակման փուլում է գտնվում բազմամշակութային կրթության ռիսկերի ախտորոշիչ գործիքակազմը:

2. Հստակեցվել են բազմամշակութային կրթության հուզական ռիսկերը և մոնոմշակութայինից բազմամշակութային մտածողության անցման ընթացքում ի հայտ եկած ռիսկերը և դրանց հաղթահարման ընթացաքարգը:

3. Ծրագրի շրջանակներում հայկական հետազոտական խումբը մասնակցել է մի շարք գիտաժողովների և սեմինարների:

4. Տպագրվել է 10 հոդված, իսկ և 1-ը՝ հանձնված է տպագրության:

Գիտահետազոտական կենտրոնը կոորդինացնում է նաև համալսարանի կողմից ֆինանսավորվող 2 գիտական լաբորատորիաների աշխատանքները:

1) Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիա

Լաբորատորիայի վարիչ՝ պ.գ.դ, պրոֆ., ԳԱԱ ակադ. Ռ. Սաֆրաստյան

1. Հուլիսի 12-ին կազմակերպել է Գիտաժողով՝ նվիրված Հայկական Քաղաքակրթության ուսումնասիրման արդի հիմնախնդիրներին: Գիտաժողովին մասնակցել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի և գիտա-կրթական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ:

2. Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիան տպագրության է պատրաստել Հայկական Քաղաքակրթության ուսումնասիրման արդի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովի հիմնադրույթները և մինչև տարեվերջ այն կներկայացվի տպագրության:

2) Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիայի՝ 2016 թվականի կատարած աշխատանքների

Լաբորատորիայի ղեկավար՝ ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Նահապետյան

1. 1-6-րդ դասարանների մաթեմատիկական տերմինների բացատրական բառարանի ստեղծում:

2. Պատրաստվել է «*Տարրական հավանականությունների տեսություն*» ուսումնական ձեռնարկը՝ «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» բակալավրի կրթական ծրագիրն ուսումնասիրող ուսանողների համար:

3. Հրատարակվել է «Вероятностные методы дискретных задач» մենագրությունը (Հեղինակներ՝ Բ. Նահապետյան, Լ. Խաչատրյան)

4. Անցկացվել է «Մաթեմատիկայի և ֆիզիկայի հավանականային և անալիտիկ պրոբլեմները» միջազգային կոնֆերանսը:

5. Ձևակերպվել են «Շարունակական մաթեմատիկական կրթություն» ամսագրի հայեցակարգը և առաջին համարի լույսընծայումը ընթացքի մեջ է:

Գիտահետազոտական կենտրոնի կողմից նախատեսվում է արդիական գիտական ուսումնասիրության ուղղություն համարել նաև մանկավարժական կրթության պատմությունը և այն ներառել գիտահետազոտական ուսումնասիրությունների թեմաներում:

Կենտրոնը համակարգել է նաև վերապատրաստումների և մագիստրոսական կրթության գործընթացները: Համալսարանում 2016թ-ի ընթացքում իրականացվել են վերապատրաստման հետևյալ ծրագրերը.

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ	***ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՔԱՆԱԿԸ***
Պրոֆեսորադասախոսական կազմ	200 (ԱրՊՀ) 108 (ՀՊՄՀ)

Մագիստրատուրայի գծով հաշվետու տարում իրականացվել է հետևյալ գործընթացները.

✓ Մագիստրոսական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար կատարվել են 10 ֆակուլտետների ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացվել են ռեկտորատի նիստերի ժամանակ:

✓ Արդիականացվել են մագիստրոսների կողմից կատարվող գիտական թեզերի թեմաները:

✓ Արդիականացվել են թեզերի պաշտպանման ձևաչափերը:

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում մագիստրատուրայի առկա համակարգում սովորել են **1082** ուսանող, որից 1-ին կուրսում՝ **582**, իսկ 2-րդ կուրսում՝ **500** ուսանողներ: Հեռակա համակարգում սովորել են **330** ուսանողներ, որից 1-ին կուրսում՝ **113**, 2-րդ կուրսում՝ **109**, իսկ 3-րդ կուրսում **108** ուսանողներ:

Համալսարանի գիտամանկավարժական կադրերի պատրաստման կարևորագույն օղակներից է հետբուհական կրթությունը, որի գործունեությունն իրականացվում է երեք ուղղություններով՝ ասպիրանտուրա, դոկտորանտուրա և հայցորդություն:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ ասպիրանտուրայի բաժինն ունեցել է **24** ասպիրանտ, **4** առկա, **20** հեռակա: Ուսումնառության ժամկետը լրանալու կապակցությամբ՝

ավարտել են՝ 6
ընդունվել են՝ 7/հեռակա 2/առկա
տեղափոխվել է՝ 0

Ներկայումս ասպիրանտուրայում սովորում են **28** ասպիրանտ, **4** առկա, **24** հեռակա:

Համալսարանում առավել մեծ տեղ է գրավում հայցորդների ինստիտուտը.

2016թ. հունվարի 1-ի դրությամբ առկա են եղել **74** հայցորդ որոնցից՝

տարկետման մեջ են	10
ազատվել են	14
հեռացվել և չեն ատեստավորվել	10
ժամկետից շուտ մասնագիտական խորհուրդ են ներկայացրել	20
ժամկետը լրանալու կապակցությամբ ազատվել են	1
զեղչային համակարգում սովորում են	9

2016թ. կրեդիտային համակարգով ձևակերպվել է **22** հայցորդ: Ներկայումս հայցորդական համակարգում սովորում է **96** հայցորդ:

Համալսարանը ասպիրանտներ և հայցորդներ է պատրաստում բանասիրական, ֆիզիկամաթեմատիկական, պատմական, աշխարհագրական, քիմիական, կենսաբանական, տեխնիկական, սոցիալ-մշակութային, հոգեբանական և մանկավարժական գիտությունների գծով:

2016թ. կազմակերպվել է 2 քննաշրջան՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, որոնց ընթացքում, որակավորման քննություններ են հանձնել ասպիրանտներ, հայցորդներ մեր համալսարանից և այլ բուհերից:

Որակավորման քննաշրջանին նախորդել են դասընթացներ

Օտար լեզվից	158 ժամ
Ինֆորմատիկայից	242 ժամ

2016-2017 ուս. տարվա համար համալսարանին հատկացվել է առկա–անվճար, տարկետման իրավունքով երկու ասպիրանտական տեղ.

Մրցույթին մասնակցել է երկու դիմորդ, հոգեբանության տեսություն և պատմություն և մանկավարժության տեսություն և պատմություն տեղերի համար և համաձայն ասպիրանտուրա ընդունող հանձնաժողովի որոշման և ընդունելության քննությունների դրական արդյունքների՝ հրամանագրվել և ընդունվել են առկա-անվճար, տարկետման իրավունքով ասպիրանտուրա 2016թ. հունիսի 15–ից՝ երեք տարի ժամկետով:

2016-2017 ուս. տարվա համար համալսարանին հատկացվել է հեռակա անվճար հիմունքներով ասպիրանտուրայի 7 տեղ, որոնց համար դիմել են 9-ը, ընդունվել են՝ 7-ը: Հրամանագրվել են 2016թ. նոյեմբերի 7-ից չորս տարի ժամկետով:

2016թ. Բաժինը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Դեկանատների և ամբիոնների միջոցով կազմվել է ասպիրանտների ընդունելության տարկան պլանը,
2. Ըստ գործող կարգի՝ կազմակերպվել է ասպիրանտուրայի և հայցորդների ընդունելության նախապատրաստական գործընթացը (թերթի հայտարարություն, փաստաթղթերի ընդունում, ժամանակացույցի կազմում, քննաթերթիկների նախապատրաստում),
3. Ներկայացվել է հրամանագրման ասպիրանտուրա ընդունող հանձնաժողովի կազմը, որը դիմորդներին թույլ է տալիս մասնակցելու ընդունելության քննություններին,
4. Կազմակերպվել է ասպիրանտուրայի ընդունելության քննությունները ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգով և ժամկետներով: Քննությունների ավարտից հետո ընդունող հանձնաժողովի որոշման համաձայն ասպիրանտներն հրամանագրվել են,
5. Իրականացվել է ամբիոններում և ֆակուլտետներում գիտամանակավարժական կադրերի պատրաստման կազմակերպչական աշխատանքների հսկողությունը, (գիտ. թեմաների և գիտ. ղեկավարների հաստատում, վերահաստատում, հանձնում, ատեստավորում, անհատական պլանների կազմման հսկողություն),
6. Ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են դասընթացներ՝ օտար լեզվից (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) և ինֆորմատիկայից,
7. Կրեդիտային համակարգով սովորող ասպիրանտ – հայցորդների համար կազմվել է ժամանակացույց և կազմակերպվել են ընդհանուր պատրաստվածության դասընթացներ (որոնք նույնպես վերահսկվել են),

8. ՀՀ ԲՈՀ-ի պահանջներին համապատասխան կազմակերպվել է որակավորման քննություններ,

9. Հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է ասպիրանտների և հայցորդների ատեստավորում,

10. Իրականացվել է ընթացիկ գործավարությունը (փաստաթղթերի, անձնական գործերի վարում և պահպանում),

11. Ձևակերպվել է ասպիարնտների և հայցորդների շարժը (ընդունման, տեղափոխման, ավարտման, հեռացման, կրթաթոշակների նշանակման, քննական հանձնաժողովների հրամանագրման, քննությունների մասնակցման, որակավորման քննությունների տեղեկանքների պատրաստման),

12. Կազմակերպվելու է ուսումնառության ժամկետը լրացած, հեռացված ասպիրանտների և հայցորդների անձնական գործերի մուտքագրում համալսարանի արխիվ, սահմանված կարգով,

13. Կազմակերպվել է վճարովի համակարգում սովորող ասպիրանտների և հայցորդների ուսման տարեկան վարձերի ժամանակին գանձումը, համալսարանի հաշվապահության հետ համատեղ,

14. Բաժնի մեկ տարվա հաշվետվությունը նախապատրաստվել և ներկայացվել է ՀՀ պետ. վիճակագրական վարչություն (ԻԿ – 1 ձև),

15. Ֆին-պլան բաժին է ներկայացվել ամենամսյա տեղեկանքները ասպիրանտների, հայցորդների, դոկտորանտների շարժի վերաբերյալ,

16. Ուսումնական վարչություն է ներկայացվել ասպիրանտների, հայցորդների, գիտ. ղեկավարների վարձատրման ճիշտ ժամաքանակը,

17. Ուսումնասիրվել, մշակվել և պատրաստվել է ասպիրանտուրայի բաժնի հետազոտողի բարձրագույն որակավորման աստիճանի և որակի կառավարման համակարգի ձեռնարկի նախագիծ:

Կրեդիտային համակարգով հայցորդներ ձևակերպելու նպատակով ամբողջական փաթեթ է պատրաստվել և մշակվել, որը իր մեջ ներառում է՝

ա) պայմանագրի ձև (հայցորդ – հետազոտող ձևակերպվողների համար),

բ) կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կամակերպման կարգ (գիտակրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը),

գ) հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլան

դ) հետազոտողի կրթահետազոտական ծրագիր (ըստ տարիների և կրեդիտների),

ե) ընթացիկ և հանրագումարային ստուգումների ամփոփագիր,

զ) հետազոտական աշխատանքների գնահատման տեղեկագիրը,

է) ակադեմիական տեղեկանքի ձև:

Ընդհանուր առմամբ գիտահետազոտական կենտրոնի աշխատանքները ընթացել են արդյունավետ՝ ըստ նախատեսված պլանի:

ՇԱԽՄԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Սմբատ Լպուտյան (հասարակական կարգով)

Հաշվետու ժամանակահատվածում <<Շախմատ առարկայի դասավանդման արդյունավետության սոցիալ—հոգեբանական գնահատում և զարգացում (Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոն և հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա)>> ծրագրի շրջանակներում (ծրագրի ղեկավար՝ հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Վահան Սարգսյան) կենտրոնն իրականացրել է հետազոտություններ հետևյալ ուղղություններով.

1. *Շախմատի ուսուցումը հանրակրթական դպրոցներում և ներառական կրթության պրակտիկան*
2. *Շախմատի ուսուցման սոցիոլոգիական ուսումնասիրություններ*
3. *Շախմատի ուսուցման գործընթացի հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրություններ*
4. *Շախմատի ուսուցման մեթոդական խնդիրները*
5. *Շախմատի ուսուցման կրթական առաջընթացի գնահատումը*

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են ինչպես նաև խորին հարցազրույցի, սոցիոլոգիական հարցման, ֆոկուս խմբերի, կոնտեքստուալ հարցումների, թեստավորման, ինտենտ և կոնտենտ վերլուծության մեթոդները, պրոյեկտիվ նկարային մի շարք մեթոդիկաներ: Որպես նորարարական մեթոդ, իրականացվել է շախմատի դասերի տեսանկարահանումների կոնտենտ վերլուծություն:

Շախմատի ուսուցումը հանրակրթական դպրոցներում և ներառական կրթության պրակտիկան ուղղության շրջանակներում հետազոտական խումբը կազմակերպել և իրականացրել է ախտորոշիչ և զարգացնող գիտափորձ: Կիրառվել են հոգեբանամանկավարժական մեթոդներ, կատարվել է արդյունքների վերլուծություն, ներկայացվել են ստացված արդյունքների ներդրման հետ կապված կոնկրետ առաջարկներ:

1. Ախտորոշիչ և զարգացնող գիտափորձի խնդիրն էր պարզել շախմատի ազդեցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների վարքի կարգավորման գործընթացում: Ուսումնասիրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների վարքային առանձնահատկությունները շախմատի դասի ընթացքում, բացահայտել շախմատի միջոցով երեխաների վարքի կարգավորման հնարավորությունները: Այս նպատակով ընտրվել և կիրառվել են դիտման, տեսանյութերի վերլուծության, կոնտենտ վերլուծության մեթոդները, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների վարքի վրա շախմատ առարկայի դասավանդման հատուկ մեթոդներ՝ համագործակցային (պրոյեկտների մեթոդ, մտավոր քարտեզ), խաղային (սյուժետադերային խաղեր), թերապևտիկ (թելային թերապիա, խմորային թերապիա) և խրախուսման մեթոդներ: Բացահայտվել է, որ շախմատ առարկայի դասավանդման ընթացքում հոգեբանամանկավարժական հատուկ մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ազդել երեխաների վարքի կարգավորման վրա:

2. Ախտորոշիչ գիտափորձի հետազոտական երկրորդ խնդիրն է ուսումնասիրել շախմատի ազդեցությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեկան գործընթացների, հուզակամային հատկությունների զարգացման վրա, ուսումնասիրել և վերլուծել 2-4-րդ դասարաններում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեկան գործընթացների առանձնահատկությունները շախմատի դասերի ընթացքում, ուսումնասիրել և մշակել 2-4-րդ դասարաններում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեկան գործընթացների զարգացման վրա շախմատի դրական ազդեցության հոգեբանամանկավարժական մեթոդներ, միջոցներ, հնարներ, գնահատել շախմատի ազդեցությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեկան գործընթացների զարգացման վրա: Ախտորոշման նպատակով կիրառվել են Շուլտեի աղյուսակի մեթոդիկան, հիշողության ախտորոշման, զգայական ընկալման, խոսքի ընկալման, Ե. Տորրենսի՝ «Ավարտի՛ր պատկերը» թեստը: Բացահայտվել է, որ 2-4-րդ դասարանի հետազոտությանը մասնակցած աշակերտների հոգեկան գործընթացների զարգացման վրա շախմատը կարող է ունենալ դրական ազդեցություն՝ երեխաների ընդունակություններին համապատասխան շախմատային առաջադրանքների պարբերաբար կիրառման դեպքում: Հատկապես հատկանշական է այն, որ այս երեխաներին հետաքրքրում է շախմատի խաղաքարերով ու խաղատախտակի վրա կատարվող գործողությունները, նրանք սկզբում դժվարությամբ կենտրոնացնելով ուշադրությունը կամ դժվարանալով հիշել, ընկալել իրենց առաջադրված հանձնարարությունը, մի շարք վարժանքների, հատուկ մեթոդների ու հնարքների կիրառման շնորհիվ կարողանում են որոշակի ժամանակահատվածում կատարել որոշակի առաջադրանքներ:

Սոցիոլոգիական հետազոտության *տեսական նպատակն* է նպաստել ուսուցիչ-աշակերտ փոխազդեցության արդյունավետության բարձրացմանը՝ դրանց կառուցման համար նոր մոտեցումների նախապատրաստման ճանապարհով: Իսկ *գործնական նպատակներն են* եղել.

- խորքային ուսումնասիրության ենթարկել աշակերտ-ուսուցիչ փոխազդեցության ընթացքում ծագող խնդիրների և դժվարությունների հաղթահարման ուղիները շախմատ ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում ուսուցչի դիտանկյունից:
- Շախմատ» առարկայի դասաժամերի տեսագրությունների վերլուծության միջոցով բացահայտել ուսուցչի վարքագծի ուժեղ և թույլ կողմերը պայմանավորող գործոնները և դրանց շղթայական հետևանքները:

Ներկայացնելով և վերլուծելով դժվարությունների ձևավորման ու արտահայտման գործընթացը՝ սոցիոլոգիական ուսումնասիրվել են նաև դասապրոցեսի իրականացման ընթացքում առաջացող խնդրահարույց իրավիճակները: Նշենք, որ շախմատի դասարաններում ուսուցման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործընթացի սուբյեկտները՝ դպրոցականներն ու մանկավարժները, համատեղ գործունեություն իրականացնելիս հանդիպում են առարկայական, մանկավարժամեթոդական և հոգեբանական բնույթի դժվարությունների, որոնք համալիր են, միմյանցով փոխպայմանավորված և անխզելիորեն կապված: Սպիրմանի բանաձևի համաձայն՝ երլուծության իմաստային միավորների փոխկապակցվածությունը ցույց է տալիս, որ դասապրոցեսի որակը պայմանավորող նշյալ գործոնները ապահովում են դպրոցականի անհատական ակտիվության բարձր մակարդակը դասապրոցեսում:

Հետազոտություններով հիմնավորվել է, որ ուսուցման գործընթացի կազմակերպումն ու ղեկավարումը «շախմատ» ուսումնական առարկայի համատեքստում պահանջում է.

- **Կրտսեր դպրոցականի ակտիվ մասնակցություն առաջին իսկ դասի ընթացքում**: Նրանք կատարում են գործողություններ իրական շախմատի հետ, դեմոնստրացիոն տախտակից կարողանում են վերաձածկագրել շախմատային ֆիգուրները իրական տախտակի վրա և տետրում: Այս ամենը կնպաստեր ուսումնական նյութի ակամա հիշելուն:
- **Դասի հստակ պլանավորում**: Ուսուցիչը նախապես պետք է մտովի պատկերի դասը, ժամանակի հստակ բաշխում կատարի տեսական և գործնական հարցերի քննարկման համար, տարբեր իրավիճակների համար արդեն իսկ ունենա կողմնորոշիչ մոտեցումներ:
- Կրտսեր դպրոցականի աշխատանքն **աշխուժացնող մեթոդների գործածում**: Սա ոչ միանշանակ կարող է ընկալվել ավանդական կրթության ջատագովների կողմից, ովքեր երեխայի ազատ ինքնարտահայտումը նույնականացնում են ապակազմակերպվածության և անկարգության հետ:
- Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար նշանակալի դեր կարող է խաղալ նրանում **իրավիճակային մոդելավորման տարրի ներդրումը**:
- **Եռակողմ համագործակցության ձևավորում և ամրակայում** ծնող-երեխա-մանկավարժ փոխազդեցության մեջ («ծնողի ներգրավվածություն»):

Սոցիոլոգիական հետազոտություններ են իրականացվել նաև պարզելու համար շախմատ դասավանդող ուսուցիչների ապորումակցային կարողությունների ազդեցությունը շախմատի ուսուցման արդյունավետության վրա: Ուսուցչի ապրումակցային կարողություններն ախտորոշելու և գնահատելու համար մշակվել է հարցարան, որի մեթոդաբանական կաղապարը կառուցվում է «սցենարային վերլուծության» մեթոդի վրա:

Հետազոտությանը մասնակից ուսուցիչներին առաջադրվել են մանկավարժական իրավիճակներ, որոնք ծագում են շախմատ ուսումնական առարկայի դասընթացի շրջանակներում: Նրանցից պահանջվել է բնորոշել և գնահատել աշակերտի հույզերը, արձագանքը կոնկրետ իրադրությունում:

Առաջնորդվելով հոլլիստիկ մոտեցմամբ նույն մանկավարժական խնդիրներն ու իրավիճակները առաջադրվել են ուսուցիչների կլաստերների հետ համագործակցող կրտսեր տարիքի դպրոցականներին՝ նրանց հուզական արձագանքներն ու դրսևորումները ճանաչելու նպատակով:

Հետազոտության արդյունքները թույլ են տվել եզրակացնել, որ ուսուցիչները կարիք ունեին ավելի խորացնել տարիքային հոգեբանության առանձնահատկությունների և օրինաչափությունների մասին գիտելիքները՝ ճանաչելու աշակերտին, նրա հուզական աշխարհը, հուզական վիճակները և այլն: Այս սահմանափակումը նկատելի է դառնում հատկապես այն ժամանակ, երբ ուսուցիչը միանգամից նկարագրում էր աշակերտի վարքային դրսևորումը՝ առանց վերլուծելու վերջինս պայմանավորող, ծնող հույզը: Ուստի հետազոտական այս ուղղությունը նույնպես ենթադրաբար պետք է միտված լինի առհասարակ շախմատի ուսուցման գործընթացում հուզական ինտելեկտի և դրա տարաբնույթ դրսևորումների բացահայտմանը:

2016 թվականին **շախմատի ուսուցման հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրության հետազոտական խումբը** կազմակերպել, իրականացրել է ախտորոշիչ և զարգացնող գիտափորձեր: Հետազոտությունների ընթացքում կիրառվել են «Էգոսկոպ» հոգեբանական օբյեկտիվ վերլուծությունների և թեստավորման համալիրում առկա մեթոդիկաներ:

Ախտորոշիչ գիտափորձն իրականացվել է Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20, Վահան Տերյանի անվան թիվ 60 և Վաղարշապատի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցների 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարաններում՝ ընդհանուր թվաքանակով 135 սովորողների հետ:

Ախտորոշիչ գիտափորձի նպատակն էր՝ բացահայտել տարրական դասարաններում դասավանդվող «Շախմատ» առարկայի հոգեբանական բաղադրիչների առկա մակարդակը:

Առաջադրվել է հետազոտական երկու խնդիր.

1.արձանագրել տարրական դասարաններում «Շախմատ» առարկան ուսումնասիրած 4-րդ և 5-րդ դասարանցիների շարժումների կոորդինացիան և դրանց կամածին կարգավորման ընդունակությունը՝ ժամանակի սղության պայմաններում և համեմատել «Շախմատ»-ը դպրոցում չուսումնասիրած 6-րդ դասարանցիների նույն ցուցանիշների հետ: Այդ նպատակով «Էգոսկոպ»-ից ընտրվել և կիրառվել է «Հետագիծ 3» մեթոդիկան: , որը նախատեսված է ժամանակի սղության պայմաններում փորձարկվողի շարժումների կոորդինացիայի և դրա կամածին կարգավորման ընդունակության գնահատման համար

«Հետագիծ 3» մեթոդիկայի արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ այդ ցուցանիշը հատկապես ակնհայտ է դրսևորվում 5-րդ դասարանցիների մոտ, ովքեր 3 տարի դպրոցում ուսումնասիրել են շախմատ:

Ախտորոշիչ գիտափորձի հետազոտական երկրորդ խնդիրն էր բացահայտել տարրական դասարաններում «Շախմատ» ուսումնասիրած 4-րդ և 5-րդ դասարանցիների որոշումների ընդունման արագության ու հոգնելիության առկա մակարդակը և համեմատել «Շախմատ»-ը դպրոցում չուսումնասիրած 6-րդ դասարանցիների նույն ցուցանիշների հետ: Այդ նպատակով հոգեբանական օբյեկտիվ վերլուծությունների և թեստավորման «Էգոսկոպ» համալիրից ընտրվել և կիրառվել է 2 մեթոդիկա՝ «Պարզ և բարդ տեսաշարժողական արձագանքներ»:

Հետազոտությունն իրականացվել է տեսաշարժողական խողովակի կամ «Տուբուսի» միջոցով: Բացահայտվել է, որ 5-րդ դասարանցիների ճշգրիտ հակազդումների թվաքանակն ու արագագործությունը գերազանցում է Շախմատը դպրոցում ընդհանրապես չուսումնասիրած 6-րդ դասարանցիների ցուցանիշը: Ենթադրվում է, որ որոշումների ընդունման արագության ցուցանիշ է ճշգրիտ հակազդումների քանակը և արագագործության բարձր մակարդակը: Դա պայմանավորված է նրանով, որ մտավոր գործողությունների ներքին պլանավորման համար կարևոր պայման է որոշումների ընդունումը, որի ընթացքում անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել սխալների հավանականությունը: Այսինքն՝ շախմատը յուրացրած 5-րդ դասարանցիները կարողանում են օպտիմալ որոշումներ կայացնել սահմանափակ ժամանակահատվածում, ինչը Շախմատի յուրացման արդյունք է:

Հետազոտությունների երկրորդ փուլում՝ զարգացնող գիտափորձի իրականացման համար մշակվել է զարգացնող ծրագիր՝ հոգեբանական տարաբնույթ առաջադրանքների, խաղերի, հնարների կիրառմամբ:

Մինչ զարգացնող գիտափորձի հիմնական ընթացքը փորձարկվողների՝ «Շախմատ» ուսումնական առարկայի հոգեբանական բաղադրիչների առկա մակարդակի ախտորոշման նպատակով կիրառվել են հետևյալ ախտորոշիչ մեթոդիկաները՝ ***«Ուշադրության և խոչընդոտների հանդեպ կայունության գնահատում», «Հակազդում շարժվող օբյեկտին», «Ինտելեկտուալ լաբիլություն» և«Հետագիծ 3»:***

Ստորև ներկայացնում ենք ախտորոշիչ մեթոդիկաների վերլուծությունների արդյունքները:

Զարգացնող գիտափորձի նպատակն էր հոգեբանական տարաբնույթ առաջադրանքների, խաղերի, հնարների կիրառմամբ, անհատական ուսուցման միջոցով ակտիվացնել շախմատ առարկայի հոգեբանական բաղադրիչները, այսինքն՝

ա) բարձրացնել սովորողների տարածության և ժամանակի մեջ փոփոխություններին համարժեք ընկալման մակարդակը,

բ) նպաստել ժամանակի սղության պայմաններում շարժումների կոորդինացիայի և այդ շարժումների կամածին կարգավորման ընդունակության զարգացմանը,

գ) բարձրացնել ինքնակազմակերպման և ինքնուրույն գործելու կարողությունների և հմտությունների մակարդակը,

դ) զարգացնել ուշադրության կենտրոնացվածության ու կայունության մակարդակը:

Որպես խնդիր մասնավորապես փորձ է արվել նաև ապացուցել, որ շախմատային խաղի ընթացքում կրտսեր դպրոցականի ինքնուրույն որոնողական աշխատանքները (իրավիճակի վերլուծությունը, պաշտպանության կազմակերպումը, պատասխան քայլի մշակումը և այլն) մոտիվացնում են նրա իմացական գործունեությունը հատկապես իրավիճակին համապատասխան տակտիկայի և ռացիոնալ քայլերի ընտրության գործընթացում: Մոտիվացիայի ռեսուրսը բացահայտվում է մեթոդական հագեցվածության ապահովման ընթացքում՝ որպես շախմատային խաղի (որպես համատեղ գործունեություն) պայմաններում ի հայտ եկող ինքնուրույն որոնողական աշխատանքներ:

Շախմատի ուսուցման հանդեպ դրական մոտիվացիա ձևավորելու նպատակով շախմատային խաղին մասնակցում են ոչ միայն խաղացողները, այլև շախմատային բարձր կարգ ունեցող մանկավարժը, որը ոչ այնքան կենտրոնանում է խաղի արդյունքի, որքան դպրոցականի կողմից շախմատային փորձի ձեռք բերման վրա: «Դպրոցական-կարգային շախմատիստ կամ մանկավարժ» սխեմայով համագործակցային ուսուցումը շախմատի դասերին հնարավորություն է տալիս աստիճանաբար զարգացնել երեխայի շախմատային մտածողությունը, հատկապես, երբ խաղի ընթացքին հետևում և ուսումնասիրություններ է կատարում նաև դպրոցական հոգեբանը:

Շախմատի ուսուցման գործընթացում սովորողների կրթական առաջընթացի գնահատման հետազոտական արդյունքների վերլուծությունը թույլ է տվել ընդհանրացնել մի շարք օրինաչափություններ, որոնց հիման վրա կատարվել են **մեթոդական առաջարկներ**՝ ուղղված դպրոցում շախմատ առարկայի ներդրման ոլորտում որոշում կայացնողներին և պատասխանատուներին:

1. Շախմատը որպես առարկա, հիմնական դրական գործոն է ընկալվում երեխայի անձնային զարգացման համար: Տրամաբանական մտածողություն, հիշողություն, ինքնակարգավորման կարողություններ. սրանք են այն հիմնական գործոնները, որոնք շահակիցների կարծիքով զարգանում են շախմատ առարկայի յուրացման միջոցով: Այս բնութագրերը առավել խորքային ուսումնասիրության կարիք ունեն այդ թվում նաև տարբեր առարկաների հետ համեմատության համատեքստում: Մյուս կողմից այս բնութագրերի զարգացման միտված ուսումնական գործունեության զարգացման կարիք կա:
2. Ուսուցիչների մանկավարժական կարողությունները նույնպես կարևորագույն գործոն են շախմատ առարկայի արդյունավետ ուսուցման համար: Այդ կարողությունները պետք է նկատի առնվեն կրթական ծրագրեր մշակելիս:
3. Ընտանեկան աջակցությունն ու ընտանիքով պայմանավորված գործոնները նույնպես առանցքային են: Դա մի կողմից առաջ է բերում դպրոց և ընտանիք համագործակցության

նոր կառուցակարգերի մշակման պահանջ, իսկ մյուս կողմից առաջ են բերում անհրաժեշտություն շախմատի ուսուցման առավել քիչ կախվածության ապահովում ընտանեկան գործոններից:

4. Շախմատային ձեռքբերումների թեստը նույնպես որոշակի բարելավման և կրկնակի փորձարկման կարիք ունի, իսկ տվյալները հարկ է համեմատել այլ թեստերի հետ: Միաժամանակ անհրաժեշտ է դրանցում ներառել նաև կոգնիտիվ և ինքնակարգավորման կարողությունների ախտորոշման առաջադրանքներ՝ նկատի ունենալով դրանց առկայությունը կրթական ծրագրում:
5. Ուսումնական նյութերը նույնպես համապատասխան վերանայման, մանակավարժական, կրթական սկզբունքներին համապատասխանեցման կարիք ունեն՝ մոդելների տրամադրման, հաջորդականության և մատչելիության, բոլոր սովորողներին ներգրավման, նախորդ նյութի և այլ առարկաների հետ փոխկապակցման առումով:

Ձեռք բերված գիտական արդյունքները: Ամփոփելով մեկամյա հետազոտության արդյունքները՝ նպատակահարմար ենք համարում առանձնացնել այն ձեռքբերված գիտական արդյունքները, որոնք հետագայում կարող են հիմք հանդիսանալ այս ուղղությամբ հետազոտությունների շարունակության համար:

Բացահայտվել են հանրակրթական դպրոցներում շախմատի ուսուցման վրա ազդող կոնտեքստուալ բնույթի ընտանեկան, ներդպրոցական, մոտիվացիոն գործոնները և շախմատ առարկայի ազդեցության մասին ծնողների պատկերացումները:

Բացահայտվել է, որ 2-4-րդ դասարանի աշակերտների հոգեկան գործընթացների զարգացման վրա շախմատը կարող է ունենալ դրական ազդեցություն՝ երեխաների ընդունակություններին համապատասխան շախմատային առաջադրանքների պարբերաբար կիրառման դեպքում:

Էմպիրիկ հետազոտությամբ հաստատվել է, որ շախմատային հանրակրթությունը կարող է ծառայել կրտսեր դպրոցականի տրամաբանական մտածողության զարգացման և ինտելեկտուալ ակտիվության բարձրացման, այլընտրանքային և պատկերավոր մտածողության զարգացման լավագույն միջոց:

Մշակվել են զարգացնող խաղեր, առաջադրանքներ, որոնց կիրառման նպատակն է զարգացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների խոսքը և մյուս հոգեկան գործընթացները, ինչպես նաև վարքը:

Հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրություններով բացահայտվել է, որ 5-րդ դասարանցիների ճշգրիտ հակազդումների թվաքանակն ու արագագործությունը գերազանցում է Շախմատը դպրոցում չուսումնասիրած աշակերտների ցուցանիշը և շախմատը յուրացրած 5-րդ դասարանցիները կարողանում են աառավել օպտիմալ որոշումներ կայացնել սահմանափակ ժամանակահատվածում-

Հետազոտությամբ հիմնավորվել է, որ շախմատային խաղապրոցեսում դպրոցականի որոնողական գործունեության նպատակամետ կազմակերպումը, խրախուսման մեխանիզմների ընձեռած հնարավորություններով ծավալվող ըմբռնողական և վերլուծողական գործընթացները թույլ են տալիս եզրակացնելու, որ վերջիններս իրականում դրսևորվում են որպես գերակա ուսումնական մոտիվ: Շախմատային խաղապրոցեսը հանդես է գալիս որպես ուսումնահմացական մոտիվների համաժամանակյա դրսևորումների կիզակետ:

Թեմայի շրջանակներում հրատարակվել է 6 հոդված 1 կոլեկտիվ մենագրություն, 15 հոդված հանձնվել է տպագրության:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՄԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

- **Международная научная конференция «Человекознание»,2 7.07.2016, Кемерово.**
- Theoretical and Practical Issues of Chess Education in School, International Conference, 30 Sep-03 Oct, 2016,Tsaghkadzor, Armenia

- **§Հայաստանը տարածաշրջանային գիտակրթական կենտրոն¦** Երևանի Հյուսիսային համալսարան միջազգային գիտաժողով՝ նվիրված Սանահինի համալսարանի 1050-ամյակին, 2016 թվականի նոյեմբերի 22-23
- Международная научно-практическая конференция молодых ученых **«Методология современных научных исследований» 10–11 ноября 2016, Харьков**
- Гуманитарные основания социального прогресса: Россия и современность Международная научно-практическая конференция
- European chess union "Chess in schools" international conference, Batumi, ECU, October 24-27.

ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Ստեղծվել է դպրոցում շախմատի դասավանդման հոգեբանամանկավարժական մեթոդների համախումբ, որը հնարավորություն կտա շախմատ դասավանդող ուսուցիչներին ապահովել ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Մշակվել են նաև հոգեկարգավորիչ նշանակություն ունեցող շախմատային խաղեր, որոնք կարող են կիրառվել ինչպես ծնողների, այնպես էլ մանկավարժների և հոգեբանների կողմից այս երեխաների հետ աշխատանքում:

Ստեղծվել են խաղարկային իրավիճակներ և վարժանքներ, որոնք նախատեսված են «Շախմատ» ուսումնական առարկան դասավանդող ուսուցիչների և «Շախմատ» բուհական դասընթացն ուսումնասիրող ուսանողների համար:

Շախմատային դիքերի լուծման դաշտային ուսումնասիրություններով հաստատվել է նաև, որ շախմատը հսկայական դեր է խաղում երեխայի մտածողության հիմքերի ձևավորման և նրա զարգացման գորընթացում:Մասնավորապես շախմատը զարգացնում է երեխայի կենտրոնանալու ունակությունը, երևակայությունը, տրամաբանությունը, ստեղծագործական միտքը, հիշողությունը, քննադատական մտածողությունը, պլանավորումը: Իհարկե շախմատի շնորհիվ երեխայի մոտ ձևավորվում և զարգանում են կամային որակներ, մասնավորապես, օբյեկտիվ գնահատումը, արժանապատիվ պարտվելու կարողությունը, արդարամիտ դատողությունը, մարդասիրությունը, կողմնորոշվելու կարողությունը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԿՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Ռիտա Գևորգյան

Գործատուների հետ փոխհամագործակցության շրջանակում կենտրոնը հետադարձ կապի միջոցով ուսումնասիրում և վերլուծում է Համալսարանի ուսանողների և շրջանավարտների պատրաստվածության վերաբերյալ գործատուի առաջարկները:

Կենտրոնի աշխատանքները ղեկավարվում են ապակենտրոնացված տարբերակով հնարավորություն տալով յուրաքանչյուր ֆակուլտետում կենտրոնի գործառույթները իրականացնել ինքնավար սկզբունքով՝ ուսանողական ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ և ֆակուլտետների պատասխանատուների կողմից աշխատանքների կոորդինացմամբ:

Հանդիպումներ, սեմինարներ և աշխատաժողովներ

- Այուն թվականի մարտ-ապրիլ և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին համագործակցելով ֆակուլտետների հետ կենտրոնը կազմակերպել և իրականացրել է ռեզյումեների և ուղեկից նամակների կազմման խորհրդատվության տրամադրում, ինքնագնահատման, հարցազրույց անցնելու հմտությունների ուսուցում, ինչպես նաև աշխատանքի որոնման և աշխատանքի դիմելու վերաբերյալ սեմինարների շարք համալսարանի բոլոր ֆակուլտետներում, որին մասնակցել են շուրջ 312 ուսանողներ: Եթե համեմատենք նախորդ արդյունքի հետ, ապա մոտ 25% մասնակիցների թիվը ավելացել է: Ինչպես նաև իրականացրել ենք կազմակերպած սեմինարի արդյունավետության ուսումնասիրություն,

նախապես մշակված հարցաթերթիկների հիման վրա: Արդյունքները բերված են հաշվետվության վերջում:

- ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» խորագրով ֆորումը, որին ակտիվորեն մասնակցեցին բոլոր ֆակուլտետներից ներկայացուցիչներ:
- Այբ կրթական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետից ընտրվել են 10 շրջանավարտներ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին մասնակցելու նպատակով՝ հետագայում աշխատանքի անցնելու հնարավորությամբ:

Համագործակցություն գործատուների հետ

- Համալրվել է պոտենցյալ գործատուների վերաբերյալ ձևավորված տվյալների շտեմարանը:
- Ավելացել է Համագործակցության հուշագրեր թվաքանակը նոր գործատուների հետ՝ ներկայումս դրանց թիվը հասնում է մոտ 110-ի:
- Հիմնվել է համագործակցային կապեր www.myjob.am կայքի ադմինիստրացիայի հետ՝ համալսարանի ուղվածությանը մոտ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման շրջանակներում:
- Առկա է ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ աշխատանքային պայմանավորվածություն թափուր աշխատատեղերի առկայության դեպքում ուսանողների համար թրեյնինգների կազմակերպման և հետագայում աշխատանքի անցնելու հնարավորության վերաբերյալ:
- Իրականացվում է համատեղ աշխատանքներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» -ի հետ:

Տեղեկատվության տարածում

Կենտրոնի գործառույթների իրականացման համար ստեղծված ֆեսբուքյան էջում 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում տեղադրվել են՝

- ՀՀ-ում ուսուցիչների թափուր աշխատատեղերի վերաբերյալ բոլոր մրցույթների մասին տեղեկություն (գործընթացը շարունակվում է),
- կրթաթոշակների մասին հայտարարություններ,
- դրամաշնորհների մասին հայտարարություններ,
- ազգային և միջազգային մակարդակով իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ

Արարատ ծրագրի շրջանակներում հաջողությամբ իրականացվել են ստորև նշված աշխատանքները.

- ✓ մշակվել է ոլորտի սեկտորիալ որակավորումների շրջանակը,
- ✓ գործընկեր համալսարանների հետ համատեղ ստեղծվել է էլեկտրոնային հարթակ, որի միջոցով հնարավոր է իրականացնել հարցումներ և ուսումնասիրություններ, ոչ միայն մեր բուհի շահառուների այլ նաև գործընկեր բուհերի շրջանում,
- ✓ կատարվել են անհրաժեշտ աշխատանքներ ծրագրի աշխատանքային փաթեթների ավարտման ուղղությամբ և մշակվել են աշխատանքային պլաններ ձեռքբերված արդյունքների կիրառման ուղղությամբ:

Ուսանողների և շրջանավարտների տվյալների շտեմարան՝

- Հավաքագրվել են ավարտական կուրսերում սովորող շուրջ 1000 ուսանողների տվյալներ և մուտքագրվել են տվյալների շտեմարանում:
- Շրջանավարտների և ուսանողների վիճակագրական տվյալների հավաքման համար մշակվել են առավել ընդգրկուն հարցաթերթիկներ:
- Ընդհանուր առմամբ առկա է ավելի քան 5500 ուսանողների և շրջանավարտների տվյալներ:

Կենտրոնի աջակցությամբ աշխատանքի ընդունված ուսանողների տվյալներ՝


- Թիվ 4-րդ դպրոց՝ 1 ուսանող, Մաթեմատիկայի ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ
- Թիվ 6-րդ դպրոց՝ 1 ուսանող,Մաթեմատիկայի ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ
- ՀՊՄՀ վարժարան՝ 2 ուսանող,Մաթեմատիկայի ֆիզիկայի և ինֆորմատիկայի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
- Գուլիվեր մանկապարտեզ՝ 3 ուսանող Գեղարվեստական կրթության ֆակուլտետ,
- IPSC՝ 4-ուսանող, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ
- N125 Դպրոց՝ 2 ուսանող, Կուլտուրայի ֆակուլտետ
- Էքստերիեր՝ 3 ուսանող, Գեղարվեստական կրթության ֆակուլտետ
- Աբովյանի թիվ 3 դպրոց՝ 1 ուսանող Սկզբնական կրթության ֆակուլտետ
- Նորքի տուն ինտերնատ՝ 2 ուսանող, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ
- Ջի-Էմ-Ջի Մեդիա գրուպ՝ 4 ուսանող, Կուլտուրայի ֆակուլտետ
- Թիվ 81 դպրոց՝ 1 ուսանող, Օտար լեզուների ֆակուլտետ
- Թիվ 34 դպրոց՝ 1 ուսանող, Սկզբնական կրթության ֆակուլտետ
- Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հենակետային դպրոց՝ 1 ուսանող, Կրթության, հոգեբանության և սոցոլոգիայի ֆակուլտետ
- «Մեդիա-Մոդել» հետազոտական ընկերություն՝ 2 ուսանող
- Կրթության, հոգեբանության և սոցոլոգիայի ֆակուլտետ
- ԼՂՀ Պաշտպանության բանակ՝ 1 ուսանող Կրթության, հոգեբանության և սոցոլոգիայի ֆակուլտետ
- «Փոքր Մհեր» ռազմական կրթահամալիր 1 ուսանող, Կրթության, հոգեբանության և սոցոլոգիայի ֆակուլտետ
- Թիվ 81 դպրոց՝ 1-ուսանող ֆիզիկայի ուսուցիչ, Մաթեմատիկայի ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ
- ՀՀ ԱՍՀ նախարարության Մասնագտական կողմնորոշման մեթոդական կենտրոն՝ 1 ուսանող, Կրթության, հոգեբանության և սոցոլոգիայի ֆակուլտետ
- Հայաստանի մանուկների հիմնադրամ՝ 1-ուսանող, Կրթության, հոգեբանության և սոցոլոգիայի ֆակուլտետ

Ֆակուլտետների և գործատուների հետ համագործակցության շրջանակներում բակալավրական և մագիստրոսական կրթությամբ այս տարվա շուրջ 57 լավագույն շրջանավարտներտեր ընդունվել են աշխատանքի մասնագիտական ոլորտում:


Ֆակուլտետներ	Շրջանավարտների թվաքանակը	
	Բակալավրիական կրթությամբ	Մագիստրոսական կրթությամբ
Բանասիրական	2	2
Պատմության և իրավագիտության	2	3
Սկզբնական կրթության	3	2
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության	5	3
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի	2	2
Օտար լեզուների	2	2
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի	5	5
Գեղարվեստական կրթության	2	2
Հատուկ կրթության	1	4
Կուլտուրայի	4	4

Ստորև ներկայացված է սեմինարներին մասնակցած ուսանողների վերաբերյալ վերլուծական տեղեկատվություն:

Դասընթացի վերաբերյալ հարցման ընդհանուր արդյունքները



Հետևյալ ծառայություններից որո՞նք կցանկանայիք ստանալ կենտրոնի կողմից:



<<ՍՓՅՈՒՌՔ>> ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Սուրեն Դանիելյան

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Յունուար 14-27-ը Սփիւռքահայ հեղինակների մասին դասախօսութիւններ Հայ-ռուսական սլաւոնական համալսարանի դասախօսական անձնակազմի վերապատրաստութեան դասընթացներին (14 ժամ, Սուրէն Դանիէլեան):

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

✓ Մայիսի 26-27-ը Հայ նոր եւ նորագոյն գրականութեան, Մասնագիտական կրթութեան եւ կիրառական մանկավարժութեան ամբիոնների հետ Համալսարանի եւ Նիւ Եորքի Պոլսահայ Օգնութեան Միութեան (CARS, ատենապետ՝ Պերճ Արազ) հովանաւորութեամբ միջազգային գիտաժողով՝ նուիրուած Յովհաննէս Հինդլեանի 150 ամեակին:

✓ Նոյեմբերի 15-ին Կենտրոնի հրաւէրով Համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանողների եւ պրոֆեսորադասախօսական կազմի «Արեւմտահայերէնը 21-րդ դարուն» թեմայով հրապարակային դասախօսութիւն-սեմինար Օքսֆորդի Համալսարանի Պրոֆ. Հրաչ Չիլինկիրեանից (Մեծ Բրիտանիա):

✓ Նոյեմբերի 21-ին Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի եւ «Հայ կրթութիւն» հիմնադրամի «Խորէն եւ Շուշանիկ Աւետիսեան» կրթահամալիրի հետ համատեղ Զարեհ Խրախունու 90 ամեակին նուիրուած հանդիսութիւն:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

✓ Հոկտեմբերի 7-9-ը Ստամբուլում «Հրանդ Դինք» հիմնարկի, Շուեդական Ակադեմիայի եւ «Համազգային» Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կազմակերպած «Հայկական ինքնութեան քննական մօտեցումներ ԻԱ. դարուն. խոցելիութիւն, առաձգականութիւն եւ փոխակերպութիւն» միջազգային գիտաժողովին «Ինքնութեան հիմնախնդիրների խոցելիութիւնը Հայաստանում» զեկուցում (Սուրէն Դանիէլեան):

✓ Նոյեմբերի 26-ին «Հալէպ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպութեան երիտասարդաց խորհրդի, Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան աջակցութեամբ կազմակերպուած «Արեւմտահայերէնը Հայաստանում. մարտահրաւէրներ, հեռանկարներ» խորագրով համաժողովին «Արեւմտահայերէնը Հայաստանի կրթական համակարգում» թեմայով զեկուցում (Սուրէն Դանիէլեան):

✓ Դեկտեմբերի 15-ին «Համազգային» Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը եւ Երեւանի Պետական Համալսարանը կազմակերպում են միջազգային գիտաժողով՝ նուիրուած Աւետիս Ահարոնեանի ծննդեան 150 ամեակին (զեկուցողներ՝ Սուրէն Դանիէլեան. «Ահարոնեանը արեւելահայ քննադատական մտքի գնահատմամբ», Քնարիկ Աբրահամեան. «Լռութիւն» վէպի գեղագիտական մի քանի հարցերի մասին»):

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ ՍՓԻՒՌՔԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

✓ Սեպտեմբերի 22-ին՝ Յովսէփ Նալբանդեանի հետ Աւետիք Իսահակեանի անուան Կենտրոնական գրադարանում կազմակերպուած հանդիպմանը:

✓ Հոկտեմբերի 10-ին՝ Յակոբ Պալեանի հետ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնում կազմակերպուած հանդիպմանը:

✓ Հոկտեմբերի 18-ին՝ Հենրիկ Անասեանի հետ Աւետիք Իսահակեանի անուան Կենտրոնական գրադարանում կազմակերպուած հանդիպմանը:

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

1. «Արուեստագէտը մանկավարժի հայեացքի ընդմէջէն. «Զոյգ մը հոգի. Բեսդալոցցի Պեթհոֆէն», «Յովհաննէս Հինդլեան 150» / միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, 26-27 Մայիս, 2016 (Երեւան-Կայան աւան), Եր., 2016, էջ 3-12:
2. «Յիշատակի զանգեր Կարպիս Ուղուրլեանի համար», «Նոր Մարմարա» օրաթերթ, 22 Յունուար, էջ 1:
3. «Հատտէճեանի երկխօսութեան ժամանակը» / Յօդուած Ռ. Հատտէճեանի ծննդեան 90 ամեակի առթիւ, «Մարմարա» օրաթերթ, 26 Յունուար, էջ 2, «Ազգ» հասարակական, քաղաքական, վերլուծական շաբաթաթերթ, թիւ 3 (255), Յաւելուած «Ազգ-Մշակոյթ», 29 Յունուար, էջ Ա:
4. «Արեւմտահային արեւմտահայ պահելու խնդիրը կայ» / հարցազրոյց Խ. Աբովեանի Անուան Մանկավարժական Համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի 20 ամեակի առթիւ, «Առաւօտ» օրաթերթ, թիւ 32 (5122), Փետրուար 24, էջ 6:
5. “Pour le retour de l’orthographe mesrobienne”, “France-Arménie” / cause arménienne, Propos recueillis par Krikor Tavitian, traduction Hraïr Heratchian Mai, N 430, p. 40-41.
6. «Դէպի բնութիւն. Հայկ Նագգաշեան», «Ազգ» հասարակական, քաղաքական, վերլուծական շաբաթաթերթ, թիւ 18 (269), 13 Մայիս, «Ազգ-Մշակոյթ» յաւելուած, էջ Դ:
7. «Գրական դեգերումներ Հալէպի կրակների ընդմէջէն» / Լեւոն Շառոյեանի «Դեգերումներ հայ գիրի եւ պատմութեան գետեզրին» գրքի մասին, «Ազդակ» օրաթերթ, Պէյրութ, 30 Յուլիս:
8. «Ալիս Յովհաննիսեանի 70 զանգակները», «Գրական թերթ», թիւ 29 (3306), 16 Սեպտեմբեր, Ուրբաթ, էջ 3:
9. «Կորսուած ժամանակը Հովէեանի յիշողութեան մէջ», «Գրական թերթ», թիւ 39 (3316), 29 Նոյեմբեր, Ուրբաթ, էջ 4:
10. «Արեան յիշողութիւնը Ն. Սարաֆեանի ստեղծագործութիւններում», յանձնուած տպագրութեան ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտի «Գրականագիտական հանդէս»ում:
11. «Անրի Թրուայայի «Սարդը» վիպակի հայ գրական առընչութիւնների շուրջ», յանձնուած տպագրութեան “Diaspora” հանդէսում (ԱՄՆ. Քոննեքթիքութ):
12. «Գրիգոր Զohրապի ստեղծագործութիւնը. թռիչքի առեղծուածը. «Վե՛ր, աւելի վեր» (Լոս Անճելըսի UCLA Համալսարանի պատուէրով):

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1. «Հինդլեանը գրամշակութային գնահատութիւններում», «Յովհաննէս Հինդլեան 150» / միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, 26-27 Մայիս, 2016 (Երեւան-Կայան աւան), էջ 108-117:
2. «Ռոպէր Հատտէճեանի մտերմութեան մէջ», «Գրական թերթ», թիւ 1 (3278), 5 Փետրուար, Ուրբաթ, էջ 5:
3. «Դաւիթ Էվերեկլեան», «Գրական թերթ», թիւ 26 (3303), 29 Յուլիս, Ուրբաթ, էջ 8:
4. «Ինն հատ մոմ» Զարեհ Խրախունու ծննդեան օրուայ առթիւ, «Գրական թերթ», թիւ 35 (3312), 28 Հոկտեմբեր, 2016, էջ 3:
5. «Ժողովրդի ճակատագիրը Զարեհ Խրախունու «Հոգեհանգիստ» բանաստեղծութեան մէջ», յանձնուած տպագրութեան ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտի «Գրականագիտական հանդէս»ում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

✓ «Սփիռք» Գիտաուսումնական Կենտրոնը 20 տարեկան է» (1995-2015) / կազմող՝ Քնարիկ Աբրահամեան, Եր., «Զանգակ 97», 2016, 64 էջ:

✓ «Յովհաննէս Հինդլեան 150» / միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, 26-27 Մայիս, 2016 (Երեւան-Կայան աւան), գլխաւոր խմբագիր՝ Սուրէն Դանիէլեան, կազմում եւ խմբագրում՝ Քնարիկ Աբրահամեան, Եր., «Զանգակ 97», 2016, 144 էջ:

✓ Թորոս Թորանեան, Ակնարկներ դոկտ., Պրոֆ. Սուրէն Դանիէլեանի եւ «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի աշխատութիւններուն շուրջ, Եր., «Լուսակն» հրատ., 2016, 136 էջ:

✓ Յակոբ Օշականի «Ամբողջական երկեր»-ի 1-ին եւ Գէորգ Աճեմեանի երկերի 4-րդ հատորի հրատարակութեան պատրաստում:

✓ Աշխատանք «Արեւմտահայ ընդարձակ կենսագրական բառարան» թեմայի վրայ՝ Սուրէն Դանիէլեան, Քնարիկ Աբրահամեան եւ Նելլի Թադէոսեան (Համալսարանի Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ) կազմով:

✓ Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեանն է ներկայացուած «Մաշտոց» Հայ լեզուի պաշտպանութեան միութեան հետ համագործակցաբար Հայաստանի հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանների համար կազմած արեւմտահայերէնի (հեղինակներ՝ Հիլդա Գալֆայեան-Փանոսեան, Ֆրանսիա, Սորբոնի Համալսարանի Պրոֆ., «Մաշտոց» Միութեան նախագահ, Վիկտոր Կատուալեան, բ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան Լեզուի Ինստիտուտի տնօրէն) եւ արեւմտահայ նորագոյն (սփյուռքահայ) գրականութեան (հեղինակներ՝ Ս. Դանիէլեան եւ Ք. Աբրահամեան) դասագրքերի հրատարակութեան խնդիրը:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ (ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ)

✓ 2016-ին ԲՈՀ-ի 003 մասնագիտական խորհրդի ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի գրական գրականութեան ինստիտուտում գործող Ժ.01.02 «Հայ նորագոյն շրջանի գրականութիւն» մասնագիտութեան յանձնախմբի փոխնախագահ:

✓ «Վէմ» համահայկական հանդէսի խմբագրական խորհրդի անդամ:

✓ ՀՀ Նախագահի կողմից ամէն տարի կազմակերպուող մրցանակաբաշխութեան յանձնաժողովի անդամ:

✓ Հանրային հեռուստաընկերութեան հանրային կարծիքի ուսումնասիրման յանձնաժողովի անդամ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

✓ 2016 թ. Ապրիլի 12-ին Հայ-ռուսական սլաւոնական համալսարանում ուսանողական տարեկան գիտական նստաշրջանին զեկուցում «Եղիշէ Արք. Դուրեան. բանաստեղծը, հոգեւորականը, մարդը» թեմայով (ուսանող՝ Անի Օհանեան (ԱԲ-3), ղեկավար՝ Քնարիկ Աբրահամեան):

✓ Մայիսի 5-ին Հայ-ռուսական սլաւոնական համալսարանում կազմակերպուած արեւմտահայ բանաստեղծութեանը նուիրուած հանդիսութիւն (ուսանողներ՝ Լիդա Եղիազարեան (ԱԲ-3), Սեդա Ասլանեան (ԱԲ-4) եւ Մելինա Եղիգեան (ՀԲ-5), ղեկավար՝ Սուրէն Դանիէլեան, պատասխանատու՝ Քնարիկ Աբրահամեան), որի համար համալսարանի ռեկտոր Արմէն Դարբինեանը շնորհակալագիր է ուղարկել մեր համալսարանի ռեկտոր Ռուբէն Միրզախանեանի անունով:

✓ Նոյեմբերի 21-ին Զարեհ Խրախունու 90 ամեակին նուիրուած հանդիսութիւն (ուսանողներ՝ Սօսի Միշոյեան (ՀՄ-3), Սեդա Ասլանեան (ՀՄ-1), Հայկանուշ Մելիքսէթեան (ԱԲ-3), Ալէօնա Դումիկեան (ԱԲ-3), Գոհար Երուանդեան (ԱԲ-1), պատասխանատու՝ Քնարիկ Աբրահամեան):

ԿԵՏՐՈՆ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՈՒՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

✓ Այս տարի բանասիրական բաժանմունքում հեռավար կրթութեան սկզբունքներով առաջին կուրս է ընդունուել Վարդուհի Սաքանեանը (Թուրքիա):

✓ Սեպտեմբերից Կենտրոնի մեթոդիստ Քնարիկ Աբրահամեանը շաբաթական մէկական ժամով արեւմտահայերէնի դասընթաց է վարում «Աւետիսեան» կրթահամալիրի 10-12-րդ դասարաններում:

✓ Հոկտեմբերի 10-ին Սուրէն Դանիէլեանն այցելել է Պոլսի Կեդրոնական վարժարան, դաս վարել եւ աւագ դասարանների աշակերտներին հրաւիրել սովորելու Մանկավարժական

Համալսարանում: Այցի մասին նա ուսանողներին հնարաւորութիւն է ունեցել պատմելու Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի անցկացրած «Պոլիսը Հայաստանեան դիտանկիւնից» Flash Mobի ընթացքում (16 Նոյեմբեր):

ԳՐԱԴԱՐԱՆ

Կենտրոնի կազմում գործում է սփիւռքագիտական ընթերցասրահը (աւագ գրադարանավար՝ Սոնա Խլոպուզեան), ուր կենտրոնացած է արեւմտահայ եւ սփիւռքահայ գրակամշակութային դաշտին վերաբերող շուրջ 6.000 կտոր գրականութիւն, որը համալրւում է նոր հրատարակութիւններով եւ հիմնականում հեղինակային նուիրատուութիւններով (միայն այս տարի՝ 166): Նոր հրատարակուած գրքերի մի զգալի մաս ձեռք է բերւում Մանկավարժական Համալսարանի միջոցներով:

ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՓԻՒՌՔԻՑ

ԱՄՆ - Հենրիկ Անասեան, Զարմինէ եւ Միսաք Պօղոսեաններ, Մարալ եւ Գէորգ Գալայճեաններ, Գէորգ Պետիկեան, Յովսէփ Նալբանդեան, Պայծիկ Գալայճեան

ԱՐԳԵՆՏԻՆԱ - Ռոսիթա Եուսէֆեան

ԵԳԻՊՏՈՍ - Սօսէ Պայրամեան

ԹՈՒՐՔԻԱ - Սիլվա Գույումճեան եւ Արտաշէս Մարկոսեան, Գերապայծառ Հայր Լեւոն Զէքիեան, Սարգիս Էրքոլ, Հերա Իսքենտէրօղլու, Արմաւենի Միրօղլու, Նաիրա Սիւզմէ-Մկրտչեան

ԻՍՐԱՅԷԼ - Անուշ Նագգաշեան

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ - Աղասի Ազիզեան, Նաիրի Հախվերդի, Անահիտ Եահիա

ԼԻԲԱՆԱՆ - Ժիրայր Դանէլեան, Եղիկ Ճէրէճեան, Արամ Սեփեթճեան

ԿԱՆԱԴԱ – Աղաւնի Ասլանեան, Արմէն Քիւրքճեան

ԿԻՊՐՈՍ - Հրայր Ճէպէճեան

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ - Հրաչ Չիլինկիրեան, Գաբրիէլ Սուլթանեան

ՍԻՐԻԱ - Աւետիս Ափոշեան, Թորոս Թորանեան, Մովսէս Նաճարեան

ՖՐԱՆՍԻԱ - Հիլդա Գալֆայեան-Փանոսեան, Արա Գրիգորեան, Գրիգոր Դաւիթեան, Կարապետ Դաքէսեան, Յասմիկ Հրաչեան, Հրանդ Նորշէն, Սուրէն եւ Մարգարիտ Շէրիքներ, Մովսէս Պչաքճեան, Րաֆֆի Փանոսեան:

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Սուրէն Դանիէլեանի միջնորդագրերի արդիւնքում պոլսահայ երկու մտաւորականներ՝ ուղեգրութիւնների հեղինակ, ճարտարագէտ Արամ Գամպուրեանը եւ բանաստեղծ, բժիշկ Վարդ Շիկահերը (երկուսն էլ՝ Թուրքիա) պարգեւատրուել են ՀՀ Նախագահի «Մովսէս Խորենացի» մեդալներով:

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ

Կենտրոնի գործունէութիւնը, ինչպէս նաեւ Սփիւռքի գրամշակութային դաշտին վերաբերող անցուդարձերը լուսաբանւում են Կենտրոնի պաշտօնական՝ www.spyurk-center.am կայքէջի, Հայաստանի («Ազգ», «Գրական թերթ») եւ Սփիւռքի («Մարմարա», «Նոր յառաջ», «Ազդակ», «Զարթօնք», «Նոր օր») մամուլի միջոցով:

«Արեւմտահայերէնը վտանգուած է...» թեմայով հարցազրոյց «Վէմ» Ռադիոկայանի «Հայելի» հաղորդաշարին (Սուրէն Դանիէլեան, 24 Մարտ):

Սփիւռքահայ գրականութեան հիմնախնդիրների եւ օտարագրութեան շուրջ հարցազրոյց Հանրային ռադիոյին (Քնարիկ Աբրահամեան, 10 Ապրիլ):

Կենտրոնի գործունէութեան շուրջ հարցազրոյց Հանրային ռադիոյի «Վերնատուն» հաղորդաշարին (14 Սեպտեմբեր, Սուրէն Դանիէլեան):

ԱՐ հեռուստաընկերութեան «Մեր մեծերը» հաղորդաշարին՝ Համաստեղի գրականութեան շուրջ (Նոյեմբեր 22, Սուրէն Դանիէլեան):

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ Դիանա Մարկոսյան

Արդեն 6 տարի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը տարեցտարի ընդլայնում է իր գործունեության շրջանակը՝ իրականացնելով բազմաբնույթ գործունեություն:

Վարչությունն ունի երեք բաժին՝ Պաշտոնական կայքի ապահովման բաժին, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի խմբագրություն և Ռադիո ‘Ֆամա’:

Համալսարանի պաշտոնական կայքէջն իրականացնում է կարևորագույն գործառույթ. ոչ միայն ներկայացնում է համալսարանի առօրյան, տալիս տարբեր իրադարձությունների մասին տեղեկատվություն, այլև գործնական նշանակություն ունի դիմորդների, ուսանողների, ասպիրանտների, հայցորդների համար, որոնք կայքում կարող են գտնել ամենաանհրաժեշտ տեղեկատվությունը համալսարանի, իրենց ուսումնական գործընթացի մասին՝ սկսած քննական հարցաշարարերից, վերջացրած առարկայական ծրագրերով և անհրաժեշտ գրականությամբ: Տեղեկատվությունը եռալեզու է, ինչը հնարավորություն է ստեղծում հետևել մեր բուհի զարգացումներին ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում, այն համալսարաններում, որոնց հետ համագործակցում ենք: Սա նաև հետագայում արտերկրից դիմորդներ ներգրավելու հիանալի հնարավորություն է: Կայքում տեղադրվում են նաև համալսարանը ներկայացնող տեսանյութեր: Կայքը գործում է 5 տարի: 2016-ից այն թարմացվել է՝ ժամանակակից լուծումներ եւ նոր հնարավորություններ ընձեռելով ուսանողների համար: Ամիսը երկու անգամ տպագրվում է «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը, որի միջոցով համալսարանի բոլոր ֆակուլտետները, ինչպես նաև պետական կառույցները, արտահամալսարանական կրթական հաստատությունները, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները տեղականում են համալսարանի անցուդարձին: Վարչությունը համակարգում է բուհ այցելած ՋԼՄ-ների աշխատանքը, գիտաժողովների, հանդիպումների, տարբեր միջոցառումների ժամանակ ապահովում է լրատվամիջոցների ներկայությունը, մամուլի համար պատրաստում է հաղորդագրություններ, հանրապետական մամուլի էջերում տպագրության հանձնում բուհին վերաբերող հոդվածներ, հրապարակումներ, հետևում օրվա մամուլին, պատրաստում պաշտոնական ուղերձներ, կազմակերպում հեռուստահաղորդումներ, ֆիլմեր, տպագրում բուկլետներ, տալիս հայտարարություններ, պատրաստում գովազդային հոլովակներ: Մի քանի տասնյակ հեռուստահաղորդումներ ենք կազմակերպել ՀՀ-ում և արտերկրում՝ արբանյակով, հեռարձակվող տարբեր հեռուստաալիքներով: Մեծ թվով հոդվածներ են հրապարակվել հանրապետական մամուլում: Ամսվա ընթացքում Մանկավարժական համալսարանի մասին պատմող միջինը 20 նյութ, լուր և հոդված է տպագրվում հանրապետական մամուլում:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, կազմակերպվել են բազմաթիվ հեռուստահաղորդումներ՝ համալսարանի ներկայացուցիչների՝ դեկանների, պրոռեկտորների, դասախոսների մասնակցությամբ, ասուլիսներ: Ստեղծում ենք մանկավարժական համալսարանի մասին պատմող ֆիլմեր և լուսանկարների արխիվ: Յուրաքանչյուր տարի պատրաստում ենք ֆիլմ-հաշվետվություն, որը պահվում է ոչ միայն վարչությունում, տեղադրվում է կայքում, այլև պահպանվում և ցուցադրվում է թանգարանում, և թանգարանի այցելուները կարող են ծանոթանալ, թե վերջին տարիների ընթացքում, այսինքն, վարչության գոյության ընթացքում ինչ աշխատանքներ են կատարվել համալսարանում: Մանկավարժական համալսարանը ‘Արմնյուզ’ հեռուստաալիքով արդեն մեկ տարի եթեր է հեռարձակում **‘Հաջողության բանաձև’** հաղորդաշարը, որը ներկայացնում է համալսարաններում եւ դպրոցներում դասավանդվող, ուսումնասիրվող առարկաները, մասնագիտությունները՝ հետաքրքիր, ինքնատիպ լուծումներով: Նպատակը մեկն է. կողմնորոշել երիտասարդներին, ովքեր ցանկություն ունեն մասնագիտություն

ձեռք բերել, բարձրագույն կրթութուն ստանալ մեր բուհում: Բացի այդ, այսօր շատ մասնագիտություններ կործանման եզրին են՝ հիմնական, այսպես ասած մոդայիկ մասնագիտությունների ընտրության արշավում բնական, ճշգրիտ գիտությունները տանուլ են տալիս: Այսօր արդեն տարբեր բուհերում փակվում են ամբողջական բաժիններ, որոնք ուղղակի դիմորդ չունենալու պատճառով չեն կարողանում գոյատևել: Հաղորդման ընթացքում մասնագիտական առանձնահատկությունները ներկայացվում են ավելի մատչելի լեզվով և դիտարժան միջոցներով, որպեսզի ապագա դիմորդի մոտ հետաքրքրություն առաջանա կոնկրետ առարկայի հանդեպ: Հաղորդաշարի ամեն թողարկում նվիրված է մեկ կոնկրետ մասնագիտության: Համեստ ձևաչափի մեջ հաղորդաշարը փորձում է օգնել երիտասարդներին՝ գտնել իրենց հաջողության բանաձևը, ճանաչել և խորանալ մասնագիտական նրբությունների մեջ: Հաջողության բանաձևը ունի Ֆեյսբուքյան էջ, որին արդեն հետևում է ավելի քան 3000 մարդ: Նրանք մեր մշտական բաժանորդներն են և թիվը կայուն աճում է:

Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը պայմանավորվածություն ունի dasaran.am-ի հետ, և ամեն հաղորդման՝ Armnews-ով եթեր հեռարձակումից հետո այն տեղադրվում է dasaran.am- ում, որը իրապես դպրոցահասակ երեխաների հետ շփման ամենաարդյունավետ հարթակն է: dasaran.am-ում մեզ արդեն հետևում է 26 հազար երեխա հանրապետության տարբեր մարզերից:

Վարչության կազմում գործում է ‘Մանկավարժական համալսարան’ թերթը, որն առաջնորդվում է Հիմնադրի՝ ‘Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան’ հիմնադրամի հաստատած կանոնադրությամբ: Հրատարակվում է հայերեն լեզվով 1800 տպաքանակով, ամիսը երկու անգամ, երկու մամուլ ծավալով: Թերթը ձևավորվում է ‘Ֆենոմեն’ հրատարակչությունում և տպագրվում ‘Տիգրան Մեծ’ հրատարակչության տպագրատանը համաձայն նրանց հետ կնքված պայմանագրերի:

Խմբագրությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է իրեն վերապահված խնդիրները՝ անաչառ տեղեկատվության ապահովում, համալսարանի ստորաբաժանումներին տեղեկատվական աջակցության ցուցաբերում և իրազեկում, ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում քննարկվող կարևորագույն հարցերի հրապարակում և դրանց շուրջ հասարակական կարծիքի ձևավորում, համալսարանի գործունեությունը ներկայացնող հոդվածների հրապարակում և այլն: Թերթը, որտեղ լուսաբանվում է մանկավարժական համալսարանի առօրյան, ուսումնագիտական գործունեությունն ու տարաբնույթ միջոցառումները, բուհի տարեգրությունն է: Դասախոսները և ուսանողները թերթի տարբեր խորագրերի ներքո կարողանում են հանդես գալ բուհի հիմնախնդիրներին և անցուդարձին վերաբերող հրապարակումներով: ‘Մանկավարժական համալսարան’ պաշտոնաթերթի բաժինը հաշվետու ժամանակաշրջանում բազմաբնույթ գործունեություն է իրականացրել՝ կապված թերթի լույսընծայման հետ: Թերթի ստեղծման ողջ գործընթացը վերահսկում, իրականացնում է գլխավոր խմբագիրը, ով նաև սրբագրում է թերթը և հրատարակչությունում մասնակցում նրա ձևավորմանը: Թերթի աշխատանքների կազմակերպմանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Լրատվության և հանրության հետ կապերի վարչության լրագրող Սոնա Արամյանը, որը մասնակցում է տարաբնույթ ձեռնարկների և պատրաստում նյութեր:

Համալսարանական թերթը տարածվում է համալսարանի ներսում և բուհից դուրս՝ Հայմամուլի, մասամբ էլ խմբագրության կողմից: Հայմամուլի միջոցով՝ 250 և խմբագրության կողմից՝ 100 թերթ ուղարկվում է հանրապետության ղեկավար մարմիններին, դեսպանատներին, հիմնադրամներին, գրադարաններին, բուհերին, հանրապետության մի շարք դպրոցների և տարբեր կառույցների: Մնացած 1450 օրինակը բաշխվում է համալսարանական ֆակուլտետների դեկանատներին, ուսանողական խորհրդին, համալսարանի և ռեկտորարատի բոլոր ստորաբաժանումներին: Առաջիկայում ընթերցողները թերթի էջերում կտեսնեն նոր՝

‘Ուսանողական օրագրից’, ‘Արվեստի երախտավորները’, ‘Դասախոսի ամբիոն’, ‘Նորը համալսարանում’, ‘Միջազգային հարթակում’ և այլ խորագրեր, որոնց ներքո տպագրված նյութերը նորովի կբացահայտեն ու առավել տեսանելի կդարձնեն Մանկավարժական համալսարանի զարգացումներն ու առաջընթացը:

Մանկավարժական համալսարանի մասին օպերատիվ և առավել ամբողջական տեղեկատվության ստացման միջոց է նաև Առաջին համալսարանական ռադիո ‘Ֆամա’-ն՝ radiofama.am : Այն իր եթերաշրջանը սկսեց 2013 թվականի նոյեմբերի 1-ին, և հասցրել է դառնալ շատերի համար սիրելի և սպասված: «RadioFama»-ն անդրադառնում է ինչպես համալսարանական առօրյային, այնպես էլ ընդհանրապես կրթական համակարգին և երիտասարդներին հուզող հարցերին:

‘RadioFama’-ն իր գործունեության երեք տարիների ընթացքում ապահովել է շուրջօրյա անխափան եթեր: Յուրաքանչյուր աշխատանքային օր 4 անգամ եթեր է հեռարձակվում լուրերի թողարկում հետևյալ հաճախականությամբ՝ 12:30, 15:00,18:00 / օրվա գլխավոր թողարկում/ և 21:00: Այստեղ տեղ են գտնում բացառապես կրթությանն ու գիտությանը, երիտասարդությանն ու մշակույթին վերաբերող լուրերը: Յուրաքանչյուր հաղորդումից հետո ներկայացվում է նաև եղանակի տեսությունը:
Օրվա ընթացքում մի քանի անգամ հնչում են հայտարարություններ, որոնք պարբերաբար թարմացվում են: Հայտարարությունները հիմնականում կրթական, ուսումնական ծրագրերի կամ միջոցառումների մասին են:
‘Աստղերը հուշում են’ հաղորդաշարն ամեն օր ներկայացնում է աստղերի կանխատեսումները, ի դեպ այն վարում է ՀՊՄՀ հոգեբանության ամբիոնի երրորդ կուրսի ուսանողուհի Սոնա Գրիգորյանը: ‘Իսկ դուք գիտեք, որ...’ հաղորդաշարը անդրադառնում է հետաքրքրաշարժ իրադարձություններին, երևույթներին կամ անձանց:‘Եվալյուցիա’-ի հեղինակ Արտյոմ Աղասարյանը բացահայտում է աղջիկների մասնագիտական գաղտնիքները: Նրա հյուրերն են բացառապես մանկավարժական համալսարանի տարբեր կուրսերի ու ֆակուլտետների աղջիկները: Այն եթերում է յուրաքանչյուր չորեքշաբթի 12:35, երկուշաբթի և ուրբաթ ժամը 20:00:‘Սինեմա Մյուզիք’-հետաքրքիր պատմություններ հայկական ու համաշխարհային ֆիլմերի, դրանց սաունթրեքների և կինոկոմպոզիտորների մասին: Հաղորդման հեղինակն է մագիստրատուրայի ուսանող Մարիա Գասպարյանը: Այն եթերում է ամեն երկուշաբթի՝ 12:35-ին և 20:00-ին: ‘TOP- 20’ - Ուսանող, հաղորդավար Սոնա Գրիգորյանը համաշխարհային լավագույն հիթ-շքերթներից առանձնացնում է շաբաթվա հիթերը: Հաղորդումը հեռարձակվում է շաբաթ և կիրակի ՝ 20:00-ին: «SectorProf» հաղորդման հեղինակ Բորիս Կիրակոսյանը ներկայացնում է Մանկավարժական համալսարանի տարբեր բաժինների ուսանողներին՝ նրանց հետ բացահայտելով մասնագիտական ամենահետաքրքիր փաստերն ու նրբությունները: Յուրքանչյուր երեքշաբթի ժամը 12:35-ին և 20:00-ին:
«Movie Time» հաղորդումը ներկայացնում է ֆիլմաշխարհի ամենաթարմ նորությունները: Քննարկում արդեն հայտնի և սիրված ֆիլմեր համալսարանի ուսանողների հետ: Հաղորդման հեղինակը լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Հասմիկ Կոշկարյանն է: Այն հեռարձակվում է յուրաքանչյուր հինգշաբթի ժամը 12:35-ին և 20:00-ին: «Fan Zone» հաղորդումը, որը «RadioFama»-ի եթերում է յուրքանչյուր ուրբաթ ժամը 12:35-ին և 20:00-ին, ամփոփում է շաբաթվա կարևորագույն մարզական իրադարձությունները և բացահայտում համալսարանի այն ուսանողներին, ովքեր հետաքրքրվում են սպորտով: Հաղորդումը վարում է լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանող Առաքել Տոնոյանը: Ամեն առավոտ ՀՀ պետական օրհներգից և ՀՊՄՀ հիմնից հետո ներկայացվում են ընթերցումներ Գրիգոր Նարեկացու ‘Մատյան ողբերգությունից’՝ Վարուժան Օլքինյանի կատարմամբ: Շաբաթ- կիրակին Նարեկինն է՝ ‘Ուիքենդը Դիջեյ Նարեկի հետ’: Առանձին ներկայացվում են ՀՊՄՀ-ի բոլոր ֆակուլտետների ու բուհում գործող գիտա-կրթական կենտրոնների մասին պատմող ակնարկներ:Կան բազմաթիվ հաղորդումների նախագծեր, որոնք իրականացման փուլում են:Ռադիո ‘Ֆամայի’ վերջին մեկ տարվա լսումների

թիվը կազմել է 49 600: Ռադիո ‘Ֆաման’ լսել են 115 երկրից՝ առաջին հնգյակն է Հայաստանը, ՌԴ-ն, ԱՄՆ-ն, Գերմանիա, Ֆրանսիա: Ունիկալ լսողների քանակը 19 700 է: Միջինը մեզ լսում են 53 րոպե: 2011 թվականից Մանկավարժական համալսարանի մասին ամբողջական տեղեկատվությունը հասանելի է բուհի պաշտոնական կայքում՝ www.aspu.am, www.armspu.am , www.spu.am հասցներում:

Ընթացիկ տարում ևս կայքը շարունակեց օպերատիվ աշխատել՝ ամենատարբեր ձևաչափերում լայնորեն տարածելով բուհական և ներբուհական ձեռնարկների մասին տեղեկատվություն:
Ելնելով բուհի համար կայքի ունեցած ռազմավարական նշանակության խնդիրներից՝ տարիներ առաջ գործարկված կայքը լրամշակելու, առավել դինամիկ և բազմաֆունկցիոնալ դարձնելու համար ընթացիկ տարում կայքը փոխարինվեց նորով:
Այդ նպատակով կատարվեց համաշխարհային և տեղական փորձի ուսումնասիրում՝

- *բուհերի հեղազոտության աշխարհահռչակ կենտրոնի հրապարակած «Աշխարհի համալսարանների վարկանիշների» ցանկի առաջին 10-ը բուհերի կայքերի ուսումնասիրություն (Academic Ranking of World Universities 2014[1]. այս ցանկից է օգտվում նաև «Լույս» հիմնադրամը:*
- *կատարվեց նաև մի շարք այլ բուհերի առկա կայքերի ուսումնասիրություն,*
- *հանրային իրազեկման և կայքերի պատրաստման ժամանակակից միտումների և պահանջների ուսումնասիրություն:*

Արդյունքում՝ նորաստեղծ կայքում կիրառվեցին լավագույն փորձն ու հանդիպած օրինակները:
Ինչպես նախկին, այնպես էլ նոր կայքը եռալեզու է՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:
Մենյուներ՝ 1000+ առանձին էջեր մենյուների և 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ մակարդակի ենթամենյուների, պիտակների և կատեգորիաների տեսքով:

Արագագործություն

Կիրառված առարկայակողմնորոշված նորագույն տեխնոլոգիաների և կայքի գործունեությունը դանդաղեցնող գործիքների կիրառումից հնարավորիս խուսափման շնորհիվ կայքն անհամեմատ արագագործ է կամայական «cms»-ից կամ բուհի «հին» կայքից :

1.1 Կայքում գործածված տեղեկատվության յուրաքանչյուր տեսք որակավորվում է որպես յուրօրինակ:

1.2 Ռեսպոնզիվ տեսք

Կայքը հնարավորինս հարմարեցված է տարբեր սարքավորումների էկրանների չափսերի տվյալներին (հեռախոս, պլանշետ, փոքր դիսփլեյ, մեծ դիսփլեյ):

1.3 Հեշտ հասանելիություն որոնման համակարգերում

Շնորհիվ մի շարք գործիքների (ալիաս, մետա-պիտակներ, մետա-նկարագրություն)՝ կայքը հնարավոր է հասանելի դարձնել որոնման տարբեր համակարգերով՝ տարբեր երկրներում և լեզուներով:

Կայքի գլխավոր էջում գտնվել է օպտիմալ լուծում՝ միանգամից ներկայացնելով բուհի կարևորագույն ստորաբաժանումները:

Կայքի վերին և ստորին մասերը անփոփոխ է և ունեն այն տեսքը, ինչ կայքի գլխավոր էջի վերին և ստորին մասերը:

Կայքի միջին մասում նշվում է հիմնական տեղեկատվությունը:

Կայքի որոնումն աշխատում է բոլոր բառ պարունակող նյութերի համար (հոդված, հայտարարություն, նկարադարանի անվանում, վերբեռնված ֆայլի անվանում՝ հոդվածի մեջ և այլ):

Որոնումը չի աշխատում նկարների կամ դրան համարժեք նյութերի մեջ (տեսանյութ, վերբեռնված ֆայլ):

Արխիվի համակարգի միջոցով հնարավորություն է ընձեռվում գտնել բոլոր առկա (չջնջված կամ չպասիվացված) նյութերը՝ ըստ հրապարակման ամսաթվի:

Սոցիալական ցանցերի հղումների միջոցով հնարավոր է տեղափոխվել բուհի էջ կամ բաժին՝ տվյալ սոց. ցանցում:

Գլխավոր էջի միջին հատվածը պարունակում է

1) սլայդ-շոու՝ վերնագրով և համառոտ նկարագրությամբ, տեղադրված են բաներներ, որոնք ակտիվ են և հնարավորություն են տալիս այցելել կոնկրետ կայք:

Ի դեպ, դրանք ենթական են փոփության և ըստ կարևորության իրենց տեղը զիջում են այլ ստորաբաժանման:

ՀՊՄՀ-ի ներկայիս պաշտոնական կայքը ժամանակակից մոտեցումներով պատրաստված արագագործ և ծավալուն կայք է՝ ընդլայնման և խորացման հնարավորությամբ:

Այն հնարավորություն է տալիս տարանջատել տեղեկատվության տեսակները և առանձնահատկությունները՝ միևնույն ժամանակ պահպանելով ընդհանուր տրամաբանությունն ու մոտեցումները:

Ի դեպ, կայքի աջ հատվածում, տեղադրված է նաև կառույցի առանձին նորությունների հատվածը:

Կայքում առկա է առանձնացված նկարադարան և տեսադարան՝ յուրաքանչյուրն իր վերնագրով և այլ ցուցանիշներով:

Հայտարարություններ և անոնսներ բաժինն առավել գեղատեսիլ է:

ՀՊՄՀ-ի Կառուցվածք բաժնում սխեմատիկ լուծման շնորհիվ ակտիվ են համապատասխան բաժինները, վարչությունները, վարչական ստորաբաժանումները, առհասարակ. դրանք մինի կայքեր են, որոնցից կարող ենք ստանալ յուրաքանաչյուրի գործունեության, խնդիրների և նպատակների վերաբերյալ թարմ տեղեկատվություն, ծանոթանալ աշխատակազմին:

Կայքում տեղակայված տեղեկատվությունը հնարավորության սահմաններում բերված է օրինաչափ տեսքի՝ ըստ թեմատիկայի:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս aspu.am-ն առաջնորդվել է օպերատիվության սկզբունքով՝ ապահովելով բուհի յուրաքանչյուր կառույցի, ամենատարբեր ձեռնարկների մասին թարմ և բազմակողմանի տեղեկատվություն, նպաստել դրա տարածմանը:

Կայքում առկա է բուհի Խորհրդի, Գիտական խորհրդի կազմի, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տեսանյութեր՝ կառույցների ամփոփիչ նիստերից:

Իրավական ակտեր և փաստաթղթեր-ում առանձնացվել են մի շարք բաժիններ՝ ըստ թեմատիկ անհրաժեշտության:

Տեղադրվում են բուհի կանոնադրությունը, ռազմավարական և հակակոռուպցիոն ծրագրերը, տարեկան հաշվետվությունն ու բյուջեն:

Պարբերաբար լրացվել, խմբագրվել և անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվել բուհի ֆակուլտետների, ամբիոնների և համահամալսարանական ամբիոնների պատմությունները, աշխատակազմը, ուսումնական ծրագրերն ու դասացուցակները:

Տարվա նորարարությունը Հրապարակումներ բաժինն է, որտեղ պարբերաբար տեղադրվում են դասախոսների գիտական աշխատանքները, հեղինակած դասագրքերը:

Յուրաքանչյուր կիսամյակ կայքում տեղադրվում են նոր դասացուցակները, կիսամյակային քննություններին ընդառաջ՝ համապատասխան բաժնում նաև ընթացիկ (միջանկյալ) ստուգման հարցաշարերը. ի դեպ, նույն սկզբունքն է գործում նաև ամփոփիչ ատեստավորման և որակավորման քննությունների դեպքում:

Կայքի Գիտություն բաժնում տեղադրվել են բուհի գիտական կառույցի՝ Գիտահետազոտական կենտրոնի աշխատանքների, աշխատակազմի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

Առանձնացված և կայքի ձևաչափում են ներկայացված գիտական հանդեսները, գիտական լաբորատորիաները՝ իրենց գործունեությամբ և աշխատակազմով:

Մանկավարժական համալսարանում այս տարի ևս անցկացված միջազգային և հանրապետական մեծածավալ գիտաժողովները, մեծամասշտաբ հանդիպումները, հրավիրյալ օտարազգի և տեղացի դասախոսների դասախոսությունները, միջբուհական և ներբուհական կարևորագույն ձեռնարկները, սպորտային և մշակութային ամենատարբեր միջոցառումները լուսաբանվել են օպերատիվ և ողջ ծավալով:

Պարբերաբար տեղադրվել են գիտաժողովների վերաբերյալ հայտարարությունները, ծրագրերը, մասնակցության ձևաչափերն ու պահանջները:

Գիտության բաժնում այս տարի ևս պարբերաբար տեղադրվել են պաշտպանությունների սեղմագրերն ու մասնագիտական խորհուրդների թարմացված ցանկը:

Նկատի ունենալով պրակտիկայի կարևորությունն ու դրա շարունակականությանը՝ Կրթություն բաժնում տեղադրվել է պրակտիկայի քարտեզը՝ անցկացման վայրերը, անհրաժեշտ փաստաթղթերը:

Կրթության բաժնի նորարարությունը դրամաշնորհային ծրագրերի և կրթաթոշակների վերաբերյալ տեղեկատվության առկայությունն է:

Բուհի պաշտոնական կայքը դիմորդների և ուսանողների համար առավել մատչելի է դարձել բուհի հետ կապված տեղեկատվությունը. այս տարի ևս բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրարգրերի առկա և հեռակա բաժիններում ընդունելության քննություններին ընդառաջ տեղադրվել են մասնագիտությունների նորացված ցանկը, տվյալ ուսումնական տարվա ընդունելության կարգը, ամբողջական տեղեկատվություն քննությունների և վարձավճարների վերաբերյալ, ամեն օր ներկայացվել է դիմումների շարժն՝ ըստ մասնագիտությունների, ինչպես նաև ընդունելության մրցույթի արդյունքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Կայքում գործող «Թափուր աշխատատեղ» բաժինը շարունակվում է համալրվել թափուր աշխատատատեղերի վերաբերյալ մրցույթների նոր հայտարարություններով:

ՀՊՄՀ №57 հիմնական դպրոցի և Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի մասին տեղեկատվությունը, այնտեղ անցկացված միջոցառումների լուսաբանումը ընթացիկ տարում ևս եղել է բուհի պաշտոնական կայքի կարևորագույն ուղղություններից մեկը:

Այս տարի ամբողջական փոփոխության է ենթարկվել Աշխատակազմ բաժինը. համալսարանի աշխատակազմի անձնական տվյալները (CV ձևաչափով) ամբողջովին նոր են՝եռալեզու տարբերակով:

Կայքն ինչպես միշտ հնարավորություն է ընձեռում նաև էլեկտրոնային եղանակով ծանոթանալ «Մանկավարժական համալսարան պաշտոնաթերթ»-ի բոլոր համարներին, իսկ այլ լրատվամիջոցների կողմից բուհի գործունեության վերաբերյալ լուսաբանումը տեղ է գտնում «Մամուլը մեր մասին» բաժնում:

Կայքի միջոցով այցելուն կարող է ունկնդրել նաև Առաջին համալսարանական ռադիոյի հաղորդումները, իսկ մեծամասշտաբ միջոցառումների տեսանյութերը հասանելի են ՀՊՄՀ-ի TV բաժնում: Կայքում յուրաքանչյուր շաբաթ տեղադրվում է նաև Լրատվության և հանրության հետ կապերի վարչության կողմից թողարկվող «Հաջողության բանաձև» հաղորդաշարը:

Համալսարանի կայքի ապահովման բաժինն ամեն օր բուհի վերաբերյալ թարմ տեղեկատվություն է հաղորդում նաև սոցիալական ցանցերի միջոցով. ստուգվում են էլեկտրոնային հասցեները, տրվում է անհրաժեշտ պատասխան:

Կատարվել են ընթացիկ այլ աշխատանքներ ևս: Համալսարանի պաշտոնական կայքի ապահովման բաժնի աշխատանքների առանցքում եղած նոր՝ վերազինված կայքի առավել դինամիկ և ծավալուն, ժամանակակից դիզայնով և հնարավորությունները ընթացիկ տարում ապահովել են այցելուների մեծ քանակ. Google Analytics-ի վերլուծության արդյունքներով՝ տարվա ընթացքում կայքն ունեցել է 500.000 այցելու:

Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքը շարունակում է հանդիսանալ տեղեկատվության համախմբման միջոց՝ բուհի հետ առնչություն ունեցող այլ կառույցների և վերջիններիս կայքերի համար :

Շուրջ 1 տարվա ընթացքում «Նորություններ» բաժնում տեղադրվել է ավելի քան 1700 նյութ:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Վահան Սարգսյան

2016թ.-ին պրակտիկայի կենտրոնի կողմից ֆակուլտետների հետ համատեղ կազմակերպվել է համալսարանի 7412 ուսանողների պրակտիկան (աղյուսակ 1):

Պրակտիկաները կազմակերպվել են կրթական և այլ հիմնարկներում, թիվ 1, 2, 5, 8, 10, 18, 20, 24, 33, 48, 57, 60, 67, 76, 84, 100, 104, 106, 114, 119, 125, 127, 129, 131, 135, 137, 155, 162, , Երևանի Շիրակացու անվան ճեմարան, Մխ. Սեբաստացի, Հակոբ Կոջոյան, Քվանտ կրթահամալիրներում, Վարդանանք կրթահամալիրում, Ապագա հոգեբանական ծառայությունների կենտրոնում, Սոս մանկական գյուղերում, ՀՕՖ-ի սոցիալական աջակցության կենտրոնում, Իրավախախտների վերականգնողական կենտրոնում, Մասնագիտական կողմնորոշման կենտրոնում և այլ հաստատություններում:

Աղյուսակ 1.

2016թ *պրակտիկայի մասնակցած ուսանողներ*


Ֆակուլտետ	Ուս. թիվ II կուրս առկա	Ուս. թիվ III կուրս առկա	Ուս. թիվ V կուրս	**Ընդա-մենը Առկա Բակ**	Ուս թիվ հեռ. V	Ուս թիվ հեռ IV	**Ընդա-մենը**	**Մագ I**	**Մագ II**	**Ընդա-մենը Մագ**	**Ընդա-մենը ուսանող**
ՄՖԻ	107	179	78	364	49	95	144	34	62	96	604
ԿՔԱ	81	194	91	366	55	72	127	30	31	61	554
ՊԻ	115	119	109	343	119	147	266	76	40	116	725
Կ	39	344	180	563	60	28	88	37	49	86	737
ՀԿ	159	321	165	645	89	67	156	64	61	125	926
ՕԼ	78	146	74	298	79	129	208	53	50	103	609
ԲՍ	76	65	69	210	65	45	110	35	31	66	386
ԳԿ	196	135	181	512	75	68	143	88	40	128	783
ԿՀՍ	143	443	176	762	86	126	212	74	49	123	1097
Սկ	127	181	147	455	124	293	417	58	61	119	991

2016թ.-ի բոլոր ամբիոնները, որոնք սպասարկում էին պրակտիկայի մեկնող ՄԿԾ-ները, ներկայացրել են պրակտիկայի առարկայական նկարագրեր, որոնցում պահպանել են պրակտիկայի ընդհանրական նկարագրերը:

Սահմանված կարգով, մինչ պրակտիկայի սկիզբը բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են նախապատրաստական (կողմնորոշիչ) կոնֆերանսներ, որոնց ընթացքում առավել մանրամասնորեն քննարկվել են շահակիցների կարիքները: Պրակտիկայի կենտրոնի աշխատակիցների կողմից ֆակուլտետների պրակտիկայի պատասխանատուների հետ համատեղ կազմակերպվել է 52 նախապատարաստական և 46 ամփոփիչ կոնֆերանսներ, դիտարկվել են 98 թղթապանակներ, իրականացվել են դիտարկումներ 138 պրակտիկայի խմբերում (Աղյուսակ 2): Կոնֆերանսների ընթացքում արձանագրվել են պրակտիկայի հետևյալ ուժեղ կողմերն ու բարելավման անհրաժեշտություն ունեցող հարցերը: *Ամփոփիչ* կոնֆերանսի ընթացքում բոլոր շահակիցների հետ քննարկվել են բոլոր ուժեղ և թույլ կողմերը, կատարվել են առաջարկություններ և դրանց բարելավման նպատակով մեթոդների ընտրություն:

Վերահսկողություն իրականացնելու նպատակով պարբերաբար կատարվել են շրջայցեր պրակտիկայի անցկացման վայրեր, իրականացվել են ուսանողների թղթապանակների ուսումնասիրություններ և ուսանողների հետ հանդիպումներ: Դիտարկումների ընթացքում իրականացվել են խորհրդատվություններ՝ պրակտիկայի իրականացման, հոգեբանական և մանկավարժական մեթոդների ընտրության հետ կապված: Արձանագրվել էին որոշ թերացումներ, կապված թղթապանակների ոչ ժամանակին լրացման, դպրոցի կողմից խմբերի անուշադրության մատնման, պատասխանատուների երբեմնի բացակայությունների և այլնի հետ: Բոլոր թերացումները սահմանված կարգով արձանագրվել են, դրանց մի մասի վերաբերյա զեկուցվել է ռեկտորատի նիստերին: Ուսումնասիրության ընթացքում վեր են հանվել նոր պահանջներ, որոնք քննարկվելուց հետո առաջարկվել է կատարել անհրաժեշտ միջոցառումներ,:

Աղյուսակ 2.



Նախապես, կազմակերպվել և ավարտվել է ուսանող-պրակտիկանտների հրամանագրման գործընթացը: Պրակտիկայի անցկացման բոլոր վայրերում պրակտիկան կազմակերպվել է ուսնանողների մասնագիտական պրակտիկայի կանոնակարգին համապատասխան:

Պրակտիկայի արդյունավետության բարձրացման նպատակով կենտրոնի ղեկավարի և աշխատակիցների կողմից կազմակերպվել են հանդիպումներ մի շարք կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ: Զգալիորեն թարմացվել է կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի պրակտիկայի կազմակերպման բազաները, պրակտիկաների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև սոցիոլոգ ուսանողների գիտելիքներն ու կարողությունները բուհի խնդիրների համար կիրառելու, նրանց հսկողության բարձրացման նպատակով որոշում է կայացվել սոցիոլոգիա և մանկավարժություն մասնագիտության ամփոփիչ մանկավարժական պրակտիկան իրականացնել բուհի բազայի վրա:

Պրակտիկայի ընթացքում բացի դասալսումներից, քննարկումներից, դասեր անցկացնելուց, պրակտիկանտները կազմակերպել են բազմաթիվ հետաքրքիր արտադասարանական և դաստիարակչական միջոցառումներ, պատրաստել են վահանակներ, կազմակերպվել են էքսկուրսիաներ, մրցույթներ և այլն: Զուգահեռաբար պրակտիկայի վայրերում ուսանողների և ղեկավարների կողմից կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշիչ միջոցառումներ:

Հաշվետու տարում պրակտիկայի կազմակերպման, դրա արդյունավետության բարձրացման հետ կապված հարցերը պարբերաբար ներկայացվել են համալսարանի ռեկտորատի նիստերին (5 անգամ), գիտական խորհրդի նիստերին (2 անգամ), համալսարանի ամբիոնի վարիչների հետ հանդիպումների ընթացքում (2 անգամ), համալսարանի բոլոր մանկավարժական պրակտիկայի մեթոդիստների հետ հանդիպման ընթացքում (1 անգամ), ինչպես նաև առանձին առանձին յուրաքանչյուր կիսամյակի սկզբին ֆակուլտետներում կազմակերպված հանդիպումների ընթացքում (22 անգամ), բոլոր ֆակուլտետների ներկայացուցիչների և պրակտիկայի պատասխանատուների հետ (7 անգամ): Կազմակերպվել են նաև հանդիպումներ հատուկ կրթության ֆակուլտետի պրակտիկայի հիմնարկների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև Սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից կազմակերպվել է մանկավարժական պրակտիկայի պաշտպանությանն ու արդյունքների ներկայացմանը նվիրված սեմինար Ծաղկաձոր քաղաքում:

Հանդիպումների ու քաննարկումների արդյունքում որոշվել է մշակել և ներդնել մեխանիզմներ մանկավարժական պրակտիկայի արդյունքները ամփոփիչ ատեստավորման համակարգում ներգրավելու համար:

Պրակտիկայի արդյունքները ամփոփիչ ատեստավորման համակարգում ներգրավելու նպատակով ՀՊՄՀ ռեկտորի կողմից հանձնարարվել է իրականացնել պրակտիկայի բարեփոխումներ: Մասնավորապես իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Ավելի է սահմանափակվել մանկավարժական պրակտիկայի հիմնարկների քանակը, ինչը հնարավորություն կտա էապես բարելավել պրակտիկայի վերահսկողության գործընթացը:

2. Դպրոցները չծանրաբեռնելու նպատակով կազմվել է պրակտիկայի կազմակերպման սահուն ժամանակացույց:

3. Առցանց կրթության հարթակում ստեղծվել են մանկավարժական պրակտիկայի խմբեր:

4. Ռեկտորատի նիստերում պարբերաբար զեկուցվել է դեկանների կողմից պրակտիկայի ընթացքի մասին:

5. Մշակվել է ֆակուլտետների և ամբիոնների կողմից պրակտիկայի դիտարկման ժամանակացույց, որի համաձայն ֆակուլտետի դեկանները, ամբիոնի վարիչները և պրակտիկայի ղեկավարները հսկել են գործընթացը:

6. Վերանայվել է մանկավարժական պրակտիկայի թղթապանակը, որտեղ յուրաքանչյուր շրջափուլում առանձնացվել են կոնկրետ առաջադրանքներ, բարելավվել են բնութագրի, հաշվետվության և գործունեության պահանջները:

7. Ստեղծվել է պրակտիկայի մեթոդիստի ուղեցույց, որում ներառվել են դասի և մասնագիտական գործունեության գնահատման,հաշվետվության, թիմային աշխատանքի պլանավորման և այլ փաստաթղթերի ձևանմուշներ,

8. Մասնակի վերանայվել են մեթոդիստների և այլ պատասխանատուների գործառույթները:

9. Ուսումնական ծանրաբեռնվածության չափորոշիչներում կատարվել են մասնակի փոփոխություններ:

10.Մշակվել է մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգ:

Գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 6-ի որոշմամբ **ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշիչներում կատարվել են փոփոխություններ, ավելացել է ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքում մեթոդիստին հատկացվող ժամաքանակը**:

Որոշման համաձայն մանկավարժական **պրակտիկայի միջին գնահատականը** փոխարինելու է մանկավարժություն և դասավանդման մեթոդիկաներ առարկաների հարցերին ամփոփիչ ատեստավորման հարցաշարերում:

Հաստատվել են.

ա) **մանկավարժական պրակտիկայի թղթապանակը**, որը կիրառության մեջ կդրվի հաջորդ ուսումնական տարվանից

բ) **մեթոդիստի ուղեցույցը,**


գ) պրակտիկայի դիտարկումների մատյանը:

Հանձնարարվել է նաև **մանկավարժական պրակտիկան սպասարկող ամբիոններին՝ պատրաստել մասնագիտական մեթոդական ուղեցույցներ**:

Գիտական խորհրդի 2016թ. օգոստոսի 26-ի որոշմամբ հաստատվել է **մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգը:**

Ուսումնական տարվա սկզբին, ռեկտորի գլխավորությամբ տեղի է ունեցել հանդիպում պրակտիկայի հիմնարկ հանդիսացող 15 դպրոցների հետ, քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը:

Աղյուսակ 3




Բարելավվել է էլեկտրոնային տեղեկատվական հաղորդակցական միջոցների կիրառումը պրակտիկայի ընթացքում: Մասնավորապես, պրակտիկաների ընթացքը և արդյունաքները լուսաբանելու, տեղեկատվությունը բարելավելու և մշտադիտարկում իրականացնելու նպատակով ներդրվել է Google classroom առցանց ուսուցման գործիքը:

Հաջողված փորձ է համարվել նաև Փ. Թերլեմեզյանի անվան քոլեջում /կերպարվեստ և գծագրություն, մեթոդիստ Ս. Սարգսյան/, 129 դպրոցում՝ մեթոդիստ Ս. Փիլոսյան, հայոց լեզու և գրականություն թիվ 33 դպրոցում՝ մեթոդիստ Հարությունյան Ռուբինա կազմակերպվող պրակտիկաները:


Հաջողված կարելի է համարել նաև թիվ 119, 129, 33, 135 դպրոցների կողմից պրակտիկաների համակարգման փորձը, ինչպես նաև առցանց հարթակը, որպես օրագիր և ամենօրյա ակտիվությունը գրանցող տիրույթ օգտագործելու սկզբնական կրթության ֆակուլտետի փորձառությունը:

Կենտրոնի կողմից իրականացվել են բոլոր ֆակուլտետների մանկավարժական պրակտիկայի գործընթացի դիտարկումներ և ուսումնասիրություններ: Որպես գնահատման ցուցիչներ հանդես են եկել ուսանողների և դասախոսների ակտիվությունը առցանց հարթակում և պրակտիկայի գործընթացի պլանավորումը, կազմակերպումը մասնագիտական աջակցության որակը, կառավարումը: Դիտարկումների արդյունքների ամփոփ պատկերը ներկայացված է աղյուսակ 4 ,5 –ում:

Աղյուսակ 4



Աղյուսակ 5



Պրակտիկայի արդյունավետության գնահատման նպատակով մշակվել են մի շարք առացքային ցուցիչներ, որոնք հնարավորություն են տալիս չափելի տվյալներով արձանագրել պրակտիկայի գործընթացը և որակը՝ անհրաժեշտաբար փոփոխություններ կատարելով նրա կառավարման մեջ: Ստորև ներկայացնում ենք այդ տվյալները աղյուսակի տեսքով:

Աղյուսակում օգտագործված պայմանական նշաններն են. ∧ նախորդ տարվա համեմատությամբ ցուցանիշը բարելավվել է, ∨ ցուցանիշը անկում է ապրել * ցուցանիշը առաջին անգամ է հանդես գալիս = ցուցանիշը փոփոխության չի ենթարկվել:

Գործունեության առանցքային ցուցիչներ	գնահատականը տոկոսներով	բարելավման առաջարկներ
առցանց վերահսկողության գործիքների ներդրում *	95	վերանայել խմբերի անվանումները և հստակեցնել չափորոշիչները
պրակտիկայի բազաների կողմից բնութագրերի ներկայացման ապահովում, որպես գործընթացի հիմք, =	90	մատուցել խորհրդատվություն բնութագրերի ներկայացման հարցում
հաշվետվությունների ներկայացում նոր ձևաչափով, որը հնարավորություն է տալիս ամրագրել ցուցիչները ∧	75	մատուցել խորհրդատվություն պրակտիկայի ղեկավարներին
հրամանագրման գործընթացի մասնակի փոփոխություն, տեխնիկական բնութագրեր և այլն,=	72	թերացումների համար ներկայացնել համապատասխան զեկուցագրեր
ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման չափանիշների վերանայում՝ դասախոսների գերծանրաբեռնվածության կանխման նպատակով ∧	85	վերանայել ծանրաբեռնվածության չափորոշիչները
դիտարկման արձանագրության նմուշների, պահանջագրի, դիմումի ձևերի մշակում և ներդրում, ∧	93	ներդնել համապատասխան էլեկտրոնային համակարգ
կատարողական ակտերի ներկայացման ժամկետների նկատմամբ հսկողության ամեացում,=	65	ներդնել էլեկտրոնային համակարգ
ուսանողների տվյալների բազայի հետ համեմատություն, հրամանագրման գործընթացի փաստականության նվազեցման նպատակով,	72	աշխատել միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծման ուղղությամբ
առարկայական նկարագրեր բարելավում՝ չափանիշների և կրեդիտների բաշխման ամրագրում, կրթական վերջնարդյունքների ստանդարտացում, =	80	կատարել ընթացիկ վերանայում նոր ՌԾ-ի մշակմանը զուգահեռ
հոգեբանների և մանկավարժների ծրագրերի բարելավում ∧	94	հաշվի առնել աշխատանքը դասաբաշխման և խրախուսման ժամանակ
թիմային աշխատանքի պլանների առկայություն, գործառույթների բաշխում, գնահատման թափանցիկություն և փոխադարձ հսկողության ապահովում ∧	78	բարելավել մեթոդիստների անհատական պլանները և թերացումների համար կազմել արձանագրություններ
մագիստրոսական պրակտիկայի ծրագրային վերանայում՝ ∧	75	մատուցել խորհրդատվություն
պրակտիկայի մեթոդիստների համար տեղեկատվական միջոցառումների կազմակերպում ∧	65	կազմակերպել սույն գնահատման արդյունքների հիման վրա
թղթապանակների որակի բարելավում ∧	84	կազմակերպել սեմինարներ բոլոր ֆակուլտետներում ՀԿ և ՄԿ ֆանուտետների օրինակով
ամառային պրակտիկաների ժամկետների փոփոխություն, նախկին խախտումների կանխում ∧	76	վերանայել ուսումնական պլանները
մասնագիտական կողմնորոշման աշխատանքների և պրակտիկայի փոխկապակցում=	73	աշխատանքներն առավել թիրախավորել ըստ մասնագիտությունների
մասնագետների անհարկի բացակայությունների կանխում, պարբերական այցելությունների և հսկողության ավելացման շնորհիվ, ∧	93	ներդրված վերահսկողության մեխանիզմները կիրառել պարբերաբար
բոլոր նախապատրաստական և ամփոփիչ կրնֆերանսների կազմակերպում և պրակտիկայի գործընթացի ուժեղ թույլ կողմերի մշտական վերլուծություն և բարելավում=	87	մատուցել խորհրդատվություն, իրականացնել սեմինարներ
բազաների ընտրության նոր քաղաքականության ներդրում, կառավարման խորհրդակցականության մեխանիզմների ավելացում ∧	93	ներդնել բազաների կողմից հետադարձ կապի ստացման նոր մեթոդներ, ներգրավել նոր ռեսուրսներ
անհատական պրակտիկաների կառուցակարգերի բարելավում=	71	ներդնել անհատական պրակտիկայի կազմակերպման նոր քաղաքականություն
կամավորական պրակտիկաների ընդլայնում և դրանց նկատմամբ վերահսկողություն, ∨	70	վերանայել, մշակել կանոնակարգ և ներդնել նոր համակարգ
ինքնագնահատման, փոխադարձ գնահատման դերի և մեխանիզմների բարելավում, ∧	80	իրականացնել հաջողված փորձի տարածում սեմինարների միջոցով
ուսանողների և դասախոսների համար մշտական խորհրդատվությունների կազմակերպում =	85	իրականացնել սույն գնահատման պարբերացման հիման վրա

Պրակտիկայի կենտրոնը համակարգել է ամռանը ՀՀ մի շարք ճամբարներում ՀՊՄՀ ուսանողների կամավորական աշխատանքները, ովքեր հանդես են եկել որպես ջոկատավարներ:

Պրակտիկայի կենտրոնի աշխատակիցները մասնակցել են մի շարք սեմինարների, վերապատրաստումների: Կենտրոնի ղեկավար Վ. Սարգսյանը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է Բոնո Մազարիկ, (Չեխիա, խորագիրը՝ Կրթության միջազգային ասոցիացիայի հիմնադրում), Բաթ Սպա (Մեծ Բրիտանիա, խորագիրը՝ Կրթության միջազգային ասոցիացիայի հիմնադրում), Երևան ՀՊՄՀ (Հետազոտական կարողությունների զարգացում) քաղաքների համալսարաններում կազմակերպված վերապատարաստումներին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Արմեն Ֆերոյան

2016 թվականին ՀՊՄՀ-ի իրավաբանական կենտրոնի կողմից իրականացվել են հետևյալ գործառույթները՝

1. ընթացք է տրվել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց թվով 150 դիմումներին.
2. պարբերաբար կազմակերպվել է ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց ընդունելություն, որի ընթացքում պարզաբանվել են նրանց իրավունքները, պարտականությունները և տրվել են նրանց կողմից բարձրացված հարցերի սպառիչ պատասխաններ.
3. ընթացք է տրվել թվով 6 դատական գործերի, ներկայացվել են հայցադիմումներ, անհրաժեշտ միջնորդություններ և շարունակականաբար իրականացվում է դատական ներկայացուցչություն: Նախապատրաստվում են ավելի քան 15 դատական գործեր՝ որոնցով պետք է ներկայացվեն հայցադիմումներ, անհրաժեշտ միջնորդություններ, ինչպես նաև պետք է իրականացվի դատական ներկայացուցչություն:

<<Բաղդոյան-Շին>> ընկերության կողմից Համալսարանի դեմ ներկայացված հայցապահանջի շրջանակներում շարունակվում է իրականացվել դատական ներկայացուցչություն: Նպատակային ուսուցման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը խախտած թվով հինգ ուսանողների հետ կնքվել են համապատասխան պարտավորագրեր, որոնց շրջանակներում վերջիններս Համալսարանին վճարում և շարունակաբար վճարելու են 5 800 000:

4. մշակվել է ՀՊՄՀ-ի՝ հիմնադրամ կազմակերպա-իրավական կարգավիճակի վերակազմակերպվելու կանոնադրությունը, կազմվել են հիմնադրամի վերակազմակերպվելու հետ կապված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի փաթեթները: Հիմնադրամ կազմակերպա-իրավական կարգավիճակի վերակազմակերպվելուց հետո մշակվել և հաստատման է ներկայացվել <<Դպրոց>> ՍՊԸ-ի կանոնադրությունը, ինչպես նաև այդ ՍՊԸ-ին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները:
5. Համալսարանը ներկայացվել է ՀՀ պետական մարմիններում, կազմակերպություններում և այլ անձանց հետ հարաբերություններում.
6. կազմվել և ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի ռեկտորի բոլոր հրամանների նախագծերը,

7. ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցման ավելի քան 5191 դիմումներն՝ իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին և հայտնվել է համապատասխան դրական կամ բացասական կարծիք.

8. իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից իրականացվող գնումների գործընթացին, աշխատանքի ընդունման մրցույթներին և այլ հանձնաժողովների աշխատանքներին.

9. ապահովել է Համալսարանի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, դրանցից բխող փոփոխությունների ամրագրումը և անհրաժեշտ գործողությունների կատարումը, ներառյալ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ համապատասխան պայմանագրերի մշակման և կնքման գործընթացը.

10. ապահովվել է ՀՀ ԿԳՆ ներքին աուդիտի եզրակացության պահանջների կատարումը, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները,

11. ՀՊՄՀ-ի անունից կազմել է կամ կազմված պայմանագրերը համապատասխանեցրել է ՀՀ օրենսդրության պահանջներին /առուվաճառք, վարձակալության, ծառայությունների մատուցման պայմանագրեր և այլն/.

12. իրականացվել է Համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողների պրակտիկան.

15. կատարվել են ՀՊՄՀ-ի ռեկտորի և պրոռեկտորների հանձնարարականները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Քրիստինա Ծատուրյան

ՀՊՄՀ-ի միջազգայցնացման հիմնական և կարևորագույն նպատակն է միջազգային համագործակցության արդյունքում բարելավել կրթական ծառայությունների և հետազոտության որակը, համալսարանի մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում, ստեղծել միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել համալսարանի շրջանավարտների պահանջարկվածությունը և մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում:

Հիմք ընդունելով ՀՊՄՀ-ի ռազմավարությունը և ՌՊ-ն, դրանց իրականացման միտումները և խոչընդոտները, ինչպես նաև համալսարանի միջազգայնացման ուղղությամբ կարիքների վերլուծությունը՝ Միջազգային համագործակցության բաժինը (այսուհետ՝ ՄՀԲ) մշակել է 2015-2020 թթ. Միջազգայնացման ռազմավարությունը, որի հիմնական խնդիրն է ստեղծել համալսարանի միջազգայնացմանն ուղորդող ռազմավարական շրջանակ և բարելավել միջազգայնացմանը միտված աշխատանքները: Այս աշխատանքները իրականացնելու համար ՄՀԲ-ն իր գործունեությունը 2016 թվականին ուղղել է հիմնականում հետևյալ ուղղություններով.

1. ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության շրջանակում համագործակցության իրագործում և ընդլայնում,
2. Սեմինարների և հանդիպումների միջոցով տեղեկատվության լայն տարածում՝ միջազգայնացման վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և միջազգայնացման միջավայր ստեղծելու նպատակով,
3. Միջազգայնացման միջավայրի ստեղծում, օտար լեզվի իմացության կարևորում,

4. Ակադեմիական և վարչական աշխատակազմի շարժունության խթանում, համատեղ կրթական և կարողությունների զարգացման նախագծերի իրականացում:

1. ***ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության շրջանակում համագործակցության իրագործում և ընդլայնում***

1.1. 2016 թ.-ին ակտիվ աշխատանքներ են իրականացվել համագործակցային ցանցի թիրախային ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես, համագործակցային համաձայնագրեր են կնքվել Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի, Ն. Է. Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանի, Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի, Պարդուբիցեի համալսարանի և Կույրերի համար Պերկինսի միջազգային դպրոցի հետ, որոնք ունեն ՀՊՄՀ-ին համադրելի առաքելություն: Համագործակցության պայմանագիր է կնքվել նաև Բրիտանական խորհուրդի հայաստանյան գրասենյակի հետ: Համագործակցության շրջանակում ՀՊՄՀ-ում իրականացվում է IELTS քննության նախապատրաստական դասընթացներ, ինչպես նաև համալսարանի ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր:

1.2. ՀՊՄՀ-ն շարունակել է համագործակցությունը 6 TEMPUS ծրագրերի մեջ, որոնցից մեկում՝ ՏԵՄՊՈՒՍ ՄԱՀԱԹՄԱ, ծրագրում հանդիսանում է համակարգող:Այդ ծրագրերի շրջանակներում համալսարանը ստեղծել է համագործակցային ցանցեր, որոնցում ներգրավված են թե՛ տեղական բարձրագույն կրթության բնագավառում գործող հաստատություններ և թե՛ մի շարք միջազգային բարձր վարկանիշ ունեցող բուհեր, ինչպիսիք են Դանիայի Օրհուսի համալսարանը, Գենտի համալսարանը և այլն:

2. ***Սեմինարների և հանդիպումների միջոցով տեղեկատվության լայն տարածում՝ միջազգայնացման վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով***

ՄՀԲ-ն այսօր ոչ միայն համակարգում, այլև հանդիսանում է մի շարք միջազգային համագործակցային ծրագրերի նախաձեռնող: Հարկ է նշել, որ իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ միջազգայնացման գործընթացների ապակենտրոնացման նպատակով, որի խնդիրն է այդ գործընթացներում ներգրավել առավել մեծ քանակությամբ պրոֆեսորադասախոսական կազմ տարբեր ֆակուլտետներից: Այսօր արդեն նախաձեռնություններ են բխում ֆակուլտետներից և իրականացվում վերջիններիս կողմից: Ընդհանուր առմամբ, հարկ է նաև փաստել, որ աճել է ՀՊՄՀ-ի համագործակցային շրջանակը՝ ներառելով նոր միջազգային, տեղական ու տարածաշրջանային գիտահետազոտական և գիտակրթական կազմակերպություններ: Այսպես, 2016 թ. –ի ընթացքում ՄՀԲ-ի նախաձեռնությամբ և/կամ աջակցությամբ կազմակերպվել է.

- մարտի 3-4-ը ՏԵՄՊՈՒՍ ԱՐՄԵՆՔԱ ծրագրի շրջանակներում «Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացման հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» խորագրով համաժողով;
- հոկտեմբեր ամսին հանդիպում 2016-2017 ուստարում ՀՊՄՀ-ի առաջին կուրս ընդունված բոլոր 10 ֆակուլտետների ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է ՀՊՄՀ-ի միջազգայնացման ուղղությունները և հնարավորությունները;
- հոկտեմբերի 3-ին հանդիպում 2016-2017 ուստարում ՀՊՄՀ առաջին կուրս ընդունված սփյուռքահայ և օտարերկրյա ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում ուսանողներին ներկայացվել է ՀՀ-ում կացության կարգավիճակ ստանալու դրույթները, միջազգային համագործակցության բաժնի հետ կապի ամրապնդման կարևորությունը, ինչպես նաև իրենց հետագա ուսումնառության հետ կապված մի շարք հիմնախնդիրներ՝ ՄՀԲ-ի հետ առնչվող;

- նոյեմբերի 1-ին և 2-ին հանդիպում համալսարանի դասախոսական և վարչական անձնակազմի հետ վերհանելու միջազգային համագործակցության հետ կապված հիմնախնդիրները, քննարկելու հետագա զարգացման ուղիները և ֆակուլտետների տեսլականները;
- նոյեմբերի 8-ին աշխատաժողով Erasmus + հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ՝ Հիմնական Գործողություն 2-ին «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» թեմայի վերաբերյալ, որին ներկա էին հայաստանյան բուհերի կառավարման, վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շուրջ 80 ներկայացուցիչներ, ինչպես նաև գործատուներ և մասնագիտական կրթությանը աջակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ;
- նոյեմբերի 17-ին, 18-ին, 24-ին, 28-ին և 29-ին ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի համար աշխատաժողով-վերապատրաստում «Ինչպե՞ս իրականացնել միջազգային համագործակցությունը» խորագրով սեմինարներ, որոնք վարել է ՄՀԲ-ի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը: Սեմինարին մասնակցել են թվով 75 աշխատակիցներ: Սեմինարների ընթացքում աշխատակիցներին հնարավություն է ընձեռնվել ծանոթանալ Եվրահանձնաժողովի, եվրոպական մի շարք երկրների կառավարության կողմից ֆինանսավորվող բարձրագույն կրթության ոլորտում ծրագրերին, տեղեկատվություն ստանալ բարձրագույն կրթության ոլորտում ազգային և ինստիտուցիոնալ զարգացման ուղղություններին, Բարձրագույն կրթության ոլորտում Ամերիկյան ֆինանսավորման աղբյուրներին, ինչպես նաև սովորել ծրագրային հայտերի մշակման մեխանիզմները:
- դեկտեմբերի 1-2-ը ՏԵՄՊՈՒՍ ԱՐՄԵՆՔԱ ծրագրի շրջանակներում ՄՀԲ-ի և Կրթության բարեփոխումների և որակի ապահովման վարչության հետ համատեղ «ՈԱՇ-Ի ԵՎ ՈՈՇ-ների օգտագործումը ԲԿ ծրագրերը կազմելիս» թեմայով վերապատրաստում:

3. <u>Միջազգայնացման միջավայրի ստեղծում, օտար լեզվի իմացության կարևորում,</u>

Սա ևս հանդիսանում է համալսարանի ռազմավարական խնդիրներից մեկը: Այս ուղղությամբ ևս իրականացվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես հանդիպում քննարկումներ ֆակուլտետների առանձին ներկայացուցիչների հետ: Վերոնշյալ աշխատանքների արդյունքում ՀՊՄՀ-ում զգալիորեն շատացել են միջազգային ծրագրերի նախաձեռնությունները:


- Այսպես, ՄՀԲ-ի անմիջական ներգրավմամբ համալսարանը դիմել և շահել է Էրազմուս+ BOOST համալսարանական զարգացման ծրագիրը և հանդիսանում է այդ ծրագրի համակարգողը:
- Միջազգային համագործակցության մասնագիտական կարողությունները զարգացնելու նպատակով ՄՀԲ-ի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը ս.թ. մայիսի 15-ից հունիսի 30-ը վերապատրաստվել է Իտալիայի Սալերնոյի համալսարանում:
- Համալսարանում համապատասխան միջավայրի ստեղծման և ուսանողներին միջազգայնացման գործընթացներում ներգրավման նպատակով ՄՀԲ-ն շարունակում է աշխատանքները ՄՀԲ-ի կամավոր ուսանողների հետ, ովքեր պարբերաբար օժանդակում են միջազգային համագործակցության աշխատանքներին: Այս տարի, բացի կոնֆերանսներին մասնակցելուց, ՄՀԲ-ն կամավորների աջակցությամբ մշակել է միջազգային ծրագրերի հնարավորությունների վերաբերյալ բուկլետ:

4. <u>Ակադեմիական և վարչական շարժունության խթանում</u>

Այս ուղղությամբ հարկ է նշել, որ ՀՊՄՀ-ում մեկնարկել են Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրեր, որի արդյունքում հնարավոր է դարձել ուսանողների և դասախոսների շարժունության կազմակերպումը՝ կրեդիտների կուտակման, փոխանցման և ճանաչման հնարավորությամբ: Միևնույն ժամանակ, շարունակվել է դասախոսական և վարչական կազմի շարժունությունը ՏԵՄՊՈՒՍ ծրագրերի շրջանակում: Այսպես.

- 2016թ. Համալսարանը դիմել է թվով 8 կրեդիտային շարժունության ծրագրերի, որոնցից ֆինանսավորվել է 7-ը. Հունգարիայի **Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան**, Ռումինիայի **Սպիրու Հարեթի համալսարան, Մեծ Բրիտանիայի Կիլեի համալսարան,** Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լիտվայի կրթական գիտությունների համալսարան, Բուլղարիայի Ռուսե համալսարան, Պարդուբիցեի համալսարան: Արդյունքում 2016-2017 ուստարում նախատեսվում է վերոնշյալ համալսարաններում ուսանողների և դասախոսների փոխանակում(պատկեր 1. ուսանողների արտագնա շարժունություն):

Պատկեր 1. Ուսանողների արտագնա շարժունություն



- 2016 թվականին ևս կազմակերպվել էր ամառային դպրոց ՀՊՄՀ-ի և մի շարք օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունների շրջանակներում: Փոխանակման ծրագրին մասնակցում էին ուսանողներ ՀՊՄՀ-ից, ԼՂՀ-ի Արցախի պետական համալսարանից, ՌԴ-ի Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական, ՌԴ-ի Մոսկվայի մանկավարժական պետական, Սանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական, Լիտվայի կրթական գիտությունների, Ֆինլանդիայի Օուլուի, Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական և Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարաններից՝ շուրջ 85 ուսանող: ՀՊՄՀ-ի ևս 74 ուսանող մեկնել են վերոնշյալ համալսարաններ տարբեր կրթական ճանաչողական ծրագրերին մասնակցելու նպատակով:
- Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության հետ համագործակցության շրջանակում ս.թ. մարտի 6-ից ապրիլի 7-ը ՀՊՄՀ 1 ուսանող ուսումնական պրակտիկա է անցել Ֆրանսիայի Լիլի մանկավարժական համալսարանում, ինչպես նաև 1 ուսանողուհի Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ս.թ. ապրիլի 10-15-ը մասնակցել է Բուխարեստում կայանալիք երիտասարդ ֆրանկոֆոնների փառատոնին:
- ՏԵՄՊՈՒՍ ԷՍՊԱՔ ծրագրի շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 16-21-ը ՀՊՄՀ թվով 3 ուսանող Իտալիայի Մաչերատա համալսարանում մասնակցել են վերապատրաստման:
- «2016 ուստարում ՀՊՄՀ են ընդունվել 53 օտարերկրյա ուսանող՝ Սփյուռքի և օտարազգի ներկայացուցիչներ: Ներկայումս համալսարանում սովորում են թվով 210 օտարերկրյա ուսանող:

<u>Եզրակացություն.</u>

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ ՀՊՄՀ-ում 2016 թվականին դիտարկվել է միջազգային գործունեության կտրուկ աճ: Սա պայմանավորված է նախևառաջ ՀՊՄՀ-ի ղեկավարության միջազգային գործունեության խրախուսման քաղաքականությամբ և համապատասխան հնարավորությունների ստեղծմամբ, ինչպես նաև այդ ուղղությամբ ՄՀԲ-ի կատարած աշխատանքներով: Այսպես, իրազեկվածության բարձրացման և տեղեկատվության տարածման աշխատանքների արդյունքում միջազգայնացման ուղղությամբ նախաձեռնություններով սկսել են հանդես գալ ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացուցիչները: Իհարկե, ըստ դիտարկման, նմանատիպ նախաձեռնություններով հանդես են գալիս հիմնականում այն ներկայացուցիչները, որոնք ունեն օտար լեզվի իմացություն և միջազգային ոլորտում որոշակի աշխատանքային փորձ՝ մասնակցություն համաժողովներին, մասնագիտական գիտելիքի փոխանակում, մասնակցություն միջազգային ծրագրերին, շարժունության ծրագրերով փոխանակումներ:

Ուսանողների շրջանում ևս նկատվել է մեծ հետաքրքրվածություն ՀՊՄՀ-ի միջազգային ծրագրերի նկատմամբ և ուսանողները ավելի հաճախ են սկսել դիմել ՄՀԲ՝ օտարերկրյա բուհերում ուսուցանելու, ՀՊՄՀ-ում առկա փոխանակման ծրագրերի, առկա դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Միևնույն ժամանակ, հաջորդ տարիներին նախատեսվում է աշխատանքները ուղղել համատեղ կրթական ծրագրերի իրականացմանը՝ երկակի դիպլոմների շնորհմամբ, ինչպես նաև օտար լեզվով դասընթացների կազմակերպմամբ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Լևոն Հարությունյան


Նախապատրաստական բաժնի գործունեությունն առաջնորդվում է բաժնի կանոնակարգայի պահանջներով՝ երկարաժամկետ և արագացված դասընթացների միջոցով նախապատրաստելու համապատասխան ուսումնական հաստատությունների ավարտական դասարանների աշակերտներին բուհ ընդունվելու համար:

2014-2015 ուսումնական տարում կարճաժամկետ խորհրդատվություններին մասնակցել է 11 դիմորդ, իսկ նախապատրաստական դասընթացներին՝ 22 ունկնդիր:

2015-2016 ուսումնական տարում նախապատրաստական բաժին է դիմել 25 դիմորդ: Դասընթացների արդյունքում 25 դիմորդներն էլ ընդունվել են համալսարան՝ տարբեր մասնագիտությունների գծով, իսկ երկարաժամկետ նախապատրաստական դասընթացներին մասնակցել է 53 ունկնդիր՝ տարբեր մասնագիտությունների գծով:

2016-2017 ուսումնական տարվա նախապատրաստական բաժնի ընդունելությունը կազմակերպելու նպատակով իրազեկման հայտարարություններ են տրվել տպագիր մամուլում և հեռուստատեսությամբ: Բուհի պրոֆեսորադասախոսական համակազմի գործուն մասնակցությամբ կազմակերպվել են բազում հանդիպումներ՝ լուսաբանելու համալսարանի մասնագիտությունները: 2016 թվականի արագացված դասընթացներին մասնակցել է 24 դիմորդ, իսկ երկարաժամկետ նախապատրաստական դասընթացներին մասնակցում է 56 ունկնդիր:

Նախապատրաստական դասընթացներ	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Արագացված դասընթաց	11	25	24
Երկարաժամկետ դասընթաց	22	53	56
Ընդամենը	**33**	**78**	**80**



ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Անժելա Թորոսյան

2016 թվականի հունվարից մինչև այսօր անձնակազմի հաշվառման բաժինը կազմակերպել է ՝

1. Համաձայն ռեկտորի 14.03.2012թ. թիվ 2-367 հրամանով հաստատված «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնարգ»-ի և «Ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի ընտրության /վերընտրության նպատակով հայտարարվել և անցկացվել է թվով 7 մրցույթ: Մրցույթին մասնակցել է ___7_ հավակնորդ: Արդյունքում տեղակալվել է 6 մասնակից այդ թվում՝
ամբիոնի վարիչ - 5
դեկան - 1:
2. Համալսարանի ռեկտորի 25.12.2015թ. թիվ 2-1267 հրամանով հաստատված «Ստորաբաժանումների տեսակները, աշխատեղերի տարակարգերը և դրանց զբաղեցման կանոնակարգ»-ի համաձայն հայտարարվել և կազմակերպվել է թվով 11 մրցույթ: Մրցույթին մասնակցել է 22 հավակնորդ: Արդյունքում տեղակալվել է 11 թափուր հաստիք այդ թվում՝ մասնագետ – 10, լաբորանտ – 1:
Նշված գործընթացն իր մեջ ներառում է՝

- համապատասխան բաժնի կողմից ներկայացված և ռեկտորի կողմից մակագրված զեկուցագիրը
- հայտարարությունների պատրաստում

- լրատվության վարչության հետ համատեղ հայտարարությունների հրապարակում՝ ՀՊՄՀ-ի կայքում
- համապատասխան փաստաթղթերի հավաքագրում և ամփոփում
- մրցույթի արդյունքների արձանագրում:

2016 թվականի Պրոֆեսորադասախոսական անձնակազմը ընդգրկում է՝

- ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս -5
- ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ - 7
- գիտություների դոկտոր- 104
- գիտությունների թեկնածու-369
- պրոֆեսոր- 154
- որից՝
  գիտությունների դոկտոր ,պրոֆեսոր- 97
  գիտությունների թեկնածու, պրոֆեսոր -18
- դոցենտներ-276
  որից՝
  գիտությունների դոկտոր, դոցենտ-10
  գիտությունների թեկնածու,դոցենտ-218
- ասիստենտ-73
  որից՝
  գիտությունների թեկնածու,ասիստենտ-46
- դասախոս-301
  որից՝
  գիտությունների թեկնածու դասախոս- 72
- պրոֆեսոր-խորհրդատու – 14

Բաժինն ապահովել է Համալսարանի ռեկտորի հրամանների ձևակերպումները / կադրային գծով, թվով 1000 հրաման/, որն իր մեջ ներառում է համաձայն ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի հետևյալ գործառույթները՝

- աշխատանքի ընդունում և ազատում
- արձակուրդի գրաֆիկի կազմում, հաստատում , ձևակերպում
- աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի կազմում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին
- կենսաթոշակային փաստաթղթերի կազմում և ձևակերպում
- աշխատանքային գրքույկների գրանցում և վարում
- անհատական քարտերի լրացում
- աշխատողների պահանջով տարբեր տեղեկանքների պատրաստում և տրամադրում թվով 500
- աշխատանքից ազատվածների գործերի և հրամանագրքերի արխիվացում:

Համալսարանի ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչությանը ամսական կտրվածքով տրամադրվել է ՀՊՄՀ-ի աշխատակազմի շարժի տվյալներ / ազատված, ընդունված, նախածննդյան և հետծննդյան արձակուրդում գտնվող աշխատակիցների թիվը/:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից իրականացրել են հետևյալ աշխատանքները.

- Համալսարանի ներքին լարային ցանցի՝ ընթացիկ պահանջներից ելնելով փոփոխման, նոր ենթացանցերի ստեղծման, նոր ավելացված համակարգիչների և տեխնիկական միջոցների՝ ընդհանուր ցանցին միացման և այլ շարունակական բնույթի մոնտաժային աշխատանքներ, ցանցի սպասարկման անընդհատ աշխատանքներ (տեղամասային և ընդհանուր բնույթի վթարների վերացում, ենթացանցերում ֆայլերի շրջանառության կազմակերպում, ներառյալ տպիչների ցանցային կիրառման հնարավորության ստեղծում, ծրագրային և տեխնիկական բնույթի այլ աշխատանքներ):
- Սերվերային համակարգերի ապասարկման և անվտանգության ապահովման աշխատանքներ, համացանցի և ներքին ցանցային ծառայությունների հասանելության և մուտքի համապատասխան իրավունքների տրամադրման աշխատանքներ, ցանցի կառավարման այլ աշխատանքներ:
- Owncloud ներքին ամպային համակարգի ներդնում և դրանով ներքին ֆայլաշրջանառության կազմակերպման աշխատանքներ, համակարգի օգտատերերի աստիճանաբար մեծացմանն ուղղված տեխնիկական աշխատանքներ, ատաքինից՝ համակարգ մուտք գործելու հնարավորության ստեղծում, ներառարյալ դոմենային անվան ամրագրման աշխատանքներ:
- Համալսարանում Wi-Fi ծածկույթի որակի բարձրացման, անլար ցանցից օգտվողների հնարավոր թվի աստիճանաբար մեծացման ուղղություններով աշխատանքներ: Այժմ համալսարանի ողջ տարածքը՝ բացառությամբ որոշ ոչ նպատակահարմար տարածքների, Wi-Fi գոտի է:
- Համալսարանի համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում.
    - Համակարգիչներում օպերացիոն համակարգերի տեղադրում և կարգավորում, ընթացիկ սպասարկում,
    - անհրաժեշտ ծրագրային փաթեթների տեղադրում, կարգավորում դրանց տարբերակների ժամանակին համահունչ փոփոխում, ընթացիկ ծրագրային սխալների վերացում, պարբերաբար առաջացող ծրագրային խնդիրների լուծում, հնարավորության սահմաններում վնասված կամ ջնջված տվյալների վերականգնում,
    - հակավիրուսային փաթեթների տեղադրում, դրանց աշխատանքի անընդհատ վերահսկում, բազաների թարմացում, համակարգչային վիրուսների մաքրում,
    - տեխնիկական անսարքությունների վերացում, շարքից դուրս եկած մասերի փոխարինում, հնարավորության դեպքում վերանորոգում, ժամանակակից պայմաններին չբավարարող՝ սակավ աշխատունակությամբ համակարգիչների տեխնիկական պարամետրերի հզորացում՝ փոխարինվող կամ կից ավելացվող համակարգչային սարքավորումների տարբերակով:
    - Հարակից համակարչային տեխնիկայի՝ ներառյալ տպիչների, սքաներների, բազմաֆունկցիոնալ սարքերի, պրոեկցիոն-տեսաձայնային սարքաորումների սպասարկում,
    - այլ նմանատիպ աշխատանքներ:
- Օգտագործվող հոսթինգների կարգավորման և կառավարման աշխատանքեր, էլեկտրոնային փոստի սպասարկում, հոսթինգներում տեղադրված մյուս համակարգերի՝ նեռարյալ համալսարանի կայքի տեխնիկական սպասարկում (պաշտոնական կայքի ապահովման բաժնին

տեխնիական հարցերով աջակցում) և անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

- Համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացված տարատեսակ ծրագրերում և նախագծերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում և սպասարկում.
  - ավարտական դիպլոմների տպում,
  - ուսանողական տոմսերի պատրաստուման գործում աջակցում,
  - լսարաններում համակարգչային տեխնիկայի, ներառյալ պրոեկտորների և Էկրանների, ինչպես նաև հեռուստացույցների տեղադրման կազմակերպում, ընթացիկ տեխնիկական սպասարկում, կիրառման հարցերում աջակցում (այսօր արդեն շուրջ 100 լսարաններում տեղադրվել է համակարգչային տեխնիկա, ինչն ապահովում է համալսարանում ինտերակտիվ ուսուցման իրականացումը),
  - ավարտական քննությունների տեսաձայնագրման հարցում օժանդակում, համապատասխան սարքերի միացում և կարգավորում, անհրաժեշտության դեպքում ձայնագրության մշակում, փորձնական տարբերակով առայժմ երեք ֆակուլտետների համար կիրառված էլեկտրոնային թեստավորման համակրգի աշխատանքի ապահովմանն ուղղված տեխնիկական՝ մասնավորապես ցանցային բնույթի աշխատանքեր,
  - այլ նմանատիպ աշխատանքներ:
- Անցկացված գիտաժողովների, նիստերի, ատենախոսությունների պաշտպանությունների, բազմաբնույթ միջոցառումների տեխնիկական աջակցում և սպասարկում,
- ՈՒսումնական գործընթացում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման աշխատանքներում տեխնիկական աջակցություն, ուսումնաօժանդակ և վարչական կազմին իրենց աշխատանքներում տեղեկատվական տեխնոլոգիաների մասով խորհրդատվություններ և աջակցություն:
- Ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացմանն ուղղված էլեկտրոնային տեղեկատվական համակարգում (ՈւԳԱԿՀ)՝ կենտրոնի ծրագրավորողների կողմից իրականացվել են.
  - Արդեն կիրառվող՝ ՈՒսումնական մաս, Ամբիոն, Ֆակուլտետ, Դասախոս մոդուլների սպասարկում, դրանց աշխատանքի բարելավում, նոր հնարավորությունների ավելացում.
    - Ֆակուլտետ մոդուլում կատարվել են բազում փոփոխություններ, ամբողջությամբ նորացվել է մոդուլի տեսքը, ինչի շնորհիվ ավելի պարզ և հասկանալի է դարձել համակարգի հետ աշխատանքը, մասնավորապես, լուրջ փոփոխություններ են կատարվել խմբերի դիտման և խմբագրման մասում: Ընդհանուր և Անհատական ՄՈԳ-երում ավելացվել է հեռացված և տարկետման մեջ գտնվող ուսանողների առաջադիմությունը դիտելու հնարավորություն, ուսանողների տեղափոխման մասում այժմ կա հեռացված կամ տարկետված ուսանողներին վերականգնելու հնարավորություն: Ավելացվել է ամփոփագրերի հեռացման մասը՝ այժմ դեկանատների աշխատակիցները կարող են հեռացնել իրենց կողմից սխալ ստեղծված, բայց դեռ չլրացված ամփոփագրերը: Նոր օրենքներին են հարմարեցվել լուծարային 12 կրեդիտի 1-ին փուլի ամփոփագրերը, ավելացվել է լուծարային 12 կրեդիտ 2-ի ամփոփագրեր ստեղծելու հնարավորությունը: Հեռակա ուսուցման բաղադրիչների փոփոխությունից հետո ամփոփագրերը հարմարացվել են նոր բաղադրիչներին: Այս մոդուլում ավելացվել է երկու շատ մեծ և կարևոր մաս. Դիպլոմների միջուկների ստեղծումը և Ռոտացիան:

Դիպլոմների միջուկների ստեղծման համար աշխատակիցները պետք է մուտքագրեն ուսանողների անունները և ազգանունները, մասնագիտությունները և մասնագիտացումները, առարկաները անգլերեն տարբերակով: Ինչպես նաև ընտրովի դասընթացները համապատասխանեցնել առարկաների լիարժեք անվանումներին: Եվ համակարգը կստեղծի յուրաքանչյուր ուսանողի դիպլոմի միջուկը: Այս գործողությունները աշխատակիցները կատարելու են մեկ անգամ և հաջորդ տարիների ընթացքում դրանց անդրադառնալու կարիք կլինի, միայն փոփոխությունների դեպքում:

Ռոտացիան հաշվում է ուսանողների տարեկան առաջադիմությունը և ըստ համապատասխան օրենքների թույլ է տալիս որոշել վճարման համակարգը (ուսանողները կարող են ավտոմատ կերպով տեղափոխվել մի վճարման համակարգից մյուսը):

- Ամբիոն մոդուլի դիզայնը նույպես ամբոջությամբ փոխվել է, ավելի պարզ և հասկանալի դարձնելով աշխատանքը համակարգի հետ: Բաշխումներում և ծավալներում մտցվել է ուսումնական տարի հասկացողությունը:
- Ոսումնական մաս մոդուլում վերանայվել և ավելի ճշգրիտ են դարձվել բոլոր մասերը, մտցվել է ուսումնական տարի հասկացողությունը ուսումնական պլանների, ծավալների և բաշխումների համար: Այստեղ նույնպես ամբողջությամբ փոխվել է դիզայնը:
- Դասախոսների մոդուլում փոխվել է դիզայնը, լուծարքային ամփոփագրերի դաշտերը համապատասխանեցվել է դեկանատներում երևացող ամփոփագրերին:

- Համակարգում ստեղծվել է նոր մոդուլ՝ *Դասախոսների վարկանիշավորում,* որը փոխկապակցված է մյուս բոլոր մոդուլների հետ: Դասախոսների վարկանիշավորումը ենթադրում է նրանց կատարած աշխատանքների հիման վրա իրենց գնահատումը և վարկանիշավորման աղյուսակում դասակարգումը, ըստ պաշտոնի և դասավանդվող առարկայի ուղղվածության (հումանիտար, բնագիտական և մշակութային): Դասախոսները մուտք են գործում իրենց էջ դասախոս մոդուլում և մուտքագրում են տվյալներ ողջ տարվա իրենց կատարած աշխատանքների մասին՝ հոդվածներ, հրապարակումներ, ելույթներ և այլն: Դրանք բազմապատկվում են համապատասխան գործակիցներով և գումարվում: Ամբիոն և ֆալուլտետ մոդուլներում աշխատակիցները մուտք են անում տվյալներ դասախոսի վերաբերյալ ըստ նրանց գործընկերների և ուսանողների կարծիքի, որոնք նույնպես բազմապատկվում են համապատասխան գործակիցներով, ապա ստացված տվյալները գումարվում են դասախոսների մուտք արած տվյալներին և կախված դասախոսի դրույքից ստացվում է նրանց ԲԱՎ-ը: Վարչական անձնակազմին, ովքեր վերահսկելու են դասախոսների վարկանիշավորումը, տրվել են այդ մոդուլ մուտք գործելու հնարավորություն, որտեղ նրանք կարող են տեսնել ողջ համալսարանի դասախոսների վարկանիշները ըստ տարբեր ցուցանիշների:
- Ներկա պահին ծավալուն աշխատանքներ են տարվում նոր տեսակի ամփոփագրերի ստեղծման ուսսությամբ: Եթե նախկինում մի առարկայի համար ստեղծվում էին 1-ին, 2-րդ միջանկյալների, ստուգարքային կամ քննական, լուծարային տարբեր ամփոփագրեր, ապա հիմա ստեղծվում է միայն մեկը, որը կպարունակի այդ բոլոր բաղադրիչները, ինչը կհեշտացնի մասնագետների աշխատանքը և կնվազեցնի սխալ ամփոփագրեր ստեղծելու հավանականությունը:

ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Կիմա Կարախանյան

Համալսարանի հատուկ բաժինն իր գործունեությունն իրականացնում է համալսարանի կանոնադրությամբ և այլ նորմատիվ ակտերով սահմանված դրույթների համաձայն:

Բաժնի աշխատանքները հիմնականում կապված են ՀՀ զինկոմիսարիատների հետ և պարբերաբար ստուգվում են վերջիններիս կողմից:

ՀՀ ԿԳ Նախարարի 17.11.2011թ. թիվ 1242-ն հրամանի 14-րդ կետի համաձայն, եռօրյա ժամկետում համապատասխան գրություններ են ուղարկվել զինկոմիսարիատներ՝ տարկետման իրավունքով սովորող և բուհից հեռացված ուսանողների վերաբերյալ:

Գարնանային և աշնանային զորահավաքի համար 1998թ. ծնված ուսանողների մասին ուղարկվել է տեղեկատվություն (ձև 26 տեղեկանքներ) տարկետում ձևակերպելու նպատակով:

Զինկոմիսարիատներ ներկայացնելու համար, տարկետման իրավունքից չօգտվող զինակոչիկ ուսանողներին տրվել են տեղեկանքներ իրենց մասնագիտության մասին:

Հաշվետու ժամանակահատվածում մեծ քանակությամբ տեղեկանքներ են տրվել հումանիտար մասնագիտության ֆակուլտետի /ՀՄՖ/ շրջանավարտներին:

Ըստ կանոնակարգի 2014թ. ՀՀ կառավարության որոշման, գարնանային զորակոչի հետ կապված բաժինը լավագույնս համագործակցել է հանրապետության 45 զինկոմիսարիատների հետ, ուսանողների մասին տրվել են լրացուցիչ տեղեկություններ: Դեկանների հետ համագործակցելով՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա ուսանողներին զգուշացվել է ժամանակին համապատասխան զինկոմիսարիատներ ներկայանալու մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում արտասահմանյան երկրներ մեկնող բազմաթիվ շրջանավարտներ բուհ են դիմել իրենց դիպլոմներին հավելյալ թերթ ամրակալելու համար:

Ընթացք են տրվել բուհի տարբեր տարիների շրջանավարտների դիմումները՝ իրենց փաստաթղթերը ծրարներով վավերացնելու և արտասահման ուղարկելու համար:

Բուհի ռեկտորի հրամանների հիման վրա բաժինը շարունակաբար իրականացրել Է բոլոր աշխատակիցների , դասախոսների, ուսանողների ընդունման և ավարտման շարժը:

Ասպիրանտների և դասախոսների ընդունման մասին սահմանված կարգով իրազեկվել է համապատասխան զինկոմիսարիատներին:

Քննաշրջանների ընթացքում բաժինը համագործակցում է ֆակուլտետների հետ. մասնավորապես կնքվում են մեծ քանակությամբ կանչ-տեղեկանքներ, բանկային փոխանցումներ, ակադեմիական տեղեկանքներ, քննական տեղեկագրեր, պայմանագրեր, լուծարքի գրաֆիկներ, անհատական հաշվետվության տիտղոսաթերթեր, հաշվապահական փաստաթղթեր, արխիվի տեղեկանքներ և այլն:

Բաժինը համագործակցում է նաև Համալսարանի անձնակազմի հաշվառման բաժնի հետ. մասնավորապես կնիքվում են բոլոր համաձայնագրերը, հիշեցումները և պայմանագրերը:

Բաժնում կնիքվում են նաև մեծ քանակությամբ հավաստագրեր, գովասանագրեր, պատվոգրեր, ատենախոսությանը վերաբերվող կարծիքներ, գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակներ, մասնագիտական խորհրդի կողմից կազմված ԲՈՀ ուղարկվող և բազմաբնույթ այլ փաստաթղթեր :

Բաժնի կողմից կատարվել են մագիստրոսական թեզերի մատյանների համարակալման, կնքման և վավերացման աշխատանքներ, մագիստրատուրայի շրջանավարտների ցուցակների ստուգումը և դիպլոմների կնքումը, ինչպես նաև շրջիկ թերթիկների ստուգումը և կնքումը:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է կորցրած դիպլոմների ստուգման և կրկնօրինակների կնքման աշխատանքները:

Բաժնի կողմից կատարվել է բոլոր ֆակուլտետներից ներկայացված պետական քննությունների մատյանների համարակալումը և վավերացումը:

Բաժնի կողմից ստուգվում են բոլոր պետական քննությունների մասնակիցների ցուցակները, որից հետո հրամանագրման է ներկայացվում համապատասխան ստորաբաժնում:

Մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվում բոլոր դիպլոմները: Ընդունելության քննությունների ընթացքում բաժնի աշխատակիցն ընդունող հանձնաժողովի կազմում ստուգում է արական սեռի դիմորդների փաստաթղթերը և վավերացնում բաժնի շտամպով:

Բաժնի կողմից իրականացվում է պետպատվերի շրջանակներում ընդունված զինակոչիկների, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողների անվանացուցակների համապատասխան զինկոմիսարիատներ ուղարկելու աշխատանքները:

Սահմանված կարգով ուսումնական տարվա սկզբին կանչվում են բոլոր արական սեռի ուսանողները, կազմվում է համապատասխան փաստաթուղթ, որով կատարվում են հետագա աշխատանքները: Միևնույն ժամանակահատվածում կանչվում են նաև զինապարտ աշխատակիցները, դասախոսները, որից հետո աշխատակիցների անվանացանկն ըստ բնակության վայրի ուղարկվում է համապատասխան զինկոմիսարիատներ:

Բաժինն ուղղակի մասնակցություն է ունենում ընդունելության արդյունքներով բուհ ընդունված անձանց հրամանների ճշգրտման, ինչպես նաև ստուգման գրքույկների կնքման աշխատանքներում:

Բաժնի կողմից իրականացվում են նաև ուսանողների հետ համապատասխան պայմանագրերի կնքման աշխատանքներ:

ՀՀ Պաշտպանության Նախարարի 07.10.2014թ. ՊՆ/510-1755 գրության համաձայն բաժինը համագործակցում է այդ նախարարության մեթոդական բաժնի հետ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016թ սեպտեմբերի 1-ի թիվ 01/06. 2/10525-16 գրության համաձայն տրամադրվում են ապրիլյան պատերազմին մասնակցած՝ զեղչային արտոնությունից օգտվող ուսանողների զինգրքույկներից համապատասխան փաստաթղթեր:

Հատուկ բաժնի գործունեության մաս է կազմում նաև <<Գաղտնի>> դրոշմով փաստաթղթերի հետ աշխատանքը:

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով բաժինը համագործակցում է ՀՀ իրավապահ մարմինների հետ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԽԻՎ

Արխիվի պետ՝ Հռիփսիմե Վարդանյան

Համալսարանի արխիվը, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ, 2016թ. ընթացքում ապահովել է արխիվի գործառույթներից բխող պարտականությունների կատարումը:

Արխիվը նախապատրաստել է համալսարանի տարբեր տարիների շրջանավարտների դիմում-հարցումների պատասխանները, որոնց թիվը աճել է սոցիալական ծառայությունների կողմից պահանջվող տեղեկանքներ տրամադրելու անհրաժեշտությամբ:

2016 թ. ընթացքում տրվել է 1750 տեղեկանք, շրջանավարտների մեծ մասին վերադարձվել են իրենց ատեստատները, միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմները, դիպլոմների

հավելվածները: Տեղեկանքներ են տրվել նաև համալսարանի մագիստրատուրայի շրջանավարտներին, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին: Ասպիրանտներին և հայցորդներին տրվել են տեղեկանքներ՝ իրենց ասպիրանտական տարիներին հանձնած որակավորման քննությունների և աշխատանքային ստաժի վերաբերյալ: 2016թ. արխիվը ընդունել է ասպիրանտների և հայցորդների անձնական գործեր:

Կտրուկ ավելացել է Եվրոպական երկրներում, Ռուսաստանում, Միացյալ Նահանգներում իրենց ուսումը շարունակող նախկին շրջանավարտներին տրված ակադեմիական տեղեկանքների քանակը:

Արխիվը համալսարանի բոլոր ֆակուլտետներից ընդունել է 2015-2016 ուս. տարվա շրջանավարտների անձնական գործերը (թվով՝ 1700 անձնական գործ) (ներառյալ հեռակա ուսուցման), գնահատականների տեղեկագրերը, ամփոփագրերը, պետական քննական հանձնաժողովների մատյանները, թերուս ուսանողների անձնական գործերը՝ (թվով 50):

Արխիվ է ընդունվել աշխատանքից ազատված աշխատակիցների անձնական գործերը:

2016թ. համալսարանը ունեցել է մագիստրատուրայի 800 շրջանավարտ, որոնց անձնական գործերը նույնպես ընդունվել են արխիվ:

Արխիվում ստուգվել և գրավոր պատասխանվել է ՀՀ ոստիկանության կադրերի վարչության գրավոր հարցումներին, որոնք վերաբերվում են համալսարանի տարբեր տարիների շրջանավարտների դիպլոմների իսկությանը: 2016թ. կտրուկ ավելացել է նաև Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից կատարված հարցումների քանակը, որոնք վերաբերվում են համալսարանում սովորած վիրահայ շրջանավարտների դիպլոմների իսկությանը:

2016 թ. հարցումներ են ստացվել նաև Ռուսաստանի Դաշնությունից, որոնք վերաբերվում են համալսարանի նախկին աշխատակիցների ստաժին և աշխատավարձի չափին: Այդ հարցումներին նույնպես տրվել են սպառիչ պատասխաններ:

2016թ. տեղեկատվություն է տրամադրվել տարբեր ֆակուլտետների դասախոսական կազմի ներկայացուցիչներին՝ գիտական ասպարեզում մեծ համբավ ունեցող անվանի մարդկանց վերաբերյալ: Արխիվը համագործակցել է համալսարանի պատմության թանգարանի հետ՝ տրամադրելով արժեքավոր նյութեր համալսարանի ֆակուլտետների և ամբիոնների ստեղծման պատմության վերաբերյալ:

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ Համլիկ Սարգսյան

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը ղեկավարվելով համերաշխության, ժողովրդավարության և օրինականության սկզբունքներով, իր գործունեությունը նպատակաուղղել է կազմակերպության անդամների աշխատանքային և սոցիալական շահերի պաշտպանությանը:Արհեստակցական կազմակերպությունը անցկացրել է արհկոմիտեի նիստեր, որտեղ քննարկվել են համալսարանի առօրյային՝ միջոցառումների կազմակերպմանը, նյութական օժանդակության տրամադրմանը, աշխատողների իրավունքներին և աշխատանքային կարգապահությանը վերաբերող բազմաբնույթ հարցեր:Արհեստակցական կազմակերպությունը համագործակցել է մշակութային օջախների հետ, ինչը նպաստել է աշխատողների ազատ ժամանակի կազմակերպմանը: Աղավնաձորի ուսումնական

բազայում համալսարանի աշխատողների և նրանց ընտանիքների անդամների ամառային և ձմեռային հանգստի կազմակերպման համար ուղեգրերը հաշվառվել և տրամադրվել են արհեստակցական կազմակերպության կողմից: Ուղեգրերի արժեքի նկատմամբ կիրառվել են համապատասխան զեղչեր:

2016թ. արհկոմիտեի տնօրինության տակ եղել է 31.200.000դրամ գումար, որը ծախսվել է ներքոնշյալ տարբերակմամբ.

1. Անդամավճար ԲՈՒՀ-րի արհեստակց.կազմ-րի ճյուղային հ/մ - 600.000դրամ
2. Օգնություն համալսարանի աշխատողներին/ըստ դիմումների/- 7.000.000դրամ

   /այդ թվում Աղավնաձորի ուղեգրերի զեղչ 2.370.000դրամ/
3. Ֆակուլտետային և համահամալսարանական միջոցառումներ - 14.000.000դր. /այդ թվում մշակութային օջախներից տոմսերի ձեռք բերում, ֆակուլտետների և համահամալսարանական ամբիոնների աշխատակիցների էքսկուրսիաներ, աշխատակիցների և նրանց երեխաների համար տոնական և ամանորյա միջոցառումներ /
4. Վճարվել է աշխատավարձ - 6.370.000դր.
5. Վճարվել է հարկեր -2.230.000դր.
6. Այլ ծախսեր/բանկի միջնորդավճար, գրասենյակային ծախս/ -250.000դրամ

Ընդամենը-30.450.000դր.

Մնացորդը առ 01 հունվարի 2017թ. կազմում է 750.000դրամ:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գիտական գրադարանի տնօրեն՝ Տիգրան Պետրոսյանց

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանը հաշվետու ժամանակաշրջանում՝ 2016 թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին աշխատանք է տարել ընթերցողների ամենօրյա պահանջները բավարարելու, ուսումնական ծրագրերին համապատասխան նոր բուհական դասագրքեր, ձեռնարկներ և ուսումնամեթոդական գրականություն ձեռք բերելու ուղղությամբ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ /5 տարվա համեմատությամբ/

Ցուցանիշներ	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**

| | | |

Գրադարանի գրքային ֆոնդը առ 2016 թ-ի դեկտեմբերի 1-ը կազմել է **523.496** օրինակ, որից ուսումնական **279.916**, գիտա-տեղեկատվական՝ **165.513**, գեղարվեստական՝ **72.274** գիրք, **5793** օրինակ այլ գրականություն:

Գրադարանի գրքային ֆոնդի համալրումը կատարվել է ուսումնական ծրագրերին համապատասխան: Համալրված նոր գրականության վերաբերյալ ընթերցողներին տրվել է տեղեկատվություն «**Նոր գրքեր**» ցուցավահանակով և գիտական գրադարանի **mankavarzh.do.am** ինտերնետային կայքով:

Հաշվետու ժամանակաշրջանում ստացվել է **2000** անուն **8122** օրինակ գրականություն, որից գնվել է **202** օրինակ՝ ընդհանուր **624.608** դրամ գումարով: Գնված գրականությունը հիմնականում դասագրքեր են, ձեռնարկներ, ուսումնամեթոդական գրականություն: Հաշվետու տարում ստացվել է **7910** օրինակ նվիրատվական գրականություն: Այս թվից Էջմիածնի Մայր Աթոռը նվիրել է ավելի քան 40 օրինակ, Գաբրիել Վահանյանի դուստրը 398 օրինակ անգլերեն, ֆրանսերեն մասնագիտական գիրք, դոկտոր-պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը՝ 438 օրինակ մասնագիտական և գեղարվեստական գիրք, Հունգարիայի համալսարանը՝ 38 օրինակ հունգարերեն և գերմաներեն գիրք: Մյուս գրքերը հիմնականում հեղինակային նվիրատվություններ են:

Գրադարանը ընթերցողներին ապահովում է պարբերական մամուլով և գիտատեսական ամսագրերով: 2016 թ-ին համալսարանն առաջին կիսամյակում բաժանորդագրվել է 42 անուն թերթ և ամսագիր, երկրորդ կիսամյակում՝ 41 անուն թերթ և ամսագիր **2.494.990** դրամ ընդհանուր գումարով:Գրքերի և մամուլի ձեռքբերման համար հաշվետու ժամանակում ծախսվել է **3.119.598** դրամ գումար: Բացի վերը թվարկվածից գրադարանը /անվճար հիմունքներով/ գրականություն, գրքեր, ամսագրեր, տեղեկատվական բյուլետեններ է ստացել ՄԱԿ-ի Հայաստանի ներկայացուցչությունից:

Գրադարանում պահվում են **933** դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ՝ մանկավարժության և հոգեբանության գծով: Ընթերցողները կարող են օգտվել նաև տարբեր գիտությունների գծով **3011** սեղմագրերից: 2016 թ-ին ավելացել է 31 ատենախոսություն, 54 այլ սեղմագիր:

Գրադարանն ունի 25 հնատիպ /**24** հայերեն, **1** ռուսերեն/, ավելի քան **6000** հազվագյուտ գրքեր / այդ թվում **1000**-ից ավելի մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ նախախորհրդային գրքեր ռուսերեն լեզվով/, **769** նախախորհրդային հայկական ամսագրեր:

2016 թ-ի ընթացքում ընթերցողների թիվը եղել է **23.530** /նախորդ տարվանից **2217**-ով ավելի/, որից առկա, հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ **15209**, դասախոսներ, աշխատակիցներ, ասպիրանտներ, հայցորդներ **2196**, ավագ և հիմնական դպրոցի աշակերտներ **391**, այլ բուհերի ուսանողներ **3173**, պատվո ընթերցողներ **579,** քաղաքացիներ **1982**:

Հաշվետու ժամանակաշրջանում ընթերցողների հաճախումը կազմել է **1.475.618** այց, տպագիր գրականության տացքը՝ **3.987.925** միավոր: Տարվա ընթացքում գրադարանի համակարգիչներից սեփական հասցեին նամակով փոխանցվել է **1.825.768** նամակ: Ուսանողներին և ընթերցողներին փոխանցվել է շուրջ **81.000** էլեկտրոնային նյութ /գիրք, հոդված/: Թե հաճախման, թե տպագիր նյութի տացքի, թե համակարգիչներից օգտվողների քանակի, թե էլեկտրոնային նյութերի առաքման թվերը գերազանցում են 2015 թ-ի արդյունքները:

Ամբողջ ծանրաբեռնվածությամբ գործել են թիվ 1 մասնաշենքի 2-րդ հարկի հումանիտար գրականության ընթերցասրահը /**130** ընթերցողական տեղ/, պատմության ֆակուլտետի շենքում գործող ընթերցասրահը /**60** ընթերցողական տեղ/, բանասիրական ֆակուլտետի շենքում գործող ընթերցասրահը /**60** ընթերցողական տեղ/, 7-րդ հարկում գործող տեխնիկական գրականության ընթերցասրահը /**60** ընթերցողական տեղ/, կուլտուրայի ֆակուլտետի ամբիոններին կից 3 կաբինետ-ընթերցասրահները /շուրջ **80** ընթերցողական տեղ/, գեղարվեստի ֆակուլտետի շենքում գործող ընթերցասրահը /շուրջ **20** ընթերցողական տեղ/, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի ընթերցասրահը /**30** ընթերցողական տեղ/: 2016 թ-ին հիմնովին նորոգվել ու բարվոք աշխատապայմաններով գործում է բանասիրական ֆակուլտետի շենքի կիսանկուղային տարածքում տեղակայված գրապահոցը:

Տարվա ընթացքում հումանիտար գրականության ընթերցասրահում հյուրընկալել է Երևանի և հարակից շրջանների 51 դպրոցների և քոլեջների բարձր դասարանների և կուրսերի աշակերտներ, համալսարան այցելած 10-ից ավելի այլ երկրների համալսարանների պատվիրակություններ: Տարվա ընթացքում գրադարանի ընթերցասրահներում տեղի են ունեցել գիտական կոնֆերանսների 60 նիստեր:

Հումանիտար գրականության ընթերցասրահի «**Նոր գրքեր**» ցուցավահանակներում տարվա ընթացքում կազմակերպվել է շուրջ **100** ցուցադրություն և ներկայացվել ավելի քան **5000** նոր գիրք ու այլ հրատարակություններ:

11 ամսում ինտերնետում արդեն յոթ տարի գործող **mankavarzh.do.am** կայք է այցելել ավելի քան **15000** մարդ (2010 թ-ից սկսած շուրջ 150.000 հազար այցելու դիտարկել է կայքի 772.661 էջ):

2010 թ-ին Հայաստանում առաջին անգամ գրադարանում անցկացվել է «**Լավագույն ընթերցող**» մրցույթ: 2016 թ-ի դեկտեմբերի 22-ին կանցկացվի 7-րդ մրցույթը: Յուրաքանչյուր մրցույթի համար տպագրվել է մրցույթի հաղթողներին նվիրված գրքույկ ֆակուլտետային հաղթողների և համալսարանի հաղթողի, առավել կարդացված դասախոսների լուսանկարներով ու կենսագրականներով:

Գրադարանի ցուցասրահի «Ցուցահանդեսային» պատին հունվար-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է ուսանողների, շրջանավարտների նկարչական գործերի երկու ցուցահանդես:

Տարելիցային միջոցառումներին նվիրված ցուցավահանակում տարվա ընթացքում բացվել է ՀՊՄՀ դասախոսների հոբելյաններին նվիրված 30-ից ավելի ցուցադրություն: Գրադարանում կազմակերպվել է 50 նոր գրքի շնորհանդես /հեղինակների, մասնագետների, հյուրերի մասնակցությամբ/:

Հատուկ ցուցադրություններ են կազմակերպվել ՀՀ բանակի օրվա, Կանանց տոնի /ցուցադրվել են համալսարանի կին դասախոսների գրքերը/, Հայոց ցեղասպանության, Հայոց պետական խորհրդանիշների /դրոշ, զինանշան/, Շուշիի ազատագրման, Երեխաների միջազգային օրվա, ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ:

Գրադարանը հաշվետու ժամանակաշրջանում համագործակցել է Հայաստանի ազգային գրադարանի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, Հայաստանի ագրոակադեմիայի, Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի գիտական գրադարանների, Ավ.Իսահակյանի անվան քաղաքային գրադարանի և տեղեկատվական այլ կենտրոնների հետ:

Չորրորդ տարին գրադարանում գործում է «Չորեքշաբթի» գրական ակումբը, որը 2013 թ-ի մարտի 14-ից սկսյալ յուրաքանչյուր չորեքշաբթի, ապա՝ շաբաթ օրերին ունեցել է 187 հանդիպում-քննարկում: Ակումբի անդամ են նաև հանրապետության հիգ այլ բուհերի ուսանողներ, հանրապետության այլ բնակավայրերում, այլ պետություններում ապրող բուհերի շրջանավարտ-երիտասարդներ: Ակումբի մասնաճյուղ է գործում Արցախի պետական համալսարանում: **2016 թ-ին հրատարակվել է ակումբի անդամների ստեղծագործություններն ընդգրկող «Չորեքշաբթի Գ» ժողովածուն:** Ակումբը ունի «Ֆեյսբուքյան» էջ և ամենօրյա կապ է ապահովում հազարավոր հասակակիցների համար, գործում է ակումբի «Յութուբյան» էջը:

Գրադարանի գործունեությունն իրականացրել են 25 աշխատակիցներ, որոնցից 11-ը ունեն գրադարանային մասնագիտական կրթություն:

Տարվա ընթացքում գրադարանի մասին հաղորդումներ ու հոդվածներ են տպագրել «**Հայաստանի Հանրապետություն**», «**Մանկավարժական համալսարան**», «**Ազգ**» /տարվա ընթացքում 7 անդրադարձ/, «**Հայ զինվոր**» /տարվա ընթացքում 7 անդրադարձ/, «**Կրթություն**", «**Ավանգարդ**», «**Իրատես**» թերթերը, հաղորդումներ են պատրաստել «**Արմենիա**», «**Երկիր Մեդիա**» հեռուստաընկերությունը, Հայաստանի ռադիոն, տեղեկատվություն է տարածել «**Արմենպրես**» գործակալությունը, **armspu.am, mankavarzh.do.am** կայքերը:

Գրադարանի աշխատանքների կազմակերպման, աշխատանքի որակի ու հասցեականության բարելավման, տեխնիկական ժամանակակից միջոցներով գրադարանը ապահովելու, գրադարանային նոր տարածքներ ստեղծելու ռազմավարական զարգացման տեսանկյունից կարևոր է համալսարանի ռեկտոր, դոկտոր-պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանի** մոտեցումը:

Գրադարանը հաշվետու ժամանակում ապահովել է ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի ընթերցողական պահանջները:

Գրադարանի աշխատակիցները նաև գիտական աշխատանք են կատարել:

Գրադարանի տնօրեն ***Տիգրան Պետրոսյանը***

- Հրատարակել է «Հունաստան. Առասպելների երկիր» գիրքը /98 էջ/,
- Կազմել, խմբագրել, հրատարակել է «Չորեքշաբթի Գ» ժողովածուն /158 էջ/,
- Կազմել, խմբագրել, հրատարակել է Մելանյա Պետրոսյանցի «Ազնիվը» գիրքը /145 էջ/,
- Հրատարակության է պատրաստել «Ատենախոսություններ» գիրքը /200 էջ/,
- Հրատարակության է պատրաստել «Աբովյանցիներ» կենսագրական հանրագիտարանը /1000 էջ/,
- Տպագրել է «Քուրդ Ա Վաչուտյան: Կյանքը և գործը» հոդվածը /ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2016 թ., թիվ 3-4 /28-29/, էջ 81-87,
- Իր մասնակցությամբ նկարահանվել է «**Հաջողության բանաձև**» ֆիլմի **Գրադարանավարի** մասնագիտության մասին պատմող ֆիլմում:
- Հայկական հեռուստաընկերությունների /Հ1, Հ2, Արարատ/ և Հայկական ռադիոյի եթերից մասնակցել է 11 հաղորդման:
- 2016 թ-ի մարտին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ընդգրկվել է նախարարին կից հասարակական խորհրդի կազմում, եղել է 2016 թ-ի հունիս-հուլիս ամիսներին զորակոչի հավաստիությունը վերահսկող հանձնաժողովի անդամ: Հասարակական խորհրդի կազմում

1, նախարարության դասախոսական խմբի կազմում 4, ՀՊՄՀ պատվիրակության կազմում 1 անգամ եղել է Արցախում, ելույթ ունեցել առաջնագծի զինվորների համար:
- Տարվա ընթացքում արժանացել է «Միջազգային անվտանգության ասպետաց ակադեմիա» հասարակական կազմակերպության «Տիգրան Մեծ» շքանշանի, Մոսկվայում գործող «Գվարդիական աստղ» ռազմահայրենասիրական բլոկ միջազգային հասարակական կազմակերպության «Գվարդիական աստղ» մեդալի:

Գրադարանի ավագ գրադարանավար ***Նարինե Դանիելյան***

- Տպագրել է «Գրադարանային-մատենագիտական գործունեությունը Հայաստանում 20-րդ դ. 70-80-ական թվականներին» հոդվածը /ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2016 թ., թիվ 1-2 /26-27/, էջ 44-53:
- Տպագրել է «Գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հիմնահարցը գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ» հոդվածը /ՀՊՄՀ Հայագիտական հանդես, 2016 թ., թիվ 1 /31/, էջ 92-98:
- 2016 թ-ին Նարինե Դանիելյանը անցել է ատենախոսության նախնական պաշտպանությունը:

Գրադարանի բաժնի վարիչ ***Աննա Մարտիրոսյան***

- 2016 թ-ին հանրապետական թերթերում գրադարանի մասին տպագրել է 25 հոդված և ինֆորմացիա:

ԹԱՆԳԱՐԱՆ

Թանգարանի տնօրեն՝ Ալվարդ Գրիգորյան

Հաշվետու ժամանակահատվածում բուհի թանգարանի աշխատանքները ընթացել են հետևյալ ուղղություններով՝

1. Թանգարանի ֆոնդերի համալրում, հաշվառում և պահպանում

1.1. 2016թ. ձեռք է բերվել 103 նյութ, որոնք ամբողջությամբ հաշվառված են:

1.2. Ֆոնդային նյութերի հիման վրա ստեղծվել են 11 ֆոտոշարք՝ էկրանների վրա ցուցադրելու համար, IZI. Travel հավելվածում լսողության խանգարումներ ունեցող այցելուների համար նախատեսված էքսկուրսիոն տեքստի սուրդո թարգմանության տարբերակը: Նյութեր են տրամադրվել «Հաջողության բանաձև» ֆիլմաշարի նկարահանման համար, Համալսարանի թանգարանի ֆոնդում պահվող Համո Հարությունյանի մասին նյութերը՝ էլեկտրոնային տարբերակով նախապատրաստվել և տրամադրվել են որդուն՝ Ավետիս Հարությունյանին:

1.3. Նյութեր են տրամադրվել տարբեր ֆակուլտետների 11 ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար:

2. Թանգարանի ցուցադրական գործունեություն

2.1. Թանգարանի հիմնական ցուցադրությունը համալրվել է 11 ցուցանմուշով:

2.2. Կազմակերպվել են ժամանակավոր ցուցահանդեսներ նվիրված՝

ա) լրագրող, թարգմանիչ, հրապարակախոս, ՀՊՄՀ նախկին դասախոս Արմեն Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին,

բ) հուշ-ցերեկույթ և ցուցահանդես նվիրված գեղանկարիչ, ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի շրջանավարտ Հայկազ Սողոմոնյանին:

3. Գիտա-մեթոդական և կրթական աշխատանք

3.1. Հաշվետու ժամանակահատվածում թանգարանում իրականացվել է 9 միջոցառում նվիրված հիշարժան դեպքերին և իրադարձություններին

3.2. Իրականացվել են կոնսուլտացիաներ բուհի ուսանողների, դասախոսների, այլ բուհերի դասախոսների, թանգարանների աշխատակիցների, դպրոցների ուսուցիչների համար, ցույց է տրվել խորհրդատվական օգնություն, մասնավորապես թանգարանային մանկավարժության բնագավառում:

3.3. Թանգարանում կազմակերպվել է Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների 4 շաբաթ տևողությամբ մասնագիտական պրակտիկան

3.4. Թանգարան-դպրոց համագործակցության շրջանակներում Երևանի Նելսոն Ստեփանյանի անվ. թիվ 19 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները այցելել են թանգարան, որի շրջանակներում դիտել են բուհի գործունեության մասին պատմող ֆիլմ:

3.5. Բուհի 10 ֆակուլտետների բարձր կուրսի ուսանողները նախապատրաստվել են որպես էքսկուրսավարներ և անցկացրել են առաջին կուրսի ուսանողների համար էքսկուրսիաներ:

3.6. Հաշվետու ժամանակահատվածում թանգարան է եկել 9883 այցելու:

3.7. Կազմակերպվել է 489 էքսկուրսիա բուհի ուսանողների, դասախոսների, աշխատակիցների, դպրոցականների, ինչպես նաև տեղի և արտասահմանցի հյուրերի համար:

3.8. Թանգարանի գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է «Մանկավարժական համալսարան» թերթում, համալսարանի կայքում, թանգարանի ֆեյսբուքյան էջում և համացանցի այլ կայքերում:

4. Գիտական գործունեություն և մասնագիտական աճ

Թանգարանի տնօրեն Ա. Գրիգորյանը՝

- Պաշտպանել է «Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման հիմնախնդիրները (Հայաստանի թանգարանների օրինակով)՝ թեմայով ատենախոսությունը և ստացել ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան,
- համահեղինակությամբ հրատարակվել է «Կրթությունը թանգարանում» և «Էքսկուրսավարության հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկները,
- դասավանդել է Թանգարանային մանկավարժություն, Մշակութակրթական աշխատանքը թանգարանում, Թանգարանային կառավարում և կազմակերպում առարկաները Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության բաժնի բակալավրիատի 3-4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերում,
- կազմակերպել և անցկացրել է Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանում Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության

բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների 4 շաբաթ տևողությամբ մասնագիտական պրակտիկան,

- կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն բաժնում ղեկավարել է ուսանողների 5 կուրսային, 1 ավարտական աշխատանք և 1 մագիստրոսական թեզ,
- մայիսի 11-13-ը անցկացրել է «Կրթական ծրագրերի կազմակերպումը թանգարանում» խորագրով դասընթաց-վարժանք ՀՀ թանգարանների մասնագետների համար:
- սեպտեմբերի 12-13-ը մասնակցել է Եվրոպական թանգարանների կազմակերպության /ՆԵՄՈ/ և Թանգարանների կրթության կենտրոնի կողմից կազմակերպված վարպետաց դասին,
- սեպտեմբերի 24-25-ը մասնակցել է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» 9-րդ միջազգային գիտաժողովին հանդես գալով «Շիրակի և Լոռու մարզի թանգարանները՝ որպես կրթության ակտիվ տարածքներ» թեմայով զեկուցումով: Զեկուցման դրույթները տպագրված են համապատասխան ժողովածուի 176-178 էջերում: Հոդվածը հանձնված է տպագրության,
- հոկտեմբերի 5-6-ը մասնակցել է Ռ.Դրամբյանի 125-ամյակին նվիրված գիտաժողովին Երևանում՝ հանդես գալով «Թանգարանային մանկավարժությունը որպես կրթական ծրագրերի իրականացման հիմք» թեմայով զեկուցումով: Հոդվածը հանձնված է տպագրության,
- հոկտեմբերի 11-13-ը մասնակցել է ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի, ԻԿՕՄ-ի անձնակազմի վերապատրաստման միջազգային կոմիտեի և «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա»-ի ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ կազմակերպված «Թանգարանիային կառավարման առանձնահատկությունները հետխորհրդային երկրներում» խորագրով՝ դասընթաց-վարժանքին ՀՀ թանգարանների մասնագետների համար,
- հոկտեմբերի 26-28-ը մասնակցել է «Թանգարան, կրթություն և ներգրավում» խորագրով եռօրյա միջազգային փորձի փոխանակման դասընթացին,
- նախապատրաստել և կազմակերպել է Թանգարանագիտության բաժնի ուսանողների համար աշխարհի տարբեր երկրների լավագույն մասնագետների կողմից անցկացված վարպետաց դասեր,
- նախաձեռնել և կազմակերպել է «Պատանի թանգարանագետ» խմբակի գործունեությունը Արմավիրի մարզում:

Թանգարանի ֆոնդապահ Հ. Անանյանը՝

- ուսումնասիրել է ֆոնդային աշխատանքի վերաբերյալ մասնագիտական գրականություն,
- ուսումնասիրել է ֆոնդային նյութը, որոնց հիման վրա նախաձեռնել և կազմակերպել է ժամանակավոր ցուցահանդեսներ,
- ապահովել է թանգարանի ֆոնդապահոցի առարկաների պահպանությունը,
- նախապատրաստել և ներկայացրել է նյութեր «Հաջողության բանաձև» ֆիլմաշարի նկարահանման համար,
- անցկացրել է ճանաչողական և մասնագիտական էքսկուրսիաներ,
- կարգաբերել է թանգարանային առարկաների ընդունման ակտերը,
- փորձի փոխանակման նպատակով մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ֆոնդապահ Անի Մարտիրոսյանին և Արտակարգ իրավիճակների նախարարության նոր հիմնադրվող թանգարանի աշխատակից Հասմիկ Պետրոսյանին,

- սեպտեմբերի 13-ին մասնակցել Եվրոպական թանգարանների կազմակերպության /ՆԵՄՈ/ և Թանգարանների կրթության կենտրոնի կողմից ՀՀ թանգարանների աշխատակիցների համար կազմակերպված վարպետաց դասին,
- կազմակերպել և անցկացրել է դասընթացներ «Պատանի թանգարանագետ» խմբակի շրջանակներում:

Թանգարանի գիտաշխատող Մ. Մանուչարյանը՝

- պատրաստել է նոր ֆոտոշարքեր ցուցասրահների էկրաններով ցուցադրելու համար,
- պատրաստել և համապատասխան ծրագրի միջոցով հանրայնացրել է թանգարանի էքսկուրսիոն տեքստի սուրդո տարբերակը՝ նախատեսված տեսնողության խնդիրներ ունեցող այցելուների համար,
- անցկացրել է ճանաչողական և մասնագիտական էքսկուրսիաներ,
- աուդիոգիդ ստեղծելու նպատակով խորհրդատվություն է տրամադրել Երկրաբանության, Գրատպության թանգարանների, Ավ. Իսահակյանի թանգարանի և Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի աշխատակիցների համար,
- փետրվարի 22-23-ը մասնակցել է Թանգարանային կրթության կենտրոնի, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի, ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի և ԻԿՕՄ Հայաստանի ազգային կոմիտեի կազմակերպած «Թանգարանի մարքեթինգային ռազմավարության իրականացման գործնական քայլեր» խորագրով երկօրյա դասընթաց-վարժանքին,
- հուլիսի 3-9-ը մասնակցել է ԻԿՕՄ-ի 24-րդ վեհաժողովին(Իտալիա, Միլան),
- սեպտեմբերի 13-ին մասնակցել Եվրոպական թանգարանների կազմակերպության /ՆԵՄՈ/ և Թանգարանների կրթության կենտրոնի կողմից ՀՀ թանգարանների աշխատակիցների համար կազմակերպված վարպետաց դասին,
- սեպտեմբերի 26-28-ը մասնակցել է Թանգարանային կրթության կենտրոնի, Ինտերնյուս մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի և ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ կազմակերպված «Մեդիան և թանգարանները» խորագրով եռօրյա դասընթաց-վարժանքին Հայաստանի թանգարանների աշխատակիցների համար,
- հոկտեմբերի 11-13-ը մասնակցել է ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի, ԻԿՕՄ-ի անձնակազմի վերապատրաստման միջազգային կոմիտեի և «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա»-ի ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ կազմակերպված «Թանգարանիային կառավարման առանձնահատկությունները հետխորհրդային երկրներում» խորագրով՝ դասընթաց-վարժանքին ՀՀ թանգարանների մասնագետների համար,
- հոկտեմբերի 26-28-ը մասնակցել է «Թանգարան, կրթություն և ներգրավում» խորագրով եռօրյա միջազգային փորձի փոխանակման դասընթացին:

ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր հաշվապահ՝ Սուսաննա Հարությունյան

1.Հաշվապահական հաշվառում

ԲՈՒՀ-ի հաշվապահական հաշվառումը վարվում է Հաշվապահություն բաժնի կողմից, որտեղ ընդգրկված են 9 աշխատակից՝ գլխավոր հաշվապահ և 8 հաշվապահ:

ԲՈՒՀ-ի հաշվապահական հաշվառումը վարվում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի համաձայն:

Կիրառվող հաշվային պլանը բովանդակային առումով համապատասխանում է Փոքր ու Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՄ) համաձայն կիրառվող հրապարակված օրինակելի հաշվային պլանին:

Մինչ 2015թ. հաշվապահությունը վարվել է "ՀԾ-6.0" հաշվապահական ծրագրով, 2015թ.-ից ներդրվել է "ՀԾ-Ձեռնարկություն" տարբերակը՝ 15 համակարգիչների ցանցային միացումով, որից՝ 9-ը հաշվապահությունում, 3-ը կադրերի բաժնում, 1-ական՝ գնումների, ֆինանսական բաժիններում, կենտրոնական պահեստում:

2.Ֆինանսական հաշվետվողականության համակարգ

Հաշվապահությունը յուրաքանչյուր տարի պատրաստում և հրապարակում է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի, Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՄ-ների) համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններ՝ օրենսդրության պահանջով:

Հարկային հաշվետվությունները՝ Շահութահարկի տարեկան հաշվարկը, Ավելացված արժեքի հարկի ամսական հաշվետվությունները, Եկամտային հարկի ամսեկան հաշվետվությունները և այլ պահանջվող հաշվետվությունները ներկայացվում են հարկային օրենսդրությամբ սահմանված պահանջներին ու ժամկետներին համապատասխան:

Աշխատավարձի հաշվարկումները և վճարումները կատարվում են հիմնավորող պայմանագրերի, հրամանների, տաբելների և կատարողական ակտերի հիման վրա:

Ծախսերը և եկամուտները հիմնավորված են դրանց կատարման, ինչպես նաև նրանց դիմաց վճարման համապատասխան փաստաթղթերով: Հիմնական միջոցների ու պաշարների ձեռքբերումները փաստաթղթավորված են: Ծախսերը՝ ներառյալ վառելիքի գծով, կոմունալ վճարների գծով, վերանորոգումների գծով, իրականացվում են հաշիվ-ապրանքագրերի և այլ հիմնավորող փաստաթղթերի համաձայն:

ԲՈՒՀ-ում կանխիկ շրջանառությունը իրականացվում է գանձապահի և առհաշիվ անձի կողմից: Կանխիկ գործառույթները կատարվում են՝ հետևելով "Դրամարկղային գործառնությունների մասին" ՀՀ օրենքին:

Դրամարկղի մուտքի և ելքի օրդերները համարակալվում են տարվա սկզբից, գրանցվում են գլխավոր հաշվապահի կողմից և հաշվառվում գրանցամատյանում: Ելքի օրդերները կնքվում և ստորագրվում են ռեկտորի կողմից, մուտքի օրդերները ստորագրվում են վճարողի կողմից:

Առհաշիվ հաշվետու անձը կատարված գնումների վերաբերյալ ներկայացնում է հաշվետվություն՝ կցելով գնումները հիմնավորող փաստաթղթերը: Առհաշիվ գումարների վերաբերյալ հաշվետվությունները հաստատվում են ռեկտրի և գլխավոր հաշվապահի կողմից:

Գումարների մուտքերը հաշվառվում են նաև հարկային մարմինների կողմից հաստատված ՀԴՄ մեքենայի միջոցով՝ կտրոնը հատկացնելով գումարը մուտքագրողին:

3.Բանկային հաշիվներ ու գործառություններ

Բանկային գործարքները կատարվում են "Անելիք բանկ" ՓԲԸ, "Արարատբանկ" ԲԲԸ և "Կոնվերս բանկ" ՓԲԸ հաշվարկային հաշվների միջոցով՝ ռեկտոր և գլխավոր հաշվապահ համատեղ երկու ստորագրությամբ: Բանկային հաշիվները ՀՀ դրամով, ԱՄՆ Դոլարով, Ռուսական

Ռուբլով և Եվրոյով: Վերջիններս օգտագործվում են արտասահմանյան դրամաշնորհների գծով ստացվող գումարների և արտասահմանյան գործուղումների ծախսումների նպատակով:

Հաշվապահությունում կիրառվում է էլեկտրոնային վճարման բանկային համակարգ: Վճարման հանձնարարագրերը հաստատվում են գլխավոր հաշվապահի և ռեկտորի կողմից: Բանկից քաղվածները ստացվում են ամենօրյա կտրվածքով: Գործարքները գրանցվում են ՀԾ-Ձեռնարկություն հաշվապահական ծրագրում՝ հաշվապահի կողմից: Գլխավոր հաշվապահը պարբերաբար համադրում է ՀԾ-Ձեռնարկություն ծրագրի գրանցումները և քաղվածքները: Բանկային գործարքները, այդ թվում հաշվապահական գրանցումների ամփոփների փաստաթղթային հիմքերը պատշաճ դասակարգվում են և պահպանվում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ Վլադիմիր Մշեցյան

Հաշվետու ժամանակաշրջանում, բացի ամենօրյա ընթացիկ աշխատանքներից, տնտեսական վարչության կողմից ծառայությունների մատուցման եղանակով կազմակերպվել է թվով 22 տարբեր բնույթի վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ ընդհանուր առմամբ 4610710 դրամի չափով: Միևնույն ժամանակ թվով 11 տարբեր բնույթի վերանորոգման աշխատանքներ իրականացվել են վարչության ուժերով՝ տնտեսվարական եղանակով:

Տրանսպորտի բաժնի թվով ութ մարդատար մեքենաները /այդ թվում՝ երկու ավտոբուսները/ մշտապես գտնվել են տեխնիկական սարքին վիճակում, օգտագործվել են համալսարանի կարիքների համար: Վեց թեթև մարդատար մեքենաների վազքը կազմել է 125000կմ և ծախսվել է 20000լիտր բենզին, իսկ երկու ավտոբուսներների վազքը կազմել է 25000կմ և ծախսվել է 55000լիտր դիզելային վառելիք:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Գայանե Մուրադյան

Բաժնում ներդրված հաշվապահական հաշվառման «Հայկական Ծրագրեր» համակարգը գործում է արդյունավետ և մեկ քայլով պակասեցրել է փաստաթղթաշրջանառությունը: Նախկինում ապրանքի մուտքի օրդերը կազմվում էր ՆՏՄ և գնումների բաժնի կողմից, նույն գործողությունը կատարվում էր նաև հաշվապահության կողմից: Այժմ ապրանքի մուտքի օրդեր կազմվում է հաշվապահության կողմից, իսկ ՆՏՄ և Գնումների բաժինը, էլեկտրոնային ՀԾ ծրագրում, տեսնում է ապրանքի Մուտքը և կատարում համապատասխան ապրանքի դուրս գրման գործընթացը՝ համապատասխան ձևաթղթի՝ Պահանջագիր-Բեռնագրով:

Համալսարանը, 2016 թվականին անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների ձեռք բերումը, մեծամասամբ իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կառավարության կողմից հաստատված նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Համալսարանի ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության և կենսաբանության լաբորատորաները հագեցվել են 8 մլն 844 հազարի անհրաժեշտ մասնագիտական գույքով՝ 17 գրապահարան, լաբորատոր՝ 24 սեղան, 33 աթոռ, 46 համակարգչային աթոռ, 12 դասախոսի սեղան: ՀՊՄՀ հիմնական դպրոցում ավելացվել է դասարանային ֆոնդը, որտեղ իրականացվել էլ կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ: Դասասենյակները ապահովվել են անհրաժեշտ դպրոցական գույքով՝ 30 սեղան, 60 աթոռ, 30 մանկական մոլբերտ ու լամինացված աթոռ և նյութեր: Հիմնական դպրոցի առաջին դասարանցիներին անվճար

տրամադրվել է 990 հազար դրամի համարժեք 90 կոմպլեկտ համազգեստ: Համալսարանը պարբերաբար հզորացրել է ստորաբաժանումների նյութատեխնիկական բազան՝ հագեցնելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներով, մասնավորապես՝ 20 կոշտ սկավառակ, 15 սնուցման սարքեր, օպերատիվ հիշողություն, սվիչներ, փոխարկիչներ, 6 մայրական պլատ, 4 ցանցային քարտ, 7 տեսաքարտ, մալուխային համակարգ, 890 հազար դրամի քաթրիջներ, սարքեր, տոներներ և այլ համակարգչային աքսեսուարներ:

ARMAZEG միջազգային կրթական ծրագրով ձեռք է բերվել 13 միլիոն 700 հազար դրամի սերվերային համակարգ և պահարան:

2016 թվականի ընթացքում, համալսարանում դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրման պահանջներից ելնելով, ձեռք է բերվել և ֆակուլտետներին տրամադրվել է 30 ստացիոնար համակարգիչ՝ 5 միլ. 350 հազար դրամի , 19 դյուրակիր համակարգիչ, 30 պրոյեկտոր՝ էկրաններով և կախիչներով՝ 10 միլ. 548 հազր դրամ, 21 հեռուստացույց՝ 9 միլ. 828 հազար դրամ, տպիչներ և այլ սարք- սարքավորումներ:

Համալսարանի ֆակուլտետների համար ձեռքբ է բերվել նաև ուսումնական անհրաժեշտ սարքեր և նյութեր՝ մասնավորապես Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրություն ֆակուլտետի համար՝ կենդանիներ, Կուլտուրայի ֆակուլտետի համար՝ երաժշտական գործիքներ, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ամբիոնների համար՝ 12 մոլբերտ և աթոռ, միջազգային պլեներ անցկացնելու համար ձեռք է բերվել շուրջ 760 հազար դրամի նկարչական նյութեր, 500 գրամ ուսումնական արծաթե գրանուլա, մետաքսե, չթե գործվածքներ, բրդե և բամբակյա թելեր, կարի մեքենայի համար՝ տարբեր ասեղներ, տարբեր պարագաներ, գիպս, կավ, շամոտ, կտավ, ներկեր և վրձիններ:

2016 թվականի ընթացքում Շախմատի և սպորտի ամբիոնին տրամադրվել է 4 միլ. 770 հազար դրամի սպորտային համազգեստ՝ ուսանողների և սեկցիաննների համար, ուսանողական արշավների համար ձեռք է բերվել 940 հազար դրամի վրաններ, 840 հազար դրամի սպորտային գույք:

Համալսարանի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների համար 2016 թվականի ընթացքում տպագրվել են ավելի քան 13 միլ. 610 հազ դրամի ուսումնական մատյաններ, տետրեր, ուսումնական ստուգման գրքույկներ, պլաստիկ քարտեր, դիպլոմներ և ստորաբաժանումներին անհրաժեշտ ձևաթղթեր:

Ընթացիկ տարում ձեռք է բերվել 360 հազար դրամի անհրաժեշտ դեղորայք՝ ՀՊՄՀ երեք մասնաշենքերի բուժկետերի, Աղավնաձորի ուսումնական բազայի, անվտանգության ծառայության, Շախմատի և սպորտի ամբիոնի և տրանսպորտի բաժնի համար:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ներսիկ Մարգարյան

Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանություն

Ուսանողական խորհուրդը, որպես իրնքնակառավարվող մարմին ԲՈՒՀ-ի ներսում, առաջին հերթին իրականացնում է ուսանողների, ասպիրանտների և հայցորդների իրավունքների և շահերի պաշտպանությունը: Այդ նպատակով յուրաքանչուր ուսումնական տարվա սկզբին տեղի է ունենում հանդիպումներ 1-ին կուրսեցիների հետ, որի ժամանակ ուսանողներին ներկայացվում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ուսանողական խորհրդի ծրագրերը, դերն ու նշանակությունը: Ուսանողական խորհրդում մշտապես լսվում և քննարկվում են ուսանողների բողոքները, դիմումներն ու առաջարկությունները և տրվում են

համապատասխան լուծումներ: Ինչպես նաև ուսանողներին հուզող խնդիրները, վեր հանելու նպատակով, պարբերաբար անցկացվում են սոցիոլոգիական հարցումներ:

1. *Սոցիալական բնույթի ծրագրերի իրականացում.*

ՀՊՄՀ ուսանողական խորհուրդը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ համատեղ, իրականացրել է կրթաթոշակների տրամադրում անվճար համակարգում չընդգրկված, ուսման մեջ բարձր առաջադիմություն ցուցաբերած և հասարակայնորեն ակտիվ առաջին կուրսում սովորող թվով 95 /իննսունհինգ/ ուսանողներին 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով: Ինչպես նաև ուսման վարձի փոխհատուցում իրականացվել է սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 1-ին կուրս ուսանողների համար: Սահմանամերձ համայնքների ուսանողները Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացել են նաև 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

Լավ սովորող, հասարակայնորեն ակտիվ ուսանողներին խրախուսելու նպատակով իրականացվել են ուսանողների հանգիստն Աղավնաձորում:

Իրականացվել են նաև մի շարք բարեգործական բնույթի ծրագրեր, այցեր մանկատներ, հատուկ դպրոցներ և այլն:

2. *Սպորտային բնույթի միջոցառումներ*

Ուսանողական խորհրդի սպորտի և առողջ ապրելակերպի հանձնաժողովը Սպորտի և շախմատի ամբիոնի հետ համատեղ իրականացրել են միջֆակուլտետային ֆուտբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, շախմատի, հրաձգության ինչպես աղջիկների այնպես էլ տղաների առաջնություններ:

Պարբերաբար կազմակերպվում են առողջ ապրելակերպին վերաբերող սեմինար-քննարկումներ:

«Արշավներ» ակումբի նախաձեռնությամբ ուսանողները մեկնեցին Դսեղ՝ գիշերակացով արշավի:

ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի օժանդակությամբ՝ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Ուսանողական խորհուրդն կազմակերպել և իրականացրել է ճանաչողական արշավ՝ դեպի Արագածոտնի մարզի պատմամշակութային վայրեր:

3. *Համահայկական և միջբուհական ծրագրեր*

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի կողմից կազմակերպված և իրականացված միջբուհական մարզամշակութային և ինտելեկտուալ «Ունիվերսիադա 2015»-ին մասնակցեցին նաև մեր բուհի ուսանողները: Մրցույթի շրջանակներում հաջողություններ ունեցանք երգարվեստի ոլորտում՝ զբաղեցնելով երրորդ պատվավոր հորիզոնականը:

Մեր ուսանողները մասնակցեցին նաև «Միասնության ուժ-2016» երիտասարդական հավաքին:

Ուսանողական խորհուրդի «ՀՊՄՀ» ջոկատը մասնակցել է «Բազե-2016» համահայկական երիտասարդական հավաքին: Կազմակերպվել և իրականացվել է մի շարք միջբուհական ծրագրեր, բանավեճեր, ինտելեկտուալ խաղեր, մասնակցել է այլ բուհերի և կազմակերպությունների կողմից իրականացված միջբուհական ծրագրերին:

4. *Բնապահպանական միջոցառումներ և ակցիաներ*

Ուսանողական խորհրդի բնապահպանության ակումբը կատարել է այցեր «Հայաստանի բնության պետական թանգարան» և Երևանի բուսաբանական այգի, իրականացրել է էկոլոգիական խնդիրներին վերաբերող սեմինար-քննարկումներ, շաբաթօրյակներ և ծառատունկեր:

5. Միջազգային ծրագրեր

Տարիներ անընդմեջ ուսանողական խորհուրդն իրականացնում է բուհի կողմից կազմակերպվող «Ամառային դպրոց» ուսանողների փոխանակման ծրագիրը: Այս տարի ծրագրին, բացի մեր բուհի բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվությամբ աչքի ընկնող ուսանողներից, մասնակցում էին նաև Ֆինլանդիայի Օուլուի, Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ, Լիտվայի Կրթական Գիտությունների, Սանկտ Պետերբուրգի տնտեսագիտական, Մաքսիմ Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժականի, Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական, Մոսկվայի մանկավարժական պետական, Արցախի պետական համալսարաննե ուսանողները:

6. Ռազմահայրենասիրական բնույթի ծրագրեր

Ուսանողական խորհուրդը կարևորում է հատկապես ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումների առկայությունն ուսանողների առօրյայում՝ հայրենասիրական ոգին բարձր պահելու, բանակ-հասարակություն կապի ամրապնդման նպատակով: Իրականացվել են բազմաթիվ այցեր տարբեր զորամասեր, Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, «Եռաբլուր» հուշահամալիր և այլուր: Ավանդույթ է նաև ամեն տարի մարտի 5-ին՝ Վ. Սարգսյանի ծննդյան օրը, ուսանողների այցելությունը սպարապետի անվան տուն-թանգարան և զորամաս:

Պարբերաբար իրականացվում են նաև հանդիպումներ ռազմական գործիչների հետ:

Ապրիլյան դեպքերին ընդառաջ՝ ՀՊՄՀ ուսանողական խորհուրդը, ուսանողների աջակցությամբ, նույնպես անմասն չմնաց և ամեն հնարավոր տարբերակներով աջակից եղավ հայ զինվորին՝ կազմելով կամավորական ջոկատներ, զինվորներին ուղղարկելով անհրաժեշտ սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև շուրջ 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ փոխանցելով ԼՂՀ:

7. Ուսանողների համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրեր

Հետևելով ժամանակաշրջանի մարտահրավերներին՝ ուսանողական խորհուրդը կարևորում է ուսանողների համակողմանի զարգացումը, որի նպատակով ՈւԽ ինտելեկտուալ ակումբի կողմից պարբերաբար իրականացվում են ինչպես ներֆակուլտետային, այնպես էլ միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղեր: Ինչպես նաև, յուրաքանչյուր շաբաթ օր իրականացվում է օնլայն ինտելեկտուալ խաղ՝ facebook սոցիալական կայքում:

Իսկ բանավեճի ակումբը կազմակերպում է բանավեճեր (դեբատներ), սեմինարներ ու քննարկումներ ուսանողներին և երիտասարդներին հուզող հարցերի վերաբերյալ:

Ուսանողական խորհուրդը (օտար լեզուների ֆակուլտետի դեկանի անմիջական օժանդակությամբ) արդեն երրորդ տարին է ինչ օտար լեզուների ֆակուլտետի ուսանողական խորհրդում գործող **«Speaking Club»** ակումբի միջոցով իրականացնում է օտար լեզուների անվճար ուսուցում ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուներով: Դասընթացների ավարտին ուսանողներին ուսանողական խորհուրդի կողմից տրվում են հավաստագրեր:

8. Մշակութային և հոգևոր բնույթի միջոցառումներ

Ուսանողական խորհուրդը սերտորեն համագործակցում է Հայ առաքելական եկեղեցու հետ, որի շնորհիվ ուսանողները մշտապես մասնակցում են եկեղեցական տոներին և ծիսակատարություններին:

Կազմակերպվում են նաև հանդիպումներ հոգևոր դասի ներկայացուցիչների հետ:

Ազգի պատմությանն ու մշակույթին ծանոթանալու նպատակով իրականացվել են այցելություններ թանգարաններ, պատմա-մշակութային կոթողներ:

Ուսանողական խորհրդի մշակույթի հանձնաժողովի կողմից մեկնարկվեց «Տարվա երգիչ» ներբուհական երգի մրցույթը, որը կկրի շարունակական բնույթ:

9. Կայք և հեռուստաընկերություն

Ուսանողական խորհուրդը երկու տարուց ավել է, ինչ ունի իր ՀՊՄՀ ՈւԽ-ի կայք-էջը (hpmhux.am): Կայքը պարբերաբար թարմացվում է իրականացվելիք և արդեն կատարված տարաբնույթ միջոցառումների մասին տեղեկատվություններով: Կայքում տեղ են գտել ուսանողական խորհրդի պատմությունը, ընդհանուր կառուցվածքային տեղեկություններ և իհարկե այն բոլոր միջոցառումների լուսաբանումները, որոնք իրականացվել են ուսանողական խորհուրդի կողմից:

Բայց այժմ մենք մի նոր, մեծ քայլ ենք անում տեղեկատվական ոլորտում՝ հիմնելով ուսանողական օնլայն հեռուստաընկերություն, որի մասին առավել հանգամանորեն կներկայացնենք հաջորդ հաշվետվության մեջ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒԳ նախագահ՝ Մարիամ Մելքումյան

ՀՊՄՀ Ուսանողական գիտական ընկերությունը 2016 թ. գիտական, կրթական, հետազոտական ոլորտներում ակտիվորեն կազմակերպել է ուսանողական բազմապիսի նախաձեռնություններ, ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, գիտահանրամատչելի դասախոսություններ, բանավեճեր: Աշխատանքներ են տարվել միջհամալսարանական կրթական և գիտական կապերի հաստատման, համագործակցության, կրթական, գիտական խմբակներում և ծրագրերում ուսանողների ներգրավվածության, ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի, կրթական գիտական կենտրոնների, բուհերի ուսանողական գիտական ընկերությունների հետ համագործակցության ուղղությամբ:


№	Միջոցառման անվնանումը	Ամսաթիվը
1.	ՀՊՄՀ ՈՒԳԸ և ԳԱԱ ՈՒԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվել է ուսանողական միջբուհական գիտաժողով, որին մասնակցել են ինչպես երևանյան, այնպես էլ մարզերի բուհերի ուսանողները:	Փետրվար
2.	ՏԵՄՊՈՒՍ ESPAQ (Ուսանողների մասնակցության բարձրացումը ՈԱ գործընթացներում) ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ ՈՒԳԸ կազմակերպել է հանդիպում-քննարկում Կրթության բարեփոխումների և որակի ապահովման վարճության հետ՝ բուհում	Մայիս

	որակի ապահովման գործընթացներին ուսանողներին ծանոթացնելը համար:	
3.	ՀՊՄՀ ՈՒԳԸ մասնակցել է Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիայի ընդհանուր համաժողովին, հանդես եկել առաջարկներով:	Մայիս
4.	ՀՊՄՀ-ում Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված Երեխան մարդ է և ընկեր քարոզ-մրցույթին ՀՊՄՀ ՈՒԳԸ մասնակցել և հանդես է զեկուցումներով:	Հունիս
5.	ՀՊՄՀ ՈՒԳԸ մասնակցել է <<Նորածինների, երեխաների, դեռահասների և նրանց ընտանիքների բուժման ընթացքում թերապևտիկ մոտեցումների ընտրությունը>> խարագիրը կրող Արաբկիր բժշկական համալիրում կազմակերպված Հոգեկան առողջության եռօրյա գիտաժողովին:	Հոկտեմբեր
6.	ՀՊՄՀ ՈՒԳԸ Արցախի պետական համալսարանում մասնակցել է Արցախի անկախության 25-ամյակին նվիրված գիտաժողովի: Մանկավարժական համալսարանից զեկուցումներով հանդես են եկել չորս ուսանող:	Հոկտեմբեր
7.	ՀՊՄՀ ՈՒԳԸ մասնակցել է Վիգոտսկուն նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպչական աշխատանքներին:	Հոկտեմբեր
9.	ՀՊՄՀ ՈՒԳԸ Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի և «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի հետ կազմակերպել է միջոցառում՝ նվիրված անվանի բանաստեղծ, մանկագիր, երգիծաբան Սուրեն Մուրադյանին:	Հոկտեմբեր
10.	ՀՊՄՀ ՈՒԳԸ մասնակցել է ԳԱԱ ԳԿՄԿ-Ի կողմից կազմակերպված հանրապետական գիտաժողովին:	Նոյեմբեր
11.	ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերությունը ՍՓԻՒՌՔ կենտրոնի սրահում Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ համատեղ կազմակերպել է հանդիսություն՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին, որի ընթացքում ուսանողները ներկայացրել են գիտական զեկուցումներ:	Նոյեմբեր
12.	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել է սեմինար-դասընթաց <Սովորում ենք վիդեոմոնտաժի WANDERSHARE FILMORA ծրագիրը>: Սեմինարը վարվել է առաջին կուրսի ուսանողի կողմից՝ ուսանողն ուսանողի համար ֆորմատով:	Նոյեմբեր
13.	ՀՊՄՀ ՈՒԳԸ մասնակցել է Էրասմուս+ ինֆորմացիոն օրերին, ծանոթանալով ուսանողության համար եվրոպական կրթական ծրագրի ընձեռնած հնարավորություններին:	Նոյեմբեր
14.	ՀՊՄՀ ՈՒԳԸ Ծաղկաձոր քաղաքում մասնակցել է ուսանողական հանրապետական խորհրդաժողովին և հանդես է եկել բարձրագույն կրթության վերաբերյալ բարեփոխումների առաջարկներով:	Նոյեմբեր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ


ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ՀԵՏ

Գծապատկեր 1



ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՐՏԱԾՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ


Գծապատկեր 1



Գծապատկեր 1-ից և գծապատկեր 2-ից երևում է ուսանողության ընդհանուր թվի նվազում, որը կապված է մեծ թվով շրջանավարտների և փոքր թվով ընդունվածների հետ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԱՌ 01.12.2016թ.


Գծապատկեր 3



Համալսարանի ֆինանսական միջոցների գերակշռող մասը ձևավորվում է վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարներից, որը կազմում է եկամուտների մոտ 65%-ը: Փոքր տոկոս է կազմում պետական ֆինանսավորումը՝ մոտ 16%: Մնացած եկամուտները ձևավորվում են այլ աղբյուրներից:

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԱՌ 01.12.2016թ.

Գծապատկեր 4



Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր Ի Եվ Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն ԱՌ 01.12.2016թ

Դրամական միջոցների ներհոսք		
Դրամական միջոցների մուտքերի հոդվածներ /եկամուտներ/		Գումար/հազար դրամ/
1	**Սկզբնական մնացորդ առ 01.01.2016թ.**	***907 136***
1,1	**այդ թվում միջազգային ծրագրերի մնացորդ**	***185 168***
2	**Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից**	***2 486 269***
2,1	Առկա բակալավրիատ	1 163 721
2,2	Հեռակա բակալավրիատ	1 006 535
2,3	Առկա մագիստրատուրա	215 998
2,4	Հեռակա մագիստրատուրա	79 801
2,5	Նախապատրաստական բաժին	6 910
2,6	Ասպիրանտուրա և հայցորդներ	13 304
3	**Եկամուտներ ենթակառուցվածքներից**	***19 073***
3,1	Հանրային սնունդ	8 443
3,2	Աղավնաձորի ուսումնական բազա	10 630
4	**Այլ եկամուտներ**	***155 217***
4,1	Տարածքների սպասարկման գումար	9 274
4,2	Դրամաշնորհներ և միջազգային ծրագրեր	53 985
4,3	Քննությունների կազմակերպում	6 806
4,4	Այլ եկամուտմեր	85 151
Ընդամենը եկամուտներ արտաբյուջեից		***2 660 559***
5	**Եկամուտներ պետ. բյուջեի ֆինանսավորումից**	***544 860***
5,1	Բարձրագույն կրթության ծառայությունից	536 795
այդ թվում՝ կրթաթոշակ		37 726
5,2	Հետբուհական կրթության ծառայությունից	8 065
այդ թվում՝ կրթաթոշակ		1 088
5,3	**Գիտության ֆինանսավորում**	***57 153***
5.3.1	Բազային	38 221
5.3.2	Թեմատիկ	6 488
5.3.3	Գիտաշխատողների հավելավճար	9 860
5.3.4	Կոնֆերանսներ, գիտաժողովներ	1 085
5.3.5	ԲՈՀ	1 500
5,4	**Ենթակառուցվածքներ**	***103 462***
5.4.1	Հենակետային վարժարան	64 068
5.4.2	N 57 դպրոց	38 894
5.4.3	Տարակարգեր	501
Ընդամենը եկամուտներ պետական բյուջեից		***705 476***
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		***3 366 035***
մնացորդ 01.12.2016թ.		***829 239***

Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր Ի Ե Վ Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն ԱՌ 01.12.2 0 1 6

Դրամական միջոցների արտահոսք		
Դրամական միջոցների ելքերի հոդվածներ /ծախսեր/		Գումար/հազար դրամ/
1	**Աշխատավարձ,այդ թվում՝**	***2 553 549***
1,1	**Եկամտային հարկ**	***758 300***
1,2	**Նպատակային նպաստ**	***46 264***
1,3	**Արհմիության գումար**	***26 549***
1,4	**Զուտ աշխատավարձ**	***1 722 437***
2	**Կրթաթոշակ՝ այդ թվում**	***43 598***
2,1	**Անվանական կրթաթոշակ**	***1 770***
3	**Ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսեր**	***195 302***
3,1	Գրասենյակային ծախսեր	4 008
3,2	Տնտեսական ծախսեր	8 134
3,3	Ուսումնական ծախսեր	58 720
3,4	Ուսումնական պրակտիկա*	18 187
3,5	Սննդի ձեռք բերման ծախսեր, այդ թվում՝ Աղավնաձորի ուսումնամարզական բազա	16 512
3,6	Տարածքի մաքրության սպասարկման ծախսեր	56 700
3,7	Տրանսպորտային ծախսեր, այդ թվում՝ վառելիքի ձեռք բերման ծախսեր	14 264
3,8	Գովազդային, մարքեթինգային ծախսեր	3 446
3.9	այլ ապրանքներ, նյութեր և ծառայություններ	15 330
4	**Գործուղման ծախսեր, այդ թվում՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերով**	**156 115**
5	**Ներկայացուցչական ծախսեր**	**6 076**
6	**Գրադարանային ծախսեր**	**3 317**
7	**Կոմունալ ծախսեր**	**81 963**
7,1	Էլ. էներգիայի ծախսեր	46 835
7,2	Գազի, ջեռուցման ծախսեր	24 381
7,3	Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր	2 298
7,4	Այլ կոմունալ ծախսեր	8 449
8	**Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր**	**15 047**
8,1	Հեռախոսակապի ծախսեր	5 703
8,2	Ինտերնետ կապի ծախսեր	7 990
8,3	Փոստի և հեռահաղորդակցության այլ ծախսեր	1 354
9	**Դրամաշնորհներ՝ այդ թվում միջազգային**	***23 128***
10	**Հիմնական միջոցներ**	***131 415***
10,1	Սարք, սարքավորում	93 300
10,2	Գույք	10 978
10,3	Համակարգչային տեխնիկա	8 437
10,4	Ոչ ընթացիկ ակտիվ	17 700
11	**Ոչ նյութական ակտիվներ**	***3 878***
12	**Ընթացիկ վերանորոգման ծախսեր**	***1 495***
13	**Կապիտալ վերանորագման ծախսեր**	***8 245***
13,1	Կապիտալ վերանորոգման ծախսեր	8 045
13,2	Նախագծային ծախսեր	200
14	**Հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ**	***30 827***
15	**Այլ ծախսեր**	***181 977***
15,1	Համահայկական երիտասարդական հիմնադրամ	47 000
15,2	Վերելակի, գազասարքի, ՀԴՄ-ի տեխսպասարկման , շին. տեխ. հսկ. ծախսեր	6 698
15,3	Դրամական օգնություններ	23 436
15,4	Ուս. խորհուրդ	2 265
15,5	Այլ ծախսեր	97 544
16	Գիտական կոնֆերանսների կազմակերպում	5 000
17	Գրքերի տպագրում և բաժանում	3 000
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		***3 443 932***

Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողներ

Անուն,Ազգանուն, Հայրանուն	Մասնագիտություն	Ֆակուլտետ	Անվանական
Խուդավերդյան Գեղամա Հակոբի	Պատմություն	Պատմություն և իրավագիտություն	Մ.Խորենացի
Անդրեասյան Տաթևիկ Գարիկի	Իրավագիտություն/մանկավարժություն/	Պատմություն և իրավագիտություն	Մ.Գոշ
Գուշչյան Հասմիկ Վարդանի	Լոգոպեդիա	Հատուկ կրթություն	Ա.Մինասյան
Թադևոսյան Միշա Վարուժանի	Սոցիալական մանկավարժություն	Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա	Բ.Անանև
Խրոյան Արմինե Հենրիկի	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Սկզբնական կրթություն	Ա.Տեր-Գրիգորյան
Բաբայան Հեղինե Գագիկի	Անգլերեն լեզու և գրականություն	Օտար լեզու	Վ.Սարոյան
Համբարձումյան Էմմա Ամուրիկի	Անգլերեն լեզու և գրականություն	Օտար լեզու	Ջ.Բայրոն
Խաչատրյան Էլյա Արմենի	Կենսաբանություն	Կենսաբանություն, քիմիա և աշխարագրություն	Լ.Օրբելի
Գևորգյան АրուսյակԳևորգի	Մանկավարժություն և սոցիոլոգիա	Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա	Բ.Անանև
Աթաբեկյան Աշոտ Սամվելի	Իրավագիտություն/մանկավարժություն/	Պատմություն և իրավագիտություն	Մ.Գոշ
Խաչատրյան Անի Արմենի	Պատմություն	Պատմություն և իրավագիտություն	Մ.Խորենացի
Պետրոսյան Հասմիկ Եղիշեյի	Լոգոպեդիա	Հատուկ կրթություն	Ն.Տիգրանյան
Հակոբյան Արշալույս արթուրի	Իսպաներեն լեզու	Օտար լեզու	Ջ.Բայրոն
Մկրտչյան Հռիփսիմե արմենի	Անգլերեն լեզու և գրականություն	Օտար լեզու	Վ.Սարոյան
Գևորգյան Լիլիթ Խաչատուրի	Մանկավարժություն և մեթոդիկա/ն/դ/	Սկզբնական կրթություն	Գ.Էդիլյան
Մանուկյան Հայկ Համբարձումի	Գեղարվեստական լուսանկարչություն	Կուլտուրա	Ա.Յավուրյան
Նավասարդյան Սոնա Ջիվանի	Հատուկ հոգեբանություն	Հատուկ կրթություն	Ա.Մինասյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Առաջաբան---------- 1
2. Վարչական կազմ ---------- 3
3. Ամբիոնների վարիչներ, դեկաններ ---------- 5
4. Ընդունելություն ---------- 8
5. Գիտական խորհրդի գործունեությունը ---------- 16
6. Համալսարանի գիտական խորհրդի կազմը---------- 17
7. ՀՊՄՀ պատվավոր պրոֆեսորների, դոկտորների կազմը ---------- 19
8. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ---------- 22
9. Ռեկտորատի գործունեությունը ---------- 23
10. Քարտուղարության գործունեությունը ---------- 24
11. Ուսումնական գործընթացների կառավարման վարչություն ---------- 26
12. Ֆակուլտետների գործունեությունը ---------- 49
13. Բանասիրական ֆակուլտետ ---------- 49
14. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ ---------- 65
15. Կուլտուրայի ֆակուլտետ ---------- 85
16. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ ---------- 119
17. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ ---------- 137
18. Պատմության և իրավագիտության ֆակուլտետ ---------- 178
19. Օտար լեզուների ֆակուլտետ ---------- 199
20. Հատուկ կրթության ֆակուլտետ ---------- 232
21. Սկզբնական կրթության ֆակուլտետ ---------- 264
22. Գեղարվեստական կրթության ֆակուլտետ ---------- 286
23. Համահամալսարանական ամբիոններ ---------- 318
24. Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոն -------- 318
25. Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն ---------- 321
26. Տնտեսագիտության և կառավարման ամբիոն ---------- 325
27. Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոն---------- 330
28. Շախմատի և սպորտի ամբիոն ---------- 332
29. Մանկավարժության տեսության և պատմության ամբիոն ---------- 334
30. Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն ---------- 337
31. Հիմնական դպրոց ---------- 339
32. Հենակետային վարժարան (ավագ դպրոց) ---------- 340
33. Մանկավարժության 020 մասնագիտական խորհուրդ ---------- 344
34. Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհուրդ---------- 348
35. Կրթության զարգացման և որակի ապահովման վարչություն ---------- 352
36. Գիտահետազոտական կենտրոն ---------- 354
37. Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոն ---------- 366
38. Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն ---------- 372

39. <<Սփյուռք>> գիտաուսումնական կենտրոն ---------- 376
40. Լրատվության և հանրության հետ կապերի վարչություն ---------- 380
41. Պրակտիկայի կենտրոն---------- 386
42. Իրավաբանական կենտրոն---------- 393
43. Միջազգային համագործակցության բաժին ---------- 395
44. Նախապատրաստական բաժին ---------- 398
45. Անձնակազմի հաշվառման բաժին ---------- 399
46. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ---------- 401
47. Հատուկ բաժին ---------- 404
48. Արխիվ ---------- 405
49. Արհեստակցական կազմակերպություն ---------- 406
50. Գիտական գրադարան ---------- 407
51. Թանգարան ---------- 412
52. Հաշվապահություն---------- 415
53. Տնտեսական վարչություն ---------- 417
54. Նյութատեխնիկական մատակարարման և գնումների բաժին ---------- 417
55. Ուսանողական խորհուրդ ---------- 418
56. Ուսանողական գիտական ընկերություն ---------- 421
57. Համալսարանի ֆինանսական գործունեությունը ---------- 423